



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնապրված է «Մտեղծագործական համայնքեր»  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնապրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material













Գ Ա Մ Ս

ՄՈՆԹԵ - ՔՐԻՍՏՈՅ



ԿՈՄԱ

ՄՈՒԹԵ-ՔՐԻՍՏՈՅ

ՅԱՆԵՑՍԱՆԴՐ ՏԻՒՄԱՅԵ

ԹԱՐԳՄԱՆՆԵԱՑ

ՅԱԳՐԱՆ ՅԱՐԱԿԱՐԻԿ ՅԱՅԵԱՆ

*Մասն հիմնգերորդ*



ԶԱՐԴԱՐԱԿ

ՅՎԵԴՐՈՒԹԻՒՆ ՏԵՇԵԱՆ

1867



# ԿՈՄՍ ՄՕՆԹԵ-ՔՐԻՍՏՈՅ

## ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### ԳԼՈՒԽ ԱՊԵԱԽ

#### ԼԵՄՈՆԻ ՕՇԵՐԵՎԵ

ԱՐԵԼ յիրաւի երջանիկ էր :  
Դ. Կուտարթիկ զան կանչելու հա-  
մար իւր ծառան ղրկեր էր, երիտա-  
սարդը այնշափ կ'արտօրար իւր կանչուելուն  
պատճառը զիտնալու, որ վարձուած ձիու մը չորս  
սրունքներէն աւելի իւր երկու սրունքներուն վատահ ըլլա-  
լով՝ կառք մը անդամ չէր բռնած, և աճապարանօք Մէսլէ-  
փողոցէն մեկնելով Սէնթ-Օնօրէ արուարձանը կ'երթար :  
Մորէլ խիստ արագութեամբ կը յարաջանար, և ողորմելի  
Թարուան ըստ կարի անոր ետեէն հասնելու կը ջանար :  
Մորէլ երեսուն և վեց տարեկան էր, և Պարուա վաթսուն :  
Մորէլի սիրաը սիրով բորբոքեալ էր, իսկ Պարուա օդին  
շափազանց տաքութենէն կը տագնապէր :  
Այսպէս զործով և տարիիրով իրարմէ տարբեր այս երկու  
անձերը եռանկիւնի մը կազմով երկու զիծերուն կը նմա-

նէին, որանք խարիսխով իրարմէ հեռացած՝ դադախով իրաբու  
կը մօսենան:

Առանձիւնին դպրաթը նույարթին էր, որ կը հրամայէր  
Մորէլին խիստ արարանօք իւր քովը դալու. Մորէլ այս  
հրամանը այնպէս ձշդիւ կը կատարէր, որ գալուա անոր եւ  
տեէն հասնել չկարենալուն յուսահատութեան մէջ կը մնար:

Մորէլ նույարթիէ տունը հասած ատենը չհետաց անդամ,  
սէրը մարդուս թեւեր կու տայ, սակայն Պարուա, որուն սի-  
րաշարութեան ժամանակն անցած էր, քրաինքի մ. չ կը լողար:

Ծեր ծառան Մորէլը մասնաւոր գուով ներս մոցուց,  
գահը դուռը դոցեց, և շատ շանցաւ՝ դաւթին մէջ շրջա-  
զզեստի շղթիւն մը Վալանթինի դալուալը իմացուց:

Վալանթին իւր սդոյ զզեստներան մէջ հիանալի դեղէցիկ  
կ'երեէր:

Մորէլ զան տեսնելով նույարթիէ հետ խօսելու համար  
դալը մոցեր էր. բայց ծերունին թեւաթուը անուակներու  
վրայ դառնալով իւր սենեակը եկաւ:

Նույարթիէ հիանալի կերպով Մորէլը և Վալանթինը յու-  
ստհառութենէն ազատելուն համար՝ երիտասարդին յայտնած  
շնորհակալութիւնները օիրալիիր նայուածքով մը ընդունեց:

Այս առեն Մորէլ նորատի աղջկան ակնարկութիւն մը ը-  
նելով կը հարցընէր թէ զինըը կանչելուն պատճառը ինչ  
էր, Վալանթին, որ Մորէլէն հեռու նստած էր, կ'ըստա-  
մէր որ իրեն հրաման ըլլայ խօսելու:

Նույարթիէ անոր երեսը նայեցաւ:

— Ե՛ռեղետ որ ինձի պատուիրած նմրդ ըսկէմ անոր, հար-  
ցուց Վալանթին:

— Այս, ըստ նույարթիէ:

— Գ. Մորէլ, ըստ այն առեն Վալանթին երիտասար-  
դին, որուն աչքը անոր վրայ յարեր էր, սիրելի Նույարթիէ  
հաւու քեզ ըսելու շատ բաներ ունի, որոնք երեք օքէ ՚ի վեր  
ինձ ըստ: Այսօք զքեզ հոս քերել առւաւ որ զանոնք քիզ:

կրկնեմ. ուստի և ես իբր թարդման առանց իւր ըսածներէն քառ մը փոխելու զանոնք քեզ պիտի հաղորդեմ:

— Ո՛չ, անհամբերութեամբ մտիկ կ'ընեմ, պատասխանեց երիտասարդը, խօսէ, օրիորդ, խօսէ — :

Վալանթին աշերը խոնարհեցաց, և այս կերպով երիտասարդին քաղցր զուշակութիւն մը տուաւ. Վալանթին միայն երջանկութեան մէջ կը տկարանար:

— Հայրս կ'ուզէ այս տունէն մեկնիլ, ըսաւ, Պարուա վայրելու տուն մը դանելու զբաղած է:

— Բայց գուն, օրիորդ, ըսաւ Մորէլ, դուն որ այնչափ սիրելի և օդտակար ես ո. Նուարթիկին:

— Արդէն որտշած ենք, կրկնեց նորատի ազջիկը, ես իմ հաւետ ամեննեին պիտի չքամնուիմ: Իմ սենե ակս անոր սենեկին քովը պիտի ըլլայ: Պ. ուր Վիլֆօր կամ պիտի հաւանի որ Նուարթիկ հաւիս հետ մէկ տուն բնակիմ, և կամ պիտի մերժէ. եթէ հաւանի՝ այսօր պիտի մեկնիմ, իսկ եթէ մերժէ՝ տարիի սրբնական չափահանութեան պիտի սպասեմ, որուն տասը ամսէն պիտի հասնիմ: Այն ատեն՝ անկախ հարստութիւն մը պիտի ունենամ, և . . . :

— Շարունակէ, կ'աղաւեմ, ըսաւ Մորէլ:

— Եւ հաւիս հրամանաւ քեզ տուած խոսքումս պիտի կատարեմ — :

Վալանթին այս վերջին խօսքերը այնպէս ցած ձայնով արտասանեց, որ եթէ Մորէլ զանոնք լսելու անձկայրեաց ըլլար՝ պիտի չկարենուր լսել:

— Ըստածներս քու կամացդ համաձայն չե՞ն, սիրելի հաւս, յաւելցուց Վալանթին:

— Այո՛, ըսաւ ծերունին:

— Հաւիս տունը անցնելուս պէտ, շտրւնակեց Վալանթին, Պ. Մորէլ մեր բարի և աղնիւ պաշտամանին ներկայութեամբը պիտի կարենայ զիս տեսնելու դալ: Եթէ այս միութեան կապը, զոր մը սրտերը զուցէ անդիատութեամբ կամ

ժոային հաճայքով մը յօդելու սկսան , պատշաճ երեխ և ուղաղայ երջանկութեան երաշխաւորութիւնները ցուցընէ ( ափսոս , կ'ըսեն թէ դիմադրութիւններէ սիրավառ սրտերը ապահովութեան մէջ կը ցրտանան ), այն ատեն Պ. Մորէլ կընայ զիս խնդրել , և ես կ'ըսպասեմ անոր :

— Ո՛չ , զուեց Մորէլ ծերունւոյն առջեւ իբր Վատուծոյ և Աւալանթինի առջեւ իբր հրեշտակի մը ծնբագրել ուզելով , ո՛չ , ինչ բարիք ըրած եմ արդեօք կենացս մէջ որ այսափ երջանկութեան արժանանամ :

— Մինչև մեր նպատակին հասնելը , շարունակեց նորատի աղջիկը իւր պարզ և խիստ ձայնովով , պատշաճութիւնները և մեր ծնողաց կամքն անոցամ պիտի յարդ ենք , միայն թէ անոնց կամքը զմեզ բաժնել չուզէ . մէկ խօսքով և կը կրկնեմ այս խօսքը , ըստ որում ամեն բան անոր մէջ պարունակեալ է՝ պիտի սպասենք :

— Եւ այս բանիս համար սկսած եղած զոհողութիւնները , պարոն , ըստ Մորէլ , չէ թէ հնագանդութեամբ այլ ուրախութեամբ ընելու կ'երդնում :

— Ուստի , շարունակեց Աւալանթին քաղցր նայուածքով մը , այսուհետեւ անխօնի մութիւն շընենք , բարեկամ . վատանգի մէջ մի գներ այն անձը , որ այս օրէն սկսեալ պարզապէս և ըստ արժանաւոյն քու անունդ կը լու սահմանուած կը համարի ինքզինքը — :

Մորէլ ձեռքը իւր սրտին վրայ դրաւ :

Բայց նուարթիէ զօրովանօք անոնց կը նայէք :

Պարօւա , որ սենեկին ներքին կողմը կեցած մարիկ կ'ընէր , քանզի անորմէ զաղանի բան մը չէին պահէր , իւր Ճաղատ Հակատէն վաղած քրտինքի խոշոր կաթիւները սրբելով կը մոլոէք :

— Ո՛չ , որշափ տաքցեր է մեր բարի Պարուան , ըստ Աւալանթին :

— Ըստ վաղելուս համար է , ըստ Պարուա , բայց ըս-

առողջը ըսելով՝ պարոն Մարէլ ինձմէ աւելի շուա կը վահացքը — :

Կուտարթիէ աչքովը ափսէ մը ցուցուց, արուն վրայ շիշ մը լեմննի օշարակ և բաժակ մը կար :

Կուտարթիէ արդէն այն օշարակին մէկ մասը կէս ճամբ առաջ խմբը էր :

— Առ սա օշարակը և խմէ, բարի Պարուա, ըսաւ Վահաննթին, վասն զի կը տեսնեմ որ մծ փափաքով մը այս կիսատ շիշին կը նայիս :

— Եւ յիրաւի ծարաւութենէս կը պատպակիմ, և ես յօք ժարութեամբ կենացդ բաժակ մը պիտի խմեմ :

— Խմէ, ըսաւ Վահաննթին, և շուտով եկու — :

Պարուա ափսէն գուրս տարաւ և գաւթին մէջ սկսաւ պարպել այն բաժակը, զոր Վահաննթին իւր ձեռքով ընցուցեր էր :

Վահաննթին և Մարէլ Կուտարթիէի առջեւ իրարու ժամեցն, երբ Վիլլաֆորի պանդուիին վրայ զանդակին հնչուիլը լսեցին :

Եյցելութեան մը նշանն էր այն :

Վահաննթին ժամացոցը նայեցաւ :

— Կէս օք է, ըսաւ, այսօր շաբաթ է, սիրելի հաւս, անշատ բժիշկը պիտի ըլլայ — :

Կուտարթիէ նշան ըրաւ թէ իրօք ան պիտի ըլլայ :

— Հիմա հոս կու զայ, պէտք է որ ո՛, Մարէլ մեկնի, այնպէս չէ, սիրելի հաւս :

— Այսի, պատասխանեց ծերունին :

— Պարուա, զոչեց Վահաննթին, Պարուա, եկու — :

Ծերունի ծառային ձայնը լսուեցաւ որ կ'ըսէր :

— Եկայ, օրիորդ :

Պարուա հիմա զքեզ մինչեւ գուռը կը տանի, ըսաւ Վահաննթին Մարէլին, և հիմա հաւս պատուէր մը ունի քեզ, պարոն պաշտօնատար, որ մեր երջանկութիւնը վտանգի մէջ ձգելու կարող եղող որ և է զործ մը չընես :

— Խօսք ուստի որ պիտի սպասեմ, ըստ Մորէլ, և խօսք ողիտի բռնեմ — :

Այս միջոցին Պարուա ներս մտաւ :

— Ավ է զանդակը հիշեցընողը, հարցուց Վալանթին :

— Ո, ո՞վքինենի բժիշկն է, ըստ Պարուա իւր ստիցը վրայ երերալով :

— Ենչ ունիս, Պարուա, հարցուց Վալանթին — :

Ազրոմնի ծառան այլայլեալ աջօք իւր տիրոջ երեսը կը նայէր, ինչ ատեն կնձուած ձեռօքը կոթընելու տեղ մը կը փնտուէր որ ստրի վրայ կանդնի :

— Բայց Հիմա գետինը պիտի իյնալ — , դոչեց Մորէլ :

Իրօք՝ Պարուայի անդամները կը դողդզային և աստիճանարար գողգոջիւնը կ'առելնար :

Անոր դիմաց գնդերներուն ջղածդական շարժումներէն այլադունի ալ երեսը ջղային խիստ ուժդին յանկարծական հարուածէ մը բոնուիլը կ'իմացընէր :

Կնուարթիէ Պարուան այսպէս այլայլած տեսնելով, մարդուս սիրուը շարժող ամեն շփոթութիւններով նկարուած նայուածքով մը անոր կը նայէր :

Պարուա քանի մը քայլ իւր տիրոջ մտեցաւ :

— Բայց, ով Աստուած, ինչ ունիմ արդեօք, ըստ ծառան . . . : Հիւանդ հմ . . . : Աշքերս կը մթաղնին : Գանկս բոցալառ կը առաջին : Ո՛չ, մի գոշիք ինծի, մի գոշիք ինծի — :

Եւ յիրաւի ծերունույն աչերը գուրս ցցուած էին և դաժան կ'երեւէին . զլուիլը ետին կախուած էր, և մարմինը կարկանութեան մէջ կ'իյնար :

Վալանթին սոսկալով ձայն մը հանեց :

Մորէլ իւր բազկացը մէջ առաւ զան անծանօթ վտանդէ մը ստաշտանելու համար :

— Ո, ո՞վքինենի, ո, ո՞վքինենի, զոչեց Վալանթին չեղձեալ ձայնիւ մը, օգնութեան հասիր — :

Պարուա իւր բոլորակը զարձաւ, և երեք քայլ դէո՛ի

եսեւ զնաց , սահեցաւ ։ Նուարթիէի ոտից քովո ինկու , և իւր ձեռքը անոր ծունդին կոմընցընելով դուեց .

— Տէր իւր , բարի տէր իմ — :

Այս միջնցին Պ. աը Վ. իլլիօֆօր ձայներ լսելով իւր հօրը դրան առջին եղաւ :

Մարէլ Արտանթինը կէս նուաղեալ թօղուց , և դէու ՚ի ետեւ քաշուելով սեղանին անկինը զնաց և վարագոյրի մը ետին դրեթէ աներեցի՛ եղաւ :

Եւր առջեր օձ մը տեմնելու պէս զոյնը նետելով սղոր միլի ողեվարին վրայ սառած նայուածք մը յարեց :

Նուարթիէ անհամբերութենէն և սոսկումն կ'հոսար . իւր հոգին օդ նոտ թեան հասնել կ'ու զէր այն ոզորմի ծերաւոյն , որ աւելի իւր քարեկամի եր քան թէ ծառ ան : Եւր Հակաբին վրայ կենաց և մահուան սոսկալի մրցումը կ'երեէր , որ իւր աչաց բոլորալիքը կենդանի մնացած դնդերներուն կարկամւ թենէն և երակաց այսումն իր յայանուէր :

Պարուա յուղեալ գէմբով , արիւնալի աչօք , և պարանոցը գէու ՚ի ետեւ Հակեալ զետինը կը տակլարկիէր , և արունք ները կարծես խորտակուելու շափ կը ողիկուէին :

Ծուրթերէն թեթե փրփուր մը դուրս կ'ելնէր և վշտագին կը հեար :

Ակլը վօր սենեակը մանելըւն պէս այս սոսկալի տեսարանը տեսնելով ակնմարթ նայուածքով աղջած մնաց :

Մարէլ շտեսէր էր :

Եւր զոյնը նետելով և մազերը քամմելով , պահ մը ան ձայն գիտելէն ետեւ :

— Պ. բժիշկ , Պ. բժիշկ , պոռաց գէպ ՚ի զուռը ցամկելով , ելէր , եկէր :

— Տիկին , տիկին , զուեց Աշալանթին իւր մօրուն կանչելով և սանդուխին վանդակակներուն զարնուելով , եկէր , եկէր շուտով , և ձեր ողելից սրուակիը բերէր :

— Ե՞նչ կաց , հարցուց ամիկին աը Վ. իլլիօֆօր Հնջուկան և հանդարս ձայնիւ :

— Ա՛հ, եկէք, եկէք :

— Բայց ուր է բժիշկը, կը գուէք Վիլթֆօր, ուր զնաց — ։  
Տիկին աը Վիլթֆօր յամրաքայլ վար իջաւ, մէկ ձեռքը  
թաշկինակը բռնած էր, որով իւր երեսը կը սրբէր ու միւս  
ձեռքը՝ անգղիական թթուաղի սրուակը :

Դրան առջեւը հասնելով՝ նախ նուարթիէի նայեցաւ, որուն  
գէմբը այսպիսի պարագայի մէջ զզացած բնական յուղմաւն-  
քէն զատ վատառողջութիւն մը չէր յայտնէր, ետքը զետինը  
երկնցած ողեվար ծերունին տեսաւ :

Այն առեն իւր զոյնը նետեց, և իւր աչքը մերթ ծառային  
և մերթ անսր տիրոջը վրայ դարձաց :

— Աստուծոյ սիրոյն համար ըլլայ, ըսէք, տիկին, բժիշկը  
ուր է՝ ըստ Վիլթֆօր. քիչ մը տոաջ ձեր սենետակը մտաւ.  
Կը տեսնէք որ Պարուա կաթուածահար եղած է, արին առնե-  
լով կրնանք աղատել զան :

— Այս առտու ինչ կերաւ, հարցուց տիկին աը Վիլթֆօր  
իրեն եղած հարցումէն խուսափելով :

— Տիկին, ըստ Վալանթին, գեռ նախաճաշը չըրաւ,  
բայց հաւիս մէկ հրամանը կատարելու համար այս առտու  
վազելով յադնեցաւ. միայն ի գարձին բաժակ մը լեմոնի օ-  
շարակ խմեց :

— Ա՛հ, ինչու լիքնի օշարակին տեղ դինի չխմեց, ըստ  
տիկին աը Վիլթֆօր :

— Լեմոնի օշարակը հաւիս չիշին մէջ պատրաստ կը գըտ-  
նուէր. Պարուա ծարաւցած էր և զտածը խմեց — ։

Տիկին աը Վիլթֆօր սարսաց, նուարթիէ իւր խորունի  
նայուածքը անսր վրայ յարեց :

— Խեղձին պարանոցը խիստ կարձ է, ըստ :

— Տիկին, ըստ Վիլթֆօր, Պ. ա'ւազինեին ուր է, յա-  
նուն երկնից, պատասխան տուր :

— Էտուարս քիչ մը անհանգիստ է, անոր քովը կը գըտ-  
նուի —, ըստ տիկին աը Վիլթֆօր, որ չկրցեր էր սպասա-  
խանը աւելի երկարելու :

Վ. իլլոր դուրս ցատկեց անձամբ բժիշկը կանչելու համար :

— Եռ այս սրուակը, ըսաւ նորատի կինը սրուակը Վա-  
լանթինի տալով, անտարակոյս արիւն պիտի առնեն հիմա .  
ես իւր սենեակս կ'երթամ. քանզի չեմ՝ կրնար արեան հոսիլո-  
տեսնել — :

Եւ իւր ամուսնոյն ետեէն դուրս ելաւ :

Մորէլ իւր պահուած տեղէն դուրս ելաւ, ուր մէկը գինքը  
շտեսեր էր :

Վ. ալանթինի ձեռքը իւր որորին վրայ սեղմեց և դադանի  
գաւթէն դուրս ելաւ :

Նոյն միջոցին Վ. իլլոր և բժիշկը անոր հակառակ դռնէն  
ներս մտան :

Պարուայի խելքը գլուխը դալ կ'ըսկսէր . իւր ձգնամամբ  
անցեր էր, իւր խօսքերը հեծեծանաց կը նմանէին և մէկ  
ձնկան վրայ կ'ելնէր :

Տ'Ավրիներ և Վ. իլլոր Պարուան վերցընելով բաղմոցակե-  
րը վրայ տարին :

— Ե՞նչ կը հրամայէք, Պ. բժիշկ, հարցուց Վ. իլլոր :

— Քիչ մը ջուր և ոգելից եթեր բերել տուէք . տան մէջ  
եթեր ունի՞ք :

— Այո՛ :

— Ըուտով երթան բեեկնի իւղ և մաղձադեղ բերեն :

— Գնա՞ ուղածնեք բեր, ըսաւ Վ. իլլոր իւր ծառանե-  
րէն մէկուն :

— Եւ հիմա ամեն մարդ դուրս ելնէ :

— Ե՞ս ալ, հարցուց Վ. ալանթին երկոտութեամբ :

— Այո՛, օրիորդ, մանաւանդ դուք —, ըսաւ բժիշկը Խըս-  
տութեամբ :

Վ. ալանթին դարմացմամբ Պ. տ'Ավրինեիին նայեցաւ + Պ.  
նուարթիէի Ճակատը համբուրեց և դուրս ելաւ :

Բժիշկը տիսրութեամբ անոր ետեէն դուռը զոցեց :

— Տեսէք, տեսէք, ըսաւ Վ. իլլոր . ահա հանդստացաւ :

թեթե ախտահարութիւն մ'էր — :

այ . ա՛նըրինեի տիսրութեամբ ժայտեցաւ :  
 — Խ՞նօղէս ես , Պարուա , հարցուց բժիշկը :  
 — Քիչ մը աւելի աղելի եմ , պարուն :  
 — Այս եթերեալ ջուրը իրնաս խօնէլ :  
 — Աը փորձեմ . բայց մի դաշիք ինձի :  
 — Խնչու :  
 — Խնչու որ եթէ մատին ծայրովը մնա ամ գողշիք , ինձ այն-  
 պէս կ'երեսի թէ հարուածը նորէն պիտի դայ :  
 — Խոմէ :  
 Պարուա բաժակը առաւ , իւր մանիշակազոյն չըթանց մօ-  
 տեցաւց և դրեթէ անոր կէսը պարզեց :  
 — Ուր տեղդ կը ցաւի , հարցուց բժիշկը :  
 — Ըմեն կողման . բոլոր ջիղերուս կարկամութիւն մը կ'ըզդ ամ :  
 — Աչքդ կը ժթագնին :  
 — Այս :  
 — Ականչներդ կը դռնչն :  
 — Սոսկալի կերպով :  
 — Երբ սկսաւ այդ :  
 — Հիմա :  
 — Յանկարծ :  
 — Կայծակի պէս :  
 — Երէի , առ ջի օր բան մը ունէիր :  
 — Ըմենեին :  
 — Քնէութիւն կամ զ լսի ծանրութիւն ունէիր :  
 — Ու :  
 — Խ՞նչ կերար այսօր :  
 — Բան մը չկերայ . տիրոջս լեմոնի օշարակէն խմեցի միայն -  
 Եւ Պարուա զ լսովը նշան ըրաւ Պ . Նուարթիէ ցուցը-  
 նելու համար , որ իւր թեաթուին վրայ անշարժ նստած՝ ա-  
 ռանց շարժում մը կամ խօսք մը փախցքնելու այս սոսկալի  
 տեսարանը կը դիմէր :  
 — Ուր է այդ լեմոնի օշարակը , հարցուց բժիշկը :

- Վարը շիշին մէջն է :
- Վարը ուր տեղն է :
- Խոհանոցը :
- Կուղբէք որ եթթամ բերեմ զայն, որ բժիշկ, հարցուց  
Ախլօփօր :
- Ոչ, գուք հսու կեցէք, և աշխատեցէք այս ջուրին միա-  
ցորդը հիւանդին խմցընելու :
- Բայց լեմանի օշարակը ովկ . . . :
- Ես անձամբ կ'երթամ բերելու — :
- Տ'Ավրինեի մէկ ոստինով դուռը բացաւ, գեղ'ի սանդուխը  
ցատկեց և քիչ ճաց տիկին տը Ախլօփօրը վար պիտի դլ-  
ռէր, որ ան ալ խոհանոցը կ'իջնէր :
- Տիկինը ձայն մը հանեց :
- Տ'Ավրինեի իւր մատղբեալ միակ նորատակէն յափշտակուած՝  
անոր ուշադրութիւն անդամ չըրաւ. սանդուխին վերջին ե-  
րեք կամ չորս աստիճանները ցատկեց, խոհանոցը վազեց,  
և ափօէին վրայ չեցը տեսաւ, որուն երեք մասը պարպուած էր :
- Արծիւի մը իւր որոին վրայ յարձակելուն պէս՝ յափշտա-  
կեց զայն, և շնչառապառ վեր ելնելով սենեակը մօսաւ :
- Տիկին տը Ախլօփօր իւր սենեակը տանող սանդուխէն յամ-  
րաբայլ վեր կ'ելնէր :
- Հսու եղած շիշը այս է, հարցուց տ'Ավրինեի :
- Այս, պարոն բժիշկ :
- Եւ գուն այս նոյն լեմանի օշարակէն խմցիր :
- Կարծեմ :
- Ի՞նչ համ ունէր :
- Դասն էր — :
- Բժիշկը իւր ափին խոռոչին մէջ քանի մը կաթիւ լեմանի օ-  
շարակ գրաւ, շուրթերովը բերանը տռաւ, և լաւ մը յու-  
ղելէն ետե ինչպէս որ դինիին համը նայելու համար կ'ընենք,  
վառարանին մէջ թուքաւ :
- Ճիշդ այս է, ըսաւ. դուք ալ խմցիք ասկէ, պարոն  
նուարթիէ :

- Այս, ըստու ծերունին :
- Դուք ալ գառն համը առիք :
- Այս :
- Ա՛ս, պարոն բժիշկ, գոչեց Պարուա, ահա նորէն կ'ըս-  
դըսի. ով Տէր Աստուած իմ, զթա ինծի — :
- Բժիշկը հիւանդին քովը վաղեց :
- Կայեցէք, Պ. Վիլլֆօր, մաղձագեղը բերին — :
- Վիլլֆօր դուրս վաղեց պոտալով.
- Մաղձագեղը, մաղձագեղը չբերին :
- Մարդ պատախան շտուաւ.
- Տան մէջ խորին սարսափ մը տիրեր էր :
- Եթէ թոքին մէջ փէնելու միջոց մը ունենայի, ըստ  
ա'նվրինեի իւր ըոլութիքը նայելով, անոր շնչառութիւնը ար-  
դիւնելուն յառաջն առնելու դուցէ հնարն ըլլար + Բայց ոչ,  
բան մը չկայ, բան մը չկայ :
- Ա՛ս, պարոն, կը գոչէր Պարուա, այսպէս առանց օդ-  
նութիւն մը ընելու պիտի թողովէք զիս որ մեռնիմ: Ա՛ս, Տէր  
Աստուած իմ, ես կը մեռնիմ, ես կը մեռնիմ:
- Գրիչ մը, գրիչ մը տուէք ինձ — , ըստ բժիշկը :
- Սեղանին վրայ գրիչ մը տեսաւ, ու զան առնելով՝ հիւ-  
անդին բերանին մէջ խօթելու փորձեց, որ իւր ջղաձդու-  
թեանց մէջ փսխելու համար պարապ ջանքեր կ'ընէր. բայց  
ծամելիները այնչափ սեղմեր էր որ գրիչը բերանին մէջ չմտաւ:  
Պարուայի վրայ առաջինէն աւելի ուժդին ջղային ախտա-  
հարութիւն մը եկեր էր :
- Բաղմոցակին վրայէն դետինը ինկաւ, և տախտակամածին  
վրայ ձգտեալ մնաց :
- Բժիշկը չկարենալով անոր այս վիճակին մէջ օդնութիւն  
մը ընել, թողուց զան և նուարթիէին մօտեցաւ :
- Ի՞նչպէս է ձեր առողջութեան վիճակը, հարցուց անոր  
իսկոյն և ցած ձայնով. աղեկ էք :
- Այս :

- Ստամոքսնիդ լեթեւ է թէ ծանր . թեթեւ է :
- Այս :
- Ամեն կիրակի գեղահատը առած ճամանակ եղածնուզ  
ովեւ :
- Այս :
- Զեր լեմոնի օշաբակը Պարուան շինեց :
- Այս :
- Գուգ առաջարկեցիք անոր որ անկէ խմէ :
- Ոչ :
- Ու ալ Վիլլֆօր առաջարկեց :
- Ոչ :
- Տիկինը :
- Ոչ :
- Աւրեմն Վալանթին :
- Այս — :
- Այն միջոցին՝ Պարուայի մէկ հառաջանքը և իւր ծամբլիներուն ուկրները կրառու յօրանեցումը ո՞ւ Վլրինեիին ուշադրութիւնը դրաւեցին :
- Առաջիկ քովէն բաժնուելով հիւանդին քովը վաղեց :
- Պարուա, ըստ բժիշկը, կրնաս խօսիլ — :
- Պարուա քանի մը անիմաց խօսքեր կակաղեց :
- Քաջալերութիւն, սիրելիս — :
- Պարուա իւր արիւնալի աչքը բացաւ :
- Օշաբակը ո՞վ շինեց :
- Ես :
- Շինելուդ պէս տիրոջդ բերի՞ր :
- Ոչ :
- Աւրեմն տեղ մը թողուցիր անշուշտ :
- Խոհանոցին մէջ, այն միջոցին զիս գործի մը համար կը կանչէին :
- Ո՞վ բերաւ հոս :
- Օրիորդ Վալանթին — :

- Տ'Ավրինեի ձեռքը ճակտին դարկաւ :
- Ավ Աստուած իմ, մրմնջեց :
- Պարոն բժիշկ, պարոն բժիշկ, պուաց Պարուա՝ որ երբորդ Ճղնաժամին զալը կ'ըզգար :
- Բայց մաղձագեղը ուր մաց, զոչեց բժիշկը :
- Աչա մաղձադեղը, ըսաւ Վիլթֆօր ներս մտնելով :
- Ով պատրաստեց զայդ :
- Կոյն ինքն դեղագործը որ չետս եկած է :
- Խմել, ըսաւ բժիշկը Պարուային :
- Անկարելի է, պարոն բժիշկ, չատ ուշ է. կոկորդս կը սեղմուի, ու կարծեմ թէ կը խեղդուիմ: Ո՛չ, սիրաս . . . Կլուխս . . . Ո՛չ, այս ինչ դժոխք է . . . Արդհօք այս տառապանքներս աւելի երկար պիտի անեն :
- Ոչ, ոչ, բարեկամ, ըսաւ բժիշկը. Հիմա պիտի դադրին :
- Ոչ, կը հասկընամ, զոչեց ողորմելին. ով Աստուած իմ, զթա ինծի — :
- Եւ ձայն մը հանելով՝ իբր կայծակնահար կոնակին վըրայ ինկաւ :
- Տ'Ավրինեի ձեռքը անոր սրտին վըրայ դրաւ, և հայելի մը անոր շրթանցը մոտեցուց :
- Կ'նշպէս եղաւ, հարցուց Վիլթֆօր :
- Գացէք խոհանոցը ըսէք որ շուտով մանիշակի օշարակ բերեն — :
- Վիլթֆօր իսկոյն վար իջաւ :
- Մի վախնաք, պարոն Նուարթիէ, ըսաւ ա'Ավրինեի հիւանդը ուրիշ սենեակ մը պիտի տանիմ արիւն առնելու համար. ստուգիւ այս տեսակ հիւանդութիւնները սոսկում կը պատճառեն տեսնողին — :
- Եւ Պարուային թեւերուն տակէն բռնեց ու քաշելով մօտակայ սենեակ մը տարաւ զան. բայց գրեթէ անմիջապէս ետքը Նուարթիէի սենեակը դարձաւ լեմոնօշարակին մնացորդը առնելու համար :

Կոտարթիել իւր աջ աչքը կը դացէր :

— Վալանթինը կ'ուզէք, այնպէս չէ. հիմա կը զբկեմ  
ձեղ դան — :

Ակլը ֆօր այս միջոցին վեր կ'ելնէր :

Տ'Ավըինեի գաւթին մէջ անոր պատահեցաւ :

— Ի՞նչպէս եղաւ, հարցուց Ակլը ֆօր :

— Եկէք, ըստ ա'Ավրինեի, և ողորմելոյն սենեակը տա-  
րաւ դան :

— Միշտ ժարած է, հարցուց թագաւորի դործակալը :

— Ուստի, — պատասխանեց բժիշկը :

Ակլը ֆօր երեք քայլ ետ քաջուեցաւ, ձեռքը միացուցած  
վեր բարձրացուց, և յայտնի դժութեամբ մը դիակին նայելով՝  
ըստ :

— Այսպէս շուտով մնաւ :

— Այս, խիստ շուտով, այնպէս չէ, ըստ ա'Ավրինեի.  
բայց պէտք չէ զարմանալ : Պ. և տիկին տը Աէն-Մէրան-  
ներն ալ նոյնպէս շուտով մնան : Ա՛հ, ձեր տան մէջ շատ  
շատ կը մեռնին, պարոն տը Ակլը ֆօր :

— Ի՞նչ կ'ըսէք, պարոն, դոչեց զատաւորը երկիւզի ձայ-  
նով մը, զարձեալ նոյն սասկացի կարծիքները կը նորոգէք :

— Միշտ նոյնը կը կրկնեմ, պարոն, այս, ըստ ա'Ավրի-  
նեի վսիմութեամբ մը, վասն զի այն կարծիքները վայրիկան  
մը մոքէս չեն եներ, և որպէս զի ըստ համազուիք որ այս  
անդամ սխալած չեմ, ազէկ մտիկ ըրէք, պարոն տը  
Ակլը ֆօր — :

Ակլը ֆօր սոսկումն կը դոզար :

— Թայն մը կայ որ առանց հետք մը ձգելու կ'ըստանեէ :  
Այն թոյնը կը ճանշամ ես, ըստ որում անկէ յառաջ եկած  
վտանգները և նշանները քննած ե տորված եմ : Այն թոյնը  
արդէն տիկին տը Աէն-Մէրանին վրայ տեսեր էի, հիմա  
ալ ողորմի զարուային վրայ տեսայ : Միայն մէկ միջոց կայ  
զայն ճանշալու համար, թթուածինով կարմրած կապրյա

թղթին իւր բուն դոյնը կու տայ և մանիշակի օշարակը կանաչ կը ներկէ : Քովերնիս կապոյտ թռւղթ չունինք . բայց մանիշակի օշարակը ահա կը բերեն — :

Իրոք՝ դաւթին մէջ քայլերու ձայներ լսեցին . բժիշկը դուռը կիսով չափ բացաւ , սենեկապանուհիին ձեռքէն աման մը առաւ , որուն մէջ երկու կամ երեք դրդալ օշարակ կար , և դուռը վերստին դոցեց :

Դայեցէք հիմա , ըստ քիչկը թագաւորի դործակալին , որուն սրտի բարախիւնը այնպէս ուժով կը զարնէր որ զրէթէ կը լսուէր . ահա այս ամսնին մէջ մանիշակի օշարակը կայ , և այս շիշին մէջ լեմոնօշարակին մնացորդը , որուն մէկ մատը պարոն Դուարթիէ և Պարուա խմեցին : Եթէ լեմոնի օշարակը անարատ և անվնաս է , մանիշակի օշարակը իւր դոյնը պիտի պաշէ . իսկ եթէ թունաւորեալ է՝ մանիշակի օշարակը պիտի կանանչի . նայեցէք — :

Բժիշկը շիշին լեմոնօշարակէն քանի մը կաթիլ ամանին մէջ դրաւ , անմիջապէս ամսնին ատակը դոյնը փոխուեցաւ , նախ կապոյտի դարձաւ , ետքը շափիղայի , արեակնի ու վերջապէս դմրուխտի :

Այս դոյնը հաստատ մնաց . փորձը ամնենին ատակոյս չէր թռողուր :

— Ողորմելի Պարուան թունաւորուած է , ըստ տ' Եփրինեի . Հիմա մարդոց և Աստուծոյ առջեւ պիտի ստուգեմ դայն — :

Վիլը Փօր ըգատախանեց , ձեռքերը և ատուշ նայուածքը դէպ 'ի երկինք վերցուց , և իբր կայծակնահար թեաթոռին պրայ ինկաւ :



Պ Ա Ռ Ա Խ Ա Վ

Ե Մ Բ Ա Ս Ե Ն Ա Խ Թ Ի Ի Ւ Բ



**Ա Ր Ա Խ** ա' Ա վ ր ի ն ե ի շ ու տ ո վ դ դ ա տ ա ւ ո ր ի ն  
ի ն ե լ ք ը զ լ ո ւ խ ը բ ե ր ա ւ , ո ր ա յ ս ա խ ո ւ ը  
ս ե ն ե կ ի ն մ է ջ ե ր կ ր ո ր գ գ ի ա կ ի մ ը կ ը  
ն մ ա ն է ր :

— Ա հ , մ ա հ ը ի մ տ ա ն ս մ է ջ կ ը դ ա ն ո ւ ի , զ ո չ ե ց Ա ի լ ը ֆ օ ր :

— Մ ե ղ ք ը չ է ր ը ս ե ր , պ ա տ ա ս ա խ ա ն ե ց բ ժ ի չ ի ը :

— Պ ա ր ո ն ա' Ա վ ր ի ն ե ի , զ ո չ ե ց Ա ի լ ը ֆ օ ր , շ ե մ կ ր ն ա ր ա յ ս  
ր ո պ է ի ս զ զ ա ց ա ծ ս ձ ե զ յ ա յ ա ն ե լ . վ ա խ ը , ս ա ր ս ա փ ը և ի ն ե ն  
թ ո ւ թ ի ւ ն ը դ ի ս ս ր ա ծ ա ծ ե ն ը ր ո ւ ր ո վ ի ն :

— Ա յ ս , ը ս ա ւ Պ ա ր ո ն ա' Ա վ ր ի ն ե ի կ ա տ ա ր ե ա լ հ ա ն դ ա ր  
ա ռ ո ւ թ ե ա մ բ մ ը . ք ա յ ց կ ա ր ծ ե մ ա' լ ժ ա մ ա ն ա կ ը հ ա ս ա ծ է զ ո ր  
ծ ե լ ո ւ , և ա յ ս մ ա հ ո ւ ա ն հ ե ղ ե ղ ի ն ա ռ ջ ե ը թ ո ւ մ բ մ ը զ հ ե լ ո ւ :  
Ե ս կ 'ը զ զ ա մ օ ր պ ի ս ի կ ա ր ե ն ա մ ա ւ ե լ ի ե ր կ ա ր ժ ա մ ա ն ա կ ա յ ս  
պ ի ս ի զ ա զ ա ն ի ք ն ե ր պ ա հ ե լ ո ւ ա ռ ա ն ց թ է մ ա ր դ կ ա յ ի ն ը ն կ ե ր ո ւ  
թ ե ա ն և թ է զ ո չ ե ղ ո ւ ն ե ր ո ւ ն հ ա մ ա ր վ ր է ժ ի ն դ ի ր ը լ լ ա լ ո ւ . — :

Ա ի լ ը ֆ օ ր տ ի ս ո ւ ր ն ա յ ո ւ ա ծ ք ո վ մ ը ա չ ե ր ը ի ւ ր ք ո ւ ր ո մ ի ք ը  
պ ա ր ս ց ո ւ ց :

— Ա հ , ի մ տ ա ն ս մ է ջ , ի մ տ ա ն ս մ է ջ , մ ր մ ն չ ե ց դ ա տ ա ւ ո ր ը :

— Ա զ է , գ ա տ ա ւ ո ր , ը ս ա ւ ա' Ա վ ր ի ն ե ի , ի ր ի ւ մ ա ր դ վ ա ր  
ո ւ ե ց է ք և ի ր ի ւ օ ր ի ն ա ց թ ա ր դ մ ա ն ը կ ա տ ա ր ե ա լ զ ո չ ո զ ո ւ թ ի ւ ն  
ը ր է ք :

— Ի ն ձ ս ա ր ս ա փ կ ը պ ա տ ա չ ա ռ է ք , պ ա ր ո ն , զ ո չ ո զ ո ւ թ ի ւ ն  
ը ը լ ո ւ ի ք :

— Ա յ ս , զ ո չ ո զ ո ւ թ ի ւ ն մ ը :

— Մէկուն վրայ կը կասկած ի՞ք ուրեմն :

— Ամեներն մէկուն վրայ շեմ կասկած իր . մահք ձեր գուռը կը զարնէ , ներս կը մտնէ չէ թէ կոյրի մը պէս , այլ ապահով քայլերով մէկ սենեկէն միւսը կ'անցնի . և եօ աշնոր ընթացքը կը գիտեմ , անոր քայլերը կը տեսնեմ , և նախնեաց ըրածին համեմատ՝ խարխափելով կը փնտոեմ . բուտ որում ձեր ընտանեաց վրայ ունեցած սէրս և ձեզի համար ունեցած յարգանքս աշացս վրայ երկու պատաններ են , ուստի . . . :

— Ոչ , խօսեցէք , խօսեցէք , պարոն , մաիլ կ'ընեմ :

— Ուստի , պարոն , ձեր տանը կարելի է ձեր ընտանեացը մէջ այն աշուելի հրէշներէն մէկը կը զանուի , որոցմէ ամեն դար հատ մը կ'ըստեղծէ : Լոքիւսի և Ակրիբին , որոնք իրարու ժամանակակից էին , բացառութիւն մ' են . անոնք հախախամութեան զայրացման զործիք եղան ձռումայ մեղքերով պղծեալ կայսրութիւնը կործանելու համար : Արիւնո և Գրէտէկանու քաղաքակրթութեան մանկութեանը ժամանակ զժուար վաստակոց արդիւնքներն են , այն քաղաքակրթութեան , որուն մէջ մարդս մոքերը դսպել կը սորվէր , և այն զժուարի արցանեակներու միջոցաւ : Այս ամեն կինքերը տակաւին նորատի և զեղանի էին . իրենց հակատին վրայ կը փայլէր տակաւին անմեղութեան այն ծաղկելը , որ ձեր տանը զանուալ մեղապարտին հակատին վրայ իսկ կը տեսնուի — :

Վիլը Փօր Ճիչ մը հանեց , ձեռքերը իրարու միացաց , և պաղատելու շարժմամբ բժշկին նայեցաւ :

Բայց այս վերջինը անդթութեամբ իւր խօսքը շարունակեց :

— « Փնտու այն անձը որ զործուած չարիքէն օդուտ կ'ըսպասէ » , կ'ըսէ իրաւագիտութեան առակ մը :

— Պարոն բժիշկ , զակից Վիլը Փօր , տիսօս , պարոն բժիշկ , որը ափ անդամ մարդկային արգարութիւնը այս ազէտալի խօսքերով սխալած է : Զեմ զիսեր , բայց կարծեմ թէ այս մեղքը . . . :

— ԱՇ, ուրեմն կը խոստովանիք որ մեղք մը կայ:

— Այս, կը ճանանամ. բայց ի՞նչ ընելու է, համբերութիւն: Բայց թողուցէք որ խօսքս շարունակեմ, ինձ այնպէս կ'երևի կ'ըսեմ՝ որ այս մեղքը իմ վրաս կ'իյնայ և ոչ զահ եղողներուն: այս ամեն տարօրինակ աղետից տակը ինծի համար աղէտ մը կը նշամարեմ:

— Ոչ, մարդս ամեն կենդանեաց ամենէն եսականը և ամեն արարածոց ամենէն անձնասերն է, մրմնջեց տ'Ավրինեի, որ կը կարծէ թէ միայն իրեն համար աշխարհս կը գտոնայ, արեք կը լուսաւորէ, և մահը կը հնձէ. մարդս խոտի շնորի մը ծայրը զԱստուած անիծող մրջիւն մ'է: Եւ անոնք որ իրենց կեանքը կորսնցուցին, ուրիշ բան մը չկորսնցուցին. Պ. որ Սէն-Մէրան և Պ. Նուարթիէ . . . :

— Ի՞նչպէս, Պ. Նուարթիէ կ'ըսէք:

— Ե՛ս, այս, կը կարծէք որ այն ողորմելի ծառային թշնամութիւն մը ընել կ'ուղէին. ոչ ամենեին. Ծէքսրիրի Բոլոնիացիին պէս ուրիշի մը տեղ ինքը մեռաւ: Լեմանի օշարակը Նուարթիէի համար պատրաստուած էր, և Նուարթիէ իրերու տրամադրութեան համեմատ անկէ խմեց, իսկ միւսը գիսպուածով միայն խմեց, և թէպէտ Պարուա մեռաւ, բայց Նուարթիէի մահուան համար պատրաստուած էր այն:

— Բայց ուրեմն ի՞նչպէս հայրս շմռաւ:

— Տիկին ար Սէն-Մէրանի մաշոււան իրիկունը ձեր պարաիզին մէջ արդէն պատճառը ըսի ձեզ. վասն զի իւր մարմինը այս նոյն թոյնին սովորած է. վասն զի թոյնին այն քանակութիւնը իրեն համար անվասա, բայց ուրիշի համար մահացու էր. վասն զի վերջապէս մէկը շուկանը և ոչ իսկ մարդասապանը որ ես տարիէ մը 'ի վեր Պ. Նուարթիէի տուած գեղերուս մէջ բեեկնի թոյն կը դործածեմ. սակայն մարդասապանը աղէկ զիտէ և փորձով ալ տեսաւ որ բեեկնի թոյնը սոսկալի է:

— Ով Աստուած, ով Տէր Աստուած, մրմնջեց Ա.իլքօր բազուկները իրարու պլիելով:

— Մեղադարտին հետքը փնտոեցէք, պարոն. ոյն մեղադարտը Պ. աը Սէն-Մէրանը սպաննեց:

— Ո՛չ, բնչ կ'ըսէք, Պ. բժիշկ:

— Կրնալ երգնուլ, պարոն. մեռնելու ժամանակ ցուցը յած նշանները որոնք ինձ սկասմեցին՝ աշօքս տեսածներուս նոյն են — :

Վիլթօր վիճելը դադրեցուց և հառաջանք մը հանեց:

— Պ. աը Սէն-Մէրանը սպաննեց, կրկնեց բժիշկը, տիկին աը Սէն-Մէրանն ալ սպաննեց, որոնք կրկին ժառանգութիւն մը թողուցին — :

Վիլթօր իւր ճակատէն վաղած քրախնքը սըրեց:

— Աղէկ մարկ ըրեք, բսաւ բժիշկը:

— Ափոս, բսաւ Վիլթօր, մեծ ուշադրութեամբ մարկ կ'ընեմ ձեզ:

— Ասկէ քիչ ժամանակ առաջ, կրկնեց Պ. ա. Վիլթօրինելի իւր անողոքելի ձայնովը, Պ. Կուարթիէ ձեզի և ձեր ընտանեաց գէմ կտակ մը բրաւ և իւր բոլոր հարսաութիւնը աղքատաց թողուց. Պ. Կուարթիէ ակնկալութիւն մը չէր թողուր, և իւր ընտանիքը իրմէ բան մը չէր սպասեօ: Բայց երբ իւր առաջին կտակը չնջելով՝ երկրորդ կտակը շինեց, կ'ուղեն սպաննել զան, որպէս զի շըլլայ թէ երկրորդն ալ չնջելով՝ երրորդ մը չինէ. կարծեմ կտակը երէկ չէ առջի օրը չինեց. իը աեսնէք, ընօղը ժամանակ կորանցրնել չուզեք:

— Ո՛չ, զթացէք, պարոն ա. Վիլթօրինեի:

— Ամենեին, պարոն. բժիշկը երկրի վրայ նուիրական պաշտօն մը ունի, և զայն կտարելու համար կենաց մինչեւ աղքիւրները բարձրացած և մահուան զաղտնի մթութեանց մէջ իջած է, երբ մեղք մը կը դուծուի և Աստուած անտարակոյս զղուելով իւր նայուածքը յանցաւորին վրայէն կը վերցընէ, բժշկին պարագն է յանցաւորը յայտնելու:

— Գլթացէք աղջկանս, պարոն, մըմջեց Վիլթօր:

— Կը աեսնէք որ անոր հայրն ըլլալով դուք անոր անունը կու տաք:

— Գլացէք Աւալանթինիս , ո՞չ , անկարելի է , աւելի  
կուզեմ ինքդինքս ամբաստանել քան թէ Աւալանթինը , որ  
ագամանդեռլ սիրտ մը ունի , և անմղութեան շուշան մ'է :

— Բնաւ չեմ դժար , պարսն թաղաւորի դործակալ , Գոր-  
ծուած մազքը յայտնի է . օրիորդ աը Ավելոֆօր իւր ձեռօքը  
ծրարեր է ու . աը Աէն-Մէրանի զրկուած գեղերը , և ու .  
աը Աէն-Մէրան մեռաւ :

« Տիկին աը Աէն-Մէրանի բուսական օշարակը իւր ձե-  
ռօքը պատրաստեր է և տիկին աը Աէն-Աէրան մեռաւ :

« Օրիորդ աը Ավելոֆօր Պարուան աեզ մը զրկելով՝ անոր  
ձեռքէն այն օշարակին շիշը առեր է . որմէ իւր հաւը սո-  
վորաբար ամեն առառ կը խմէ , և Կուտարթիէ հրաշրով մի-  
այն մահաւանէ ազատեցաւ :

« Օրիորդ աը Ավելոֆօր յանցաւոր է . ան է թաւնաւորողը :  
Պարսն թաղաւորի դործակալ , օրիորդ աը Ավելոֆօրը իւր  
թաւնաւորող կամբաստանեմ , ձեր պարագը կատարեցէք :

— Պ . բժիշկ , ձեր խօսքին գէմ չեմ պներ ալ և ինքդինքո  
չեմ . պաշտպաներ . կը հաւատամ ձեր խօսքին , բայց դիմացէք  
ինձ , և կենացս ու պատույս խնայեցէք :

— Պարսն աը Ավելոֆօր , կրկնեց բժիշկը աւելի ուժգնու-  
թեամբ , այնպիսի ողարագաներ կան որոնց մէջ մարգկային  
յիմար զգուշութեան սահմանները կ'անցնիմ : Եթէ ձեր աղջիկը  
միայն մեզք մը դործած ըլլար , և երկրորդ մեզք մը դործելու  
դիմաւորութիւնը մեսնեի , ձեզ կ'ըսէի . Կուրասեցէք , պատ-  
ճեցէք զան . թող իւր կենաց մնացեալ օրերը վանքի մը ,  
մենաստանի մը մէջ լալով և աղօթք ընկելով անցընէ» : Եթէ  
երկրորդ անգամ նոյն մեզքը զործէր . « Եռէք այս թոյնը ,  
որուն անգեղայ մը դանուած չէ , պարսն աը Ավելոֆօր , կ'ը-  
սէի . Փայլակի պէս արագահաս և կոյցակի պէս մահացու է .  
անոր հազին Ըստուծոյ աւանդելով՝ այս թոյնէն առւէք անոր  
և այս կերպով ձեր պատիւն ու կեանքը ազատեցէք . վասն զի  
ձեր կենացը թշնամին է ան , և կը աեսնեմ որ իւր կեղծա-

ուր ժպիտովն ու շողրքորթութեամբը ձեր սնարին մօտեցած  
է : Ամյ ձեզ, պարոն առ Ալիլքֆօր, եթէ սպաննուելէ առաջ  
դոք շարտորաք զան սպաննելու : Ահա այս խօսքերը պիտի  
ըսէի ձեզ եթէ միայն երկու հոգի սպաննած ըլլար . բայց ձեր  
աղջիկը երեք ողեվարներ առասաւ և երեք դիմիկներու առջն  
ծնրագրեց . թունաւորազը դահճին յանձնեցէր, ի մահ : Չեր  
պատուոյն խօսքը կ'ընէք . դուք իմ բատակ կատարեցէք, և  
անմահաւթիւնը ձեզ կ'ըսպասէ :

Ալիլքֆօր ծնկան վրայ եկաւ :

— Մտիկ ըրեք, ես ձեզի շափ սրտու չեմ, և զուցէ դուք  
ալ սրտու պիտի շրլլայիք եթէ իմ Ալալանթին աղջկանս  
անդ ձեր Մատըլէն աղջի՛ն ըլլար — :

Բժշկին զոյնը նետեց :

— Ու, բժիշկ, շարունակեց Ալիլքֆօր, ամեն կնածին մարդ  
նեղութիւն կրելու . և մեռնելու համար ծնած է . ես ալ պիտի  
նեղութեան համբերեմ և մահուանս սպասեմ :

— Զգուշացէք, ըստ ու ա'Ավրինեի, մահը պիտի յամե-  
գես . . . : Չեր հայրը, կինը, և զուցէ ձեր որդին ալ սրան-  
նելէն ետե ձեզ պիտի մօտենայ :

Ալիլքֆօր բժշկին բազուկը սեղմելով :

— Մտիկ ըրեք ինձ, ըստ հեղձամզաւկ ձայնիւ . ցաւեցէք  
ինծի համար, և օդնեցէք ինծի . . . : Ոչ, աղջկու յանցաւոր  
չէ . . . : Զիս դատաստանի կանչեցէք, և ես միշտ պիտի ը-  
սեմ, « Ոչ, աղջկու յանցաւոր չէ . . . » : Տանս մէջ զործուած  
մեղք չկայ . . . : Աը լսէք, շեմ ուզեք որ տանս մէջ մեղք մը  
զործուած ըլլայ, վասն զի եթէ մեղքը տեղ մը մանէ՝  
մահուան պէս առանձին չլուներ : Չեր ինչ հոգը եթէ ես  
սպաննուելով մեռնիմ, միթէ դուք իմ բարեկամուէք . միթէ  
դուք մահդ մ'էք և զուք սիրտ մը ունիք . . . Ո՛չ, դուք  
բժիշկ, մ'էք . . . Աւրեմ զիսցիք որ ես շեմ կրնար իմ ձեռօքս  
աղջկու դահճին յանձնել . . . : Ա՛հ, միայն ատոր զաղափարը  
զիս կը տանջէ և կը մղէ զիս բզունդներովս սիրտս կեղեքե-  
լու . . . Բայց եթէ կը սխալիք, ու, բժիշկ, եթէ թունաւորազը

աղջիկս չեւ . ոչ , եթէ օր մը ուրուականի պէտ զունատեալ ձեւք քովո զալով ըստի . « Ո՞վ մարդասպան , դռւն իմ աղջիկս սպաննեցիր . . . » : Եթէ ստուդի այսպէս պատահէր , պարոն ա՛ւալինեի , ես քրիստոնեայ եմ . բայց ինքովու կ'ըսպանալի :

— Բարի , ըստ բժիշկը վայրկենական լոռութենէ մը ետեւ , կ'ըսպասեմ — :

Ախլաֆօր իւր ըսածներուն վրայ տարակուածի մը պէտ անոր երեւը նայեցաւ :

— Միայն թէ , շարունակեց ու . ո՞ւ վալինեի կամաց և հանգիստոր ձայնով մը , եթէ ձեր տանը մէջ մէկը հիւանդանայ , եթէ հիւանդացող գուք խկ ըլլաք . մի կանչէք զիս , ալ չեմ զար ես : Այս սոսկալի դաղսնիքը մէկուն շրայտնեւու կը հաւանիմ . բայց չեմ ուզեր որ աւելի ամօթով մնամ և խիզս աւելի ծանրաբեռնի . ինչպէս որ ձեր տան մէջ մղքն ու թշուառութիւնը պիտի մնան և արդիւնաւորին :

— Աւրեմն զիս պիտի թողովք , ու . բժիշկ :

— Այս , վասն զի չեմ կրնար աւելի երկար ժամանակ ձեր տունը յաճախել , եթէ ոչ պէտք եմ դիսատարանին մատնուիլ : Աւրիշ առիթ մը երեան ելնելով այս սոսկալի ողբոց վերջ պիտի տայ : Մնաք բարեաւ :

— Ու . բժիշկ , կը պաղատիմ՝ կեցիք :

— Եմ միտքս պղծով ամեն սոսկալի դէպքերը ձեր տունը ատելի և աղէտալի կ'ընեն ինձ : Մնաք բարեաւ , պարոն :

— Խօսք մը ըսեմ , միայն խօսք մը , ու . բժիշկ : Զիս սոսկալի կացութեան մը մէջ թողովք կը մնինիք , այնպիսի կացութեան մը , զոր ձեր յայտնածովք աւելի սոսկալի կ'ընեք : Բայց ողորմիլի ձեր ծառային այն յանկարծական մահուան համար հիմա ինչ պիտի ըսէ ամեն մարդ :

— Երաւունք ունիք , ըստ ո՞ւ վալինեի , եկէք ուրեմն — :

բժիշկը առջեն դուրս ելաւ և ու . տը Ախլաֆօր անոր հուեւէն զնաց :

Ծառաները բժշկին անցնելու դաւթին և սանդուխին վրայ անհանգ սառւթեամբ կ'ըսպասէին :

— Պարոն, ըսաւ մ'Ավրինեի Ա.իլլոֆօրին այնպիսի բարձր ձայնով մը որ ամեն մարդ կարենայ լսել : Աղորմնի Պարուան քանի մը տարիէ ՚ի վեր հանգիստ սպազոն մը կը վարէր . ժամանակաւ իւր տիրոջը հետ ձիով կամ կառուով եւրոպայի չորս կողմը վազելու սովորած ըլլալէն ետեւ : Թեւաթոսի մը բոլոր տիքը միօրինակ ձառայութեան մէջ իւր իննացը մեծ վնաս պատճառեց, արինը ծանրացաւ, և խիստ գեր ու պարանցը հաստ ու կարծ ըլլալուն՝ յանկարծական կաթուած մը եկաւ վրան և շատ ուշ իմացուցին ինձ : Աղէկ միտքս եկաւ, յաւելցուց բժիշկը ցած ձայնին, հոգ տարէք մանիշակի սշարակը մախիրին մէջ թափելու — :

Եւ բժիշկը առանց Ա.իլլոֆօրի ձեռքը սեղմելու և առանց իւր խօսքին վերադառնալու գուրս ելաւ, բոլոր տան մարդիկը արտասուաց և ողբոց մէջ թողլով :

Դոյն իրիկունը՝ Ա.իլլոֆօրի բոլոր ձառաները, որոնք խոհանոցը գումարուելով երկարօրէն խօսակցեր էին, ամենքնին միասեղ տիկին տը Ա.իլլոֆօրի ներկայացան և հրաման խընդուցին որ այն տունէն մեկնին :

Տիկինը որչափ և աղաւեց և անոնց ամսականները աւելցընելու խոստումներ ըսաւ, անոնք ամեն խօսքին այսպէս կը պատասխանէին :

— Կ'ուզենք հեռանալ այս տունէն, քանզի մահը անոր մէջ կը դանուի — :

Ուստի առանց տիկինոջ աղաւանաց ականջ դնելու մեկնեցան այն տունէն՝ իմացընելով որ մեծ ցաւ մը կ'ըզդալին այնպիսի բարի տէրերէ բաժնուելնուն համար, մանաւանդ օրիորդ Վալանթինէն, որ այնչափ բաժրեսիրա, բարերար և քաղցր էր : Ա.իլլոֆօր այս խօսքին վրայ Ա.ալանթինի երեսը նայեցաւ : Աղորմելի աղջիկը կու լար :

Զարմանալի բան, Ա.իլլոֆօր անոր արտասուգը տեսնելով՝

զգացած սրտի յուզմանը մէջ տիկին ար Ալիքֆորի երեսը  
նայեցաւ, և իրեն այնպէս երեւցաւ թէ տխուր և թեթե  
ժպիս մը կը տեսնէր անոր նուրբ շրթանց վրայ այն օդե-  
րեոյթներուն ողէս, որոնք մըրկայոյզ երկնից տակը երկու  
աճնոց մէջ աղէտալի կը տեսնուին:



### ԳԼՈՒԽ Գ.

#### ԹԵԿՈՒՅԵՑԵԼ ՀԵՏՎԴՈՒԹԻՆ ՍԵՆԵԾԿԸ

**Յ** Սանկտորի տուած ցուրտ ընդունելութենէն  
Մարտէրի կամսր վիրաւորեալ և սըրտ-  
մատւթեամբ սեղանաւորին տունէն  
դուրս ելած իրիկունը՝ Պ. Անտրէա  
Գալալզանթին դանդռած և փայլուն  
մազերով, ոլորած ընչացքով, ըդունդներուն ձեզ երեցընող  
սպիտակ ձեռնոցներով զրեթէ կառքին մէջ ոտքի վրայ կեցած  
Շոսէ-ա՛նթէն փողոցը սեղանաւորին դաւիթին մէջ մը-  
տեր էր:

Սրահը ելնելով տասը վայրկեան խօսելէն ետե՛ Տանկլարը  
պատուհանի մը մօտ տանելու միջոցը զտաւ, ուր իւր աղնիւ

հօրը մեկնելէն 'ի վեր իւր կենաց նեղութիւնները հանձնաւ բայի յառաջարանով մը նկարող բեց :

Այն ժամանակէն 'ի վեր, կ'ըսէր, սեղանաւորին տունը իրբե զաւակ ընդունուելով, անոր ընտանեաց մէջ երջանկութեան այն երաշխաւորութիւնները զաեր էր, զգործնք մարդու սիրոյ մասհաճութիւններէն առաջ պէտք է որ փնտուէ, և սիրոյ մասին՝ օրիորդ Տանիլլարի զեղեցիկ աշաց մէջ զտնելու բարերադութիւնն ունեցեր էր :

Տանիլլար խորին ուշադրութեամբ մտիկ կ'ընէր անոր :

Երդէն երկու կոմմ երեք օրէ 'ի վեր անոր սիրոյն յայտարարութեանը կ'ըսպասէր, և երբ վերջապէս լսեց դայն, իւր աչերը այնափ զուարթ երեցան որշափ որ Մորուէրֆի հետ խոսեցած միջոցին ախուր էին :

Այսու ամենայնիւ առանց խորդի քանի մը զիսողութիւնները ընելու՝ երիտասարդին առաջարկութիւնը խորհնչելու համար նիւ չուզեց :

— Պ. Անորէա, ըսաւ, ամուսնութեան խորհնչելու համար դեռ փոքր չէք :

— Ամենեին, պարոն, կոկնեց Գավալզանթի, զանէ ինչ այնպէս կ'երեի. Խոտալիոյ մէջ՝ մեծ պարոնները ընդհանրապէս շատ փոքր կ'ամուսնանան. աղէկ մտածուած սովորութիւն մ'է այս: Մարդկային կեանքը այնչափ փոփոխական է որ մեր առջին ներկայացած բարերադութիւն մը պէտք չէ որ փախացընենք:

— Համարենք թէ, պարոն, ձեր առաջարկութիւնը, որ ինչ պատիւ կը բերէ, կինս և աղջիկս ընդունին, զործին վրայ որո՞ւ հետ պիտի խօսինք: Կարծեմ՝ ծանր խնդիր մ'է այս, զոր հայրերը միայն դիտեն իրենց զաւակաց երջանկութեան համար ըստ պատշաճի տնօրինել:

— Պարոն, հայրս խոհեմ, պատշաճութիւնները յարզող ե հանձարալի անձ մ'է: Գաղղիա հաստատուելու համար դդացած բաղձանքս հաւանականաբար զուշակելով՝ իմ ծնըն-

դեմանս վերաբերեալ վիճայագիրերուն հետ հաստատագիր մը եւ թողուց ինծի ։ որով եթէ ըրած ընտրութիւնս իրեն հաճելի ըլլայ ։ ամուսնացած օրէս հարիւր յիշուն հազար ֆրանք եկաւաւ կը հաստատէ ին ։ Կարծեմ այս դումարը հօրս ունեցած եկամուտին մէկ քառորդն է ։

— Ես միշտ միտքս դրած էի աղջկանս կարգուած ժամանակ հինգ հարիւր հազար ֆրանք տալ ։ ժանաւանդ թէ իմ միակ ժառանդս ան է ։

— Աւրեմն, ըստ Ընտրէա, ենթադրելով թէ առաջարկութիւնս տիկին Տանկլարէն և օրիորդ Էսթէնիէն պիտի չմերժուի, դորջը կատարուած ըսել է ։ անմիջապէս հարիւր եօթանասուն և հինգ հազար ֆրանք եկամուտ պիտի ունենանք ։ Ենթադրենք իսկ որ մարդեղ հայրս եկամուտը վճարելու տեղ՝ դրամագլուխը տայ ։ (թէ և զիսեմ որ դիւրին բան չէ, բայց վերջապէս կրնոյ ըլլաւ) ։ այն երկու կամ երեք միլիոն ֆրանքը մեր շահուն կը բանեցընէք ։ և երկու կամ երեք միլիոն ֆրանքը փորձառու մարդու ձեռքով միշտ կրնոյ հարիւրին տասը շահ բերել ։

— Զորուն աւելի շահով ստակ առած չեմ, ըստ սեղանարորը, և երեք ու կէսով անդամ առած եմ. բայց փետայիս ստակը հարիւրին հինգով կ'առնում և շահը մէջը կը բաժնենք ։

— Շատ աղէկ ։ թող այնպէս ըլլայ, սիրելի աներս — , ըստ Գալվալլանթի չկրնալով իւր սամկային բնութիւնը զսպել, որով մերժ ընդ մերը իւր կեղծ ազնուականութիւնը ակամայ կը յայտնէր, թէկ դազտնի պահելու համար մեծ ջանքեր կ'ընէր ։

Սակայն իսկոյն ինքզինքին դալով

— Ո՛չ, ներեցէք, պարո՞ն, ըստ ։ այս միութեան ակնկալութիւնը միայն զիս կը խենթեցընէ ։ ըսէք՝ իրօք զործը բնապէս պիտի ըլլայ ։

— Բայց, ըստ Տակլար՝ որ այս խօսակցութիւնը անտար-

բերութեամբ սկսելով՝ առանց զգալու իսկոյն շահախնդրութեան զարձուցեր եք, ձեր հարստութեան մէջ անտարակոյս մաս մը կայ, զոր ձեր հայրը պիտի չերնայ մերժել ձեզ:

— Ա՞ր մասը:

— Ձեր մօրը կողմանէ ձեզի ինկած մասը:

— Այս, անշուշտ ԱԷոնորա Գորսինարի մօրս կողմանէ ինձի ինկած բաժինը պիտի տայ:

— Եւ ո՞րշափ զումար մը կը կաղմէ այդ բաժինը:

— Ճշմարիտ կ'ըսեմ, պարոն, որ երբէք անոր վրայ խորհած չէի, սակայն կարծեմ առ նուազն երկու միլիոն ֆրանքի կը հասնի — :

Տանկլար այն ուրախութեան սրտի հեղձումը կ'ըզդար, զոր կ'ըզդան կորսուած դանձը դանող աղահը կամ խեղդուելու վրայ եղող մարդը, որ ոտիցը տակ բացուած անդանդին տեղը հաստատ երկրի մը կը հանդիպի:

— Աւրեմն, պարոն, ըստ Վնտրէա սիրալիք յարդանօք սեղանաւորին խոնարհութիւն մը ընելով, կրնամ յուսալ. . . :

— Պ. Անտրէա, ըստ Տանկլար, յուսացէք և հաւատացէք որ եթէ ձեր կողմանէ դործին առջել ամենենին արդելը մը չելնէ կատարուած սեղեցէք զայն: Բայց, յաւելուց Տանկլար մատծելով, ինչպէս եղաւ որ Պ. Մօնթէ-Քրիսթոյ կոմսը, որ բարիղեան ընկերութեանց մէջ ձեր պաշտպանն է, ձեզի հետ չեկաւ այս առաջարկութիւնը ընելու — :

Վնտրէա հազիւ նշանաբելի կերպով կարմրեցաւ:

— Հիմա կոմսին տունէն կու զամ, պարոն, ըստ սառուղիւ ազնիւ բայց տարօրինակ բնութեան տէր անձ մ'է: Իմ գիտաւորութիւնս դովեց, և ըստ իսկ թէ կը կարծէ: որ հայրս եկամուտին տեղը գրամագլուխը տալու համար քիչ մը պիտի երկմտի: սակայն խոստացաւ ինձ իւր աղդեցութիւնը՝ ի զործ դնելու և օգնելու: որ ուղածս հօրմես ընդունիմ: սակայն բացարձակապէս յայտնեց թէ երբէք ամուսնութեան

անաջարկութիւն մը ընելու պատասխանառուութիւնը երբէք իւր վրայ առած չէր և բնաւ պիտի շառնուր։ Աակայն այս ալ պէտք է խոստովանիլ որ բարեհանեցաւ յաւելցընել թէ այս խնդիրքս շընդունելը իմ օդտիտ համար է, ըստ սրում այնպէս կը կարծէր թէ յապաղեալ միութիւն մը կրնար երջանիկ և պատշաճ ըլլալ։ Աակայն և այնպէս՝ եթէ պոշտոնական կերպիւ զործ մը կատարել չուղեց, գոնէ ըստ ինձ որ իմ վրայօքս խօսուած ժամանակը պէտք եղածը պիտի խօսի։

— Ըատ աղէկի։

— Հիմա, ըստ Ընտրէա իւր զուարթ ժպիտովը, աներիս չետ խօսքս վերջացընելով սեղանաւորին պիտի ուղղեմ խօսք։

— Ի՞նչ կ'ուղէք, ըսէք, ըստ Տանկլար անոր պէս ուրախ ժպիտով մը։

— Վաղը չէ հետեւալ օրը ձեր լումայանոցէն չորս հազար ֆրանքի չափ զումար մը ունիմ ընդունելու, բայց կոմսը զուշակելով որ առաջիկայ ամսուան մէջ ծախքս պիտի աւելշնայ և ամուրիի շափաւոր եկամուտս պիտի չբաւէ, ահա այս քանի հազար ֆրանքոց վճարատոմնը չեմ ըսեր տուաւ այլ նուիրեց։ Խնդպէս կը տեսնէք՝ վճարատոմնը իւր օտորապրութիւնը կը կրէ, պիտի ընդունիք զայն։

— Այս օրինակ վճարատոմնը միլիոն մը անդամ բերէք՝ կ'ընդունիմ, ըստ Տանկլար վճարատոմնը ծոցը գնելով։ Հիմա ըսէք ինձ, վաղը ժամը քանիին տունը կը զանուիք, որպէս զի քանի հազար ֆրանքը ձեր տունը զրիեմ։

— Եթէ կը հաճիք՝ առառուան ժամը տասին, որչափ կանուխ այնչափ աղէկ, կ'ուղէի վաղը դիւղը երթալ։

— Ըատ աղէկ, վաղը ժամը տասին՝ իշխանաց պանդոկը, այնպէս չէ։

— Այս — :

Հետեւալ առառ այնպիսի ճշգութեամբ մը, որ սեղա-

նաւորին պատիւ կ'ընէր, քսան և չորս հազար ֆրահիքը երիւ տասարդին տունը ղրկուեցաւ. Անտրէա Քատրուսի համար երկու հարիւր ֆրանք թռողէն ետե՝ իրաք գուրս կ'ելնէր.

Անտրէայի դուրս ելնելուն դլխաւոր նսղատակն էր իւր վտանգաւոր բարեկամին ներկայութենէն խորշիլ. ուստի իրի կունն ալ խիստ ուշ վերադարձաւ:

Բայց հազիւ թէ սուբը զաւթին քարայատակին վրայ կոխեց, երբ պանդոկին դռնապանը, որ դլխարկը ձեռքը բռնած իրեն կ'ըսպասէր, իւր առջին ներկայացաւ:

— Պարոն, ըստե, այն մարդը եկաւ:

— Ո՞ր մարդը, հարցուց Անտրէա անտարբերութեամբ՝ որպէս թէ մասցած ըլլար այն անձը, զոր ընդ հակառակն շատ աղէկ կը յիշէր:

— Այն մարդը, որուն Զեր Ասեմաւթիւնը ոռջիկ մը կու տայ — :

Անտրէա ինքզինքը Ասեմաւթիւն կոչել կու տար:

— Այս, միտքս եկաւ, հօրս հին ծառան. ինչ ըրիր, անոր համար թողուցած երկու հարիւր ֆրանքս տուիր:

— Այս, տէր իմ, սակայն չընդունեց — :

Անտրէայի զոյնը նետեց. բայց իրիկուն ըլլալուն իւր գեղնութիւնը յայտնի չեղաւ:

— Ի՞նչպէս, ըստե սակաւ ինչ յառղեալ ձայնիւ մը. չու շեց ընդունիլ:

— Ոչ, կ'ուզէր Զեր Ասեմաւթեան հետ խօսիլ. ըսի անոր թէ գուրս ելած էք, մոփի չըրաւ. բայց վերջապէս համազուեցաւ և այս նամակը տուաւ զոր կնքեալ հետը բերած էր:

— Տեսնենք ինչ զըլ ը է — , ըստե Անտրէա, և իւր կառքին լապտերին լուսովը հետեւալը կարդաց.

« Բնակած տեղս զիտես. վաղը առառ ժամը իննին քեղ կ'ըսպասեմ » :

Անտրէա կնիքը քննեց, որպէս զի տեսնէ թէ արդեօք բանալու փորձե՞ր էին և անզդոյշ աշեր կրցե՞ր էին նամակին մէջ

թափանցիւ էր . բայց այնպէս ծալլուած էր այն , և այնպէս չեղանկիւնի մե մը ունէր որ նամակը կարդալու համար կնիքը պէտք էր քակել . բայց կնիքը բոլորովին անեղծ մնացած էր : — Ըստ աղեկի , ըստ իմեղջ մարդ , ինչ ազնիւ արարած մ'է ան — :

Դունապանը այս խօսքերէն գոչ եղած՝ չէր զիտեր թէ որո՛ւ վրայ զմայլի , իւր երիտասարդ տիրո՞ջը թէ հին ծառային :

— Կառքին ձիերը շուտով արձակէ և սենեակս եկու , ըստ Անտրէա իւր սպասաւորին — :

Երիտասարդը երկու ստիւնով իւր սենեակն ելաւ և Քատրուսին նամակը այրեց , որուն մօխիրն անզամ աներեսյթ ըրուաւ :

Այս դործը վերջացընելու վրայ էր երբ ծառան ներս մտաւ :

— Բիէր , ըստ անոր , երկուքս ալ մի և նոյն հասակն ունինք :

— Այդ սպատիւը ունիմ , տէր իմ , սպատասխանեց ծառան :

— Երէկ հագ մը նոր զգեստ բերին քեզ կարծեմ :

— Այս , պարո՞ն :

— Սիրուհին մը երթալու եմ , որուն ոչ տիտղոսս իմացը նել կուզեմ և ոչ աստիճանս : Քու նոր զգեստներդ ինձ տաւը , անցագիրերդ ալ բեր , որպէս զի 'ի հարկին պանդոկ մը պատկել կարենամ — :

Բիէր հնազանդ եցաւ :

Հինգ վայրկեան ետքը՝ Անտրէա բոլորովին ծպտեալ առանց Ճանչցուելու պանդոկէն դուրս ելաւ , կառք մը վարձեց և Բիբրիւս՝ Շըվալ-Ռուժի պանդոկը զնաց :

Հետեւալ առտու՝ Շըվալ-Ռուժի պանդոկէն մեկնեցաւ Խշանաց պանդոկէն մեկնածին պէս , այսինքն առանց Ճանչցուելու , Աէնթ - Անթուանի արուարձանէն իջաւ , ծառուզին մտաւ մինչև Աէնիլ-մանթանի փողոցը յառաջացաւ : և ձախ կողմի երրորդ տան դրան առջեւ կեցաւ . որուն զըս-

նապանը հոն չտեսնելով՝ մէկը կը փնտռէր որ հարցուփորձ ընէ :  
— Չո՞լ կը փնտռես, սիրուն տղաս, հարցուց դիմացի  
պաղապահառուհին :

— Պ. Բայլըթէնը մէր կը բնակի, մայրիկ, պատասխանեց Անտրէա :

— Մեկուսացեալ հացադժոծը կը հարցընես, իրենեց կինը :

— Ճիշտ ատ է փնտռածս :

— Երբորդ գտակոնի դաւթին ծայրը ձախ կողմը նայէ — :

Անտրէա նշանակուած կողմը ուղղեցաւ և երբորդ գտակոնին զաւթին ծայրի սենեկին առջելը հասաւ, որուն զանդակի առասանը տհաճութեամբ մը քաշեց, ու անմիջապէս անոր արագ աչնչիւն ձայնը լսուեցաւ :

Մանրերկրորդ մը և տքը՝ դրան մէջ զետեղուած վանդակներուն առջին Քատրուսին դէմքը երևցաւ :

— Ա՛հ, կը տեսնեմ որ ճշգրապահ ես եղեր, ըստ անոր և վանդակներուն նիդ երը բացաւ :

— Անշուշտ — , ըստ Անտրէա ներս մտնելով :

Եւ իւր առջելը զլիանոցը նետեց, որ աթոռին չհամնելով զետինը ինկաւ, և իւր շրջանակին վրայ զլորելով սենեկին բոլորտիքը դարձաւ :

— Աղէ, բարեկամ, մի բարեկանար, սիրելիս, տես քեզի համար ինչ աղուոր նախաճաշ մը պատրաստեցի, ամենքն ալ քու սիրածներգ են — :

Անտրէա իրօք կերակուրի հոտեր առաւ, որոնց համեմեկը թէև անուշ չէին բուրեր, բայց անօթի մարդուն ախործակը կը սրէին :

Ճարսղին հոտին հետ խստորին հոտը խառնուած էր, որ դաւառային ստորին կարդ ի խոհանոցի կերակուրներ ըլլալը կը յայտնէր :

Այս հոտերէն զատ՝ հայի փշրանքով տապկուած ձուկի և ամենէն ալ աւելի՝ մշկահոտ ընկուղի և մեխակի բարեկ հոտերը սենեկին մէջ վարակած էին :

Այս ամեն հոտերը կը ծաւալէին երկու թոնիքներու վրայ զետեղուած երկու դոգաւոր և ծածկուած պնակներէ և սանէ մը , որ թափծու կրակարանի մը փուռին մէջ կը խարկէր :

Քովի սենեկին մէջ Անտրէա բաւական մաքուր սեղան մը տեսաւ , որ երկու հոգւոյ համար պատրաստուած էր . անոր վրայ դինիի երկու կնքեալ շիշեր , որոնց մէկը կանանչ միւսը դեղին դոյն ունէր , ողլով լցուն փոքր շիշ մը . և ձենական խեցէղէն սկառառ ակի մը մէջ Ճարտարութեամբ շտկուած կաղամբի լայն տերեկի մը վրայ սրտուղներու խառնուրդ մը զետեղուած էր :

Ի՞նչպէս կը դանես , սիրելիս , ըսաւ Քատրուս . զեղեցիկ հոտեր չե՞ն : Ա՞չ , զիսես աղէկ որ լաւ խոհարարութիւնն կ'ընէի հօն . չե՞ս յիշեր , եփած կերակուրներս ուտողը մատերը կը լիզէր . և դուն ամենէն առաջ համեմեներս Ճաշակած ես և կարծեմ անախարժ չէիր զանոնք — :

Եւ Քատրուս սկսաւ սոխ մը աւելի սուրկել :

Աղէկ , աղէկ , ըսաւ Անտրէա ահաճութեամբ մը . բայց միատեղ նախաճաշելու համար զիս այսպէս անհանգիստ ըրիք . ի՞նչ անտանելի բան է այս :

Որդեակս , ըսաւ Քատրուս խելացիութեամբ , ուտելու ժամանակ կը խօսակցինք . բայց ի՞նչ ապերախտ ես եղեր դուն , ուրեմն բարեկամդ տեսնելու հաճութիւն մը չես զզար , ես ուրախութենէս կու լամ — :

Եւ յիրարի Քատրուս կու լար :

Միայն թէ չենք կրնար ըսել թէ ուրախութիւնն էր եթէ սոխերը , որոնք Բոն-տիւ-կարի հին պանդոկապետին աշերէն արտասուք կը հոսեցընէին :

— Լուէ , կեղծաւոր , ըսաւ Անտրէա . միթէ դուն կը սիրեմ զիս :

— Այս , կը սիրեմ զքեզ , հաւատա ինձի . զիսեմ որ ակարութիւն մ'է այս , ըսաւ Քատրուս , բայց այս տկարութիւնը ինձ կը յաղթէ :

— Այսու ամենայնիւ ապահով եմ որ նենդամառութեան մը համար զիս հոս բերել տուիր :

— Եթէ ես զքեզ շսիրէի, ըսաւ Քատրօւս իւր մծ դաշնակը զենջակին սրբելով, միթէ կը համբերէի՞ այս խեղճ կեանքին, որուն զիս գատապարտած ես : Տես անդամ մը . կոնակիդ վրայ ծառայիդ զգեստը կը կրես, ուրեմն դուն ծառայ մը ունիս. բայց ես չունիմ, և բանջարեղեններս իմ ձեռօքս ստրկելու ստիպուած եմ. դուն իմ կերակուրներս կ'արհամարչես, ինչու որ Խշանաց պանդոկը կամ Քարիդի Արձարանը մծ ասպաս սեղաններ կը նատիս : Ես ալ կրնայի ծառայ մը ունենալ, ես ալ կրնայի կառք մը պահել, ես ալ կրնայի վերջապէս ուզած տեղս ճաշել. ինչո՞ւ ուրեմն այս ամեն բաներէն զըկուած եմ ես, եթէ ոչ՝ իմ փոքրիկ ոլէնէ տէթթոյիս նեղութիւն չպատճառելու համար : Խսոսու վանէ ուրեմն թէ այս ամենը ընելու կարող էի — :

Եւ Քատրուսի նշանական նայուածքը իւր խօսքին հաստատութիւն տուաւ :

— Ծառ աղէկ, ըսաւ Անտրէա, համարենք թէ կը սիրես զիս, ինչո՞ւ կը պահանջես որ քու հետդ ճաշելու դամ :

— Զքեզ աեմնելու համար, որդեակա:

— Ի՞նչ պիտի ըներ զիս տեսնելով, միթէ մեր ամեն պայմանները առաջնեն ըրած չենք :

— Է՛ս, սիրելիս, ըսաւ Քատրուս, միթէ առանց յաւելուածի կտակ մը եղած է : Բայց նախ դուն ինձի հետ ճաշելու եկար, այնպէս չէ . նստիր ուրեմն, աղկեր ձուկերէն և թարմ կարաղէն սկսինք, զոր որթի տերեներու վրայ դրի քու հաճոյիցդ համաձայն, սիրելիս : Ա՛ս, այս, սենեակս կը դիտես. չորս աթոռներ, երեք վրանքնոց պատկերներ ունիմ . Է՛ս, ինչ կ'ուզէիր, Խշանաց պանդոկը չենք դանուիր :

— Ըստով տաղտկացած կ'երեիս, և ուրախ չե՞ս, բարեկամ, դուն որ մեկուսացեալ հացազործ երեելին ուրիշ բան չէիր ինդըր — :

Քատրուս հառաջանք մը հանեց :

— Ի՞նչ ունիս ըսելու, կրկնեց Անտրէա. տեսած երազդ արդեամբ կատարուեցաւ :

— Ես կ'ըսեմ թէ տակաւին երազ մ'է այս. մեկուսացեալ հացագործ մը, սիրելիդ իմ ունէտէթթօ, հարուստ կ'ըլլայ, եկամուտներ կ'ունենայ :

— Բայց միթէ դուն եկամուտ չունիս :

— Ե՞ս :

— Այս, դուն, աշա երկու հարիւր ֆրանքդ բերած եմ — :

Քատրուս ուսերը թոթվեց :

— Նուաստութիւն մ'է, ըսաւ. այսպէս ակամայ տրուած ստակն ընդունիլը, այնպիսի առօրեայ ստակ մը, որ կրնայ մէկ օրէն միւս օրը ընդմիջուիլ։ Աղէկ կը տեսնես որ սահպաւած եմ խնայողութիւններ ընել մասածելով որ յաջողութիւնը կրնայ շտեել։ Է՛ս, բարեկամ, հարսաւթիւնը յողդողդէ, ինչպէս կ'ըսէր ողորմութիւն ժողվող մը. աղէկ դիտեմ որ քու հարսաւթիւնդ անբաւ է, անօրէն. դուն Տանկլարին աղջկան հետ պիտի ամուսնանաս :

— Ի՞նչպէս, Տանկլարին :

— Այս Տանկլարին, կ'ուզես որ սեպուհ Տանկլարին ըսեմ. սեպէ թէ կոմո ունէտէթթօ ըսէի։ Տանկլար իմ բարեկամն է, և եթէ այնչափ զէշ յիշողութիւն չունենար, անշուշտ զիս քու հարսնիքիդ պիտի հրաւիրէր . . . քանզի անիմ հարսանեացս եկած է . . . Այս, այս, այս. իմ հարսանեացս. զարմանք, այն միջոցին այնչափ զոռող չէր . այն բարի ու. Մորէլին քովը երկրորդական դրազիր մ'էր։ Չատանզամ անոր և Մորսէրֆ կոմսին հետ ճաշած եմ . . . Կը տեսնես թէ որչափ տեղեկութիւններ ունիմ. եթէ ուղէի միտքս քիչ մը մշակել, մի և նոյն սրահներուն մէջ իրարու պիտի հանդիպէինք :

— Կախանձութութիւնդ ծիածաններ կ'երեցընէ քեզ, Քատրուս :

— Աղեկ, պէնէտէթթօ, ես ըստած դիտեմ։ Գուցէ օր մը կիրակի օրուան զգեստը պիտի հաղնինք, և փոքր դրան մօտենալով ըսենք։ «Առասան մը տուէք, եթէ կը հաճիք»։ սակայն նստէ և հաց ուտենք — :

Քատրուս անորմէ առաջ նստաւ և սկսաւ մեծ ախորժանօք ուտել իւր հիւրին աօշել դրած կերակուրները դովելով։

Խոկ Անտրէա շիշերուն խիցերը բացաւ և խստարով ու իւղով տաղկուած ձողաձուկէն ս'լսաւ ուտել,

— Ո՛չ, բարեկամ, ըստա Քատրուս, կ'երեկ թէ նախկին պանդոկապէտիդ հետ հաշոռւեցար։

— Այո, պատասխանեց Անտրէա, որուն այս միջոցին ունեցած ախորժակը ամեն բան կը դերագանցէր։

— Կերակուրներս հաւենեցա՞ր, սրիկայ։

— Այնչափ ազւոր են որ չեմ հասկընար թէ այսպէս ընտիր կերակուրներ եփող և ուտող ճարդը ինչպէս կընայ կեանքը տաղտկալի համարիլ։

— Ե՛չ, պատճառը այն է սր լոկ մտածմունք մը իմ բուլոր երջանկութիւնս կ'աւերէ։

— Ի՞նչ մտածմունք։

— Ազրուասս միշտ արութեամբ վաստըկած ըլլալուս՝ բարեկամի մը ծախքովը ապրելը ինձ ծանը կ'երեւի։

— Ո՛չ, եթէ այդ է մտածմունք, հող մի՛ ըներ, բարեկամ, երկուքնուս համար ալ ես բաւական ստակ ունիմ։

— Աչ, սուսդիւ հաւատա ինձի, ամեն ամսոյ վերջը խիղճակը նեղէ զիս։

— Բարի Քատրուս։

— Այնպէս որ երեկ չուղեցի երկու հարիւր ֆրանքը ընդունիլ։

— Այս, հետս խօսիլ ուղեր էիր, արդեօք ըրած խիղճակ ողիտի ըսէիր ինձ։

— Առաջ այդ պիտի ըսէի, երկրորդ ուրիշ խօրհուրդ մը ես մտքէս կ'անցնէր — ։

Անտրեկա սարսուաց : Քատրուսի խորհուրդներէն միշտ կը սարսուար :

— Ամէն ամիսին վելջը սպասելը թշուառութիւն մ'է ինձի չամար , շաբունակեց Քատրուս :

— Է՛ս , ըստ Անտրեկա իւր ընկերը խօսեցընել ուղելով , միթէ մարդուս կեանքն ալ սպասելով շանցնիր , և միթէ ես ալ նոյնպէս ընելու ստիպուած չեմ . բայց ի՞նչ պիտի ընեմ , չամբերութիւն , այնպէս չէ :

— Այս , ըստ որում երկու հարիւր խեղճ ֆրանքերու տեղ՝ հինգ կամ վեց , զուցէ տասըր , զուցէ տասներկու հազար ֆրանքերու կ'ըսպասեն . վասն զի քու զործերդ զաղանի են : Հոն՝ գուն քսակիկներ և զանձանակներ ունեիր , զորոնք ողորմելի Քատրուս բարեկամէդ զաղանի պահելու կը ջանայիր . բարեքաղդաբար յիշեալ Քատրուս բարեկամը խորամիս էր :

— Բարեկամ , ըստ Անտրեկա , կը տեսնեմ որ միշտ անցեալին վրայ խօսելու և շաղակրատելու հակամէտ ես . ի՞նչ ոգուս ունի այդպէս շաղակրատելու , կը հարցընեմ քեզի :

— Ա՛ս , պատճառը այն է որ դուն քսան և մէկ տարեկան ես և անցեալը կը մնոնաս , իսկ ես յիսուն տարեկան եմ և անցեալը յիշելու ստիպուած եմ . բայց թողունք այս խօսքերը , մեր զործին վերագառնանք :

— Այս :

— Ըսել կ'ուզեմ որ եթէ քու տեղդ ըլլայի . . . .

— Ի՞նչ կ'ընէիր :

— Հարստութիւն մը ձեռք կը քերէի :

— Ի՞նչ կերպով :

— Կալուած մը զնելու պատրուակաւ վեց ամսականս կանսիկ կ'ուզէի , և ստակը առնելով կը փախչէի :

— Ո՛չո՛ , զէշ իւրիք չէ այդ , ըստ Անտրեկա :

— Սիրելի բարեկամ , ըստ Քատրուս , կերակուրներս կեր և խրառներուս հետեւ , ֆիզիքապէս ու բարոյապէս աւելի զոհ պիտի ըլլաս :

— Բայց այդ տուած խրատդ դուն ինչո՞ւ չես զո՞ ծաղրեր . ինչո՞ւ վեց ամսականդ , մէկ տարեկանդ իսկ ձեռք բերելով պրիսէլ չես քաշուիր : Փոխանակ մեկուսացեալ հացադործ մը երեելու՝ փախչող սնանկացեալի մը պիտի նմանիս :

— Հաղար երկու հարիւր ֆրանքը առնելով փախչիմ ի՞նչ ընեմ :

— ԱՇ , Քատրուս , ըսաւ Անտրէա , ամեննին դոչ չես ըլլար . երկու ամիս առաջ անօթութենէ կը մեռնէիր :

— Աւաելով մարդուս ախորժակը կու զայ , ըսաւ Քատրուս ծիծաղող կապիկի կամ մոնչող վազրի պէս ակռաները ցուցընելով : Ուստի , յաւելցուց՝ իւր տարիքին հակառակ սպիտակ և սուր ակռաներովք հացի մեծ պատառ մը փրցընելով , ես իմ ծրագիրս ըրած եմ — :

Քատրուսի ծրագրերը անոր խորհուրդներէն աւելի Անտրէան կը զարհուրէին . խորհուրդները իւր մտքին ծնունդ կու տային , և իւր ծրագիրն էր ստակ ձեռք բերելու միջոցը :

— Ըսէ նայինք , ի՞նչ ծրագիր է այդ , ըսաւ . անշուշտ աղէկի մոածած ես :

— Անշաւշտ . Պ . Ծովին հաստատութենէն փախչելու ծըրագիրը ո՞վ երկնեց . կարծեմ ես . կը յուսամ թէ դոչ եղար , ըստ որում հիմա հոս կը զանուինք :

— Խրաւունք ունիս , պատասխանեց Անտրէա , երրեմն աղէկի բաներ կը մտածես . բայց վերջապէս ըսէ , ծրագիրդ ո՞րն է :

— Առանց ծոցէդ ստակ մը հանելու կրնան տասն և հինգ հաղար ֆրանքի տէր ընել զիս . . . , շարունակեց Քատրուս : Ոչ , տասն և հինգ հաղարը բաւական չէ . դոնէ երեսուն հաղար ֆրանք պէտք է ինծի պարկեշտ մարդ մը ըլլալու համար :

— Ոչ , պատասխանեց Անտրէա խստութեամբ , ոչ , չեմ կրնար :

— Կ'երէի թէ ըսածս չհասկըցար , պատասխանեց Քատրուս

պաղութեամբ և հանդարաւ գէմքով. առանց ծոցէդ ստակ մը հանելու ըսի:

— Կ'ուզէս որ դոզութիւն ընեմ, որպէս ողի իմ և միանդամյն քու զործդ աւրեմ, և զմզ վերստին հռն տանին:

— Ոչ, ինձի համար նոյն բանն է եթէ զիս վերստին բռնեն, ըսաւ Քատրուս. զիահս որ տարօրինակ մարդ մ'եմ ես, շատ անդամ ընկերներէս ալ կը ձանձրանամ. ես քեզի պէս չեմ, ով վատասիրաւ, որ չեիր աւզեր մէկ մ'ալ ընկերդ տեսնել:

Անտրէա այս անդամ սարսուալէն աւելի մժ ազդեցութիւն մը զգաց, իւր զոյնը նետեց:

— Ազէ, Քատրուս, խենթութիւն մի ըներ, ըսաւ:

— Ոչ, անհոգ եղիք, պղտիկ ունէտէթթօս. բայց ինձ փոքրիկ միջոց մը ցուցուր որ առանց քու խառնուելուդ երեսուն հազար ֆրանք մը ձեռք բերեմ. միայն սորվեցուր ինձի ու ես կը զործագրեմ, ուրիշ բան չեմ ինդրե:

— Ծատ ազէկ, մատածեմ տեսնեմ, ըսաւ Անտրէա:

— Այսու ամենայնիւ՝ ամսականս հինդ հարիւր ֆրանքի պիտի բարձրացընես, այնպէս չէ: Մտային հաճոյք մը ունիմ, կ'ուզէի սենեկապահուհի մը բռնել:

— Ծատ ազէկ, հինդ հարիւր ֆրանք կու տամ, ըսաւ Անտրէա. բայց ծանր է ինձ համար այդ զումարը վճարել . . . շափը անցուցիր, ողորմելի Քատրուս. . . .

— Բէչ, զուն ոյնազիսի արկղներէ կը քաղես քու ստակդ սրոնք յատակ չունին — :

Անտրէայի աչաց մէջ ոճրադութեան վաղանցուկ նշոյլ մը տեսնուելով յայտնի կ'երեէր որ իւր ընկերը ոչնչացընել կ'ուզէր, սակայն այն նշոյլը շուտով աներեսյթ եղաւ:

— Ստոյդ է այդ, պատասխանեց Անտրէա, և պաշտպանս խիստ ազնիւ մէկն է:

— Եւ այդ սիրելի սուշոպանդ ամիսը քանի՛ ֆրանք կը վճարէ քեզ,

- Հինգ հազար ֆրանք, բռառ. Անորեա:
- Դուսն ո՞րշափ հաղար որ է՝ առնուո՞ ևս նոյնչափ հարիւր թղառնում, էրկնեց Քատրուս, ստուդիւ միայն պոռնկորդիւները էրջանիկ կ'ըլքան: Ամփոք հինգ հազար ֆրանք . . . :
- Եյսպիսի մեծ դումար մը ինչ կրնայ ընել մարդ:
- Եհ, օտակը շուառվ կ'ըսպառուի. ես ալ քեզի պէս գրամադ լույս մը կ'ուղէի ունենալ:
- Դրամագ լույս մը, . . . այս . . . ամեն ժարդ կ'ուղէ դրամագ լույս մը ունենալ:
- Եւ ես պիտի ունենամ:
- Եւ ով պիտի տայ. իշխանդ:
- Այս, իշխանս. գերազդաբար սպանել պէտք եմ:
- Ի՞նչ բանի սպասելու ես, հարցուց Քատրուս:
- Եւր մահուան:
- Իշխանիդ մահուանը:
- Այս:
- Բայց ինչ կերպով:
- Եւր կտակին մէջ նշտնակած է:
- Ստոյդ կ'ըսես:
- Պատուոյտ վրայ:
- Գումարը ո՞րշափ է:
- Հինգ հարիւր հազար ֆրանք:
- Ի՞նչ կ'ըսես, այգորիսի մեծ դումար մը . . . :
- Ճիշդ է ըսածս:
- Կատակը ձգէ, անկարելի է:
- Բատրուս, բարեկամն ես:
- Աը տարակուսիս, ցկեանս, ցմաչ:
- Աւրեմն մարիկ ըրէ, դաղանիք մը պիտի ըսեմ քեզ:
- Ըսէ:
- Բայց, մորիկ ըրէ . . . :
- Զե՞ս տեսներ, ծածանիք պէս համը կեցէր եմ:
- Կարծեմ թէ . . . — :

- Անարէա իւր բոլորախիքը նայելով խօսքը ընդպիջեց։  
— Ի՞նչ կը կարծես . . . . Մի վախնար , ընկեր , մինակ ենք։  
— Կարծեմ թէ հայրս զառյա։  
— Քու ձշմարիս հայրու։  
— Այս։  
— Գավաղդանթին չէ։  
— Ո՛չ , ըստ որում ան մեկնեցաւ , բայց Աշմարիս հայրս  
դառյա , ինչպէս որ ըսիր։  
— Եւ ով է . . . .  
— Քատրուս , Մօնթէ-Քըիսթօ կոմու հայրս է։  
— Կը հաւատան։  
— Այս , ամեն բան յայտնի կը ցուցընէ . կ'երեկի թէ չկրնար  
բացարձակ ինձ յայտնել , բայց Պ. Գավաղդանթին Ճանշ-  
ցուցեր է , և յիսուն հազար ֆրանք տուեր է անոր որ զինքը  
ինձ հայր կոչէ։  
— Հայրդ ըլլալու համար յիսուն հազար ֆրանք առեր է .  
ևս կէս զնով , քանի հազարով , տասն և հինգ հազարավ ան-  
դամ կ'ընդունէի . Ի՞նչպէս զիս միտքդ շվերիր , ապէ բախա .  
— Միթէ ես զիտէի , այս ամենը մեր հան եղած ատենը  
աեղի ունեցեր է։  
— Ուրեմն իւր կտակին մէջ ո՞րշափ զումար թողուց կ'ըսէիր .  
— Հինգ հարիւր հազար ֆրանք։  
— Սաղյդ զիտէս։  
— Կտակը ինձի ցուցուց . բայց ասով շվենար։  
— Ուրեմն ըսած իս պէս կտակը յաւելուած մը ունի։  
— Հաւանականարար։  
— Եւ այն յաւելուածով . . . .  
— Իւր զաւակն ըլլալո կը հաստատէ։  
— Ո՛չ , այդ ինչ բարի հայր մ'է , ինչ ընտիր և ինչ  
ազնուազոյն հայր մ'է , ըստ Քատրուս օգին մէջ սկաւա-  
ռակ մը գարձընելով , զոր իւր երկու ձեռացը մէջ բռնեց։  
— Ըսէ հիմա նորէն թէ քեզմէ զազանիք կը սպահեմ։

— Ոչ, և վրաս ունեցած վատահութիւնդ դքեզ աշացս պատմելի կ'ընէ . ուրիմ քու իշխան հայրդ Խիշտ հարուստ է :

— Անշուշտ . իւր հարսառութեան չափը շղիաեր :

— Միթէ կարելի՞ է :

— Ես որ ամեն ժամանակ անոր տունը կը մանեմ, աչօքս կը աեսնեմ : Անցեալ օր սեղանաւորի սպասուոր մը անձեռոցիդ չափ մեծութեամբ թղթադարանի մը մէջ յիսուն հազար ֆրանք կը բերէր իրեն . երեկ սեղանաւոր մը հարիւր հաղար ֆրանք միայն ոսկի բերաւ — :

Քատրուա ապշեր մնացեր էր, իրեն այնպէս կ'երեւէր որ երիտասարդին խօսքերը մետաղի ձայն ունէին, և Առի ոսկին կիներուն հնչիւնը կը լսէ :

— Եւ գուն այն առւնը կ'երթաս, հարցուց Քատրուա պարզութեամբ մը :

Քատրուա վայրեկեան մը մատախորչ մնաց, դիւրին էր մակարերեւ որ իւր մտքէն ծանը խորհուրդ մը կ'անցնէր :

Ետքը յանկարծ ըստւ :

— Ո՛րչափ կը փափաքէի անոր բնակած տունը տեսնել, ինչպէս զեղեցիկ է արդեօք :

— Սուողիւ շքեզ տուն մ'է, ըստւ Անտրէս :

— Չանզ - Ելիպէի առջե փողոցը չընակիր :

— Այս, 30 թիւը :

— Այս, 30 թիւը կը բնակի, ըստւ Քատրուա :

— Այս, բակի և պարտէզի մէջ տեղը շնուռած առանձին զեղեցիկ տուն մ'է . դուրսէն տեսնուածը այս է :

— Արտաքին երեղթը թնչ պիտի ընեմ, ներբին կողմը տեսնել կ'ուզեմ . զեղեցիկ կարասիներ պիտի ունենայ, այնպէս չէ:

— Երբէք Թիւյլը թիւ պալատը տեսահաս ես :

— Ոչ :

— Անոր տունը աւելի զեղեցիկ է :

- Ըսէ ինծի, Անտրէտ, որչափ զ ոհ պիտի ըլլայ մէ կը երբ  
այն ազնիւ Թօնթէ - Քրիսթոյին կորսնցուցած քսակը զ տնէ :
- Ի՞նչ հարկ իշնալուն սպասել, բսաւ Անտրէտ, պառուղ-  
ները մրգ աստանին մէջ յորդածին պէս ստակն ալ անոր տան  
մէջ կը յորդէ :
- Օր մը զիս քու հետք այն տունը տանել պէտք էիր :
- Միթէ կարելի՛ բան է, և ի՞նչ ըսեմ :
- Իրաւոնք ունիս, բայց բերանիս չուրերը վազցուցիր.  
անշուշտ պէտք է որ այն տունը տեսնեմ. ևս միջոց մը կը  
զ տնեմ :
- Խենթութիւն պէտք չէ, Քատրուս :
- Երբ տախտակամածները շփալ պիտի ներկայանամ ա-  
նոր տունը :
- Ամեն կողմ օթոցներ փրուած են,
- Ո՛չ, ինչ գժբաղգութիւն, ուրեմն զայն երեակայու-  
թեանս մէջ միայն տեսնելու զոհ պիտի ըլլամ :
- Հաւասար ինծի, ամենէն աղէկիը ատ է :
- Գոնէ անոր տունը քիչ մը ներարդրէ ինծի,
- Ի՞նչպէս հասկըցընեմ :
- Ծատ գիւրին կերպով, տունը մնձ է :
- Ոչ իիստ մնձ և ոչ խիստ փոքր :
- Աենեակները ինչպէս բաժնուած են :
- Ա՛չ, յատակազիծը շինելու համար թանափ և թուղթ  
պէտք է :
- Ահա քեզի ուզածներդ —, բսաւ իսկոյն Քատրուս :
- Եւ զնաց հին զբասեղանի մը վրայէն թերթ մը սպիտակ  
թուղթ, թանաբ և զրիչ մը բերաւ :
- Ահա, բսաւ Քատրուս, զծէ տեսնեմ այս թղթին  
վրայ, որդեակս — :
- Անտրէտ աննշմարելի ժողիտով մը զրիշը առաւ և սկսաւ  
զծել :

— Տունը, ինչպէս ըսի, բակին և պարտեղին մէջ տեղը շինուած է. կը տեսնե՞ս, ահա այսպէս — :

Եւ Անտրէա պարտեղին, բակին և տան գծագրութիւնը ըրաւ :

— Պատերը բարձր են :

— Ոչ, ութիւն կամ առ առաւելն տասը ոտնաշափ բարձրութիւն ունին :

— Անխոչեմութիւն ըրեր են, ըստ Քատրուս :

— Բակին մէջ նարնջենիի արկղիկներ, կարճ խոտեր և ծաղիկներու խիտ թուփեր կը դանուին :

— Գայլորոզայթներ չկա՞ն :

— Ոչ :

— Եխոռները ո՞ր կողմն են :

— Վահեակներուն երկու կողմը, չոս, կը տեսնե՞ս — :

Եւ Անտրէա իւր գծագրութիւնը շարունակեց :

— Գետնայարկը գծագրէ տեսնե՞նք, ըստ Քատրուս :

— Գետնայարկը ունի սեղանատուն մը, երկու սրահներ, դնատախաղի սրահ և երկու սանդուխներ՝ մէ կը դաւթին մէջ, միւսը զալանի :

— Պատուհանները ինչպէս են :

— Պատուհանները այնպէս շքեղ, զեղեցիկ և լայն են որ ստուդիւ կարծեմ թէ քու հասակաւդ մարդ մը ամեն մէկ ապակիին մէջէն կրնայ անցնիլ :

— Երբ այդպիսի պատուհաններ կան, ինչ հարկ է սանդուղներ շինել :

— Ե՛ս, զարդի համար շինուած են :

— Պատուհանները փեղիեր ունին :

— Այո՛, ունին, սակայն երբէք չեն դործածեր : Պօնթէ-Քրիսթոյ կոմսը տարօրինակ բնութիւն մը ունենալուն դիշեր ատեն անգամ երկնից երեսը նայելը կը սիրէ :

— Ծառաները ո՞ւր կը պատկին :

— Անոնք մասնաւոր բնակարան մը ունին, աշ կողմը ըն-

դարձակ մասան մը կայ , որուն վրայ ծառաներու համար զանազան սենեակներ կան ուրիշ սենեակներու հետ հազորդող զանդակներով :

— Ա՛չ , սենեակները զանդակներ ունին :

— Ի՞նչ ըստու :

— Ոչինչ . կ'ըսէի թէ այն զանդակներուն համար որչափ ծախք ըրած են , և ինչ բանի կը ծառայէ արգեօք , կը հարցընեմ :

— Ժամանակաւ շուն մը ունեին , որ զիշերները բակին մէջ կը պտղատէր . բայց Օթէօյլի տունը տարին զայն , զիսես այն տունը , որուն գրան առջեւ ինձ հանդիդեցար :

— Այու :

— Երէկ ըսի անոր թէ՝ Պարոն կոմա , անխոչեմութիւն է ձեր տունը մինակ թողարկ , երբ Օթէօյլ կ'երթաք և ձեր ծառաները հետերնիդ կը տանիք :

« — Ի՞նչ միաս տւնի , հարցուց կոմա :

« — Օր մը զողեր կը մանեն ձեր տունը և կը զողնան :

— Եւ ինչ պատասխանեց :

— Տունո զող մանելը հոգս պիտի ընեմ , ըսաւ :

— Անորէա , մեքենական Հարտարութեամբ շինուած թլդադարան մը կայ , տեսած ես :

— Ի՞նչու :

— Այնպիսի թղթադարան մ'է , որուն զողը մօտեցած ժամանակ վանդակներու մէջ կը բոնուի և եղանակ մը կը նուազէ : Այսպիսի թղթադարան մը վերջին աբուեստահանդիսին մէջ կայ եղեր :

— Կամը կաչենեայ (հաճան) պարզ թղթադարան մը ունի , որուն բանալին միշտ վրան տեսած եմ :

— Եւ անոր մէջէն բան չե՞ն զողնար :

— Ոչ , իւր ծառաները մէծ անձնուիրութեամբ կը ծառայեն իրեն :

- Այն թղթադարսնին մէջ անշուշտ ստակ կը պահէ ու յիշովէս չէ :
- Գուցէ . . . բայց անոր մէջ ի՞նչ ըլլալը մարդ չդիմեր :
- Եւ օր գստիկոնն է :
- Առաջին :
- Գետանայարկին յատակադիմը ըրածիդ պէս առաջին դստիկոննին յատակադիմն ալ ըրէ տեսնեմ :
- Շատ աղէկի — :
- Անտրէա վերստին զրիչը ձեռքը առաւ :
- Տես, առաջին գստիկոնը նախասենեակ մը և սրահ մը կայ . սրահին աջ կողմը զրատուն մը և աշխատութեան սենեակ մը կը զանուի ; Ճախի կողմը ննջարան մը և զարդարան մը կայ և այս վերջին սենեկին մէջ կը զանուի թղթադարս :
- Զարդարանի սենեակը մէկ պատուհան ունի :
- Երկու, մէկը հոս միւսը հոն — :
- Անտրէա սենեկին երկու պատուհանները զծեց . այս սենեակը դստիկոննին անմիւնը քառակուսի մը կը ձեւցընէր, և քովի ննջարանէն աւելի փոքր էր :
- Քատրուս քիչ մը մտածելէն ետե :
- Կոնց յաճախ Օթէօյլ կ'երթայ, հարցուց :
- Շարաթը երկու կամ երեք անդամ. վաղը պիտի երթոյ և ցորեկն ու զիշերը հոն պիտի մնայ :
- Սայդ գիտե՞ս :
- Զիս հրաւիրեց որ հոն երթամ ձաշելու :
- Ո՛չ, այս ի՞նչ պատուական կեանք է, ըստ Քատրուս քաղաքը տուն, դիւղը տուն :
- Հարուստ ըլլալը այսպէս է :
- Եւ դուն ձաշելու պիտի երթամ :
- Հաւանականաբար :
- Եթէ հոն ձաշես, հոն կը պառկիս :
- Երբ որ ուզեմ. կոմսին տան մէջ իմ տանս մէջ եղած ծի պէս եմ — :

Քատրուս երիտասարդին երեսը նայեցաւ , որպէս զի ընտ-  
ծին ճշմարտութիւնը ստուգէ : Բայց Անտրէա իւր ծոցէն  
դլանիկի տուփ մը հանեց , հատ մը առաւ , հանդարձու-  
թեամբ վառեց զայն և սկսաւ ախորժանօք ծխել :

— Հինգ հարիւր ֆրանքը ե՞րբ կ'ուզես , հարցուց Քատրուսին :

— Հիմա , թէ որ քովդ ունիս — :

Անտրէա իւր ծոցէն քուան և հինգ նուի ոսկի հանեց :

— Ոսկի պիտի տաս , ըստ Քատրուս , ոչ , չնորհակալ եմ :

— Ի՞նչ կ'ըսե՞ս , բարեկամ , հսկին կ'ատե՞ս դուն :

— Ընդ հակառակն կը յարգեմ . բայց ոսկի շեմ ուզեր :

— Փոխելիսվ կը շահիս , անմիտ : ոսկին արծաթէն հինգ  
տու առելի կ'արձէ :

— Ընորհակալ եմ : ինչ պիտի ընեմ երբ ոսկին փոխողն  
ալ Քատրուս բարեկամը լրտեսէ և զան բռնել տայ . այն ա-  
տեն պէտք է խոստովանիլ թէ այս ոսկի վճարոյլ հասութա-  
ւորը ովէ է : Խենթութիւն չընենք , պիտիկ . լոկ արծաթ  
ստակ կ'ուզեմ . որ և է թագաւորի կլոր արծաթ ստակ : Ա-  
մեն մարդու ձեռքը հինգ ֆրանքնոց ստակի կրնայ համնիլ :

— Բայց վրաս հինգ հարիւր ֆրանքի արծաթ ստակ չու-  
նիմ . քեզի արծաթ ստակ բերելու համար պէտք էր բեռնա-  
կիր մը բռնել :

— Ուրեմն գոնապանիդ ձգէ . ան բարի մարդ մ'է . ես  
ախորժէ կ'առնում :

— Այսօր :

— Ոչ , վաղը . այսօր ժամանակ չընենիմ :

— Հատ աղէկ . վաղը Օթէօյլ երթալու ժամանակս դըս-  
նապանին կը թողում :

— Անզատառ պիտի թողուս , այնպէս չէ :

— Անտարակոյս :

— Այսօր սենեկապանուհիին հետ խօսքը ընելու պիտի  
կբաղիմ :

— Բայց կարծեմ վերջին անլամն է այս . այսուհետեւ ոն-  
հանգ իստ պիտի չընես զիս :

— Ամենե ին — :

Քատրուս իմաստ տիտուր կ'երեւէր . Անտրէա վախցաւ ոք չըլայ թէ իւր բարեկամը դիմէ որ ինքը ստիպուած էր անոր այլայլութիւնը տեսնելու :

Ուստի իւր զուարթութիւնն ու անտարբերութիւնը կըրկնապատկեց :

— Ի՞նչպէս ուրախ ես , ըստ Քատրուս . կարծես թէ արդէն ժառանգութիւնդ ստացած ես :

— Դժբաղդաբար դեռ չստացայ , բայց ստանալուս պէս ...

— Ի՞նչ պիտի ընես :

— Բարեկամներս պիտի յիշեմ . այս Խօսքը միշտ կը կըրկնեմ քեզի :

— Այս , աղէկ յիշզութիւն ունիս :

— Ի՞նչ ընեմ : կարծէի թէ ծանր սրահանջումներ պիտի ընես :

— Ե՞ս , ոհ , ի՞նչ խելք . ընդ հակառակն ըարեկամական խրաս մը ունիմ քեզ տալու :

— Ի՞նչ խրատ :

— Խատդ գրած մատնիդ հաս թող . բայց գուն զմեզ բըռնել տալ կ'աւզես , և միտքդ երկուքնիս ալ կարսնցընել տալ է որ այսպիսի անմոռութիւններ կ'ընես :

— Ի՞նչ պատճառաւ , ըստ Անտրէա :

— Չեմ տեսներ , ծառայի միազդի ստ կը հաղնիս , և մատդ չըրս կամ հինդ հաղար ֆրանքնոց աղամանդ մը կը կընես :

— Քատրուս , աղէկ զին կը կտրես . ինչու ուրեմն զնահատութեան զործակալութիւն չես ըներ :

— Աղամանդէ կը հանչնամ . ժամանակաւ ես ալ ունէի :

— Որչափ որ կրնաս գովէ ինքզինքդ — , ըստ Անտրէա առանց այս նոր յափշտակութեան վրայ բարեկանալու , ինչպէս որ Քատրուս վախցեր էր , և մատնին հաճութեամբ անոր յանձնեց :

Քատրուս այնչափ մօտէն կը զննէր , որ յայտնի կ'երեւէր թէ աղամանդին անկիւններուն փայլունութիւնը կը դիտէր :

— Եյս աղամանդը կեղծ է, ըստ Քատրուս։  
 — Ի՞նչ կ'ըսես, ըստ Անտրէա, կատակը ձղէ։  
 — Ո՛չ, մի նեղանար, հիմա կը տեսնենք —։  
 Եւ Քատրուս պատուհանին մօտեցաւ, և աղամանդը ապա կին վրայ սահմեցուց։

Ապակին Ճեղքուելու ձայնը լսուեցաւ։  
 — Մեզայ, ըստ Քատրուս մատնին փոքր մատը անցընելով, սխալեցայ, ինչու որ գող ակնավաճառաները հիմա ապակիները դոհարներուն այնշափ կը նմանեցընեն, որ ալ մարդ չհամարժակիր ակնավաճառի խանութիւն զողութիւն ընելու։  
 այս ալ հաշմ հնարագիտութեան մէկ ճիւղն է։  
 — Ըսէ հիմա, ամեն բան լինցուցիր, ուրիշ ուղելու բան մը ունիս։ Բաճկոնս ալ կ'ուզե՞ս, զլիարկիս պէտք ունիս։  
 — Ոչ, սրտանց աղնին ընկեր մ'ես։ աւելի երկար ժամանակ զքեզ հոս չեմ կեցըներ և պիտի աշխատիմ իմ փառասիրութենէս ետ կենալու։

— Բայց զզուշացիր, այս աղամանդը ծախելու ատենդ՝ զլուխոդ չդայ այն դժբաղգութիւնը, որ սսկին համար պատահէն կը վախնայիր։

— Զեմ ծախեր զայն, անհոգ եղիր,  
 — Գանէ մինչեւ վաղը չէ միւս օրը սպասէ։  
 — Երջանիկ սրիկայ, ըստ Քատրուս, հիմա պիտի երթասքու սպասաւորներդ, ձիերդ, կառքդ և նշանածդ զանելու։  
 — Է՛ս այս, ըստ Անտրէա։

— Կը յուսամ թէ Տանկար բարեկամիս աղջկան հետ ամեւնացած օրդ ինձ դեղեցիկ նուէր մը պիտի ընես։

— Արդէն ըսի քեզի թէ դուն մաքիս մէջն ես։  
 — Օժիաը ո՞րչափ պիտի ըլլայ։  
 — Բայց քեզի ըսի թէ . . . .  
 — Միլիո՞ն մը —։

Անտրէա ուսերը թոթվեց։  
 — Երանի թէ միլիոն մը ստանայիր, ըստ Քատրուս։

րայց որչափ մեծ հարստութիւն ստանաս , իմ քեզի համար փափաքածս աւելի է :

— Ընորհակալ եմ , ըստ երիտասարդը :

— Սրտանց կ'ըսեմ , յաէելուց Քատրուս իւր բիրո ձի ծաղովը ծիծաղելով : Կեցիր Փնջն գուռը ընկերանամ քեզի :

— Հարկ չէ :

— Ոչ , պէտք է որ դամ :

— Ի՞նչ պատճառաւ :

— Վասն զի դրանս վրայ գաղտնի փական մը կայ , զոր զգուշութեան համար դնելու արժան համարեցի . թէե այս փականը Հիւրէ և Ֆիշէ հնարած է , բայց Գասպար Քատրուսն ալ զայն քննած և ուղղած է : Երբ դրամագլուխի տէր ըլլաս , ասզը նմանը կը շինեմ քեզ :


— Ընդորհակալ եմ , ըստ Անտրէա , ութ օր առաջ քեզ կ'իմացընեմ — :

Երկու բարեկամները իրարմէ բաժնուեցան :

Քատրուս սանդուխին վրայի գաւթին վրայ կեցաւ մինչե որ Անտրէայի ոչ միայն երեք դստիկոսնէն իջնելը , ուլ և բակէն անցնելը տեսաւ :

Են ատեն աշապարանօք ներս մտաւ , զգուշութեամբ դռւուր զոցեց . և Անտրէայի մողուցած յատակաղիծը սկսաւ քաջ Ճարտարապետի պէս ուշագրութեամբ քննել :

— Աիրելի Պէնէտէթթօն , ըստ ինքնիրեն , կարծեմ թէ շատ ուրախ պիտի ըլլայ երբ ժառանգութիւնը ստանայ , և իւր բարեկամները ուրախակից պիտի ըլլան հինգ հարիսը հագար Փրանքը ստանալուն համար :



ՊԼՈՒԹ Գ.

ԽՈՐՑՈՎՈՒՐԸ

**Ե**ՐԱԾՈՒ բարեկամաց տեսակցութեան հետեւաւ  
օրը իրաք Մօնթէ-Քրիսթոյ կոմոը Ալիին և  
բազմաթիւ ծառաներու հետ Օթէզյլ գա-  
ցած էր, ուր քանի մը ձիեր պիտի փորձէր:

Այս զիւղը երթալու որաշումը, որ իւր  
մոքէն անգամ չէր անցներ, և Անտրէա իսկ իրեն պէս չէր  
զիտեր, զլսաւորաբար Պէրթուչիոյի զալսաւամբը հաստա-  
տուեցաւ, սր նորմանտիայէն գառնալով՝ հան պատրաստած  
տանը և միայարկ նաւուն վրայ լուրեր կը բերէր:

Տունը պատրաստ էր, և նաւը ութ օր առաջ հան հասնե-  
լով փոքր խորշի մը մէջ խարսխի վրայ կը կենար իւր վեց  
նաւաստիներովը, օրինաց ամեն պայմանները կատարուած  
ըլլալով՝ ճամբայ ելնելու պատրաստ կը գտնուէր:

Կոմոը Պէրթուչիոյի ըրած աշխատութիւնները զովեց և  
հրաւիրեց զան որ պատրաստուի շուտով մեկնելու. ըստ ո-  
րում Գաղղիոյ մէջ ամսէ մը աւելի մնալու միաբ չունէր:

— Հիմա, ըստ անոր կոմոը, զիշերուան մը մէջ Բարի-  
զէն Թրէբոր երթալու պէտք ունիմ. Ճամբուն վրայ ձի փո-  
խելու ութ կայան կ'ուզեմ, որոց միջոցաւ յիսուն մզոն տեղը  
տասը ժամաւան մէջ առնելու կարող ըլլամ:

— Զեր Վաեմութիւնը արդէն ձեր այդ փափաքը յայտնած  
էր ինձ, պատասխանեց Պէրթուչիօ, ուստի ձիերը պատրաս-

տուած են։ Ես անձամբ դնեցի ու ամենէն յարմար տեղերը  
տեղաւորեցի զանոնք, այսինքն այնպիսի դիղերու մէջ, ուր  
սովորաբար մարդ չօմեանիր։

— Ծառ աղէկ, ըստ Մօնթէ-Քրիսթօ, մէկ կամ երկու  
որ Ես մասը եմ հոս, պէտք եղածը կարդադրէ։

Պէրթուշիո իւր տիրոջ հրամանները կատարելու համար  
դուրս ելնելու միջացին՝ գալթիսթէն դուռը բացաւ և արծա-  
թազօծ ափսէի մը վրայ նամակ մը բերաւ։

— Ի՞նչ ընելու եկար հոս, հարցուց կոմը տեսնելով որ  
փոշիով ծածկուած էր, ես քիզի ըուղեցի կարծեմ։

Գալթիսթէն առանց պատասխաննելու կոմին մօտեցաւ և  
նամակը ներկայացուց։

— Այս նամակը խիստ կարծ որ և ստիպողական է —, ըստ,  
կոմը նամակը բացաւ և կարդաց։

« Կը ծանուցուի ո! Մօնթէ-Քրիսթոյ կոմին որ այս  
գիշեր մարդ մը Ծանզ-Էլիզէի իւր առունը պիտի մանէ՝ զար-  
գարանի գահչէնին թղթագարանին մէջ պահուած թղթերը  
գողնալու համար։

» Տօնթէ-Քրիսթոյ կոմը քաջամիրտ մէկը ճանցուած ըլ-  
լալուն՝ կը յուսացուի որ ռստիկանութեան միջամտութեանը  
չգիտեր, միջամտութիւն մը, որ կրնոյ այս աղդաբարութիւնը  
ընտղու մէծ վտանգի մէջ վնել։

» Պ, կոմը կամ գահչէնին մէջ նայող ննջարանի որատու-  
հանէ և կամ նոյն գահչէնին մէջ պահուելով կրնայ իւր  
աշօքը տեսնել։

» Տան մէջ եղող ծառաներու բազմութիւնը և տեսանելի  
զգուշութիւնները կրնան այն չարագործը հեռացընել և ո!,  
Մօնթէ-Քրիսթոյին կորսնցընել տալ իւր մէկ թշնամին  
ճանշնալու առ իթը, զոր այս լուրը կոմին հաղորդող անձը  
դիսուածով երեան հանեց. եթէ չարադործին այս առաջին  
ձերնարկը չաջողի և ուրիշ անդամ զայն նորոգել ուզէ,  
այս լուրը տուողը դուցէ առիթ չունենայ զայն վերատին  
խմացընելու ։

Կոմմը առաջին անդամ կարծեց թէ զողերը խորամանկութեամբ անխորհուրդ որողայթ մը կը լարեին իւր տօջեր՝ զինքը մեծ վատանդի մը մէջ ձգելու համար:

Աւստի եղած յանձնաբարութեան հակառակ և զույլ այն յանձնաբարութիւնը անանուն բարեկամի մը կողմանէ ըլլալուն՝ նամակը ոստիկանութեան զործակալի մը զբկելու վրայ էր, երբ միտքը եկաւ թէ այն զողը կրնար իրօք իւր մասնաւոր թշնամիներէն մէկը ըլլալ, զոր ինքը միայն կրնար ձանչնալ, և իւր վրէմը լուծել, ինչպէս որ Աւերիստանիոյ ֆիեսքը ըրաւ իւր թշնամին սպաննել ուզելով:

Կոմմը կը ձանչնանք:

Հարկ չկայ ըսել թէ աներիկիդ և արիասիրու անձ մ'էր ան, անկարելիութեան դէմ այն ուժզնութեամբ կը մըցէր, որ զմարդ զերադոյն կ'ընէ:

Ամենին բանէ մը չփորշելու համար ունեցած հաստատագագարութեանը և իւր անցուցած կենացը մէջ կոմմը անձանօթ զուարձութիւն մը կ'ըզգար մըցելու քնութեան դէմ, որ է Աստուած, և աշխարհի դէմ, որ կրնայ սատանան համարուիլ:

— Անոնք իմ թղթերս զողնալ չեն ուզեր, ըսաւ Մօնթէ - Քրիսթօ, այլ զիս սպաննել կը փափաքին. զող չեն անոնք, այլ մարդասպան: Չեմ ուզեր որ ոստիկանութեան մու. զործակալը իմ մասնաւոր զործոցս խառնուի: Այս զործին մէջ տեսչութեան ելումտից հարկը թեթեցընելու համար բաւական հարուստ եմ — :

Կոմմը Պաթիսթէնը վերսախն ներս կանչեց, որ նամակը յանձննէն եաւ զուքս ելեր էր:

— Բարիզ վերագարձիր, ըսաւ անոր, ու բոլոր տունը մնացող ծառաները հոս բեր. կ'ուզեմ ամենին ալ հստ աեսնել:

— Բայց տունը մարդ պիտի չմեայ, պարոն կոմս, հարցուց ուամիթիսթէն:

— Այս, դոնաստանը միայն:

— Պարոն կոմուը կրնայ մտածել որ անոր սենեակէն մինչեւ տունը ո՞րչափ հեռու է :

— Ի՞նչ ֆաս ունի :

— Եթէ բոյոր տունը պարպեն, իւր սենեակէն ձայն մը անդամ՝ կրնար առնուլ :

— Ա՛վ պիտի պարպէ տունը :

— Գողերը :

— Խնմիտ մէկն ես եղեր, պարոն Պաթիսթէն, զողերը եթէ բոլոր տունն ալ պարպեն՝ այնչափ դժգոհութիւն պիտի շպատճառեն ինձ որչափ երբ հրամաններէս մէկը աղէկ չկամարուի — :

Պաթիսթէն խոնարհութիւն մը ըրաւ :

— Լսեցի՛ր, ըսաւ կոմուը, բոլոր ընկերներդ մեծ ու պրգտիկ հսա պիտի բերես. բայց տունը իւր սովորական վիճակին մէջ պիտի մնայ. միայն գետնայարկին փեղկերը պիտի զոցես, ուրիշ բան պէտք չէ ընել :

— Առաջին դստիկոնին փեղկերը չգոցեմ :

— Գիտես որ անոնք միշտ բաց կը մնան. դնաւ — :

Կոմուը հրամայեց որ իւր կերակուրը իւր սենեակը բերեն. և Ալիկն զատ մարդ ընդունեց :

Իւր սովորական սրաի հանգարտութեամբն ու շափաւորութեամբը Ճաշելէն ետե՝ նշան մը ըրաւ Ալիկին որ իւր ետեէն գայ, փոքր գուռէն գուրս ելաւ, շրջագայելով ուսուլոննի անտառը հասաւ, առանց բան մը յայտնելու Բարիզի Ճամբան դարկաւ և գիշերը մութին Ըանզ - Էլիզէի իւր տանը առջին հասաւ :

Ամեն կողմը մթութեան մէջ ընկղմած էր :

Տկար լոյս մը կար միայն գռնապանին սենեկին մէջ, որ ինչպէս Պաթիսթէն ըսեր էր՝ տունէն քառասուն քայլ հեռի կը դտնուէր :

Մօնթէ - Քրիսթօ կռնակը ծառի մը կոթնցուց, և իւր գըրեթէ անվրիպելի նայուածքը կրկին ծառաւղիքն մէջ թափանա

ցեց , անցնողները դննեց , և մօտակայ փողոցները գիտեց . որպէս զի տեսնէ թէ արգեօք մէ կը պահուած է :

Տասը վայրիեան հռն կենալով՝ համոզւեցաւ որ զինքը լրտեսող մէ կը չկայ :

Ուստի անմիջապէս Ալիին հետ գեղ ՚ի փոքր դուձը վագեց , իսկզին ներս մտաւ . և զաղտնի սանդուխէ մը , որուն բանալին քովի էր , իւր ննջարանը մտաւ՝ առանց վարագոյր մը բանալու կամ շարժելու , և առանց դոնոպանին կամկած մը տալու թէ իւր գամարկ կարծած տանը մէջ անոր տէրը կը գտնուի :

Ննջարանը հարնելով՝ կոմսը Ալիին նշան ըրաւ որ հռն կենայ , ու ինքը գահշիճը մտաւ և ազգէ անցուց զայն :

Ամեն բան իւր սովորական վիճակին մէջ կը զանուէր :

Թանկագին թղթադարանը իւր աեղը կը գտնուէր և բանալին անոր վրայ կախուած էր :

Փականքը կրկին անգամ գարձընելով՝ կղպեց զայն ու բանալին վրայէն առաւ . ննջարանին դրան մօտեցաւ , անոր փականքին կրկնակի ապոյցը տեղէն հանեց ու ներս քաշուեցաւ :

Այս միջոցին Ալի կոմսին հրամանաւ զէնքերը բերաւ ու սեղանի մը վրայ գրաւ . որոնք էին լայնաբերան հրացան մը և զոյզ մը երկփող ատրճանակներ , որոնց փաղերը իրարու վրայ զետեղուած ըլլալուն՝ նշան առնելու շատ յարմար էին :

Այս զէնքերով կոմսը հինգ հոգւոյ կեանքը իւր ձեռաց մէջ ունէր :

Ժաման ու Ալի ալտորնօք պատառ մը հաց կերան և Սպանիոյ գաւաթ մը զինի խմնցին . ետքը Թօնթէ-Քրիսթօ ննջարանի դրան այն շարժական տախտակներէն մէկը հանեց , ուրկից մէկ սենեկէն միւսը կ'երևէր :

Ատրճանակներն ու լայնաբերան հրացանը իւր ձեռաց մօտ գրուած էին . և Ալի անոր քովը կանլինած այն արարացի կացիններէն մէկը բռնած էր , որոնց ձեւը խալակրաց ժամանակէն փոխուած չէր ; ճայռ ականա և կույր պատճեն

Դահլիճի պատուհանին ուղղագիծ շինուած ննջարանի պատուհաններուն մէկէն կոմսը կրնար վարդցը տեսնել :

Երկու ժամ՝ այսպէս անցան :

Գիշերը խիստ մուլթ էր, սակայն Ալի իւր վայրենական բնութեամբը և կոմսը անսարակայս իւր ունակացուցած յատկութեամբը այն մթութեան մէջ բակին ծառերուն ամենաթեթե տատանումները կ'որոշէին :

Դռնապանին աենեկին լցուը երկար ատենէ ։ ի վեր արդէն մարեր էր :

Եյնպէս կը կարծուէր որ յարձակումը, եթէ իրօր յարձակում մը պիտի ըլլար, զետնայարկին սանդուխին կողմէն պիտի ըլլար և ոչ պատուհանէ մը :

Մանթէ-Քրիստոյի ենթագրութեան համեմատ՝ շարագործները իւր կենաց թշնամի էին և ոչ իւր ստակին :

Աւստի անոնք կամ զաղտնի սանդուխին կողմէն և կամ դահլիճին պատուհանէն ննջարանին վրայ պիտի յարձակէին :

Ալին սանդուխին դրան առջին կեցուց, և ինքը շարունակ դահլիճին մէջ կը դիտէր :

Ենվայիտի ժամացոյցը ժամը տասն ու մէկ և երեք քառ ոորդ կը հնչէր :

Արեմուեան հողմը իւր խոնաւ շունչին հետ այս երեք հարուած ներուն տիսուր հնչիւնը մինչև իրենց կը բերէր :

Աերջին հարուածին ձայնը զեռ մարած չէր երբ կոմսը դահլիճին կողմէն թեթե շշուկ մը լսել կարծեց :

Այս առաջին շշուկէն կամ լաւ ևս ըսենք՝ այս առաջին ձանշիւնէն ետե՛ երկթարդ մը ևս լսուեցաւ, ետքը երրորդ մը :

Զարրորդին՝ կոմսը ինչ ըլլար հասկըցաւ :

Վներիիւղ և վարժ ձեռք մը ադամանդով ապակիին չորս կողմը կտրելու դրադած էր :

Կոմսին սիրաը աւելի ուժգնութեամբ օկսաւ բարախել :

Վարդիկ՝ որչափ և անցուցած վտանգներնեն սրտերնին խռատացած ըլլայ, որչափ և առջևնին եղած վտանգին ինչ ըլլար

ով իտանան, իրենց սրտի բարախումն և մարմնոյ սարսուռեն միշտ  
կը հասկընան թէ երազին ու իրողութեան, խորհուրդին ու  
դործադրութեան մէջ ինչ ահազ ին տարբերութիւն կայ:

Այսու ամենայնիւ Մօնթէ-Քրիսթօ նշան մը քրտւ և լիին.  
Հաւատարիմ ծառան վտանգը գահչլքին կողմն ըլլալը հաս-  
կընալը՝ մէկ քայլով իւր տիրոջ մօտեցաւ:

Մօնթէ-Քրիսթօ մնծ անհամբերութեամբ կ'աւգէք դ իտանալ  
թէ ինչ և քանի թշնամիներու չետ է իւր դործը:

Գողին աշխատած պատուհանը Ճիշդ այն պատուհանին գի-  
մացը կը դանուէր, ուրկից կոմսը գահչլքին մէջ կը դիտէր:

Ուստի իւր նայուածքը գէպ՝ ի այն պատուհանը յարից:

Մժութեան մէջ թանձը օտուերի մը նկարիլը տեսաւ:

Խտրը ասպակիներէն մէկը ըոլորսովին անթափանցելի եղաւ՝  
դուրսէն թէրթ մը թուղթ անոր փակցուածի պէս, և առանց  
իյնալու Ճոնչեց:

Քացուած ծակէն ձեռք մը ներս մտաւ և պատուհանին նի-  
շը կը փնտուէր:

Մանրերկորդ մը ետքը՝ պատուհանը իւր ծխնեաց վրայ  
դարձաւ և մարդ մը ներս մտաւ:

Մարդը առանձին էր:

— Ահա աներկիւղ սրիկայ մը — , մըմնջեց կոմսը ու

Այս միջոցին զգաց որ Ալի յուշիկ կերպով մը իւր ուսին  
կը դաշիւ:

Երեսը անոր կողմը գարձուց:

Ալի փողոցին վրայ նայող ննջարանին պատուհանը ցուցուց:

Մօնթէ-Քրիսթօ երեր քայլով այն պատուհանին մօտեցաւ:

Իւր հաւատարիմ ծառային ազնիւ զգացութերը կը Ճանշնար:

Իրաք՝ ուրիշ մարդ մը տեսաւ որ դրան մը քովէն զատուե-  
լով և քարձը քարի մը վրայ ելնելով՝ կ'երեւէր թէ կոմսին  
տան մէջ եղածները տեսնելու կը ջանար:

— Ազէկ ըստ, երկու հող են եղեր. մէկը կը դործէ,  
պւսը կը հսկէ — :

Նշան ըրաւ Ալիին որ տէքը փողոցին մարդուն վրայէն չվեր-  
ցընէ , և ինքը դահլչին մարդուն դարձաւ :

Եպոսկի կտրողը ներս մտեր ու թե երը դէպ 'ի առաջ եր-  
կարծլով՝ չորս կողմը ճանչնալու կ'աջխատէր :

Վերջապէս ամեն բան աչքէ անցուցած երկցաւ :

Դահլչին մէջ երկու գուռ կար , երկուքին նիզերն ալ դրաւ :

Նրբ ննջարանին դրան մօտեցաւ , Մօնթէ-Քրիսթօ կարծեց  
թէ ներս պիտի մօնէ , ուստի իւր ատրանակներէն մէկը  
պատրաստեց . բայց միայն նիզերուն իրենց պղնձեայ օղակին  
մէջ մօնելուն ձայնը լսեց :

Յայտնի էր որ զգուշութեան համար կ'ըլլար այս :

Կոմսին գրան ազոյցները հանելու նախազգուշութիւնը զի-  
շերային այցելուն չտեսնելով . կրնար ինքզինքը իւր ման  
մէջ կարծել և բոլորովին հանդիսաւ դործ տեսնել :

Իւր աշխատութեանը մէջ առանձին և ազատ ըլլալով՝ մար-  
դը իւր մեծ գրանէն բան մը հանեց . որուն ինչ ըլլալը  
կոմսը չկրցաւ որոշել , սեղանի մը վրայ գրաւ և ուղղակի թըղ-  
թադարանին մօտեցաւ , փականքին տեղը շօշափեց , և նայե-  
ցաւ որ իւր ակնյալութեան հակառակ բանալին վրան չէր :

Սակայն ապակեհատը նախազգոյշ մարդ մ'էր և ամեն բան  
առաջէն գուշակեր էր :

Ըստ չանցաւ՝ կոմսը երկաթներու ընդհարժում մը լսեց ,  
որ տրցակ մը տձե բանալիներու շարժումէն կը զոյանար :  
զորոնք երկաթագործերը հետերնին կը տանին երբ դուռ մը  
բանալու համար զիրենք կանչեն , և որոնց զողերը դեղձա-  
նիկ անունը կու տան՝ անշուշտ պարզունակին և նիզին մէջ  
դարձած ժամանակ՝ անոնց հանած ձայնէն զուարձութիւն մը  
զգալնուն համար :

— Ա՛հ , մրմնաց Մօնթէ-Քրիսթօ տհաճութեան ժպիսով  
մը , ուրեմն զող մ'է աս — :

Սակայն մարդը մթութեան մէջ յարմար զործին չկրցաւ  
զանել :

Եյն առեն սեղանին վրոյ դրած առարկային դիմեց :

Զգտալար մը սեղմեց, և անմիջապէս տկար լոյս մը ելաւ և անոր ցոլացումը մարդուն ձեռաց և դէմքին վրայ զարկաւ :

— Ի՞նչ կը տեսնեմ, ըստ յանկարծ Մօնթէ-Քրիսթօ զարմացման շարժումով մը ետ քաշուելով, մեր . . . — :

Ալի իւր կացինը վեր վերցուց :

— Տեղէդ մի շարժիր, ըստ անոր Մօնթէ-Քրիսթօ ցած ձայնով և կացինդ վար առ. զէնքի պէտք չունինք ալ — :

Ետքը՝ աւելի ցած ձայնով քանի մը խօսք աւելցուց, ըստ որում կոմսին զարմացման ձայնը՝ թէե տկար՝ բայց բաւական եղեր էր աջաստողին սարսուռ մը պատճառելու, որ հին յեռանիշի գիրքի մը մէջ անշարժ մնաց :

Կոմսը հրաման մը ըրեր էր Ալիին, քանզի Նուպիացին ոտից ծայրերուն վրայ քալելով հեռացաւ և պատին խորշին մէջէն սե զգեստ մը և եռանկիւնի զ լիսարկ մը հանեց :

Նոյն միջոցին՝ Մօնթէ-Քրիսթօ իւր վերարկուն, բաճկոնն ու զ լիսարկ արտորնօք հանեց և պատուհանին ծակեն ներս թափանցած լուսովը կոմսին կուրծքին վրայ պողպատեայ օղակներով հիւսուած գիւրաթեք և բարակ զգեստը տեսնուենաւ, որուն վերջինը այն Գաղղիոյ մէջ, ուր ալ դաշյնէ շվախուուիր, զուցէ Լուի ԺԶ թագաւորը կրեց, որ իւր կուրծքին գաշյնի հարուած մը ընդունելէ կը վախնար, բայց զ լիին կացինի հարուածով մը զարնուեցաւ :

Այս պողպատեայ հանգերձը կրօնաւորի երկար վերարկուին տակը աներեսոյթ եղաւ, ինչպէս և կոմսին մազերն ալ կուլակ կեղծամին տակը :

Եռանկիւնի զ լիսարկը կեղծամին վրայ դրուելով կոմսը արբայի փոխեց :

Այսու ամենայնիւ մարդը ուրիշ ձայն շլսելով վերսահին ոտք ելաւ, և Մօնթէ-Քրիսթօյի ծպուելու միջոցին՝ ուղղակի գէպ 'ի թղթադարանը գնաց, որուն նիզը իւր Շեշ-Նիզն տակը ձռնչելու սկսեր էր :

— Աղէկի , մը մնացեց կոմսը՝ անտակոյս վատահ ըլլալով փառակին մէկ զաղանիքին վրայ , որ անձանօթ էր դուռերը խառնող վարպետ դողին . աղէկի , զեռ քանի մը վայրկեան պիտի աշխատի՞ս — :

Եւ պատուհանին մօտեցաւ :

Բարձր քարին վրայ ելնող մարդը վար իջեր էր , և միշտ փողցին մէջ կը շրջէր . բայց շարժմանալի բան , փոխանակ թէ Շանդ Էլենէի և թէ Աշնթ-Օնորէ արուեարձանին կողմէն եկողները իր հոգը ընելու կոմսին տան մէջ պատահածները միայն գիտելու զաղած կ'երեւէր , և իւր ամեն շարժումները յայտնի կը ցուցընէին որ դահընէին մէջ եղածները տեսնել կ'ուզէր :

Մօնթէ-Քրիսթօ յանկարծ ձեռքը ճակատին զարկաւ և լոիկ ծիծաղ մը իւր կիսարաց շըմանց վրայ սահեցաւ :

Ետքը Ելիին մօտենալով

— Դուն հսու կեցիր , ըստ անոր ցած ձայնով , ու մութին մէջ պահուէ . ինչ ձայն որ լսես և ինչ որ պատահի , չըլայ որ ներս մահես և ինքզինք ցուցընես մինչեւ որ քու անու նովդ ես զքեզ չկանչեմ — :

Այի զ լիսով նշան ըրաւ թէ իւր տիրոջ ըստածը հասկցաւ և պիտի հնաղանդի անոր :

Այն առեն Մօնթէ-Քրիսթօ պահանցըի մը մէջէն վառուած մամ մը հանեց , և փականքը բանալու չամար զտին խիստ զքաղած միջոցին կամաց մը դուռը բացաւ և ձեռքի մոմը պյուղէս բռնեց որ իւր երեսը բոլորովին լուսաւորեց :

Դուռը իւր ծիսնեաց վրայ այնպէս կամաց դարձաւ , որ զողը անոր ձայնը չլսեց . սակայն մեծ զարմանքի մէջ մնաց երբ սենեակը յանկարծ լուսաւորուած տեսաւ :

Այն առեն զ լուխը դարձուց :

— Բարի իրիկուն , սիրելիդ իմ պարոն Քատրուս , ըստ Մօնթէ-Քրիսթօ , այս ժամուս հսու ինչ զործ ունիս :

— Արբայ Պիւզոնին — , զոչց Քատրուս :

Եւ չկրնալով հասկընալ թէ ինչ կերպով այն կրօնաւորը մինչև չոն եկեր էր, քանի որ ինքը գոները զոցեր էր, կեղծ բանալիներուն տրցակը ձեռքէն թողուց և ապշութեան մէջ անշարժ մնաց:

Կոմսը զնաց Քատրուսին և սպատուհանին մէջ տեղը կեցաւ, այնպէս որ դողասարսափ գողին փախչելու միակ ճամբան կտրեց:

— Արքայ Պիւղոնին, կրկնեց Քատրուս ապուշ նայուած քով մը կոմսին երեւը նայելով:

— Այս, նոյն ինքն արքայ Պիւղոնին եմ, կրկնեց Մօնթէ-Քրիսթո, և շատ ուրախ եմ որ Ճանցար զիս, սիրելի պարոն Քատրուս, այս յայտնի կը ցուցընէ որ լաւ յիշողութիւն մը ունինք, ըստ որում եթէ չեմ սխալի՞ գրեթէ տասը տարի է որ զիրար տեսած չէինք — :

Կոմսին այս սրտի հանդարտութիւնը, հենգնութիւնը և զօրութիւնը Քատրուսի սիրով թալիային սարսափով մը պաշտեց:

— Արքան, արքան, մըմնաց իւր բուռերը կնշոելով և ակռանքները կափկափելով:

— Ուրեմն Մօնթէ-Քրիսթոյ կոմսը գողնալու եկած ենք, ըստ կեղծ արքան:

— Պարոն արքայ, մըմնաց Քատրուս սպատուհանին մօտենալու ջանալով, որուն առջին կոմսը անդմութեամբ զրաւեր էր, պարոն արքայ, չեմ զիտեր . . . կ'աղաչեմ՝ հաւատացէք ինձ . . . կ'երդնում . . . :

— Այսու ամենայնիւ խորտակուած ապակի մը, շաբունակց կց, կոմսը, զողի լազմեր մը, գեղձանիկներու տրձակ մը, բոնութեամբ կէս բացուած թղթագարանը յայտնի ապացոյցներ են — :

Քատրուս իւր փողկապովը կը խեղդուէր. պահուելու անկիւն մը և աներեւութանալու ծակ մը կը փնտուէր:

— Ե՞ս, պարոն մարդասպան, ըստ կոմնը, կը տեսնեմ որ ամենեին չփօխուեր ես:

— Պարոն աբբայ, քանի որ ամեն բան իմացաք, պէտք էք դիտնալ որ մարդասպանը են չեմ, այլ լա Գարգոնթ. դատաստանին մէջ յայտնուեցաւ այս, ըստ որում միայն թիւալարտութեան մատնուեցայ ես:

— Ուրեմն թիւալարտութեանդ ժամանակը լրացուցի՞ր, ուր վերստին զրկուելու վիճակի մէջ կը տեսանեմ զքեզ:

— Ոչ, պարոն աբբայ, մէկը աղատեց զիս անկէ:

— Այդ մէկը մարդկային ընկերութեան աղէկ ծառայութիւն մը մատուցեր է:

— Ա՛չ, ըստ Քատրուս, թէե աղէկ խոստացած էի . . . :

— Ուրեմն աբսորէն աղատեցա՞ր, ընդմիջեց Մօնթէ-Քրիսթօ:

— Ավսո՞ս, այս, ըստ Քատրուս տիրութեամբ:

— Եւ վերստին նոյն յանցանքնե՞րը կը դորձես . . . եթէ չեմ սխալի՞ր՝ այս ըրածդ կրէվի հրապարակը ովիտի տանի դքեզ: Ե՛չ, աւելի աղէկ, ի՞նչու կ'ըսեն իմ երկրիս աշխարհականնե՞րը:

— Պարոն աբբայ, ակամայ այս մշղբը դորձելու ստիւտուեցայ:

— Ամեն դատապարտեալները այդպէս կ'ըսեն:

— Զքաւորութիւնը . . . :

— Լուէ, ըստ Պիւզոնի արհամարհանոք, չքաւորութիւնը կրնայ ստիւտէլ մարդս ողարժութիւն խնդրել, հացադործի մը գոնէն հաց մը զողնալ, և չէ թէ դալ թղթադարան մը բըսնութեամբ խորտակել այնպիսի տան մը մէջ, ուր կարծէիր թէ մարդ չկայ: Երբ Յովհաննէս ակնավաճառը քեզի թողուցած ադամանդիս համար քառասուն և հինգ հազար ֆըրանք համբեց, չքաւորութենէդ էր որ սպաննեցիր զան, որպէս զի թէ ադամանդը և թէ ստակը զբաւես:

— Ներեցէք ինձի, պարոն աբբայ, ըստ Քատրուս, արդէն զիս անդամ մը աղատեցիք, այս անդամ ալ աղատեցէք:

— Ի՞նչ սրտով:

— Առանձին էք, պարոն արքայ, հարցուց Քատրուս ձեռքը միացընելով, թէ զիս բռնել տալու համար պահուած դինուորներ ունիք:

— Բոլորովին առանձին եմ, ըստ արքան, և ես դարձեալ կը մեղքընամք քեզի, ու կը թողում որ մեկնիս ասկէ՝ իմ տկարութեամբս քու գլուխդ գալու գժբաղդութեանց թողլով զքեզ, միայն եթէ ճշմարտութիւնը խոստովանիս ինձի:

— Աչ, պարոն արքայ, զուեց Քատրուս ձեռքը միացընելով և քայլ մը Մօնթէ-Քրիսթոյին մօտենալով, ճշմարիտ կրնամ ըսել որ դուք իմ ազատիչ էք:

— Ուրեմն կը հաստատես որ զքեզ թիազարտութենէ ազատեցին:

— Ոչ, ատոր համար հաւատքիս վրայ կ'երդնում, որոն արքայ:

— Ո՛վ ազատեց դքեզ:

— Անդզիացի մը:

— Անունը ի՞նչ էր:

— Լորու Վալենը:

— Կը Ճանչնամ զան. կրնամ անորմէ իմանալ եթէ ոսւած է ըսածդ:

— Պարոն արքայ, բռլորովին ճշմարիտ է ըսած:

— Այն Անդզիացին ուրեմն կը պաշտպանէր զքեզ:

— Ոչ, զիս չէր պաշտպաներ, այլ երիտասարդ Քորսիացի մը, որ իմ շղթայակից ընկերու էր:

— Այն երիտասարդ Քորսիացիին անունը ի՞նչ էր:

— Պէնէտէթօ:

— Մկրտութեան անուն մ'է այդ:

— Ուրիշ անուն չունէր. քանզի իւր մանկութեան ժամանակ դանուեր է:

— Ուրեմն այն երիտասարդը քու հետոդ վախաւ:

— Այս:

- Ի՞նչ կերպով։  
 — Թուլոնի մօտ՝ Աէն-Մանսրիէ կ'աշխատէ ի՞նք . Աէն Մանսրիէն կը ճանչնա՞ք։  
 — Այս։  
 — Կէս օրէն մինչև ժամը մէկ ամեն մարդու քնացած միջացին . . .  
 — Թիհապարտեալները կէս օրին կը քնանա՞ն . ուրեմն ի՞նչ պէս մեղքընաս այն սրիկաները, ըսաւ արբան։  
 — Ի՞նչ, ըսաւ Քատրուս, միթէ շարունակ մարդս կրնայ աշխատիլ . միթէ շուն է։  
 — Բարեբաղդաբար շուները չեն աշխատիր, ըսաւ Մօնթէ - Քրիսթօ։  
 — Երբ ամեն մարդ միջօրեայ քունի մէջ ընկղմած էր, մենք քիչ մը հեռացանք, մը շղթաները Անդ զիացին մեղտուած խարտոցովը սղոցեցինք և լողալով փախանք։  
 — Եւ ի՞նչ եղաւ այն զէնէտէթթօն։  
 — Չեմ զիտեր։  
 — Սակայն պէտք ես դիտնալ։  
 — Ոչ, ստուգիւ չեմ զիտեր. Հիեր իրարմէ զատուեցանք — Քատրուս իւր ըսածին ստուգութիւնը հաստատելու համար քայլ մը տեղի արբային մօտեցաւ, որ միշտ հանդարաւ և հետազոտիչ երեկելով՝ անշարժ իւր տեղը մնաց։  
 — Սուտ կը խօսիս, ըսաւ արբայ Պիւզոնին անդիմադրելի իշխանական ձայնով մը։  
 — Պարսն արբայ . . .  
 — Սուտ կը խօսիս . այն երիտասարդը տակաւին քու բարեկամի է, և զուցէ քեզ մեղսակից ըրած ես զան։  
 — Ոչ, պարսն արբայ . . .  
 — Թուլոնէն մեկնելէդ 'ի վեր ի՞նչպէս ապրեցար . պատասխան տուր։  
 — Ի՞նչպէս որ կըցայ։  
 — Սուտ կը խօսիս — , կըկնեց երլորդ անդամ արբան աւելի հրամայական ձայնիւ։

- Քատրուս աշաբեկեմալ կոմսին երեսը նայեցաւ :
- Անոր տուած ստակովը ապրեցար, կրկնեց աբբան :
- Ստոյդ է, ըստ Քատրուս, ուշնետէթթօ մեծ իշխանի մը զաւակի է եղեր :
- Ի՞նչպէս կրնայ մեծ իշխանի մը զաւակն ըլլալ :
- Այս, մեծ իշխանի մը բնական զաւակը :
- Եւ այն մեծ իշխանին անունը ի՞նչ է :
- Կոմս Մօնթէ-Քրիսթոյ, այն անձը որուն տունը կը գտնուինք հիմա :
- Ուշնետէթթօն Մօնթէ-Քրիսթոյ կոմսին զաւակն է կ'ըսես, կրկնեց Մօնթէ-Քրիսթո նոյնպէս ապէտալ :
- Անշուշտ, ինչո՞ւ կը զարմանաք. կոմսը կեղծ հայր մը զտեր է անոր, կոմսը ամիսը չորս հազար ֆրանք կու տայ և իւր կտակին մէջ չինդ հարիւր հազար ֆրանք կը թողու անոր :
- Ո հո՛, և այդ երիտասարդը ի՞նչ անուն կը կրէ, ըստ կեղծ աբբան, որ սկսեր էր գործը հասկընալ :
- Անտրէա Գավալգանիթի կը կոչուի :
- Ուրեմն իմ Մօնթէ-Քրիսթո բարեկամիս տունը եկող երիտասարդն է ըսածդ, որ օրիորդ Տանկլարի հետ պիտի ամուսնանայ :
- Ճիշդ ան է :
- Եւ գուն ինչպէս կը համբերես, թշուառ, գուն որ անոր կեանքն ու վատ համբաւը կը ճանչնաս :
- Ինչո՞ւ ընկերիս յաջողութեանը մէջ արգելք ըլլամբ անոր, ըստ Քատրուս :
- Իրաւունք ունիս, ո. Տանկլարին իմացընելը քեզի շեյնար այլ ինձի :
- Մի ընէք այդ բանը, պարո՞ն աբբայ . . . :
- Եւ ինչո՞ւ :
- Վասն զի մեր հացը կորսնցընել պիտի տաք :
- Եւ դուք կը կարծէք որ ձեզի պէս թշուառականներու հացը կորսնցընել չտալու համար ձեր նենդութեանց պաշտպանը և ձեր մեղաց մեղսակիցը պիտի ըլլամբ :

- ուարոն արբայ , ըստ Քատրուս աւելի մօտենալով :  
 — Ամեն բան պիտի ըսեմ :  
 — Որո՞ւ :  
 — Պ. Տանկլարին :  
 — Ա՛չ , զոշեց Քատրուս իւր բառկոնին տակէն բոլորովին մերկ դաշոյն մը հանելով և կոմսին կուրծքին մէջ տեղը դարձելով , ոչ , պիտի ըսեք , արբայ — :  
 Որշափ մեծ եղաւ Քատրուսի զարմանքը երբ դաշոյնը փոխանակ կոմսին կուրծքին մէջ միտւելու՝ թթացեալ ետ դարձաւ :  
 Անմիջապէս կոմսը ձախ ձեռքովը մարդասպանին դաստակը բռնեց և այնպիսի ուժով մը պրկեց զայն որ դաշոյնը անոր պիրկ մատերուն մէջէն զետինը ինկաւ և Քատրուս իւր թեին ցաւէն ձայն մը հանեց :  
 Բայց կոմսը առանց անոր ձայնին ականջ դնելու՝ շարունակ աւազակին դաստակը կը պրկեր մինչեւ որ թեր չախջախուելով նախ ծնկան վրայ , ետքը՝ երեսն 'ի վայր զետինը զլորեցաւ :  
 Կոմսը ոտքը անոր դլիուն վրայ դնելով ըստու .  
 — Չեմ զիտեր թէ ինչո՞ւ ձեռքս չերթար դլուխդ չախջախելու , դաւաճան :  
 — Աչ , ներեցէք , ներեցէք — , զոշեց Քատրուս :  
 Կոմսը իւր ոտքը քաշեց :  
 — Առք ելիր — , ըստ :  
 Քատրուս ոտք ելաւ :  
 — Ա՛վ Աստուած , այդ ի՞նչ դաստակ է , ապարոն արբայ , ըստ Քատրուս՝ մարմնեղէն աքծանով վիրաւորեալ թեր շոյելով , այդ ի՞նչ դաստակ ունիք :  
 — Առ Աստուած , քեզի պէս վայրենի դազան մը նուաճելու հասար Աստուած ինձի ոյժ կու տայ , որուն անունովը հիմա կը դորձեմ . յիշէ միշտ , թշուառական , որ այս միջոցիս քու կենացդ խնայելս անզամ Աստուածոյ կամացը ծառայել է :  
 — Ա՛փ , զոշեց Քատրուս ցաւագին :

— Աա թուղթը և դրիչը ձեռքդ առ և ըստ լիքներս զրէ :  
 — Գիր զրել չեմ զիտեր , պարոն աբրայ :  
 — Սուտ կը խօսիս . առ սա զրիչը և զրէ — :  
 Քատրուս կոմսին բարձրագոյն զօրութենէն յաղթահար-  
 եալ նստաւ և զրեց :

« Պարոն , այն մարդը՝ որ ձեր տունը կ'ընդունիք և որուն  
 ձեր աղջիկը պիտի տաք , ինծի հետ թուլոնի թիապարու-  
 թենէ փախած զերի մ'է :

« 59 թիւը կը կրեր ան և ես 58 :

« Անունը ունէտէթթօ էր . սակայն իւր ծնողքը ամենին  
 չհանհալուն՝ իւր բուն անունն ալ չզիտեր » :

— Ստորագրէ , շարունակեց կամուը :  
 — Ուրեմն զիս կորսնցընել կ'ուզէք :  
 — Եթէ զքեզ կորսնցընել ուզէի , անմիտ , մինչև ամենէն  
 մօտ պահապանաց խումբը քաշկոտելով կը տանէի զքեզ .  
 ասկէ զատ՝ այս տամսակը իւր տեղը դացած ժամուն՝ հաւա-  
 նական է որ դուն վախնալու տեղ չունենաս . ստորագրէ  
 ուրեմն — :

Քատրուս ստորագրեց :

— Հասցէն զրէ . Առ ուրո՞ն ուղարկ Տանիլոր , ուշանառ ,  
 Շառեւր ունինէն դուշը — :

Քատրուս հասցէն ալ զրեց :

Արքան տամսակը առաւ :

— Հիմա , ըստ , ազատ ես , դնա :

— Ուրկից :

— Ուրկից որ եկար :

— Ուրեմն այս պատուհանէն դուրս պիտի և լնեմ :

— Միթէ այս պատուհանէն ներս չմտա՞ր :

— Ինծի դէմ բան մը կը խորհիք , պարոն աբրայ :

— Ազուշ , ինչ պիտի խորհիք :

— Ինչո՞ւ դուռը բանալ չեք տար :

- Ի՞նչ պէտք է դռնապահնը արթնցընել:
- Պարոն աբրայ, ապահովուցէք զիս որ սպաննել չէք ուղղեր:
- Աստուծոյ կամքը կը պաշտեմ:
- Երդում ըրէք ուրեմն որ իջած ժամանակս զիս պիտի չղարնէք:
- Յիմար և վատ մէկն ես եղեր դուն:
- Ուրեմն ի՞նչ պիտի ընէք ինձի:
- Քեզի կը հարցընեմ թէ ի՞նչ ընեմ. աշխատեցայ երջանիկ մարդ մը ընել զքեզ, և կը աեսնեմ որ մարդասպան մը կ'ըլլաս:
- Պարոն աբրայ, ըստ Քատրուս, վերջին փորձ մը ըրէք:
- Կը հաւանիմ, ըստ կոմսը. մտիկ ըրէ ուրեմն, զիսես որ ես խօսքիս վրայ կեցաղ մէկն եմ:
- Այս, ըստ Քատրուս:
- Եթէ ողջամբ տունդ վերադառնաս . . . :
- Միայն թէ հարուածը ձեր կողմէ չուղղուի ինձ, ամենին վախնալու տեղ չունիմ:
- Եթէ ողջամբ տունդ վերադառնաս, Բարիզէն մեկնէ, Գաղղայէն հեռացիր, և ուր որ ըլլաս և որչափ ժամանակ որ ուրարկեցութեամբ կեանք մը վարես՝ փոքր ոռջիկ մը կը հասցընեմ քեզի. վասն զի եթէ ողջամբ տունդ վերադառնաս, այն ատեն . . . :
- Այն ատեն ի՞նչ, հարցուց Քատրուս սարսուալով:
- Այն ատեն պիտի հաւատամ որ Աստուած թողութիւն տուած է քեզ, ես ալ կը ներեմ:
- Առուղիւ, թոթովեց Քատրուս ետ քաշուելով, սարսափով կը մեռցընէք զիս:
- Աղէ, զնաւ առկէ —, ըստ կոմսը մատովը պատուհանը պուցընելով Քատրուսին:
- Քատրուս ոյս խոստման վրայ ալ վստահ չեղած՝ բրունքը պատուհանէն անցուց և ոտքը սանդուխին վրայ կոխեց. բայց դողալով չո՞ն կեցաւ:

— Եջիր —, ըստ արբան իւր բազուկները կուրծքին վրայ խաչաձև դնելով։

Քատրուս կամաց կամաց իւր երկիւղը փարատեց և հաս կըցաւ որ այս կողմէն վախնալու տեղ չունի, ու սկսաւ վար իշնել։

Այն ատեն կոմսը մոմով պատռհանին մօտեցաւ, որպէս զի Ծանզ-Ելիզէն ամեն մարդ տեսնէ թէ մարդ մը պատռհանէ մը վար կ'իջնէ և ուրիշ մէ կը մոմը կը բռնէ։

— Ի՞նչ կ'ընէք, պարոն արբայ, ըստ Քատրուս, եթէ Հիմա զիշերասլահ զինուորները ասկէ անցնին . . . .

Եւ մոմը մարելով իջնալը շարունակեց. բայց մինչեւ որ պարտէզին հողը չկրիսեց, իւր սիրող բաւական շանգարտեցաւ։

Մօնթէ-Քրիսթօ իւր ննջարանը մտաւ վերստին, և իւր արագ նայուածքը պարաէզին վրայ շրջելով, նախ Քատրուսը տեսաւ, որ վար իջնալէն ետե՛ պարտէզին մէջ պատյա մը ըրաւ և գնաց իւր սանդուխը պատին ծայրը տնկեց, որպէս զի իւր մտած կողմէն դուրս չելնէ։

Ետքը կոմսը փողոցը նայելով մարդը տեսաւ, որ ուղղակի պատին քովը վաղեց և Քատրուսի իջնալու անկիւնին ետին պահուեցաւ։

Քատրուս կամաց կամաց սանդուխէն վեր ելաւ, և վերջին ոտքերուն հասնելով՝ զլուխը որմին քիւին վրայէն երկնցուց և միւս կողմը նայեցաւ, որպէս զի ապահով ըլլայ թէ փողոցը ամենեին մարդ չկայ։

Փողոցին մէջ ոչ մարդ կար և ոչ ձայն կը լսուէր։

Ենվալիստի ժամացոյցը ժամը մէկ հնչեց։

Այն ատեն Քատրուս պատին վրայ հեծաւ, սանդուխը վեր քաշեց, պատին վրայէն անցուց, ետքը անոր վրայէն սկսաւ իջնալ կամ լաւ ևս է ըսել երկու սիւներուն վրայէն վար սահիւ այնպիսի ճարպկութեամբ մը, որ մարմնոյ այս կրթութեան մէջ ունեցած սովորութիւնը կը յայտնէր։

Բայց անգամ մը զատ իվայրին վրայ ինքզինքը թողւէն ե-

տե՛ ալ չկրցաւ կենալ . պարապ տեղը՝ իէս Համբան հասած միջոցին մարդ մը տեսաւ որ ստուերին մէջ իւր վրայ կը յարձակէք . պարապ տեղը՝ իւր ոտքը դետինը կոխած միջոցին՝ տեսաւ որ թե մը բարձրացած էր իւր վրայ . ինքզինքը պաշտպանելու շարժելէն առաջ այն թեկը այնպիսի կատաղութեամբ կոնակին մէջ տեղը զարկաւ որ Քատրուս սանդուխը ձեռքէն Առղուց պոռալով .

— Օգնութեան հասէք — :

Գրեթէ անմիջապէս ետքը երկրորդ հարուած մը իւր կողին զարկաւ , Քատրուս դետինը ինկաւ պոռալով .

— Մարդասպանը բռնեցէք — :

Աերջապէս իւր դետինը զլորած միջոցին , ոսխը մազերէն բռնեց և երրորդ հարուած մը կուրծքին իջեցուց :

Այս անգամ Քատրուս ուզեց վերստին պոռալ , բայց միայն չեծեծանք մը հանել կրցաւ . իւր երեք վէրքերէն արեան երեք վտակներ կը հոսէին :

Մարդասպանը տեսնելով որ այնուչետե չէր պոռաք , մազերէն բռնելով զլուխը վեր վերցուց :

Քատրուսի աշերը զոյտեր էին և բերանը ծռուած :

Մարդասպանը զան մեռած կարծեց , զլուխը ձեռքէն թռուց և աներեսոյթ եղաւ :

Այս ատեն Քատրուս անոր հեռանալը զզալով՝ իւր արմուկին վրայ ելաւ , և նուազուն ձայնով մը իւր բռլոր ուժովը պոռաց .

Բռնեցէք մարդասպանը , կը մեռնիմ , օգնութեան հասէք ինծի , պարոն արբայ , օգնութեան հասէք ինծի — :



Այս վշտագին ձայնը դիշերուան ստուերին մէջ իւր արձագանդը հնչեց :

Գաղտնի սանդուխին դուռը , եաքը պարտէ զին գուռն ալ բացուեցաւ , և Ալի ու իւր տէրը Ճրադներով հասան :



ԳԼՈՒԽ Ե.

ԱՍՏՈՒԹՈՅ ԶԵԽԳՅ

  
**Պ**ԱՅՐՈՒՄ ողբարմագին ձայնիւ շարունակ կը  
 պոռաբ .  


— Պարոն արքայ, օդնութեան հա-  
սէք, օդնութեան հասէք :

— Ի՞նչ եղար, հարցուց Մօնթէ-Քրիսթօ :

— Օդնութեան հասէք ինձ, կրկնեց Քատրուս. սպան-  
նեցին զիս :

— Ահա հասանք, քաջալերութիւն :

— Ահ, լինցաւ. շատ ուշ հասաք. իմ մեռնելս միայն  
տեսնելու համար եկաք : Ո՛հ, ինչ հարուածներ ընդունեցի  
և որչափ արիւն կորսնցուցի — :

Այս ըսելով նուազեցաւ :

Ալի և իւր տէրը վիրաւորեալը բռնեցին և սենեակ մը  
տարին . ուր Մօնթէ-Քրիսթօ նշան մը ըրաւ Ալիին որ հա-  
նուեցընէ զան, և այն ատեն անոր ընդունած երեք սոսկալի  
վէրքերը տեսաւ :

— Ալ Աստուած իմ, ըսաւ, քու վրէժինդրութիւնդ եր-  
բեմն կ'ուշանայ, բայց կարծեմ այն ատեն երկինքէն աւելի  
կատարեալը կ'իջնէ — :

Ալի ինչ ընելիքը հարցընելու համար իւր տիրոջը երեսը  
նայեցաւ :

— Գնա՛ թագաւորի դործակալ Պ. Ա. իլքֆորը դաիր, որ

Սէնթ-Օնօրէ արուարձանը կը բնակի և հօս կանչէ : Դռնաւ պանին քովէն անցնելու ատենդ՝ արթնցուր զան և ըսէ որ երթայ բժիշկ մը կանչէ — :

Ալի հնաղանդեցաւ և կեղծ արբան միշտ նուազեալ Քատուրուսի հետ առանձին մեաց : Երբ ողորմին աչքը բացաւ, կոմսը իրմէ քանի մը քայլ անդին նստած՝ խանդաղատութեան դէմքով անոր կը նայէր, և իւր շուրթերը շարժելով կարծես աղօթք մը կը մրմռ ային :

— Աիրաբոյժ մը բերել տուէք, պարոն արբայ, վիրաբոյժ մը, ըսաւ Քատրուս :

— Կանչելու համար մարդ դրկեցի, պատասխանեց արբան :

— Գիտեմ որ օգուտ մը պիտի ջնէ կենացս, բայց կրնայ դուցէ քիչ մը ոյժ տալ ինձ, վասն զի կ'ուզեմ յայտարարութիւնս ընելու ժամանակ ունենալ :

— Ի՞նչ բանի վրայ :

— Զիս սպաննողին վրայ :

— Ուրեմն կը ճանշնաս զան :

— Անշուշտ կը ճանշնամ. ուենէտէթթօն էր :

— Այս երիտասարդ Քորսիացին :

— Կոյն ինքն :

— Ընկերդ :

— Այս, կոմսին տան յատակադիծը տալէն ետե՛ անտարակոյս յուսալով որ պիտի սպաննեմ զան և ինքը անոր ժառանգը պիտի ըլլայ, և կամ զիս սպաննելով ինձմէ պիտի ազատի, փողոցին մէջ ինձ սպասեց և սպաննեց զիս :

— Բժիշկը կանչելու ժամանակին թագաւորի զործակալն ալ պիտի կանչեն :

— Չատ ուշ պիտի հասնի, ըսաւ Քատրուս, կ'ըզդամ որ բոլոր արիւնս երակացս մէջէն կը պարպուի :

— Կեցիր քիչ մը —, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ :

Կոմսը դուրս ելաւ և հինգ վայրկեան ետքը սրուակով մը վերադարձաւ :

Ակեզարը, որուն անթարթ նայուածքը սոսկալի կ'երեկը, ամենեին վերցուցած չէր իւր աշքը այն գրան վրայէն, ուր կից բնազդմամբ կը դուշակէր թէ օգնութիւն մը պիտի դայ :

— Ծուտ ըրէք, պարոն աբրայ, շուտ ըրէք, ըստ վերստին նուազում մը կ'ըզդամ — :

Մօնթէ - Քրիսթօ անոր մօտեցաւ և վիրաւորելոյն մանիշակադոյն շրթանց վրայ երեք կամ չորս կաթիլ սրուակին պարուակած հեղուկէն կաթեցուց :

Քատրուս հառաջանք մը հանեց :

— Ո՛չ, ըստ այդ հեղուկը կենդանութիւն տուաւ ինձ . քիչ մը ևս . . . քիչ մը ևս կաթեցուր :

— Երկու կաթիլ ևս կրնայ սպաննել զքեզ, պատասխանեց աբրան :

— Ո՛չ, ինչո՞ւ մէ կը չդար որուն մատնեմ այն թշուառականը :

— Կ'ուղես որ ըսածներդ դրեմ և դուն ստորագրես :

— Այս . . . այս . . . —, ըստ Քատրուս, որուն աչերը իւր մահուանէն ետեւ լուծելու վրէժին դադափարէն կը փայլէին :

Մօնթէ - Քրիսթօ զքեզ .

« Թուլոնի մէջ ինձի շղթայակից 59 թիւը կրող Քորսիացի Պէնէտէթթոյէն սպաննուելով կը մեռնիմ » :

— Ծուտ ըրէք, շուտ ըրէք, ըստ Քատրուս, ալ պիտի չկրնայ ստորագրել — :

Մօնթէ - Քրիսթօ դրիչը Քատրուսին ներկայեց, որ իւր ոյժը ամփոփելով ստորագրեց և վերստին անկողնոյ վրայ ինկաւ ըսելով .

— Մնացած ը դուք պատմեցէք, պարոն աբրայ, ըրէք որ ինքզինքը Անտրէա Գալալունթի կ'անուանէ, Իշխանաց պանդոկը կը բնակի, և . . . ո՛չ, ով Աստուած իմ, ահա կը մեռնիմ — :

Եւ Քատրուս երկրորդ անդամ՝ նուազեցաւ,

Արքան սրուակը անոր քթին բռնեց . վիրաւորեալը աչքը բացաւ :

Դուաղմանը մէջ վրէժինդրութեան փափաքը ամենեին իւր մարէն ելած չէք :

— Այս ամենը պիտի ըսէք , այնպէս չէ , պարոն արքայ :

— Այս , ասոնցմէ զատ ուրիշ բաներ ալ ունիմ ըսելու :

— Ի՞նչ բան :

— Պիտի ըսեմ թէ յուսալով որ կոմսը զքեզ պիտի ըսպաննէր՝ այս տան յատակագիծը քեզ տուաւ : Պիտի ըսեմ թէ տոմսակաւ մը կոմսին առաջէն այս բանս խմացուցեր է , և թէ կոմսը բացակայ ըլլալով , ևս ընկալայ այն տոմսակը , և քեզ սպասեցի :

— Եւ պիտի զլսատուի , այնպէս չէ , ըսաւ Քատրուս . կը խոստանաք ինձ որ պիտի զլսատուի ան : Այս յուսով կը մեռնիմ ես , և այս յոյսը պիտի օգնէ ինձ մեռնելու :

— Պիտի ըսեմ , շարունակեց կոմսը , թէ ետեկդ եկաւ , զքեզ լրտեսեց , և երբ այս տունէն գուրս ելնելու տեսաւ , պատին անկիւնին քովը վազեց և պաշուեցաւ :

— Ռւրեմն այս ամենը տեսաք դուք :

— Ցիշէ քեզի ըսած խօսքեց . « Եթէ ողջամբ տունդ վերպառնաս , պիտի հաւատամ որ Աստուած ներած է քեզ և ես պիտի ներեմ » :

— Եւ ինչո՞ւ չիմացուցիք ինձ , գոչեց Քատրուս իւր արմկան վրայ ելնելու ջանալով , ասկէ իջնելու տօենս սպաննուելիքս դիսէիք և ինչո՞ւ չիմացուցիք :

— Վասն զի Աստուծոյ արդարութիւնը Պէնէտէթթոյի ձեռոց մէջ կը տեսնէի , և ես Դախսախնամութեան կամաց հակառակելով , սրբազնութիւն մը ընել պիտի կարծէի :

— Աստուծոյ արդարութիւն կ'ըսէք , պարոն արքայ . եթէ Աստուծոյ արդարութիւն մը կայ , դուք ամենէն աղէկ զիսէք որ շատ մարդիկ պէտք էին պատճուիլ և պատճուած չեն :

— Համբերութիւն , ըսաւ արքան այնպիսի ձայնով մը որմէ ողեվարը դողաց . համբերութիւն — :

— Ասկէ զատ , ըստ արքան , Աստուած ամենուն կ'ու զորմի , ինչպէս որ քեզի ողորմեցաւ . դատաւոր ըլլալէն առաջ հայր մ'է :

— Աւրեմն Աստուծոյ կը հաւատա՞ք դուք , ըստ Քատրուս :

— Եթէ մինչև հիմա անոր չհաւատալու դժբաղդութիւնն ունենայի , ըստ Մօնթէ-Քրիսթօ , զքեզ տեսնելով պիտի հաւատայի — :

Քատրուս իւր կնշուած բռները դէպ ՚ի երկինք վերցուց :

— Մաիկ ըրէ , ըստ արքան իւր ձեռքերը վիրաւորելոյն վրայ երկնցընելով՝ հրամայելու համար որ հաւատքը յարդէ . ուստմմմ հիմա այն Աստուծոյ քեզ ըրած բարիքը , զոր քու վերջին վայրկենիդ մէջ շես ուզեր ճանշնալ . Աստուած քեզի առողջութիւն , ոյժ , ազահով զործ մը , բարեկամներ իսկ , վերջապէս այնպիսի կեանք մը տուաւ , որով մարդ մը խղչի հանգարառութեամբ ու բնական փափաքանաց զոհունակութեամբ կրնայ երջանիկ ըլլալ . փոխանակ Աստուծոյ այս պարզեները վայելելու , որոնք շատ քիչ անգամ այնչափ առատութեամբ կը չնորհէ , տես զուն ինչ ըրեր . ինքզինքդ հետութեանց և արբեցութեան տուիր , և արբեցութեանդ մէջ ամենէն ընտիր բարեկամներէդ մէկը մասնեցիր :

— Օգնութեան հասէք ինձի , զոչեց Քատրուս . քահանայի պէտք չունիմ այլ բժշկի . զուցէ մահու չափ վիրաւորուած չեմ , զուցէ գեռ չմոնիմ և զուցէ կաբենան ազատել զիս :

— Այնպէս մահու շափ վիրաւորուած ես , որ եթէ բերած չեղուկէս երեք կաթիլը չկաթեցընէի՝ մինչև հիմա մեռած է իր : Մաիկ ըրէ ուրեմն :

— Ահ , ինչ առարինակ քահանայ մ'էք դուք , որ մեռալները փոխանակ միտթարելու կը յուսահատեցնէք :

— Մաիկ ըրէ , շարունակեց արքան . բարեկամդ մատնելէդ ետե՝ Աստուած սկսաւ չէ թէ պատճել զքեզ այլ իմաց տալ . չքաւորութեան մէջ ինկար և անօթեցար . ժամանակդ անցուցիր այնպիսի կեանքի մը փափաքելով , զոր ստո-

նալու համար կրնայիր անցընել , և չքաւորութիւնդ պատճառ բոնելով արգէն կը մտածէիր մնջք մը զործելու , երբ Վստուած քեզի հրաշք մը բրաւ , ու քու թշուառութեանդ մէջ իմ ձեռօքս հարստութիւն մը զբկեց քեզի , թշուառ , այնպիսի միծ հարստութիւն մը որ երբէք ստացած չէիր : Քայց այս անակնկալ , անյուսալի և անլուր հարստութիւնը ստացած ժամանդ անդամ շբաւականացար , ուղեցիր կրկնապատկել զայն . ինչ միջոցաւ , սպանութեամբ մը : Կրկնապատկեցիր զայն , և այն ատեն Վստուած զքեզ մարդկային արդարութեան առջև հանելով՝ խլեց զայն քեզմէ :

— Հրէան մեղընել ուզողը ես չէի , ըստ Քատրուս , լավարդոնթն էր :

— Այս , ըստ Մօնթէ-Քրիսթօ , և Վստուած , որ միշտ ողորմած է , ներեց դատաւորներուդ որ խօսքերուդ զթան և կեանքդ ազատեն :

— Այս , ինչ մեծ շնորհք որ զիս մշտնջենաւոր թիապարտութեան մատնեցին :

— Այսու ամենայնիւ , անիրաւ , այս շնորհքը քեզ եղած ժամանակը իրը շնորհք ընդունեցիր . քու վատ սիրտ , որ մահուան առջև կը գողար , մշտնջենաւոր թիապարտութիւնը լսելով՝ ուրախութենէն կը խայրար , ըստ որում ամեն թիապարտերուն պէս դուն ալ ըսիր , « Գերեզմանը գուռ չըւնի , բայց թիանոցը ունի » : Եւ իրաւունք ունէիր . քանզի թիանոցին այս դուռը անյուսալի կերպով առջիդ բացուեցաւ . Անզ զղեացի մը , որ թիապարտութեանէ երկու հոգի ազատելու ուխա ըրած էր , թուլոն այցելութեան կու զայ . դիսուածը այնպէս կը բերէ որ այն երկու հոգին դուն ու քու ընկերդ ըլլաք . քեզի համար երկինքէն երկբորդ հարստութիւն մը կ'իջնէ . մի և նոյն ժամանակը ստակ և հանդ ստութիւն կը դանես . դուն որ թիապարտի կեանք մը վարելու դատապարտուած էիր , ամեն մարդոց պէս կրնայիր կեանք մը վարելու սկսիլ . այն ատեն դուն , ով ազիրատ , երբորդ անդամ

դնատուած փորձելու կ'ելնես։ Աւնեցածք բաւական չէ ինձ, ըսիր, ինչ ատեն դռւն մինչև այն օրը ունեցածէդ շատ աւելի ունէիր, և առանց պատճառի ու առանց բարութանաց երրորդ մեղք մը զործեցիր։ Աստուած ձանձրացաւ քեղմէ և օրաուժեց — :

Քատրուս յայտնապէս կը տիարանար :

— Քիչ մը ջուր, ըստ, ծարաւի եմ, կը պապակիմ — :

Մօնթէ-Քրիսթօ բաժակ մը ջուր տուաւ անոր :

— Անօրէն ունէտէթթօ, ըստ Քատրուս բաժակը տալիվ, պիտի աղատիս գտն :

— Մարդ պիտի չաղատի, ես եմ քեղի ըսողը, Քատրուս . . . ունէտէթթօն պիտի պատժուի :

— Արեմն գուք ալ պիտի պատժուիք, ըստ Քատրուս + ըստ որում ձեր քահանայութեան պարտքը չկատարեցիք . . . պէտք է իք չմազուլ ունէտէթթօն որ զիս սպաննէր :

— Ե՞ս, ըստ կամսը այնպիսի ժպիտով մը որ մնուելը սոսկումնի սառեցուց, ես պէտք չէի թողուլ ունէտէթթօն որ զքեզ պատաննէր այն ժաման որ կուրծքս ծածկող վերս զքահին դէմ դաշոյնդ ջախջախեցիք . . . : Այո, եթէ զքեզ խոնարհ և զղջացած զանէի, դուքէ արդիլէի ունէտէթթօն զքեզ սպաննելէ, բայց ես զքեզ զոռող և արիւնախան տեսայ և թողուցի որ Աստուծոյ կամքը կատարուի :

— Ես չեմ հաւատար Աստուծոյ, զոչց Քատրուս, և ոչ իսկ դուք կը հաւատաք . . . սուտ կը խօսիք . . . սուտ կը խօսիք . . . :

— Լուէ, ըստ արքան . վասն զի արեանդ վերջին կաթիներն են որ կը թափես . . . : Ո՛չ, Աստուծոյ չեմ հաւատար, և Աստուծմէ հարուածելով կը մեռնիս . . . : Ո՛չ, չեմ հաւատար այն Աստուծոյ, որ ներելու համար միայն ազօթք մը, խօսք մը և արտասուք մը կը խնդրէ . . . այն Աստուծոյ, որ կրնար մարդասովանին դաշոյնին այնպիսի ուղղութիւն մը տալ որ մէկ հարուածով զքեզ սպաննէր. բայց Աստուծ

քառորդ մը ժամանակ տուաւ քեղի որ զզջաս . . . : Արթնցի՛ր քունէդ, թշուառ, և զդչա՛ :

— Ոչ, ըսաւ Քատրուս, ոչ, չեմ զզջար . Աստուած չկայ, Նախախնամութիւն չկայ, այլ միայն դիպուած մ'է աշխարհի մէջ :

— Նախախնամութիւն մը կայ, Աստուած մը կայ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, և ապացոյցը այն է որ դուն այգպէս անկողնոյ մէջ պառկած և յուսահատած կը զտնուիս և զԸսառած կ'ուրանաս, իսկ ես քու առջիդ կանգնած, հարուստ, երջանիկ, ողջ և առողջ կը զտնուիմ, և ձեռքս միացուցած եմ այն Աստուծոյ առջե, որուն չհաւատալ կը ցուցընես, սակայն սրախիդ խորութեանը մէջ կը հաւատաս անոր :

— Բայց դուք ովկ էք, հարցուց Քատրուս իւր կիսամեռաչքը կոմսին վրայ յարելով :

— Աղէկ նայէ, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ մոմը առնելով և իւր երեսին մօտեցընելով :

— Աբբան . . . աբբայ Պիւզոնին էք . . . — :

Մօնթէ-Քրիսթօ իւր գէմքը այլայլու կեղծամը գլխէն վերցուց, և իւր սե դեղեցիկ մազերը թողուց, որոնք այնպէս շնորհալի կերպով իւր դեղնած գէմքը կը շրջանակէին :

— Ո՛չ, ըսաւ Քատրուս ահարեկ, եթէ այդ սե մազերը չունենայիք, պիտի ըսէի թէ դուք այն Անդղիացին էք, պիտի ըսէի թէ դուք լուս Վիլմորն էք :

— Ես ոչ աբբայ Պիւզոնին եմ և ոչ լորտ Վիլմորը, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ . աղէկ նայէ երեսս, նայուածքդ աւելի հեռուները տար, անցեալ ժամանակները միտքդ բեր — :

Կամսին այս խօսքերուն մէջ մազնիսական զօրութիւն մը կար, որով ողորմելոյն սպասած զզացութերը վերջին անդամ կենդանութիւն մը առին :

— Ո՛չ, իրօք ինձ այնպէս կ'երեկ, ըսաւ Քատրուս, թէ զձեղ տեսած և ժամանակաւ ճանցած եմ,

— Այո՛, Քատրուս, այո՛, դուն զիս տեսած ես, այս, և Ճանցած իսկ — :

— Բայց ով էք դուք , և ինչո՞ւ կը թողուք որ մեռնիմ երբ  
զիս տեսած և ձանցած էք :

— Վասն զի անկարելի է որ ազատիս , Քատրուս , վասն  
զի ընդունած վերբերդ մահացու են : Եթէ ազատել կարե-  
նայիր , Աստուծոյ զթութիւնը պիտի համարէի զայն , և հօրս  
գերեզմանին վրայ կ'երգնում որ դքեզ 'ի կեանս և 'ի զրդ-  
չում կոչելու պիտի աշխատէի :

— Զեր հօրը զերեզմանին վրայ կ'ըսէք — , ըսաւ Քատ-  
րուս վերջին ոյժը ամփոփելով և քիչ մը վեր ելնելով , որ-  
պէս զի ամեն մարդոց նուիրական եղած այն երգումը ընող  
ահձը աւելի մօտէն տեսնէ . — Է՛ս , ով էք դուք ուրեմն — :

Կոմսը անոր Ճգնաժամին յառաջանալը ակնդէա կը զննէր .  
Հասկրցաւ որ կենդանութեան այս ոյժը վերջինն էր . ուստի  
սզեվարին մօտեցաւ , և հանդարտ ու միանդամայն տխուր  
նայուածրով մը անոր նայելով :

— Ես . . . , ըսաւ անոր ականջին , . . . եմ — :  
Եւ իւր հազիւ բացուած շուրթերը այնպիսի ցած ձայնով  
անուն մը արտասանեցին , զոր կոմսը կ'երեւէր թէ ինքն ալ-  
լուլու կը վախնար :

Քատրուս , որ ձնկացը վրայ ելեր էր , թեերը երկնցուց ,  
ետ քաշուելու փոքը մը ընելէն ետե՝ ձեռքը միացուց և իւր  
բոլոր ուժովը վեր վեցընելով :

— Ով Աստուած , ով Տէր Աստուած , ըսաւ , ներէ ինձի  
զքեզ ուրանալուս համար . այս , գուն տիեզերաց Աստուածն  
ես , երկնքի մարդոց հայրը և երկրի մարդոց դատաւորը :  
Աստուած իմ , ով Տէր , ո՛շափ ժամանակ դքեզ ուրացայ .  
Աստուած իմ և Տէր , ներէ ինձի , Աստուած իմ և Տէր ,  
ընդունէ զիս — :

Եւ Քատրուս աչքը դոցեց և կոնակին վրայ ինկաւ վերջին  
ձիչ մը և վերջին հառաջանք մը հանելով :

Բերնէն և երեք մեծ վերբերէն հոսած արիւնը անմիջա-  
պէս գագրեցաւ :

Քատրուս մնոեր էր :


— Մէ — , ըստ կոմսը աշքը դիակին վրայ յարելով , ուրուն գէմքը արգէն այլազուներ էր այս սոսկալի մահումնեն :

Տասը վայրիեան ետքը՝ բժիշկը և թագաւորի դործ ակալը եկան՝ մէ կը դռնապանին և միւսը Ալիին հետ , ու արայ պիւզոնին տեսան , որ մնոեալին քովը կ'աղօթէր :



## ՊԼՈՒՐ Զ.

### ՊՈՅԵՆ



**S**ԱՅՆ և հինգ օր շարունակ՝ այսպէս կոմսին տան մէջ տեղի ունեցած դողութեան այն յանդուդն փորձին խօսքը կ'ըւլար բարիզի մէջ : Աէնէտէթթօն իր մարդասովան հաստատող յայտադրի մը՝ մնոեալը ստորագրեր էր : Աստիկանութեան ուշադրութիւնը հրաւիրուեցաւ մարդասովանը զանելու համար ամեն միջոց՝ ի դործ դնել :

Քատրուսի դաշոյնը , դպի լոպտերը , բանալիներու տըրցակը և դղեստները , բայց 'ի բաժկանէն , որուն զանուիլունիւրելի եղաւ , ոստիկանութեան յանձնուեցան , և մարմինը դիսկանց ծանօթարանը տարուեցաւ :

Կամսը ամենուն կը ոգատասխանէր թէ իւր Օթէոյլի տունը զանուած յամանակը այս գեպքը պատահեր է և չետեաբար իւր ամեն դիտցածը արբայ զիւզոնիէն լսածն էր , որ խիստ մեծ բարերադդութեամբ իրմէ խնդրեր էր որ այն իրիկունը իւր տունը անցընէ , որպէս զի իւր գրքատան մէջ ունեցած քանի մը թանկադ ին դըքերուն մէջէն խուզարկութիւններ ընէ :

Դէքըթուչիօ միայն կը զունատէր ամեն անզամ որ զիւնէտէ թէ թօնյի անունը իւր առջել կ'արտասանուէր . բայց ամենեւ էին պատճառ մը չիար որ մէկը զիւնէտէ զիւզութիւնը նշմարէր :

Աւելլ գործաւած ոճիրը հաստատելու համար կանչուելով , որոքը իւր վրայ առեր էր և իրեն յանձնուած յանցաւորաց ամեն դատերուն մէջ 'ի զործ գրածին պէս մեծ եւ ամսդեամբ դատաստանական խուզարկութիւններ կ'ընէր :

Բայց երեք շաբաթ անցան և ամենէն մանրաքնին հետազօտութիւնները յաջող վախճան մը չունեցան . ամեն մարդ քսկակեր էր մառնալ կոմոին տան մէջ տեղի ունեցած զողութեան փորձը և զողին իւր մղսակցէն սպաննուիլը , ու ամենուն ուշադրութիւնը օրիորդ Տանկարի հետ Վնարեւ Գավալլանթի կոմին մերձաւոր ամուսնութեան վրայ գարձաւ :

Այս ամուսնութիւնը զրեթէ երեան ելած էր , և երիտասարդը սեղանաւորին տունը իրը նշանած կ'ընդունուէր :

Պ. Գավալլանթի հօրը գիք գրեր էին , ան ալ այս ամուսնութիւնը խիստ յարմար դատեր էր , բայց իւր ոգաշոօնին պատճառաւ բարմայէն բացակայ ըլլալ չկրնալուն համար իւր վիշտերը կը յայտնէր և կ'իմացընէր որ հարիւր յիսուն հազար ֆրանք եկամուտին գրամագլուխը տալու կը հաւանի :

Այսպէս որոշուած էր որ երեք միլիոն ֆրանքը Տանկարի

քովը դրուի և սեղանաւորը զանոնք բանեցընելով շահը երիտասարդին առյ . քանի մը հոգի փարձեր էին երիտասարդին կասկածներ տալու իւր ասպանի աներին կացութեան հաստատութեանը վրայ , որ քանի մը ժամանակէ ՚ի վեր չետղչետէ գրամական մնջ կորուստներ կը կրէր . սակայն երիտասարդը անշահասիրութեամբ և մնջ վստահութեամբ այն ամեն սնոտի խօսքերը մերժեց և անոր վրայ սեպուհին խօսք մը անդամ չխօսելու աղնուութիւնը ունեցաւ :

Սեպուհին ալ Անտրէ ա Դավալլանթի կոմսը շափաղանց կը սիրէր :

Բայց օրիորդ հօժէնի Տանկլար նոյն սէրը չունէր . ամուսնութեան զէմ ունեցած իւր բնագդական ատելութեանը մէջ Անտրէային ընդունելութիւն տուեր էր իբր միջոց մը Մորսէր գիրքը հեռացընելու . սակայն հիմա որ Անտրէա իրեն խիստ կը մօտենար , օրիորդը սկսեր էր յայտնի ատելութիւն մը զգալ Անտրէայի համար :

Թերեւս սեպուհի դիտած էր իւր աղջկան այս պաղութիւնը , բայց աղջկան կողմէն մտային հաճոյք մը համարելով , չոեսնել ձեւացուցեր էր զայն :

Այսու ամենային Պոշանին խնդրած պայմանաժամը դրեթէանցեր էր . սակայն Մորսէրի կրցեր էր Մօնթէ - Քրիսթոյի տուած խրատին յարդը Ճանչնալ , քանզի կոմսը յորդորեր էր զի՞րը թողուլ որ զործը ինքնին խափանուի . զօրաց լիսին վրայ հրատարակուած յայտարարութիւնը մէ կը նորոգած չէր . և Եանեայի բերդը մատնող պաշտօնատարը տուենակալաց աթուը բազմող աղնիւ կոմսն ըլլալը մէ կը չէր յայտնած :

Ալպէր այն զործին մէջ նուազ նախատուած չէր . վասն զի անշուշու իւր սիրտը վիրաւորող այն քանի մը տողերուն մէջ զինքը անպատուելու դիտաւորութիւն մը կար . բաց յայսմանէ Պոշանին խօսակցութիւնը վերջացընելուն կերպը իւր սրտին մէջ դառն յիշատակ մը թողուցեր էր : Ուստի իւր մտաց մէջ այս մնամարտութեան դաղափարը կը դրէր , ու

բուն բուն պատճառը իւր վկաներէն իսկ դաղտնի պահել կը յուսար, եթէ Պոշան մնամարտութեան առաջարկութիւնը ընդունէր:

Իսկ Պոշան Ալպէրի ըբած այցելութենէն 'ի վեր աներեսոյթ եղեր էր, և զինքը հարցընողներուն կը պատասխանէին թէ քանի մը օրուան Ճամբորդութիւն ընելու համար բացակայ կը դանուի:

Բայց ուր կը դանուէր, մէ կը չէր դիտեր:

Ըստու մը Ալպէրի սենեկաղանը զինքը արթնցընելով՝ Պոշանին դալուստը իմացուց:

Ալպէր աչքերը շփելով հրամայեց որ զետնայարկի ծխարան դահշէքին մէջ Պոշանը սպասեցընեն, ու ինքը զզեստները հագաւ և վար իջաւ:

Պոշան դահշէքին երկայնութեամբը կը պարտէր, երբ Ալպէր տեսաւ՝ կանգ առաւ:

— Առանց սպասելու ինձի, որ այսօր ձեզ այցելութիւն մը ընել կը յուսայի, անձամբ տունս ներկայանալու զիջումնիդ ինձ աղեկ նշան մը կ'երեի, պարոն, ըսաւ Ալպէր, ըսէք շուտով, երկնցընեմ ձեռքս ըսելով. Պոշան, յանցանքնիդ խոստովանեցէք և բարեկամիդ մի կորսնցընէք, թէ՝ պարզապէս հարցընեմ. Ա՞ր զէնքը կ'ընտրէք:

— Ալպէր, ըսաւ Պոշան այնպիսի տիրութեամբ մը, որ երիտասարդը ապեցուց, նստինք առաջ և խօսինք:

— Ընդ հակառակն, պարոն, ինձ կ'երեի թէ նստելէն առաջ պատասխան մը ունիք տալու:

— Ալպէր, ըսաւ օրագրապետը, այնպիսի պարագաներ կան, որոնց դժուարութիւնը Ճիշդ պատասխանին մէջն է:

— Հարցումս կրկնելով՝ ձեր պատասխանը կը դիւրացընեմ ես, պարոն. Յօդուածը յետս պիտի կոչէք թէ ոչ:

— Մորսէրֆ, մարդս պէտք չէ բաւականանալ այս կամ ոչ պատասխանելու այն հարցումներուն, որոնք զօրապետի տեղակալ և Գաղղիոյ ատենակալ Պ. Մորսէրֆ կոմսին պէս

մարդու մը պատռւյն, ընկերային կայութեանը և կենացը  
կը նկատեն:

— Աւրեմն ինչ ըսել պէտք է:

— Ե՞նչ որ ես ըսի, Ալղէր, ստակը, ժամանակը և յոդ-  
նութիւնը բան մը չեն երկիր մարդու և ըր խնդիրը բալոր  
ընտանիքի մը համբաւյն և շահուցը վրայ է, բարեկամի մը  
հետ ՚ի մահ մանամարտութիւն մը ընդունելու համար հա-  
ւանականութիւններ պէտք չեն, այլ սուսպալթիւններ, երբ  
սուրս կամ ատրճանակիս բիթակը այսպիսի մարդու մը վրայ  
քաշեմ, որուն ձեռքը երեք տարիէ ՚ի վեր սեղմած եմ, պէտք  
եմ զոնե զիսնալ թէ ինչ պատճառաւ այսպիսի բան մը  
կ'ընեմ, որպէս զի այսպիսի հանդարտ սրաով և անխռով  
խղճիւ առարկեցին վրայ նետուիմ, ուրոնց մարդս պէտք ունի  
երբ իւր բաղակը իւր կետնքը պիտի ազատէ:

— Ետքը, ետքը, հարցուց Մորսէրփ անհամբերութեամբ,  
վերջաղես ինչ ըսել կ'ուզէք:

— Ըսել կ'ուզեմ թէ ետնեայէն կու դամ:

— Դուք ետնեայէն կու դաք:

— Այո, ես:

— Անկարելի է:

— Սիրելիդ իմ Ալղէր, ահա անցաղ իրս, քննեցէք Շե-  
նովայի, Միլանի, Վենետիկի, Թրեստի, Աէլինոյի և Ետ-  
նեայի տեսագրոշմերը, Հասարակաղետութեան և երկու միւս  
տէրութեանց դրոշմերուն կը հաւատաք —:

Ալղէր իւր նայուածքը անցաղ ըին վրայ շրջելէն ետե՝ դար-  
մանքազ ուղանին վրայ դարձուց:

— Ետնեա դայիք, ըսաւ:

— Ալղէր, եթէ դուք օտարական մը, անծանօթ մը կամ  
այն Անդղեացւոյն պէս պարզ լորտ մը ըլլայիք, որ երեք կամ  
չորս ամիս տուած ինձմէ իրաւունք փնտուելու եկաւ, և ես ա-  
զատելու համար սպաննեցի զան, կը հասկընաք՝ այնչափ հողս  
չէի ըներ, բայց ես տեսայ որ ակնածութեան պարտք մը ու-

Նէի կատարելու . ուստի ութ օր Ճամբայ ըլլի երջալու և  
ութ օր ու գալու համար . ասիէ զատ չորս օր քառանու-  
րավայրը կեցայ և քառասուն և ութ ժամ Աշնեա . ասու  
Ճիշդ երեք շաբաթ կ'ընէ . այս դիշեր Բարիդ հասայ , և աշա  
հիմա ձեզ եկայ :

— ՏԵ՛ր Բասուած , այս ճրչափ ըրջասացութիւններ կ'ընէք ,  
ոլոշան , և ոքչափ կ'ուշացընէք սպասած խօսքս ըսելու :

— Վասն զի ստուդիւ , Ալզեր . . . .

— Կ'երեկ թէ կ'երկմաքք :

— Այս , կը վախնամ :

— Զեր Յղթակցին զձեզ խաբելը խստովանելու կը վախ-  
նաք . ո՛չ , անձնասիրութիւննիդ մէ կ դի թողարցէք , ոլոշան ,  
ձեր աներկիւղութիւնը չիրնար կառկածելի ըլլալ :

— Ո՛չ , այդ չե պատճառը , մբմնչեց օրադրապետը . ընդ  
հակառակն . . . .

Ալզերի դոյնը սոսկալի կերպով նետեց . խօսելու փորձ  
փորձեց , բայց ձայնը շուրթերէն դուրս չկըցաւ ենել :

— Բարեկամ , ըստ Պոշան խիստ խանդաղատալի ձայնով  
մը , հաւատացէք որ երջանիկ պիտի ըլլայի եթէ ձեր ներո-  
զութիւնը խնդրելու դայի , և այդ ներզոզութիւնը յօժաբու-  
թեամբ պիտի խնդրէի , բայց , աւագ . . . .

— Խ'նչ ըսել կ'ուզէք :

— Ըսել կ'ուզէմ թէ հրատարակութիւնը ստոյդ է , բա-  
րեկամ :

— Խ'նչպէս , ուրեմն այն Գաղղիացի պաշտօնատարը . . . .

— Այս :

— Այս Ֆերնանդ :

— Այս :

— Խը տիրոջ բերգը մատնող այն նենգաւնը . . . .

— Ներեցէք ինձ ըսելու , բարեկամ , թէ քու հայրդ էր  
ան . . . .

Ալզեր սոսկալի շաբժում մը ըրաւ Պոշանին վրայ յարձա-

կելու համար . բայց օրագրապետը աւելի քաղցր նայուածքով  
մը քան թէ իւր երկնցուցած ձեռքովը արդիլեց զան :

— Տեսէք , բարեկամ , ըստ ծոցէն թուզթ մը հանելով ,  
աշա առաջցոցը — :

Ալզէր թուզթը բացաւ . Եշանեայի չորս անուանի բնակե-  
չաց վկայագիրն էր այն , որոնք կը հաստատէին թէ թէ թէ-  
տէլէնի Ալի-բաշոյին ծառայութեանը տակ դժոնուող ֆէր-  
նան Մոնտէկօ վարժիչ հարիբապետը երկու հաղար քսակ  
դրամ ընդունելով Ետանեայի բերդը մասնեց :

Ստորագրութիւնները հիւպատոսէն վաւերացեալ էին :

Ալզէր գեղեցի լով ուժապառ թեաթոռի մը վրայ ինկաւ :

Այս անդամ տարակուսելու տեղ չկար . իւր ընտանեաց ա-  
նունը կատարեալ յիշուած էր :

Աւստի վայրիկեան մը անձայն և ախուր լուսթենէ ետե՝  
իւր սիրտը ուսեցաւ , պարանոցին երակները ընդարձակուե-  
ցան , և արտասուաց հեղեղ մը իւր աշերէն հոսեցաւ :

Պոշան , որ խորին արդահամառութեամբ երիտասարդին ե-  
րեսը նայեր էր , սաստիկ վշտակցութեամբ անոր մօտենալով  
ըստ :

— Ալզէր , հիմա միտքս հասկըցաք , այնպէս չէ : Ուզեցի  
ամեն բան անձամբ տեսնել և քննել . յուսալով որ ստանա-  
լու տեղեկութիւններս ձեր հօրը համար նպաստաւոր պիտի  
ըլլան , և ես պիտի կարենամ անոր իրաւունքը պաշտպանել :  
Բայց ընդ հակառակին՝ առած տեղեկութիւններս կը հաստա-  
տեն որ այն վարժիչ պաշտօնատարը , այն ֆէրնան Մոնտէ-  
կօն , որ Ալի-բաշոյին ընդհանուր կառավարչի տիտղոսը ըն-  
դուներ է , բուն կոմս ֆէրնան տը Մորսէրֆին է . այն ա-  
տեն ձեր բարեկամաց կարգը ընդունելու համար ինձ ըրած  
պատիւնիդ յիշելով վերապարձայ և ձեր քովը վազեցի եկայ — :

Ալզէր միշտ իւր թեաթոռին վրայ երկնցած երկու ձեռքը  
աշացը վրայ բոներ էր , որպէս թէ կ'ուզէր արդիլել ոյն  
լոյսը որ մինչե իրեն կը հասնէր :

— Ա.ազեցի եկայ, շարունակեց Պոշան, որպէս զի ըստմ ձեզ, Ալպէր, թէ մեր ձնողաց յանցանքը այս գործելու և անդործութեան ժամանակներուն մէջ իրենց զաւակացը վրայ չեն կրնար իյնալ: Ալպէր, շատ քիչ մարդիկ կան որոնք առանց իրենց զինուորական համազգեստը կամ գտառուորի պատմուանը տղմի կամ արեան բիծով արատաւորելու՝ մեր մանեկութեան ժամանակ պատահած այն յեղափոխութիւնները անցընեն: Ալպէր, հիմա որ ամեն ապացոյցներն ունիմ, հիմա որ ձեր զաղտնեաց տէրն եմ, մէկը չիրնար բռնադատել զիս այնպիսի կոփւ մը ընելու, որուն համար ապահով եմ որ ձեր խիզքը մեղք մը գործածի պէս պիտի մեղագրէ զձեզ: Բայց ես հիմա այնպիսի բան մը պիտի առաջարկեմ զորդուք չէիք կրնար ինձմէ պահանջել, կ'ուզէք որ անհետացը նեմ այն ապացոյցները, յայտարարութիւնները և վկայութիւնները, որոնք միայն իմ ձեռքս կը գտնուին. կ'ուզէք այն քստմնելի դաշտնիքը իմ և ձեր մէջը մնայ: Պատուոյս վրայ կը խոստանամ որ երրէք բերանէս գուրս պիտի շշանեմ: Բսէք, կ'ուզէք, Ալպէր. ըսէք, կ'ուզէք, բարեկամ — :

Ալպէր Պոշանին պարանոցը նետուեցաւ:

— Ո՛չ, աղնիւ սիրտ, զուցեց:

— Ահա առէք — , ըստ Պոշան թղթերը Ալպէրին ներկայացընելով:

Ալպէր զողդոջուն ձեռօք յափշտակեց զանոնք, ծումը ակեց, և պատել մտածեց . բայց վախնալով որ թղթին մէկ փոքրագոյն մասնիկը հողմէն տարուելով՝ օր մը պիտի վերադառնայ իւր ճակտին զարնուելու, զլանիկներու համար միշտ վառ կեցած մոմին մօտեցաւ, և ամենէն փոքրիկ կտորն ալ այրեց:

— Սիրելի բարեկամ, աղնիւ բարեկամ, մըմուաց Ալպէր թղթերը այրելու ատեն:

— Այս ամենը անհաջոյ երազի մը պէս թող մօսցուի, սեացեալ թղթին վրայ ընթացող վերջին կայծերուն պէս

թող մարի և այս լրիկ մոխիրներէն ելուզ վերջին մուխին պէտք անհետանայ :

— Այսու այսու ըստ Ալպէր, և միայն մշտնջենաւոր բարեկամութիւն մը թոշ մայ, զոր իմ ազատչիս կ'ուխտեմ, այնպիսի բարեկամութիւն մը, որ իմ զաւակներս ձեր զաւակացը հազրդեն, այնպիսի բարեկամութիւն մը, որ մի այիշցընէ ինձ թրափաց արիւնը, մարմեօյս կեանքը և անուանս պատիւը ձեզ պարտաւոր եմ. ըստ որում եթէ այսպիսի բան մը յայտնուէր, ո՛չ, ուռշան, Ֆշմարիա կ'ըսեմ որ ուղեղս կը ճաթեցընէի, և կամ, ո՛չ, խեղճ մայրս, ըստ որում անշուշտ պիտի չուղէի նայն հարուածով մայրս ալ սովաննել, և կամ իմ հայրենի երկրէս հեռանալ ողէտք էի :

— Այրելիգ իմ Ալպէր —, ըստ Պոշան :

Տոյց երխասասրդը այն յեղակարծ և զողցիս կեզծ ուրախութիւնը շաւառի թօթափելով, աւելի խորին տրտմութեան մը մէջ ինկաւ վերստին :

— Ե՞նչ կ'ըլլաք, բարեկամ, ըստ Պոշան, ուրիշ ի՞նչ ունիք :

— Աիրոս զրեթէ կտրուած է, ուռշան. Հօր մը անտրամ անուան իւր որդւոյն ազգած յարգանքէն, վաստհութենէն և հորառութենէն մանրերկրորդի մը մէջ չըաժնուիր մարդ : Ո՛չ, ուռշան, ուռշան, հիմա ես ի՞նչպէս իմ հօրս քովո պիտի երթամ . . . : Ոիսի հեռացընէմ ճակատս երր իւր շուրթերը անոր մօտեցընէ, և ձեռքս երր իւր ձեռքին դպչի : Ո՛չ, ուռշան, ի՞նչ թշուառ մարդ մ'եմ եղեր ես. մայր իմ, ոզորմնին մայր իմ, ըստ Ալպէր իւր արտասուօք թրջուած աշերուն միջոցէն իւր մօրը կենդանադրին նայելով. որչափ վշտացած պիտի ըլլաս եթէ այս բանս իմացած ես :

— Քաջալերութիւն, բարեկամ, ըստ Պոշան անոր երկու ձեռքէն բռնելով :

— Բայց ձեր օրագրին մէջ հբատաբակուած տոաջին յայ-

ուարարութիւնը ուրիշ եկած է : Դռչեց Ալպէր ոյս ամենան  
և արին անձանօթ ամելութիւն մը և աներեցիթ թշնամիք մը կոյ :

— Այդ աւելի մեծ պատճառ մ'է սիրո առնելու , Ալպէր ,  
ըսաւ զիշան : Ճեր դիմաց վրայ այլայլութեան հետք մը մի  
թողուք . Ճեր վիշտերը սրտերնուոք մէջ դահնեցէք , ինչպէս  
որ ամոցերը իրենց մէջը կը պահէն աւերին ու մահը , որոց մա-  
հաբեր դաղանիքը միայն մրբիլը ծաղած ժամանակը կը հաս-  
կրցուի : Աւումի , բարեկամ , Ճեր ոյժը փոթորիկը պայմելու  
վայրին սին պահնեցէք :

— Բայց կը կարծէք որ ասոնց վերջը եկած չէ տակաւին ,  
ըսաւ Ալպէր ահարելի :

— Ես չեմ կարծեր , բարեկամ , բայց վերջապէս ամեն  
ըսն կարելի է : Աղէկ միտքս եկաւ :

— Ի՞նչ բան , հարցուց Ալպէր տեսնելով որ Պոշան կ'երկ-  
մաէք :

— Օրիորդ Տանկլարի հետ անշաւշտ պիտի ամուսնանաք :

— Ի՞նչ մտօք կը հարցընէք այդ բանը ասանկ ժամանակ ,  
զոշան :

— Ասան զի իմ կարծեօրս այն ամուսնութեան լուծումը  
կամ կատարումը այս միջոցին մեր միտքը դրազեցընող խըն-  
դրոյն հետ կապակցութիւն ունի :

— Ի՞նչուս , ըսաւ Ալպէր բարեկութիւնէն իւր Տակաւը բոր-  
բոքելով , ուրեմն կը կարծէք որ Պանկլար . . . :

— Չեր ամուսնութեան ինչ վիճակի մէջ ըլքալը միայն կը  
հարցընէմ . գուք իմ խօսքերս ուրիշ մտօք մի առնուք , և  
մեծ կարեօրութիւն մը մի տաք անոնց :

— Այն ամուսնութիւնը լուծուեցաւ , ըսաւ Ալպէր :

— Աղէկ — , ըսաւ Պոշան :

Ետքը տեսնելով որ երիտասարդը իւր տիրութեան մէջ  
պիտի իյնայ վերստին ,

— Ստուգիս , Ալպէր , ըսաւ , հաւատացէք ինձի , դաղա-  
նիքը խմանալու վրայ ենք , կառքով կամ ձիով անտառի ըսր-

ջադայութիւնը կրնայ ձեր տիսրութիւնը փարատել, որմէ եամէ  
կ'երթանք տեղ մը ճաշելու, և զուք ձեր զործին կը զառ-  
նաք ու ես իմ զործիս :

— Յօժարութեամբ, ըստ Ալպէր, ոտքով կ'երթանք, կար-  
ծեմ քիչ մը յոդնութիւնը կրնայ օգուտ ընել ինձ :

— Թռող այնպէս ըլլայ —, ըստ Պոշան :

Եւ երկու բարեկամները հետիւան դուրս ելան, ու ծառու-  
ղին զարկին : Մատրւէնի առջե հասնելով,

— Կեցիք, քանի որ Ճամբանուս վրան է, ըստ Պոշան,  
եկէք քիչ մը ո! Մօնթէ-Քրիսթօն տեսնելու երթանք, ան  
կը զուարճացընէ զմեզ. մաքերը հանդ արտեցընով զարմանալի  
մարդ մ'է և երբէք հարցուփորձ չըներ . իմ կարծեօքս հարց-  
ուփորձ չընող մարդիկ ամենէն աղէկ միսիթարողներն են :

— Շատ աղէկ, ըստ Ալպէր, երթանք, ես կը սիրեմ  
զան — :



## ԳԼՈՒԽ Է.

### ՃԵՆԵԳԵՐՀԱՐԴՈՒԹԻՒՆԸ

**Մ** ՕՆԹԵ-ՔՐԻ-ՍՊԾ երկու երխուասարդները  
միատեղ տեսնելով ուրախութեան  
ձայն մը հանեց :  
— Ա՛ս, ըստ, ուրեմն կը յուսամ  
թէ ամեն բան վերջացած, յայտնուած և կարդի դրուած է :

— Այս, ըստ Պոշան։ անպատեհ տարածայնութիւններէին որոնք ինքնին խափանուեցան և հիմա եթէ նորոգուին, առաջին հակառակողը եռ ողիափ ըլլամ։ ուստի զոցենք այս խօսքերը։

— Ալպէր կրնայ հաստատել ձեզ, կրկնեց կոմուը, որ ես իրեն այս խրասը տուի։ Տեսէք, պարոններ, կարծեմ երբէք այսպիսի անտանելի առառ մը անցուցած չէի։

— Ի՞նչ կ'ընէք, ըստ Ալպէր։ կարծեմ ձեր՝ թղթերը կարգի կը դնէք։

— Ոչ, փառք Աստուծոյ թղթերս հիանալի կարդի մը մէջ կը դանուին միշտ, որովհետեւ ես թղթեր չունիմ, այլ ու։ Գավալզանթիին թղթերն են։

— Ու, Գավալզանթիին, հարցուց Պոշան։

— Այս, չէք զիտեր այն երիտասարդը, զոր կոմուը ընկերութեանց մէջ կը մացընէ, ըստ Մորուէր։

— Կը սխալիք, պատասխաննց Մօնթէ-Քրիսթօ։ ես երբէք մէկը ընկերութեանց մէջ մացուցած չեմ, նայնպէս և ու։ Գավալզանթիին ալ։

— Եւ իմ տեղս օրիորդ Տանկլարի հետ պիտի ամուսնանայ, այս բանս, շարունակեց Ալպէր ժպանլու ջանալով, ինչպէս որ կրնաք կարծել, սիրելիդ իմ Պոշան, շափաղանց կը վշտացընէ զիս։

— Ի՞նչպէս, Գավալզանթիին օրիորդ Տանկլարի հետ պիտի ամուսնանայ, հարցուց Պոշան։

— Ըսէք մեզի, միմէկ Բարիզի մէջ եղածները չէք լսեր, ըստ Մօնթէ-Քրիսթօ, զուր որ օրադրապետ մ'էք և բնութիւնը, Բոլոր Բարիզի մէջ ասկէ զատ ուրիշ խօսք չկայ։

— Եւ այս ամուսնութիւնը զո՞ւք կատարեցիք, կոմս, հարցուց Պոշան։

— Ե՞ս, ո՞չ, լսեցէք, պարոն խմբագիր, այդպիսի խօսքեր բերաննիդ մի առնուք, ես ամուսնութիւն մը կատարեմ։ Ո՞չ, զուր չէք Ճանշար զիս, ընդ հակառակն բոլոր կարու

դութեամբս դէմ դրի , և առաջարկութիւնն անգամ՝ ընել մերժեցի:

— Ա՞չ , կը հասկընամ , ըստու պոշան , մեր Ալոյէր բարեկամին համար , այնպէս չէ:

— Խնծի համար , ըստու երիտասարդը , ոչ , չեմ հաւատար . կոմաք թող բարեհաճի հաստատել որ ընդ հակառակն միշտ աղաքցի զինքը որ այս ամուսնութիւնը լուծէ , խնչպէս որ բարեբազմաբար լուծուեցաւ : Կոմաք չուզեր որ իրեն շնորհակալ ըլլամ , հոդ չէ , ևս ալ նախնեաց ակա անդառօք Առուածոյ սեղան մը կը կանգնեամ :

— Պաիկ ըրէք , ըստու Պօնթէ-Քրիսթօ , այս գործին մէջ ամենեին միջամտութիւն չունիմ , քանդի թէ աներին և թէ երիտասարդին հետ սիրով չեմ . միայն օրիորդ էօծէնին , ուրուն նոյն ամուսնութեան խորին միտում մը ունենալը չեմ կարծեր , աևսներով որ ես իւր սիրելի ազատութիւնը կորսընցնել տալու տրամադիր չեմ , համակրութիւնը մը կը դուցընէ ինձ :

— Աւրեմն այս ամուսնութիւնը կատարուելու վրայ է կ'ըսէքի

— Այս , ըրած գիտողութիւններու հակառակ : Ես այս երիտասարդը չեմ Շանհանար , ամեն մարդ աղէկ ընտանիքէ և հարուստ կը կարծէ զան , բայց ես այս խոսքերը պարզ տարաձայնութիւններ կը համարիմ , և այս ամենը մի առ մի պա . Տանիլարին յիշեցի , սակայն սեղանաւորը իւր Առքքացին յարեր մնացեր է : Մինչեւ անդամ այնպիսի պարագայ մը պատմեցի , որ ըստ իս աւելի ծանր էր . երիտասարդը իւր մանկութեան ժամանակ՝ շատ աղէկ չեմ զիաներ՝ կամ ուսչէ միացիներէ զողցուեր կամ իւր դաստիարակին ձեռօք անեւ րեայթ եղեր է : Աս միայն զիանեմ որ իւր հայրը տասը տարի կրսնցուց զան . Բնչ ըրաւ թափառական կենաց այն տասը տարիներուն մէջ , Աստուած միայն դիտէ : Այս դիտողութիւններէս մէկն ալ աղդեցութիւն չորս : Աղաւեցին զիս որ դնդաղեամբին դրեմ և անտը վերաբերեալ թղթերն ուղեմ :

և աշա այս թղթերը անորն են, որոնք իրենց տեղու կը դըր՝ կեմ բայց զիղատոսի պէս ձեռքս լուալով։

— Օրիորդ տ' Երմիլլին ի՞նչ աչքով կը նայի ձեզ, հարցուց Պոշան, գուք որ իւր աշակերտուհին կորսնցընել տաւ լու պատճառ կ'ըլլաք։

— Ծիտակը աղէկ չեմ դիտեր, բայց կ'երեի թէ Կոտալիս կ'երթայ։ Տիկին Տանկլար անոր վրայօք ինձ խօսեցաւ և թաւ արոնի տնօրէններու վրայ յանձնարարական նամակներ խընդրեց։ և ես քանի մը խօսք դրեցի Ալալ թատրոնի տնօրէնին, որ սակաւ ինչ երախտապարտ է ինձ։ Բայց գուք ի՞նչ ունիք, Ալպէր։ բոլորովին տիսուր կ'երեիք։ արդեօք օրիորդ Տանկլարին զաղանապէս սիրահարած էք։

— Գուցէ առանց իմ դիմնալուս —, ըստ Ալպէր տիսուր թեամբ ժպտելով։

Պոշան նկարները կը զններ։

— Բայց վերջապէս ամեն անդամուան պէս չէք, Ալպէր, ըստ Մօնթէ-Քրիստօ։ ըսէք ի՞նչ ունիք։

— Գլխազարութիւն մը ունիմ, ըստ Ալպէր։

— Ես խիստ ընտիր դեղ մը պիտի առաջարկեմ ձեղ, սիրելիդ իմ դերակոմս, այնպիսի դեղ մը որ ինձ յաջողած է ամեն անդամ՝ որ ձանձրութիւն մը զդ ամ։

— Ի՞նչ դեղ է այդ, հարցուց երիտասարդը։

— Տեղափոխութիւնը։

— Սա՞յդ կ'ըսէք, ըստ Ալպէր։

— Այս, և աշա Շիշդ այս միջոցիս սաստիկ ձանձրութիւն մը զդալով, Ձամբարդութիւն մը ընել կ'ուզեմ, կ'ուզեք միաւ տեղ ընենք։

— Ձանձրութիւն մը կ'ըզգաք, կոմս, ըստ Պոշան, և ինչ չո՞ւ համար։

— Կը տեսնեմ որ ուզածնուք պէս կը խօսիք, կ'ուզէի որ ձեր տան մէջ ալ զատաստանական քննութիւն մը ըլլար։

— Ի՞նչ զատաստանական ըննութիւն։

— Պ. աը Վիլթօրի մեր սիրելի մարդասպանը դանելը համար ըրած քննութիւնը . կ'երեկ թէ թիազարտութենէ փախած սրիկայ մ'է :

— Այո, սասցդ է , ըստ Պոշան , այս եղելութիւնը օրու զիւներու մէջ կարդացի : Քատրուս ինչ մարդ է :

— Քատրուս . . . զաւառարնակ մէկը կ'երեկի . Պ. աը Վիլթօր Մարսիլիա եղած ժամանակը անոր վրայ խօսուիլը լսեր է , և Պ. Տանկլար ալ զան տեսած ըլլալը կը յիշէ : Հետեւարար թագաւորի պարոն կործակալը զորձը եռանգեամբ իւր վրայ առած է , և ոստիկանութեան դործակալը վերջին աստիճան ջանքեր կ'ընէ չարակործը երեան հանելը , և այս պատճառաւ տասն և հինգ օրէ ՚ի վեր Բարիզի և շրջակայից մէջ զանուած ամեն աւաղակները հսու կը զղկեն , որպէս զի Քատրուսի սպանիչը ջաննամ : Եթէ այսպէս շարունակուի՝ Գաղղիոյ մէջ զող մը կամ մարդասպան մը պիտի չդանուի , որ տանս յատակադիծը իւր մատին ծայրովը չջանջնայ . ուստի ես ալ որոշեցի տունս բոլորովին անոնց թողուլ և կարելի եղածին չափ հեռանալ ասկէ : Հետո եկէք , դեբակոմս , միտաեղ երթանը :

— Յօժարութեամբ կու դամ :

— Աւրեմն որոշուած է :

— Այո , բայց ուր երթալու համար :

— Արգէն ըսի , ուր որ օդը մաքուր է , ձայները հանդարտած են , և ուր որչափ և հպարտ ըլլայ մարդ , իւր նուաստութիւնն ու փոքրկութիւնը կ'ըզդայ : Այս նուաստութիւնը սիրելի է ինձ , որ Օղոսոս կայսեր պէս տիեզերաց տէր կ'անուանեն զիս :

— Բայց վերջապէս ուր պիտի երթաք :

— Դէս ՚ի ծովը , դեբակոմս , դէս ՚ի ծովը . ինչ ընեմ , ես նուաստի եմ . մանկութեանս մէջ ծերունի նմիկանը իւր բաղկացը մէջ և դեղանի Ամիկիտրիտ իւր կուբծքին վրայ զիս որորած է . մէկին կանաչ վերաբերաց տէր կ'ա-

դեստին հետ խաղացած եմ. սիրուհի մը սիրելու շափ ծովը  
կը սիրեմ, և երբ երկար ատեն անոր երեսը չտեսնեմ, կեան  
քես կը ձանձրունամ:

— Ծառ աղէկ, երթանք, կոմս :

— Դէպ 'ի ծովը :

— Այս :

— Կ'ընդունիք :

— Կ'ընդունիմ :

— Ուրեմն կ'իմացընեմ, գերակոմս, որ այս իրիկուն տանս  
մէջ ճանապարհորդութեան այնպիսի կառք մը պիտի պատրաս-  
տուի, որուն մէջ անկոզնոյ պէս կրնայ մարդ երկնաւլ. Այս  
կառքը սուրհանդակի շրս ձիերէ լծուած պիտի ըլլայ :

Պ. Պոշան, չորս հոգւոյ տեղ կայ, կ'ուզէք մզի հետ զալ :

— Ծնորհակալ եմ, գեռ նոր ծովըն կու զամ :

— Ինչողէս, նոր ծովըն կու զար :

— Գրեթէ այս, Պորոմէ կղզիները փոքրիկ ճամբորդու-  
թիւն մը ըրի :

— Հոգ չէ, զուք ալ եկէք, ըստ Ալպէր :

— Ոչ, սիրելիդ իմ Մորսէրք, պէտք էք հասկընալ որ  
երբ կը մերժեմ, պատճառը այն է որ զալս անկարելի է.  
Ասկէ զատ, անհրաժեշտ պէտք է, յաւելլուց Պոշան ձայնը  
ցածցընելով, որ ես Բարիզ մամ, եթէ միայն օրագրի տու-  
փը գիտելու համար իսկ ըլլայ :

— Ո՛չ, բարի եւ աղնի բարեկամ, ըստ Ալպէր. այս, իրա-  
ւունք ունիք, դիտեցէք, հսկեցէք, Պոշան, և ջանացէք դըս-  
նել այն թշուամին, որ այն յայտաբարութիւնը 'ի լյս հանց-:

Ալպէր և Պոշան իրարն բաժնուեցան :

Իրարու ձեռքը սիղմած միջոցին լուրջեամբ այնպիսի զդա-  
ցումներ կը յայտնէին իրարու, զորոնք շաւըթերնին օտա-  
րականի մը առջեւ արտայայտն չէին ուղեր :

— Աղնիւ երիտասարդ մ'է Պոշան, ըստ Մոնթէ-Քրիսթօ  
օրագրապետին մեկնելէն եաւ, այնպէս չէ, Ալպէր :

— Ա՛յ, այս, արիասիրա մէկն է, կը խոստավանիմ. ուստի ես ալ բոլոր սրտովս կը սիրեմ զան։ Բայց հիմա որ առանձին ենք, ըսէք՝ ո՞ւր պիտի երթանք, թէե ինձ համար անտարբեր է։

— Կորմանտիս, եթէ ուղէք։

— Ըստ աղէկի, բոլորովին դիւղի մէջ պիտի ըրտանք, այնպէս չէ։ Ընկերութիւններ, դրացիներ պիտի շունենանք։

— Միայն վաղցընելու համար ձիեր, որսորդութեան համար շուներ, և ձուկ որսալու համար նաւակ մը պիտի ունենանք։

— Ինձ պիտք եղածներն ալ ատոնք են. երթամ մօրս իմացընեմ, և ձեր հրամանին պատրաստ եմ։

— Բայց, ըստ Մօնթէ-Քրիսթօ, պիտի թողուն դքեզ։

— Ի՞նչ բան։

— Կորմանտիս դալու։

— Ինձի, բայց միթէ ես ազատ չեմ։

— Գիտեմ, առանձին ձեր ուղած տեղը երթալու համար ազատ էք, ըստ որում Խոալիոյ մէջ ձեզ հանգ խպեցայ։

— Ետքի։

— Բայց կոմա Մօնթէ-Քրիսթօյ կոչուած մարդուն չետ։

— Կարճ յիշողութիւն ունիք, կոմս։

— Ի՞նչպէս։

— Մօրս ձեր վրայ ունեցած բոլոր համակրութիւնը չպատմեցի ձեզ։

— Ըստ անդամ կինը փոփոխական է, ըստ Գրանուառ Ա, կինը ծովաւ տլիք է, ըստ Ծեքսրիյը, մէկը մէծ թագաւոր մ'էր, և միւսը մեծ բանաստեղծ մը, և երկուքն ալ կինը աղէկ ճանշնալու էին։

— Կինը, այս, բայց իմ մայրս ան կինը չէ, այլ կին մ'է։

— Ներեցէք ողորմելի օտարականի մը երբ ձեր լեզուին ամեն նուրբ առութիւնները կատարելապէս չհասկեայ։

— Ըսէլ կ'ուղեմ թէ մայրս իւր զդացմանց մէջ աղասչ է,

բայց երբ զանոնք կը շնորհէ, մշտնջենաւոր կ'ըլլան անոնք :

— Ասո՞յդ կ'ըսէք, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ հառաջելով, և կը կարծէք թէ ինձի համար կատարեալ անտարբերութենե տարբեր զգացում մը ունենալու կը բարեհաջի :

— Մաիկ ըսէք, արդէն ըսի և գարձեալ կը կրկնեմ, ըսաւ Մորսէրփ, ստուդիւ պէտք է որ խիստ զարմանալի և զերազանց մարդ մը ըլլաք :

— Ի՞նչեր կ'ըսէք :

— Այս . քանզի մայրս չէ թէ հետաքրքրութեամբ այլ համակրական զգացմամբ յափշտակուած է ձեզի համար : Երբ առանձին ըլլանք, միայն ձեր խօսքը կ'ընենք :

— Եւ չզդուշացըներ զձեզ որ Մանֆրէտի մը վրայ վստահ չըլլաք :

— Ընդ հակառակն մայրս կ'ըսէ ինձ . « Մորսէրփ, կոմսը աղնիւ մէ կը կ'երեի ինձ . աշխատէ որ անոր բարեկամութիւնը շահիս » — :

Մօնթէ-Քրիսթօ աչերը դարձուց և հառաջանք մը հանեց :

— Աւստի կրնաք համկընալ, շարունակեց Ալպէք, որ փոխանակ ընելու ճամբորգութեանս գէմ գնելու, ուրախութեամբ հաւանութիւն պիտի տայ . ըստ որում իւր ամեն օրուան ինձի ըրած յանձնարարութիւններուն կատարուիլը պիտի տեսնէ :

— Գացէք ուրեմն, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, իրիկունը նուրէն տեսնուինք . ժամը հինգին հօս դանուեցէք, կէս զիշերին կամ ժամը մէ կին հօն կը հասնինք :

— Ուր, Թրէքո՞ր :

— Թրէքոր կամ շրջակաները :

— Քառասուն և ութ մղան տեղը ութ ժամուան մէ չ պիտի հասնինք :

— Գարձեալ շատ է , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ :

— Ճշմարիտ, սքանչելիքներ զործող մարդ մ'էք, և դուք պիտի կրնաք ոչ միայն երկաթուղինները անցնելու, որ խիստ

դժուարին բան չէ մանաւանդ Գաղղիոյ մէջ, այլ և հեռացը զրէն ալ աւելի շուտ երթալու:

— Եւ որովհետեւ եօթը կամ ութ ժամ պէտք է հոն հասնելու համար, Ճիշդ ժամանակին եկէք:

— Անհոգ եղիք, մինչև ժամը հինգ երթալու պատրաստութիւնները տեսնելէ զատ զործ չունիմ:

— Աւրեմ ժամը հինգին հոս պիտի ըլլաք:

— Այո, ժամը հինգին — :

Վլագեր մեկնեցաւ:

Մօնթէ-Քրիսթօ Ժպիտով մը դլառվը բարեկէն ետե՝ վայրկեան մը մտախորհ և խորին մամոռուքի մէջ ընկրցածի պէտերնեցաւ:

Աերջապէս զոգցես իւր մտմտուքը ցրուելու համար ձեռքը ճակատին տանելով, զանդակին մօտեցաւ և երկու անզամ հնչեցուց:

Երկրորդ հարուածին Պէրթուչիօ ներս մտաւ:

— Պ, Պէրթուչիօ, ըստ կոմնը, ոչ վաղը և ոչ միւսօքը, ինչպէս որ 'ի սկզբան կը մտածէի, այլ այս իրիկոն պիտի մեկնիմ դէպ 'ի Նորմանակա, ասկէ մինչև ժամը հինգը պէտք եղածէն աւելի ժամանակ ունիս, առաջին կայարանին ձիազաններուն իմաց տուր որ Պ, Մարսէրվն ալ ինձ պիտի ընկերանայ, զնա՞ — :

Պէրթուչիօ հնագանդեցաւ և ձիազարման սպասաւոր մը Բոնթուազ վազեց իմացընելու համար որ Ճիշդ ժամը վեցին սուրչանդակ կայարաններէն պատրաստ զանուեցան:

Խոմօը մեկնելէն առաջ Հայտէի սենեակը զնաց, իւր ուր երթալը իմացուց և բոլոր տունը անոր հրամանացը յանձնեց:

Վլագեր որոշուած ժամանակին եկաւ:

Ճամբորդութիւնը, որ 'ի սկզբան ախուր կ'երևէր, քիչ

մը ետքը արագընթացութեան փիղիքական աղդեցութենէն զուարձալի եղաւ :

Մորսէրփ այսպիսի արագընթաց ճամբորդութեան մը վրայ դադափար մը չունէր :

— Ստուդիւ, ըստու Մօնթէ-Քրիսթօ, դուք ուղածնուդ ովէս չեք կրնար Ճանապարհորդութիւններ ընել ձեր սուր-հանգակներով, որոնք ժամուան մը մէջ երկու մղոն կ'առնուն և այնպիսի յիմարական օրէնք մը ունին որ Ճանապարհորդ մը առանց ներումն խնդրելու ուրիշ Ճանապարհորդէ մը առաջ չկրնար անցնիլ, այս կերպով հիւանդ կամ վէս Ճանապար-հորդ մը արտօնութիւն ունի իւր ետին շղթայել քաջառողջ և զուարթ Ճանապարհորդներ, իսկ ես այդ անտեղութենէ-ազատ եմ իմ սուրհանդակովս և ձիերովս Ճանապարհորդե-լով, այնովես չե՞ , Ալի — :

Եւ կոմար զլուխը դռնակէն դուրս հանելով՝ դրդոիւ ձայն մը հանեց, որմէ ձիերը կարծես թեաւորեցան :

Այնուհետեւ չե՞ն ընթանար այլ կը թռչէին :

Կառքը Ճամբուն քարայատակին վրայէն կայծակի պէս կը սահէր, և ամեն մարդ այս հրարձակ օգերենոյթին անցնելը տեսնելու համար կը կենային :

Ալի իւր տիրոջ այս ձայնը կրկնելու առեն կը ժպտէր իւր սպիտակ ակնաները ցուցընելով, հումկու ձեռացը մէջ փըր-փրապատ երասմանակները սեղմելով, և ձիերը խթելով, ո-րոնց գեղեցիկ բաշերը հողմնն ցրուած էին. Ալի՝ անապատի զաւակը իւր տարրին մէջ կը զտնուէր, և իւր սև դէմքովը, հրացայտ աօքը, ձիւնափայլ պողոսովը, իւր հանած փո-չոյ մըրկին մէջ խաւարի ողինեւ փոթորկի չաստուածը կ'երեւէր:

— Ահա զուարձութիւն մը զոր ես չէի Ճաննար, ըստ Մօրսէրփ, այսինքն արագընթացութեան զուարձութիւնը — :

Եւ իւր Ճակտին վրայէն տիրութեան վերջին ամպերը ցըր-ռակցան, կարծես թէ իրենց Ճեղքած օդը այն ամպերը իւր չէ տը կը տանէր :

— Բայց ուր կը դժնեք այսպիսի ձիեր, հարցուց Ալոեք՝ յատուկ ձեզի՞ համար զաւգել կու տաք:

— Ճիշդ այդպէս, բառ կամուր, վեց տարի առաջ Հունիարիոյ մէջ՝ սրբնթացութեամբը անուանի մատակախաղ ձի մը դայ, և չեմ դիանը քանիի դնեցի զայն, ուերթուչիօն վճարեց: «Այս տարին՝ երեսուն և երկու զաւակ ունեցաւ. հիմա պիտի տեսնենք բոլոր այն ձիերը, որոնք մի և նոյն հօր սերունդն են. ամենքն ալ առանց կը նմանին, սև, առանց բիծ մը ունենալու բաց՝ ի ճակախն վրայ աստղածե նշանէն. վասն զի այս առանձնաշնորհ ձիուն համար խիստ ընտիր մատակ ձիեր կ'ընտրէին, ինչպէս որ բաշայի մը սիրուհիները կ'ընտրեն:

— Խիստ հիանալի են . . . բայց ըստեք, կամ, այս ամեն ձիերը բնէլ կ'ընեք:

— Կը տեսնեք, Ճամբորդութիւն կ'ընեմ:

— Բայց շարունակ Ճամբորդութիւն պիտի ընեք:

— Երբ ալ պէտք չունենամ անոնց, ուերթուչիօն պիտի վաճառէ զանոնք, որ կը պնդէ թէ երեսուն կամ քառասուն հաղար ֆրանք պիտի շահի անոնց վրայ:

— Բայց եւրոպիոյ մէջ այնչափ հարուստ թագաւոր մը չկայ որ զանոնք գնէ:

— Եյն առեն Երեւելեան որ և է պարզ եպարդուի մը կը ծախէ, որ անոնց դինը հատուցանելու համար իւր գանձը կը պարզէ և զայն վերստին լեցընելու համար իւր հպատակաց ներքաններուն դաւաղանի հարուստներ իջեցընել կու տայ:

— Կոմն, կ'ուզէք որ միտքս եղածը ձեզ հաղորդեմ:

— Եյն:

— Կը մասձեմ թէ ձեզի ետքը ու. ուերթուչիօ եւրոպիոյ ամենէն հարուստը պիտի ըլլայ:

— Կը սխալիք, գերակոմն, եթէ պէրթուչիոյի դրսանները դարձընեք, կէս ֆրանք արժողութիւն ունեցող ստակ մըպի չզանեք:

— Կ՞նչ պատճառաւ : Հարցուց երիտասարդը . ուրեմն նոր երեսյթ մարդ մ'է Պ . Պէրթուչիօն . ո՛չ , սիրելիդ իմ կոմք , ձեր հրաշքները աւելի առաջ մի մղեք , կանխաւ կ'իմացընեմ որ չպիտի հաւատամ ալ :

— Ամենեին հրաշքները չեն ըրածներս , Ալոքը , այլ հաշիւներ և քիչ մը խելք : Ըստք ինձի զործակատար մը ինչ կը զողնայ :

— Միթէ հարցընելու բան է այդ , իր բնութիւնն է կարծեմ , ըստ Ալոքը . զողնալու համար կը զողնայ :

— Ես ալ կ'ըսեմ որ զուք կը սիսալիք . զործակատարը կը զողնայ , վասն զի կին մը , զաւակներ , և իւր ընտանիքին ու իրեն համար փառասիրական փափաքներ ունի . վասն զի մանաւանդ հաստատ չզիտեր թէ միշա իւր տիրոջ քավը պիտի մնայ , և իրեն ապագայ մը պատրաստել կ'ուզէ : Գիտցէք ուրեմն որ Պ . Պէրթուչիօն առանձին է աշխարհիս մէջ . առանց հաշիւ տալու՝ ուղածին չափ ստակ կ'առնու . վասն զի ապահով է որ միշա իմ քովս պիտի մնայ :

— Կ՞նչ պատճառաւ :

— Վասն զի անորմէ աւելի աղէ կը պիտի չկրնամ զանել :

— Կը տեսնեմ որ հաւանականութեանց մէջ կը գեղեցիք :

— Ամենեին . ընդ հակառակն ստուգութեանց մէջ կը դըտնուիմ . ինձի համար այն է բարի ծառայ , ոբուն կենացը և մահուան վրայ իշխանութիւն ունիր :

— Եւ Պէրթուչիօյի կենացը և մահուան վրայ իշխանութիւն ունիր զուք , հարցուց Ալոքը :

— Այո — , պատասխանեց կոմսը պաղութեամբ :

Այսպիսի բառեր կան , որոնք խօսակցութիւնը զողցես երակաթեայ զուռով մը կը դոցեն . կոմսին այսն այն բառերէն մէկն էր :

Համբորդութեան մնացեալ ժամերը նոյն արագընթացութեամբ անցան :

Ութ կայարաններու բաժնուած երեսուն և երկու ձիերը ութ ժամուան մէջ քառասուն և եօթը մզոնը առին :

ԱՅս զիշերը անցած էր երբ զեղեցիկ պարտէ զի մը առջև հասան։

Դոնապահնը ոտքի վրայ կանդնած և վանդակապատ գուռը բաց բռնած էր։

Աերջին կայարանին ձիազանը կոմսին զալուստը անոր իմացուցեր էր։

Առառւան ժամը երկուք ու կէսն էր։

Մորսէրֆ իրեն համար յատկացած սենեակները զնաց, ուր պատրաստ դտաւ ընթրիք մը և լուացուելու համար ամեն պէտք եղած ները։

Ճամբան կառքին ետին նստող ծառան իրեն կը ծառայէր։  
Պաթիսթէն, որ կառքին առջեւի նստարանին վրայ նստած էր, կոմսին կը ծառայէր։

Ալզէր լուացուելէ ետեւ ընթրեց և պառկեցաւ։

Բոլոր զիշերը՝ կառքին մնամազձային ձայնը և տատանումը զինքը պաշարած էին։

Ենիօղնէն ելած ժամանակը ուղղակի պատուհանին քոյզ զնաց, բացաւ զայն և իւր առջեւը փոքր պատշզամբ մը աեսաւ, որուն դիմացը ծովը՝ այսինքն անբաւութիւնը կը դըտնուէր, և ետին՝ անտառակի մը քովը զեղեցիկ պարտէղ մը։

Բաւական մեծութեամբ խորչի մը մէջ միայարկ փոքր նաւ մը կը տառանէր նեղ ողնուլ, բարձր կայմերով և Աօնթէ-Քրիսթոյի զինանշանները կրող դրոշակով մը։ Այս զինանշանները, որոնք կապոյս ծովու մը վրայ ուկի լեռ մը, և անոր գլխաւոր ձայրը խաչ մը կը ներկայացընեին, կրնային միանդամայն ակնարկութիւն ընել թէ իւր անուան, որ Գողդ գոթան կը յիշեցընէր և Յիսուս իւր չարչարանօքը ուկիէն աելի թանկազին լեռ մը ըրաւ զայն, և թէ այն անարդ խաչին, զոր իւր աստուածային արեամբը նուիրադործեց. ասկէ զատ՝ այն զինանշանները այս զազտնի մարդուն անցեալին մթութեանց մէջ թաղուած տառապանքը և վերակենդանութիւնը կը յիշեցընէին։

Երկիայմ՝ նաւուն բոլորտիքը մերձարաներու բազմաթիւ նաւակներ կային, որոնք իրենց թաղուհոյն հրամանները կատարելու սպասող խոնարհ հպատակներ կ'երևէին:

Հռն, ինչպէս նաև Մօնթէ-Քրիսթոյի կեցած ամեն տեղերը, եթէ երկու օր իսկ կենալ ուղէր, ամեն բան վերջին խնամքով աղեկ կարգադրուած և տնօրինուած էր, այնպէս որ կեանքը զուարժալի կ'ըլլար հռն:

Ալպէր իւր նախասենեկին մէջ երկու հրացան և որսորդութեան ամեն պէտք եղածները զտաւ:

Գետնայարկին մէջ սենեակ մը նուիրուած էր այն ամեն հնարագիւտ զործիներուն, զորոնք երկելի որսորդ Անգղիացիները, ըստ որում համբերող և անզործ են, չկրցան փորձով սորվող Գաղղիացի որսորդներուն ընկունել տալ:

Բոլոր օրը այս տարրեր կրթութիւններով անցաւ, որոնց մէջ թէև Մօնթէ-Քրիսթոյ կը զերազանցէր:

Պարտէղին մէջ երկոտասնեակ մը փասեան սպանեցին, և վասակներուն մէջէն նոյնչափ կարմը ախայտ ձուկեր որսացին, ծովին վրայ նայող հովանոցի մը մէջ ճաշեցին, և դրա տան մէջ թէյ խոնցին:

Երրորդ օրուան իրիկունը՝ Ալպէր այս տեսակ կեանքէն սաստիկ յոդնած, որ Մօնթէ-Քրիսթոյին խաղալիկ մը կ'երեւէր, պատուհանին մօտ թւաթոռի մը վրայ քնացաւ, ինչ տանը կոմը տանը մէջ շինելու չերմանոցի մը յատակաղիծը կը շիներ իւր ճարտարապետին հետ. յանկարծ ճամբուն քարերը ջախջախող ձիու մը ոտից ձայնը երիտասարդը քունէն արթնցուց:

Ալպէր պատուհանէն նայեցաւ, և խիստ անհաջոյ զարմանքով մը տան զաւթին մէջ իւր սենեկատանը տեսաւ, զորիւր հետ համը բերել չուզեր էր Մօնթէ-Քրիսթոյին նեղութիւն չտալու համար:

— Ֆլորանթէն, ինչու եկար, զոչեց իւր թւաթոռին վրայէն ցատկելով. արդեօք մայրս հիւանդ է — :

ՆԵՐ ՊԵԿՊ 'Ի ԱԵՆԵԿԻՆ ՊՈւԾ ՆԵԹՈՒԵցաւ:

ՄԱՆՅԵԼ - ՔՐԻՍՏՈ անոր ԵԹԱԷԼՆ ՆԱՅԵցաւ, և ԹԵՍՍԱւ որ ԱԼ  
պէրի ծառան շնչասպառ Եղած՝ խը ծոյեն կնքեալ փոքր  
ծրար մը հանեց:

Այս ծրարին մէջ լրադիր մը և նամակ մը կար:

— Արմէ է այս նամակը, հարցուց Ալպէր շուտով:

— Պ. Պոշանէն, պատասխանից ՖԼՈՐԱՆՅԵԼն:

— Աւրեմն պոշան զքեզ հոս զրկեց:

— Այս, պարոն, զիս իւր տունը կանչեց, Ճամբորդու-  
թեանս պէտք եղած ստակը տուաւ, սուրհանդակի ձի մը բե-  
րել տուաւ և խօսք տուաւ ինձմէ որ Ճամբան ամենեին շիե-  
նամ մինչեւ որ տիրոջն քովը հասնիմ, տասն և հինգ ժամնաւն  
մէջ մինչեւ հօս եկայ — :

Ալպէր սարսուալով նամակը բացաւ:

Առաջին տաղերը կարգալով՝ ձայն մը հանեց և լրադիրը  
յափշտակեց յայտնի գոզդովինով մը:

Յանկարծ աչքը մթաղնեցան, սրնզաց ոյժը կարեցաւ, և  
զետինը իյնալու մօտ ՖԼՈՐԱՆՅԵԼնին կոթընեցաւ, որ իւր բա-  
զուկը երկնցընելով բռնեց զան:

— Խեղա երիտասարդ, մրմջեց ՄԱՆՅԵԼ - ՔՐԻՍՏՈ այնովիսի  
ցած ձայնով մը, որ հազիւ թէ ինքը կրցաւ լւել. ուրեմն  
ստոյդ է այն խօսքը թէ հարց յանցանքը զաւակաց վրայ պի-  
տի իյնայ մինչեւ երեք և չորս սերունդ — :

Այն միջոցին Ալպէր իւր ոյժը ամփոփելով նամակը շարու-  
նակեց, քրտնամըոր մազերը վեր վերցուց և նամակն ու օրա-  
դիրը ծոմատկելով,

— ՖԼՈՐԱՆՅԵԼն, ըստ, ձիդ կընայ վերստին բարիդ վե-  
րագառնալ,

— Սուրհանդակի հաշմատ մատաղաձի մ'է, տէր իմ:

— Մեկնած ժամանակդ տունը ի՞նչ վիճակի մէջ էր:

— Տունը հանգարան էր. բայց Պ. Պոշանին քովէն դար-  
ձած ժամանակս ամիկինը արտասուաց մէջ դտոյ, ձեր երբ

վերադառնութեալու հարցընելու համար զիս կանչել տուեր էր : Այս առեն ըսի անոր թէ Պ. Պաշանին կողմէն զձեղ կանչելու կ'երթամ: Խւր առաջին շարժումը կ'ուղէր արդիլել զիս . բայց վայրիեան մը մտածել էն ետե՛ Գնա՛ , Գլօրանթէն , ըստ , և թող վերադառնայ:

— Այս , մայք իմ , այս , ըստ Ալգէր , անհօդ եղեր , պիտի վերադառնամ , վայ այն անօրէնին . . . : Բայց ամեն բանէ առաջ պէտք է որ մեկնիմ — :

Եւ դէպ ՚ի այն սենե ակը վերադարձաւ , ուր Մօնթէ - Քրիստօն թողուցեր էր :

Այնուհետեւ մի և նոյն մարդը չէր , հինգ վայրիեանը բաւական եղեր էին Ալգէրին տիսուր այլայլութիւն մը պատճառ ելու :

Խւր սովորական վիճակին մէջ դուրս ենել լով այլայլեալ ձայնով կը վերադառնար . իւր դիմաց վրայ չերմային կարմրութիւն մը պատեր էր , կապուտացեալ արտեւանանց տակը իւր աչքը կը փայլէր , և իւր քայլութքը արբած մարդու մը քայլերուն պէս կը գեղեկէր :

— Կոմս , ըստ , Հոռոհակալ եմ ձեր հիւրասիրութենեն . կ'ուզէի աւելի երկար ժամանակ վայելել զայն , սակայն պէտք եմ բարիզ վերադառնալ :

— Ի՞նչ դիպուած պատահեցաւ :

— Մեծ դժբաղդութիւն մը . բայց հրաման տուէր ինձ որ մեկնիմ , կեանքէս աւելի թանկարին զործի մը վրայ է խընդիրը : Ամենեին հարցուփորձ մի ընէք , կոմս , կ'աղաւեմ , բայց ձի մը կ'ուզեմ :

— Ախտներս ձեր հրամանին տակն են , գերակոմս , ըստ Մօնթէ - Քրիստօ . բայց ձիով Ճամբորդութիւն ընելով սաստիկ պիտի յողնիք . կառքերէս մէկը պատրաստել տուէր :

— Ոչ , շատ ժամանակ պիտի անցնի . առել զատ ձեր ինձի համար վախցած յողնութեան պէտք ունիմ . քանզի օդուտ պիտի ընէ ինձ — :

Ալղեր զնառակէ մը զարնուած մարդու մը պէս իւր բոլոր-  
տիքը գառնալով քանի մը քայլափոխ առաւ և զնաց գրան  
քով աթռոի մը վրայ նստաւ :

Մօնթէ-Քրիսթօ Ալղերի այս երկրորդ տկարութիւնը չտե-  
սաւ . քանզի պատուհանին առջեն էր և կը պոռար .

— Ալի, շուտով ձի մը պատրաստել տուր ու . տը Մոր-  
սէրքի համար , որ մեկնելու կ'աճապարէ — :

Այս խօսքերը Ալղերի կենդանութիւն տուին :

Դռնէն գուրս նետուեցաւ , և կոմսը անոր ետեւ զնաց :

— Ընորհակալ եմ , մրմաց երիտասարդը ձիւն թամբին  
վրայ ցատկելով : Թլօրանթէն , կրցածիդ շափ շուտով ետեւ  
եկու : Շամբան ձիս փոխելու համար հրամանի մը պէտք ու-  
նի՞մ , կոմս :

— Ամեննեին . չեծած ձիդ յանձնելով , անփջապէս ուրիշ  
ձի մը կը թամբեն — :

Ալղեր Շամբայ ելնելու մօտ կեցաւ :

— Գուցէ այսպէս մեկնիլս տարօրինակ և յիմարական ե-  
րեի ձեզ , ըստ երիտասարդը . քանզի չեք հասկընար թէ-  
ինչպէս օրագրի մը մէջ հրամարակուած քանի մը տողերը  
կրնան մարդ մը յուսահատութեան մէջ ձդել . ահա , յա-  
ւելցուց Ալղեր , առէք այս օրագիրը և կարդացէք զայն ,  
միայն թէ կը խնդրեմ որ մեկնելէս ետեւ կարդաք , որուէս  
զի շառագնիլս շուսնէք — :


Եւ կոմսին լրացիրը գետնէն առնելու միջոցին՝ Ալղեր իւր  
կոշիկներուն կազել տուած խթանները ձիուն փորին միեց .  
անասունը զարմանալով այն չեծեալին վրայ , որ կը կարծէր  
թէ իրեն չետ այս կերպով վարուելու պէտք ունի , նետի  
պէս մեկնեցաւ :

Կոմսը խորին արդահատութեան զդացմամբ իւր նայուածքը  
երիտասարդին վրայէն շվերցուց և մինչեւ որ Ալղեր բոլորո-  
վին աներեսոյթ չեղաւ , իւր աչքը օրագրին վրայ չդարձուց , և  
անոր մէջ չետեւալը կարդաց .

« Եւանեայի կառավարիչ Ալի - բաշային ծառայութեան տակն  
եղող այն Գաղղիացի պաշտօնատարը , որուն վրայ ասկէ երեք  
շաբաթ առաջ Էմբարդաւ լրագիրը կը խօսէր , ոչ միայն Եա-  
նեայի բերդը յանձնեց , այլ և իւր բարերարը Տաճկաց ծա-  
խեց . իրօք այն միջոցին ֆերնան կը կոչուէր , ինչպէս ըստ  
միր յարդոյ պաշտօնակիցը . բայց այն ժամանակէն ետե՛ իւր  
մկրտութեան անուան վրայ աղնուականութեան տիտղոս մը  
և երկրի անուն մը աւելցուցած է :

« Այսօր զի . կոմա տը Մորսէրփ կ'անուանի , և Ասենակալոց  
մողովին մէ ջ կը բաղմի » :

Ուրեմն այն սոսկալի զաղտնիքը , զոր Պոշան այնչափ ազ-  
նուութեամբ ծածկել կ'աշխատէր , զինեալ ուրուականի մը  
պէս վերստին երեւան կ'ելնէր , և ուրիշ լրագիր մը անդթու-  
թեամբ տեղեկութիւններ ստանալով , Ալոէրին Նորմանոիս  
մեկնած օրին հետեւեալ օրը այն քանի մը տողերը հրատա-  
րակեր էր , որոնք՝ քիչ մնաց՝ ողորմելի երիտասարդը պիտի  
խենթեցընէին :



ՊԱՇԱՐ Ը.

ԳԵՏԵՍՍԵՆՔ


**Ա** ՊԵՏՈՒԽԱՆ ժամը ութին Ալղեր կոյծակի  
 պէս Պոշանի տունը հասաւ :  

 ԱԵՆԵԼՎԱՊԱՆԻՆ արգէն իմաց տըր-  
 ուեր էր : Մարսէրֆը իւր տիրով  
 սենեակը տարաւ, որ լոդարանէն գեռ նոր ելեր էր :  
 — Ի՞նչ լուր, բաւ Ալղեր :  
 — Ի՞նչ լուր կ'ուղէք, խեղջ բարեկամ, պատասխանն ց  
 պոշան . ես ձեզ կ'ըստակէի :  
 — Աչա եկայ, Պոշան, զձեզ անկեղծ ե ազնուասիրտ անձ  
 մը Ճամնչալովս չեմ կրնար ըսել թէ դուք ո՛ր և է մէ կու  
 խօսեցաք . ոչ, բարեկամ, մանաւանդ որ ձեր ինձ դրկած նա-  
 մակը ձեր սէրը կ'երաշխաւորէ ինձ : Ուստի այսպիսի յառա-  
 ջարաններով ժամանակնիս չկորսնցընենք . այս նոր հարուա-  
 ծին ո՛ր կողմէ դալուն վրայ դաղսփար մը ունիք :  
 — Հիմա երկու խօսք պիտի խօսիմ ձեզ անոր վրայօք :  
 — Այս, բայց նախ պէտք էք, բարեկամ, այն դարձելի  
 մանութեանը պատմութեան մանրամասն տեղեկութիւնները  
 պատմել ինձի — :

Եւ Պոշան ամօթահար ե վշտացեալ երիտասարդին այս հե-  
 տեեալ եղելութիւնները պատմեց, որոնք իրենց ամեն Ճշգու-  
 թեամբը հօս կը կրկնենք :

Նախընթաց օրուան առոտուն՝ ուրիշ օրագրի մը մէջ յօդ՝

ուածը հրատարակուեր էր, և դործը աւելի ծանր երեցընողը այնպիսի օրագրի մը մէջ հրատարակուիլն էր, որ խիստ ծանօթ ըլլալուն պաշտօնական օրագիր մը կ'երեւէր :

Պոշան իւր նախաձաշը կ'ընէր երբ այն յօդուածը աչքին զարկաւ :

Անմիջապէս կառք մը բերել տուաւ, և իւր նախաձաշը վերջացընելէն առաջ՝ լրադրադետին քովը վազեց դնաց :

Թէև ամբաստանեալ օրագրին անօրէնին քաղաքական ըսկը ըստանց բալորովին հակառակ պաշտօն մը իւր վրայ առած էր Պոշան, բայց ինչպէս երբեմն և զրեթէ շատ անդամ կը պատահի, խմբագիրը իւր մտերիմ բարեկամն էր :

Անոր սենեակը մտած միջոցին օրագրի անօրէնը իւր օրադիրը ձեռքը բոներ էր և կ'երեւէր թէ զուարձութիւն մը կ'ըդդար Բարիզի լրոց առաջին էջին մէջ բանջարի շաբարին վրայ դրուած յօդուածը կարգալու :

— Քանի որ օրագիրը ձեռքերնիդ բոնած էք, բարեկամ, ըստա Պոշան, պէտք չունիմ ըսելու թէ հոս դալուս պատշառը ինչ է :

— Արդեօք եղէզի շաբար շինողներուն կողմանակից էք, հարցուց պաշտօնական օրագրին անօրէնը :

— Աչ, պատասխանեց Պոշան, այդ դործին վրայօք տեղեւիութիւն անդամ չունիմ. այլ ես ուրիշ բանի մը համար եկած եմ:

— Եւ ինչ բանի համար եկած էք:

— Մորսէրֆի յօդուածին համար:

— Ա՛չ, այս, հետաքրքրական յօդուած մը չէ:

— Այնուա հետաքրքրական է որ կաբծեմ թէ անուանարկութիւն մը ըսելու վտանգին մէջ կ'իյնաք, և խիստ վտանգաւոր դատ մը կը հրաւիրէք ձեր վրայ:

— Ամենեին. նոյն յօդուածին հետ պաշտպանութեան համար պէտք եղած ամեն զրութիւններն ալ ստացած ենք, և մենք կատարեալ համողուած ենք որ Պը մը Մորսէրֆ հան-

դարա տեղը պիտի նստի . մենք աւելի մեր երկրին ծառայում  
թիւն մը ընել ուզեցինք քան թէ անոր եղած անարժան  
սպատիւը ամբաստանել — :

Պոշան ապարան մնաց :

— Բայց ձեզ այդպիսի լաւ տեղեկութիւններ տուողը ովկէ , հարցուց վերջապէս . վասն զի իմ օրադիրս , որ ամենէն  
առաջ ուշագրութիւնները արթնցուց , ապացոյցներ չունենաւ-  
լուն ստիլուցցաւ լուել : Այսու ամենայնիւ մենք ձեզմէ աւելի  
կ'ուզենք Պ . ուշ Մորսէրֆին դաղտնիքը երեսն հանել . ըստ  
որում Գաղղիոյ ատենակալ է , և մենք Գաղղիոյ ատենակա-  
լաց ժողովին հակառակ ենք :

— Մենք ետեւ չեղանք այս դայթակղութիւն տուողը դըտ-  
նելու , այլ ան եկաւ զմեղ զատւ : Երեկ մարդ մը ետանե այէն  
եկաւ ահազին արձանադիրքը հետը բերելով . և երբ մենք  
կ'երկմտէ ինք ամբաստանութիւնը հարատակելու , մարդը ի-  
մացուց մեզ որ եթէ մենք մերենք , յօգուածը ուրիշ օրադիր  
մը մէջ պիտի հարատակուի : Գիտէք , Պոշան , թէ երեւելի  
լուր մը հազօրդելու ի՞նչ ըսել է , ուստի մենք ալ չուզե-  
ցինք այն առիթը կօրսնցընել : Կրօք տրուած հարուածը սոս-  
կալի է , և մինչեւ եւրոպիոյ ծայրը անոր արձագանքը պիտի  
չնչէ — :

Պոշան հասկցաւ որ դլուխը խոնարհեցընելէն ուրիշ բան  
չէր կրնար ընել , և յուսահատութեամբ դուրս ելաւ Մոր-  
սէրֆին սուրբհանդակ մը զըկելու համար :

Բայց Պոշան չկրցեր էր ամեն բան զրել , ըստ որում մեր  
հիմա պատմելու եղելութիւնները սուրհանդակին մէկնելէն  
ետեւ պատահեցան . նոյն օրը՝ Ատենակալաց ժողովին մէջ մծ  
յուզմաւնք մը տեղի ունեցեր էր և մծ իրարանցում մը կը  
ալրէր այս բարձր պաշտօնակալաց խմբեակներուն մէջ , ո-  
րոնք սովորաբար հանդարտ կ'ըլլացին :

Իւրաքանչիւր ոք զրեթէ ժամանակէն առաջ եկեր էր և  
այն աղէտալի եղելութեան վրայ կը խօսակցէր , որ հասա-

իսկաց ուշադրութիւնը պիտի արթնցընէր և իրենց պատկանելի ժողովին ամենէն ծանօթ անդամոց մէկուն վրայ պիտի յարէր :

Ամանք ցած ձայնով այն յօդուածը կը կարգային , ոմանք մեկութիւններ կու տային , այլք եղելութիւնները հաստատող պատմութիւնները իրարու կը պատմէին :

Մորսէրֆ կոմը իւր պաշտօնակիցներուն սիրելի չէր :

Բաղդին յաջողութեամբը յաւաղութիւն հասնող մարդոց պէս՝ Մորսէրֆ իւր սաստիճանին մէջ հաստատ մեալու համար սափուեր էր շափաղանց զոռողութիւն մը ցուցընել :

Բարձր ազնուազիտականները անոր վրայ կը ծիծաղէին :

Տաղանդաւորները կ'ատէին զան :

Մեծաստիճան մարդիկ քնազդմամբ կը նախատէին զինքը :

Կոմսը զոհ ըլլալու ցաւալի միշակին հասեր էր :

Երբ Տիրոջ մատը անոր զոհուելուն օրը նշանակեց , իւրաքանչիր ոք անոր դէմ բոզքելու ձայնները բարձրացուց :

Միայն ուր Մորսէրֆ կոմսը բան մը խմացած չէր :

Ընուանարկութեան յօդուածը պարունակող լրադիրը չէր ընկուներ , ու նոյն առուուն նամակներ դրելով և ձի մը վարժեցընելով անցուցեր էր :

Աւտի իւր սովորական ժամանեն կառքը մանելով , կոկողավիղ դլանվ , ուզ նայուածքով և ամբարտաւն քալուածքով խորհրդարանին առջեւը կառքէն իջաւ , և առանց նուիրակներուն երկմութեանը ու իւր պաշտօնակիցներուն կէս բարեներուն ուշադրութիւն ընելու սրահը լուաւ :

Առեանը արգէն կէս ժամէ ՚ի վեր բացուեր էր :

Թէե կոմը՝ ինչպէս ըսինք՝ եղածներէն տեղեկութիւն չունենալով , իւր կերպարանքն ու քալուածքը ամեննեին չփոխեր էր . բայց իւր կերպարանքն ու քալուածքը սովորականէն աւելի զոռող երեսյթ մը ունեին և այն միջոցին իւր ներկայութիւնը այնչափ ամբարտաւն երնցաւ իրենց պատուայն նախանձախնդիր եղաղ այն ժաղովոյ անդամոց , որ ամեն մարդ

անոր անպատշաճ շարժումները յայտնի տեսան, ոմանք իրենց դէմիսոխտում մը կարծեցին և ոմանք՝ նախատինք մը:

Յայտնի կ'երեւէր որ բոլոր Ատեանը բանակռուութիւնը ըսկսելու մեծ եռանդ մը կը ցուցընէր:

Ամնուն ձեռքը ամբաստանիչ օրագիրը կը տեսնուէր:

Բայց իւրաքանչիւր ոք ամեն անդամուան պէս յարձակման պատասխանատուութիւնը իւր վրայ առնելու կ'երկմուէր:

Վերջապէս պատուաւոր ատենակալներէն մէկը, որ աը Մորսէրֆ կոմսին յայտնի թշնամին էր, այնպիսի վսեմութեամբ մը բեմը ելաւ, որով կ'իմացընէր թէ սպասուած ժամը հասած է:

Սարսափելի լոռութիւն մը տիրեց:

Մորսէրֆ միայն չէր դիտեր այն խորին ուշագրութեան ողատձառը, որ ամեն մարդ այնպիսի ատենաբանի մը կը մատուցանէր, որուն այնչափ հաճութեամբ միտ գնելու միշտ սովորութիւն չունեին:

Կոմսը սրտի հանգարտութեամբ մտիկ ըրաւ այն յառաջաւանը, որուն մէջ ատենաբաննը կը ցուցընէր թէ ըսելու խօսքերը Ատենակալաց ժողովին համար այնչափ ծանր, այնչափ նուիրական և այնչափ կարեւոր էին, որ իւր պաշտօնակիցներուն բոլոր ուշագրութիւնը կը հրաւիրէր:

Ետնեայի և Ֆէրնան հարիւրայետի անունը արտասանուելուն պէս՝ կոմսը այնպէս սոսկալի կ'երպով զունատեցաւ որ ժողովին մէջ ընդհանուր շշունչ մը տիրեց և բոլոր նայուածքները կոմսին վրայ դարձան:

Բարոյական վէրքերը այն յատկութիւնը ունին որ կը պահուին բայց չեն զոցուիր. միշտ վշտալի են, դողելուդ պէս արիւն հոսելու պատրաստ կը զտնուին և սրտին մէջ զդալի և բաց կը մնան:

Լոռութիւնը ամենուն վրայ կը տիրէր. յօգուածը ամբողջ կարդացուեցաւ, որմէ ետքը ընդհանուր շշունչ մը տեղի ունեցաւ մինչեւ որ ատենաբանը վերստին իւր խօսքը շարունա-

կեց . ամբաստանեալը իւր իսիզջը յառաջ բերաւ և հաստա-  
տեց թէ ո՞րչափ գժուար կացութեան մը մէջ կը զանուի :  
Պ. աը Մորսէրֆին և նոյն իսկ ատեանին պատիւը կը սկա-  
հանջէր որ ինքզինքը պաշտպանէր այն բանակուութեան մէջ  
որ իւր անձնական պատույն վրայ կը յարձակէր : Վերջա-  
պէս իւր խօսքը վերջացուց խնդրելով որ հրաման ըլլայ քըն-  
նութիւն մը ընելու առանց ժամանակ անցընելու , որպէս զի  
կարող ըլլան զրպարտութիւնը մեծնալէն առաջ երեան հա-  
նել , և զայն պատմելէն ետե՛ Պ. աը Մորսէրֆը իւր այն  
կացութեան մէջ վերահաստատեն , որով այնշափ երկար ժա-  
մանակէ 'ի վեր զինքը պատուած էին :

Մորսէրֆ այն անսահման և անյուսալի աղետքին մէջ այն  
աստիճան յաղթահարեալ և ահարեկեալ էր , որ ապուշ նայ-  
ուածքով իւր պաշտօնակիցներուն երեսը նայելով հաղիւ կա-  
րող եղաւ քանի մը խօսք կակազելու :

Այս երկչուսութիւնը , որ կրնար միանդ ամայն անմեղին զար-  
մանքէն կամ յանցաւորին ամշնալէն յառաջ զալ , ոմանց հա-  
մակրութիւնը ստանալու պատճառ եղաւ :

Ճշմարիտ աղնուասիրս մարդիկ միշտ պատրաստ են գթա-  
լու , երբ իրենց թշնամոյն թշուառութիւնը իրենց ասելու-  
թեան սահմանները կը զերազանցէ :

Դախաղահ քննութեան առաջարկութիւնը ձայնի առաւե-  
լութեան ենթարկեց . քուէարկութիւն ըրին և որոշուեցաւ որ  
քննութիւնը տեղի ունենայ :

Հարցուցին կոմսին թէ ո՞րչափ ժամանակի պէտք ունի ինք-  
զինքը արդարացընելու համար :

Այս սոսկալի հարուածէն ետե եղած այս թոյլառուութեան  
վրայ Մորսէրֆ շունչ առնելով՝ ոկսաւ իւր ոյժը ամփոփել :

— Ատենակալ պարոնայք , պատասխանեց ամբաստանեալը ,  
երկար ժամանակի հարկ չկայ այնպիսի յարձակում մը հեր-  
քելու , որ այս միջոցիս ինծի դէմ կ'ուղղուի անծանօթ և  
ստուերին մէջ պահուող անտարակոյս աննշան թշնամիներէ :

այլ ողէաք է իսկայն զործ տեսնել, կայծակի մը հարուածով պէտք եմ՝ պատասխանել այն փայլակին որ վայրկեան մը շացուց զիս, փոխանակ ինքզինքս այս կերպով արդարացը նելու, ինչու չըրամայուիր ինձ որ արիւնս թափեմ որպէս զի փորձով ցուցընեմ իմ պաշտօնակցաց թէ ևս արժանի եմ անոնց հաւասար քալելու — :

Այս խօսքերը ամբաստանելոյն համար նպաստաւոր ազգեցութիւն մը ըրին :

— Աւստի կը խնդրեմ, շարունակեց Մորսէրֆ, որ քննութիւնը կարելի եղածին չափ շուտով տեղի ունենայ, և ես այն քննութեան ողէաք եղած ամեն վկայագիրերը պատրաստեմ Ատեանին մատակարարելու :

— Ի՞նչ օր կ'որոշէք, հարցուց նախագահը,

— Այսօր պատրաստ կը դանուիմ Ատեանին ներկայանալու —, պատասխանեց կոմիր :

Նախագահը զանդակի հնեցուց :

— Ատեանը համամիտ է, ըստ, որ քննութիւնը այսօր տեղի ունենայ :

— Այո՛ —, պատասխանեցին միաբերան ամեն յողովականները :

Մորսէրֆի ներկայացընելու վկայագիրերը քննելու համար տասներկու անդամներէ յանձնաժողով մը կազմեցին, և ուրոշեցին որ անոր առաջին նիստը իրիկուան ժամը ութին Ատեանին դիւանին մէջ տեղի ունենայ: Եթէ քանի մը նիստընել հարկ ըլլար, նոյն ժամուն և նոյն դիւանին մէջ տեղի ոլիսի ունենար :

Այս որոշումն ետե՛ Մորսէրֆ մեկնելու հրաման խնդրեց. քանդի այն վկայագիրերը փնտուելու պիտի երթար, որոնք իւր խորամանկ և աննուանելի բնութեամբը զուշակած այն փոթորկին զէմ դնելու համար երկար ժամանակէ ՚ի վեր պատրաստած էր:

Մեր պատմած այս ամեն եղելութիւնները Պոշան երիտա-

սարդին մի առ մի պատմեց, միայն թէ իւր պատմութիւնը մեջ բինին վրայ այն առաւելութիւնն ունէր որ մեր պատմած մեռեալ իրերու պաղութիւնն ունէր, իսկ Պոշան կենդանի իւրերը յուզմամբ կը պատէր :

Ալպէր սարսուալով մտիկ ըրաւ անոր՝ մերթ յուսալով, մերթ սրբամատ լով, և մերթ ամշնալով, քանզի Պոշանին մտերմական ազգաբարութիւննեն զիտէր որ իւր հայրը յանցաւոր էր, և իւրովի կը հարցընէր թէ ինչպէս պիտի կարենայ իւր անմեղ դութիւնը աղացուցանել, քանի որ յանցաւոր էր :

Մինչեւ այս տեղը համսելով Պոշան լսեց:

— Եսաքը, հարցուց Ալպէր:

— Ետքը կը հարցընէք:

— Այս:

— Հետեւութիւնը կ'ուզէք զիտնալ, բարեկամ. բայց ձեր այդ խնդիրը անտանելի պարագաւորութեան մը կը բռնադատէ զիս:

— Հետեւութիւնը անշուշտ պէտք է որ զիտնամ, բարեկամ, և աւելի կ'ուզէմ ձեր բերանեն իմանալ քան թէ ուրիշն բերանեն:

— Աւրեմն, կըկնեց Պոշան, ձեր ոյժը ամփոփեցէք, Ալպէր, երբէք այսափի ոյժի պէտք պիտի չունենաք — :

Ալպէր իւր ձեռքը ճակատին տարաւ, որպէս զի ստուդէթէ թէ իւր ոյժը տեղն է՝ իւր կեանքը պաշտպանելու պատրաստող այնպիսի մարդու մը պէս, որ իւր զրահը կը փորձէ և իւր սուրբն երկաթը կուրծքին վրայ կը ծռէ :

Կ'ըզդար որ իւր ոյժը տեղն էր, քանզի իւր ջերմը ուժագնութիւն կը կարծէր,

— Չարունակէ, ըսաւ :

— Երբիուն եղաւ, շարունակեց Պոշան, բոլոր Բարիդը ըլլալու քննութեան կ'ըսպասէր. շատերը կը պինդէին թէ ձեր հայրը ներկայանալուն պէս ամբաստանութիւնը պիտի հերքէ. շատերն ալ կ'ըսէին թէ կոմոը պիտի չներկայանայ. ստուդողներ կային թէ անոր Պրիւսէլ մեկնիլը տեսան, և ոմանք

այլ պէտք է իսկոյն զործ տեսնել, կայծակի մը հարուածով պէտք եմ պատասխանել այն փայլակին որ վայրկեան մը շացուց դիս . փօխանակ ինքզինքս այս կերպով արդարացը նելու, ինչո՞ւ շըրամայուիր ինձ որ արիւնս թափեմ որպէս զի փորձով ցուցընեմ իմ պաշտօնակցաց թէ ևս արժանի եմ անոնց հաւասար քաղելու — :

Այս խօսքերը ամբաստանելոյն համար նպաստաւոր աղջեցութիւն մը ըրին :

— Ռւստի կը խնդրեմ, շարունակեց Մորոկք, որ քննութիւնը կարելի եղածին չափ շատով տեղի ունենայ, և ես այն քննութեան պէտք եղած ամեն վկայագիրերը պատրաստ եմ Առեանին մատակարարելու :

— Ի՞նչ օր կ'օրոշէք, հարցուց նախազ ահը :

— Այսօր պատրաստ կը դանուիմ Առեանին ներկայանալու —, պատասխանեց կոմնը :

‘նախազ ահը զանգակը հնչեցուց :

— Առեանը համամիտ է, ըստ, որ քննութիւնը այսօր աեղի ունենայ :

— Այո՞ —, պատասխանեցին միաբերան ամեն ժողովականները :

Մորոկքի ներկայացընելու վկայագիրերը քննելու համար տասներկու անդամներէ յանձնաժողով մը կազմեցին, և որոշեցին որ անոր առաջին նիստը իրիկուան ժամը ութիւն Առեանին դիւանին մէջ տեղի ունենայ: Եթէ քանի մը նիստը ընել հարկ ըլլար, նոյն ժամուն և նոյն դիւանին մէջ տեղի ողիսի ունենար :

Այս որոշումն ետե՛ Մորոկք մեկնելու հրաման խնդրեց. քանդի այն վկայագիրերը փնտուելու պիտի երթար, որոնք իւր խորամանկ և աննուածելի բնութեամբը զուշակած այն փոթորկին զէմ գնելու համար երկար ժամանակէ ՚ի վեր պատրաստած էր:

Մեր պատմած այս ամեն եղելութիւնները որշան երիտա-

սարդին մի առ մի պատմեց, միայն թէ իւր պատմութիւնը մեջ բինին վրայ այն առաւելութիւնն ուներ որ մեր պատմածը մեռեալ իրերու պաղպութիւնն ուներ, իսկ Պոշան կենդանի իւրը յուզմամբ կը պատէր :

Ալպէր սարսուալը՝ մտիկ բրաւ անոր՝ մերթ յուսալով, մերթ սրտմատելով, և մերթ ամշնալով. քանզի Պոշանին մտերմական աղգարարութենէն զիտէր որ իւր հայրը յանցաւոր էր, և իւրօվի կը հարցընէր թէ ինչպէս պիտի կարենայ իւր անձնագութիւնը աղացուցանել, քանի որ յանցաւոր էր :

Մինչեւ այս տեղը համեն լով Պոշան լոեց:

— Եսքը, հարցուց Ալպէր:

— Ե՞տքը կը հարցընէք:

— Այս:

— Հետեւութիւնը կ'ուզէք զիտաւ, բարեկամ. բայց ձեր այդ խնդիրը անտանելի պարտաւորութեան մը կը բռնադատէ զիս:

— Հետեւութիւնը անցուցու պէտք է որ զիտնամ, բարեկամ, և աւելի կ'ուզէմ ձեր բերանէն իմանաւ. բան թէ ու բիշին բերանէն:

— Աւըեմ, կրկնեց Պոշան, ձեր ոյժը ամփոփեցէք, Ալպէր. երբէք այսչափ ոյժի պէտք պիտի չունենաք — :

Ալպէր իւր ձեռքը ճակաբին տարաւ, որպէս զի ստուզէթէ իւր ոյժը տեղն է՝ իւր կեանքը պաշտպանելու պատրաստութիւն այնպիսի մարդու մը պէս, որ իւր զըսահը կը փորձէ և իւր սուրբին երկաթը կուրծքին վրայ կը ծռէ :

Կ'ըզդար որ իւր ոյժը տեղն էր, քանզի իւր չերմը ուժ զնութիւն կը կտրծէր,

— Չարունակէ, ըստ:

— Երբ՛ուն եղաւ, շարունակեց Պոշան, բոլոր Բարիդը ըլլալու քննութեան կ'ըսպասէր. շատերը կը պնդէին թէ ձեր հայրը ներկայանալուն պէս ամբաստանութիւնը պիտի չերքէ. շտաբըն աւ կ'ըսէին թէ կոմսը պիտի չներկայանայ. ստուզողներ կային թէ անոր Պրիւսէլ մեկնիլը տեսան, և ոմանք

իսկ ոստիկանութեան գացին հարցընելու թէ արդեօք կոմսին իւր անցաղիբներն առնելը ստոյդ է :

« Ճշմարիտ կ'ըսեմ, չարունակեց զոշան, բոլոր կրցածս ըրբ որպէս զի ձեր հօրը քննութեան գաղտնապէս ունկնդիր ըլլալու համար հրաման ստանամ յանձնաժողովին անդամոց մէկէն, որ իմ բարեկամն էր :

« Ժամը եօթին նոյն երիտասարդ ատենակալը եկաւ զիս առաւ ու հետը զիւանատոնը տարաւ, ուր դեռ մէկը եկած չէր. նուիրակի մը պատուիրեց որ զիս օթեակի մը մէջ փակէ, ուր սիւնի մը ետին և կատարեալ մթութեան մէջ պահուեցայ:

« Այս օթեակին մէջն ապահով էի որ բացուելու սոսկալի տեսարանը պիտի տեսնէի և յանձնաժողովին ըրած քննութիւնը պիտի լուի ի :

« Ճիշդ ժամը ութին ամեն անդամները եկեր էին :

« Պ. տը Մորսէրի ժամը ութին վերջին հարուածին ներս մտաւ :

« Զեռքը քանի մը թղթեր բռնած էր և իւր զէմքը հանգարտ կ'երեւէր :

« Իւր սովորութեան հակառակ՝ քալուածքը պարզ էր, հազուսը անպահոյա և անդարդ, և հին զինուորականի պէս՝ վարէն մինչեւ վեր կոնկուած թիկնոց մը հաղած էր :

« Իւր ներկայութիւնը խիստ լաւ աղդեցութիւն մը պատճառեց :

« Յանձնաժողովին դիտաւորութիւնը անոր թշնամութիւն ընել չէր, և անդամներէն շտուրը կոմսին քովը եկան և ձեռքը թոթվեցին » :

Ալզէրի սիրտը այս մանրամասն պատմութեան վըայ կը ճմէր, սակայն իւր վշտացը մէջ երախտադիտութեան դդացում մը զդաց :

« Եթէ կարելի ըլլար՝ իւր հօրը պատուոյն այնպիսի մծտադնապին մէջ յարդանաց այն նշանը անոր տուող անձերը կ'ուզէր համբուրել :

« Այս միջոցին՝ նուիրակ մը ներս մտաւ և նախադահին նամակ մը յանձնեց :

« — Խօսքը ձեզ տրուած է , որ տը Մոբակը մի ըստ նախադահին միանգամայն նամակին կնիքը քակելով :

« Կումը սկսաւ ինքնինքը չատագովել , և ճշմարիտ կ'ըսեմ , Ալպէր , շարունակեց Պոշան , որ տարօրինակ Ճարտարարաբարաբար և յաջողութեամբ խօսեցաւ :

« Այսպիսի վկայագրեր ուներ , որոնք կ'ապացուցանեին թէ Խանեայի կուսակտը մինչև իւր վերջին ժամը զինքը պատուեր էր իւր վատահութիւնը շնորհելով , ըստ որում նոյն ինքն կայսեր հետ ըլլարու կենաց կամ մահուան բանադնացութիւնը իրեն յանձներ էր :

« Իւր հրամանատարութեան նշան՝ մատնին ցուցուց , որով Ալի-բաշան սովորաբար իւր նամակները կը կնքէր , և իրեն յանձներ էր զայն , որպէս զի իր դարձին՝ օրուան կամ զիշերուան մը ժամուն որ ըլլար , և եթէ ինքը կանանցին մէ չիսկ զանուէր , անոր միջոցաւ կարենար մինչև իւր քոլը զալ :

« Գրժբազրաբար , ըստ , բանադնացութիւնը յաջող ելք մը չունեցաւ , և երբ ինքը իւր բարեբարը պաշտպանելու վերադարձաւ , արդէն մեռեր էր ան :

« Սակայն , ըստ կոմսը , Ալի-բաշային իւր վրայ ունեցած վստահութիւնը այնշափ մնձ էր , որ մեռնելու ասենը իւր սիրուհին ու աղջիկը իրեն յանձներ էր » :

Ալպէր այս խօսքերէն ստրուաց . ըստ որում Պոշանին խօսեցած Ժամանակը Հայտէի պատմած բոլոր պատմութիւնը իւր միտքը կու զար . երիտասարդը աղէկ կը յիշէր այն պատղամատրութեան և մատնիին զրայ զեղանի Յոյն կնոջ ըստները , և թէ ինչ կերպով Հայտէ ծախուելով զերի տարուեր էր :

— Կոմսին տանախօսութիւնը ի՞նչ աղդեցութիւն ըրաւ , Հարցուց Ալպէր սրտի անձիութեամբ մը :

— Ճշմարիտ կ'ըսեմ որ իմ սիրտս միանգամայն բոլոր յանձնաժողովին անդամաց սիրտը շարժեց , ըստ Պոշան :

« Այսու ամենայնիւ նախադահը իւր աչքը բերուած նամակին վրայ տարաւ անհողութեամբ . բայց առաջին տողերը կարդալով իւր ուշագրութիւնը արթնցաւ :

« Մինչե վերջը կարգաց զայն , երկրորդ անգամ աչքէ անցուց , և նայուածքը ու . տը Մորուէրֆին վրայ դարձըն լով՝

« — Պարոն կոմա , ըստաւ , հիմա մեզ ըսիք թէ Եանեայի կառավարիչը իւր կինն ու աղջիկը ձեզ յանձնեց :

« — Այս , պարոն , պատասխանեց Մորուէրֆ . սակայն բաղդը ինչպէս ամեն պարագայի մէջ՝ այս անգամ ալ զիս կը հաշածէր : Ի դարձիս՝ Վասիլիքին և անոր Հայտէ աղջիկը աներեսյթ եղեր էին :

« — Կը հանչնայի՞ք զանոնք :

« — Բաշային հետ ունեցած մտերմաւթիւնս և հաւատարմաւթեանս վրայ անոր ունեցած վստահութիւնը ներեցին ինձ որ քսան անգամէ ն աւելի տեսնեմ զանոնք :

« — Անոնց ինչ ըլլալնուն վրայ զաղափար մը ունի՞ք :

« — Այս , պարոն . ինձ ըսին թէ իրենց վիշտէն և զուցէ իրենց թշուառութենէն մոռան : Ես հարուստ չէի , ու կեանքս մեծ վտանգի մէջ ըլլալուն՝ 'ի մեծ ցաւ սրտիս՝ չկրցայ զանոնք փնտռել — :

« Նախադահը աննշմարելի կերպիւ յօնքը կնշուեց :

« — Պարոնայք , ըստաւ , ու . տը Մորուէրֆ կոմսին եղած հարցմանց պատասխանները լսեցիք և իմացաք : Ու կոմս , ձեր պատմածը ստուգելու համար վկայ մը կրնաք ցուցընել :

« — Ափսոս , ոչ , պարօն , պատասխանեց կոմսը . բաշան շրջապատող և անոր պալատին մէջ զիս հանցող անձերը կոմամուած են և կամ ցրուած . իմ հայրենակիցներէս կարծեմ միայն ես այն ահռելի պատերազմէն աղատեցայ . միայն Ալիքաշայի նամակներն ունիմ , զորոնք ձեր աչաց առջեղիք , միայն անոր մատնին՝ որ իւր կամացը առ հաւատչեայն է՝ իմ ձեռքս կը զանուի և ահա այս է : Վերջապէս ամենէն համոզիչ փաստս , զոր կրնամ յառաջ բերել . իմ պատուոյս

և զինուորական կենացս ամրծութեանը դէմ Եղած անանուն  
յարձակման վկայութիւն մը շռւալն է — :

« Բոլոր ժողովին մէջ հաճութեան մրմունջ մը լսուեցաւ :

« Այս միջոցին, Ալոկը, եթէ արդելք մը շպատաչէր,  
ձեր հայրը դատը շահած էր :

« Այսիցն կը մնար ձայնից առաւելութեան դիմուլ, երբ նաւ  
խաղահան սկսաւ խօսիլ .

« — Պարունայք, ըստու, և գուք, պարոն կոմս, կարծեմ  
թէ յօժարութեամբ ականջ պիտի դնէք վկայի մը, որ ինք-  
նին եկած է և իւր խօսքին նույելով՝ խիստ մծ ձառայու-  
թիւն մը պիտի ընէ. կոմսին ըստաներուն վրայ առարկոյս  
չունինք որ այս վկայն մեր պաշտօնակցին կատարեալ անմե-  
ղութիւնը ապացուցանելու պիտի ներկայի : Ահա այն նկատ-  
մամբ ընդունած նամակս . կը փափաքիք որ կարգամ զայն թէ  
մէջ տեղէն վերցրնելու և այս միջնարդելքին ականջ չդնենք — :

« Ո. աը Մորսէրֆ զունատեցաւ, ձեռքը կնշուց և բըռ-  
նած թղթերուն ձումն ակելուն ձայնը լսուեցաւ :

« Յանձնած ողովին պատասխանը նամակին ընթերցումը կը  
պահանջէր :

« Իսկ կոմսը մատախորհ մնացեր էր, քանզի յայտնելու կար-  
ծիք մը չունէր :

« Հետեւաբար նախադահան յետադայ նամակը կարդաց .

« Պարոն նախադահան,

« Զօրապետի տեղակալ Ո. աը Մորսէրֆ կոմսին և պիտ-  
ուսի և Մակեդոնիոյ մէջ ունեցած վարքը քննելու համար  
կազմուած քննութեան յանձնած ողովոյն կրնամ խիստ ստոյդ  
տեղէ կութիւններ մատակարարելու :

« Նախադահան քիչ մը կեցաւ :

« Տը Մորսէրֆ կոմսին զոյնը նետեց :

« Նախադահան նայուածքով ունկնդիրներուն կամքը հարցուց :

« — Շարունակեցէք — , զուեցին ամեն կողմէն :

« Նախադաշը շարունակեց .

« Ալի-բաշայի մահուան ականատես եղած , և անոր վերանձն վայրիեաններուն մէջ քովը դանուած եմ :

« Ես դիտեմ Վասիլերին և Հայտէին ինչ ըլլալը :

« Յանձնաժողովին հրամանին կ'ըսպասեմ և կը խնդրեմ իսկ որ ինձ ունկնդրութիւն ընէ :

« Այս տամսակը ձեզ յանձնուած միջոցին Խորհրդարանին դաւթին մէջ սկիտի դանուիմ » :

« — Եւ ովէ այդ վկան , կամ զողցես այդ թշնամին , հարցուց կոմսը այնպիսի ձայնիւ մը , որուն մէջ իւր խորին այլայլութիւնը դիտելը շատ գիւրին էր :

« — Հիմա կ'իմանանք , պարոն , պատասխանեց նախադաշը : Յանձնաժողովը համամիտ է վկային ունկնդրութիւն ընելու :

« — Այս , այս՝ — , ըսին միաբերան ամեն ձայները :

« Նուիրակը ներս կանչուեցաւ :

« — Նուիրակ , ըսաւ նախադաշը , դաւթին մէջ սպասող մը կը կայ :

« — Այս , պարոն նախադաշ :

« — Ովէ է այդ անձը :

« — Ծառայի մը ընկերութեամբ կին մ'է — :

« Իւրաբանչիւր ոք իրարու երես նայեցան :

« — Ներս մացուր այդ կինը — , ըսաւ նախադաշը :

« Հինգ վայրկեան ետքը նուիրակը վերադարձաւ :

« Ամեն մարդ իւր աշքը դէպ 'ի դուռը ուղղած էր , և ես իսկ , ըսաւ զոշան . ես ալ ամենուն անձամբ երութեան և անձ կութեան մասնակից էի :

« Նուիրակին ետեէն կին մը կը քալէր այնպիսի մեծ քողով մը ձածկուած , որ բոլորովին կը ըրջապատէր զան :

« Այն քողին վրայէն երևցած մարմնոյ ձեէն և անորմէ բուրած անուշահօտութենէն նորատի և շնորհալի կնոջ մը ներկայութիւնը կը դուշակուէր :

« Նախադաշը աղաջեց անծանօթ կինը որ իւր քողը վերցընէ, և այն ատեն տեսան որ այն կինը յոյնի զգեստ հաղած էր. ասկէ դատ՝ հիանալի զեղեցկութիւն մը ունէր » :

— Ա՞չ, ըստ Ալպէր, ան է :

— Ա՞վ, հարցուց Պոշան :

— Եյո, Հայաէն է :

— Ա՞վ ըստ :

— Ափսոս, այնպէս կը դռչակեմ: Քայլ շարունակեցէք, Պոշան, կ'աղաջեմ. կը տեսնէք որ հանդարտութեամբ և արիւթեամբ մտիկ կ'ընեմ: Կարծեմ թէ ալ վերջին կը մօտենաք:

— Ո, ալ Մորսէրի սոսկումով խառն զարմանքով մը այն կնոջ երեսը կը նայէր, շարունակեց Պոշան: Իրեն համար կենաց կամ մահուան դատակնիքը պիտի ելնէր այն հիանալի բերանէն. իսկ միւսներուն համար այս դէպքը այնչափ տարօրինակ և հետաքրքրական կ'երեէր որ Ո. ալ Մորսէրին աղատութիւնը կամ կորուստը իրը երկրորդական խնդիր մը կը կարծէին:

« Նախադաշը ձեռքովը աթոռ մը ներկայեց նորատի կնոջ, բայց կինը դընովը նշան ըրաւ թէ սոտի վրայ կենալ կ'ուզէ:

« Իսկ կոմու վերստին իւր թեաթոռին մէջ նետուեր էր, յայտնի կ'երեէր որ իւր սրնզաց վրայ չէր կրնար կենալ:

« — Տիկին, ըստ նախադաշը, Եանեայի դործին վրայ տեղեկութիւններ տալու համար յանձնաժողովին դրած նումակնիդ կարգացինք, որուն մէջ կ'ըսէիք թէ այն դէպքերուն ականատես վկայ եղած էք:

« — Եւ ստուգի ականատես եղած եմ, պատասխանեց անծանօթ կինը այնպիսի ձայնով մը որ հիանալի տիտրութեամբ մը տպաւրուած էր և արեւելեան ձայններու յատուկ եղած քաղցր հնչիւն մը ունէր:

« — Սակայն, կրկնեց նախադաշը, ներեցէք ինձ որ ըսեմ թէ գուք այն ատեն խիստ փոքր էիք:

« — Չորս տարեկան էի ես. բայց որովհետեւ պատահած

դէպքերը ինձի համար մեծ կարևորութիւն մը ունեին, առնեց ամենափոքր մասը անգամ մտքէս ելած չէ:

« — Բայց ի՞նչ կարեղութիւն կրնան ունենալ ձեզ այն դէպքերը, և դուք ովք էք որ այնպիսի մեծ աղքտ մը այդպիսի խորին առաւորութիւն մը պատճառէ ձեզ,

« — Խնդիրը իմ հօրս կենաց կամ մահուան վրայ էր, պատասխանեց նորաաի աղջիկը, և ես Հոյտէ կը կոչուիմ՝ Եանեայի կառավարիչ Ալի-բաշային և անոր խիստ սիրելի կնոջ Առաքելիքին աղջիկը — :

« Ալարկեշտ միանդամայն և սէդ կտրմբութիւնը, որ նորաաի կնոջ այտերը ձիրանեղոյն ներկեց, անոր նայուածքին հուրը և դադունիքին վսեմութիւնը ժաղովին անդամոց վրայ անպատմլի ազդեցութիւն մը ներդորձեցին :

« Եթէ կայծակը կամսին առջել իշնալով իւր սակա տակը անդունդ մը բանար, ամբաստանեալը այն ասաիճան ինք-զինքը պիտի չկորսնցընէր :

« — Տիկին, կրկնեց նախադահը յարդանօք խոնարհութիւն մը ընելէ եակ, ներեցէք ինձ որ պարզ հարցում մը ընեմ և այն չէ թէ տարակոյս մը ունենալուս համար, և այս հարցումը վերջինը պիտի ըլլոյ. կրնաք ձեր ըսածին ստուդութիւնը հաստատել:

« — Այո՛, պարոն, կրնամ, ըսաւ Հայտէ իւր քողին տակէն քաղցր հոաերով բուրսած անդուսեայ ծրար մը հանելով. ահա իմ ծննդեանս վկայադիրը, զոր հայրս զրած է և իւր դլսաւոր պաշոնատարները ստորագրած են. և իմ ծըննդեանս վկայադին հետ ահա մկրտութեանս վկայադիրն ալ, քանզի հայրս հաւանութիւն տուած էր որ ես մօրս հաւատքին մէջ մեծնամ, և իմ վկայադիրս Մակեդոնիոյ ու Եռոպիւոսի եպիսկոպոսապետին կնիքովը վաւերացած է. ահա վերջապէս այն վաճառադ իրը (անտարակոյս այս ամենէն կարեօրն է), որով ես և մայրս Էլ-Գոսդիր անուն Հայ վաճառականի մը ծալսուեցանք այն Գաղղիացի պաշտօնատարէն, որ

Դրան հետ իւր անիբաւ սակարկութեանը մէջ՝ իրը 'ի քային իւր աւարդին՝ իւր քարեցարին աղջիկն ու կինը իրեն ովաշելով, հաղար քսակի ծախեց, այսինքն զրեթէ չորս հարիւր հաղար ֆրանքի — :

« Կանաչագոյն գեղնութիւն մը ար Մարտէրփ կոմսին այտերը պատեց, և իւր աշքերը արեամբ ներկուեցան այն ահռելի ռՃրագործութիւնները լսելով, որոնք ժողովին անդամները ախրազին լուսութեամբ մտիկ կ'ընեին :

« Հայտէ միշտ անխոռով կ'երեէր, բայց իւր հանգարառութեան մէջ՝ բարկութեան մէջ եղողէ մը աւելի սպոռնադին կ'երեէր, արարերէն լեզուաւ զրուած իւր վաճառադ իրը նախազահին ներկայացուց :

« Թարգմանը բարձր ձայնիւ վաճառադ իրը կարդացած ժամանակը՝ ատենակալներէն մ. կը, որ Ա.հ.հազարուի փառաւոր պատերազմին ատեն արարերէն լեզուն աղէկ սորված էր, անոր ընթերցումը մազաղաթեայ վաճառադ րին վրայ կը դիտէր :

« Ստորադրեալս Էլ-Գոպիր, Ասրին Բարձրութեան կանանցին մատակարարը և աղախիններու վաճառականը, այսուզրութեամբ կը հաստատեմ որ Ա.հ.հափառ կայսեր յանձնելու համար Աօնթէ-Քըրիսթոյ կոմս Գաղղիացի իշխանէն հազար քսակի արժողութեամբ զմբուխամ մը ընկալալոյ ՚ի փոխորէն տասն և մէկ տարեկան քրիստոնեայ նորատի աղախինի մը՝ ձայտէ անուն, որ Եանեայի կուսակալ Թէրէ-տէլէնի հանգուցեալ Ալի-բաշային և անոր Ա.ասիլիքի սիրուհոյն աղջիկն է, և ես եօթը տարի տուաջ անոր մօրը հետ, որ Կոստանդնուպոլիս հասած օրը մեռաւ, Ալի-բաշային ծառայութեան մէջ զանուող ֆէրնան Առնաէկօ անուն Գաղղիացի հարիւրազետ մը դնեցի զան :

« Կը հաստատեմ որ վերոյիշեալ վաճառումը հաղար քսակով կատարուեցաւ Ասրին Բարձրութեան հաշուոյն համար, որմէ հրաման ստացած էի :

« Գրեալ 'ի կոստանդնուպօլիս 'ևորին Բարձրութեան հրամանաւ 'ի թաւականին Տաճկաց 1247. :

« Առողջութեալ ԵԼ - ԳՈՎԻՐ » .

« Կերկայ վաճառագրիս հաստատութեանը և ստուգութեանը համար կայսերական կնքով պիտի վաերացուի այն, զոր վաճառողը դնել տալու կը պարտաւորի » :

« Աաճառականին ստորադրութեան քովը իրօք կայսեր կնիքը կը տեսնուէր :

« Այս ընթերցման և այս տեսարանին սոսկառիթ լուսաթիւն մը յաջորդեց, կոմու միայն նայուածք մը ունէր, և այն նայուածքը ակամայ Հայտէի վրայ յարելով բոցավառ և արիւնալի կ'երևէր :

« — Տիկին, ըստ նախադաշը, միթէ կարելի՞ է Մօնթէ-Քրիսթոյին հարցընելով տեղեկութիւն ստանալ, որ կարծեմ Բարիզի մէջ և ձեր քովը կը դտնուի :

« — Պարօն, պատասխանեց Հայտէ, Մօնթէ-Քրիսթոյ կոմուը, որ իմ երկրորդ հայրս է, երեք օրէ 'ի վիր նոր մանտիա կը դտնուի :

« — Ուրեմն, տիկին, ըստ նախադաշը, ով խրատեց զձեզ որ այս ընթացքը բռնէք, որուն համար ատեանս շնորհապարտ է ձեզ, և ձեր ծնունդն ու թշուառութիւնները մատածելով՝ խիստ բնական կը դտնէ զայն :

« — Պարօն, պատասխանեց Հայտէ, իմ պատիւս և վեշտերս խրատեցին զիս որ այս ընթացքը բռնեմ: Թէպէտ քրիստոնեայ եմ, թող ներէ ինձ Ըստուած, բայց միշտ մտածեցի մեծանուն հօրս վրէժը լուծել: Աւստի երբ Գաղղիոյ հոգը կոխեցի, և երբ իմացայ որ այն նենդաւորը Բարիզի մէջ կը բնակի, աչքս ու ականջներս անընդհատ բաց թողուցի: Ես իմ աղնիւ պաշտպանիս տանը մէջ առանձնացեալ կ'ապրիմ, կը սիրեմ այս կեանքը, վասն զի ստուերն ու լուսթիւնը հաճելի են ինձի, որոնց մէջ միտքս ամփոփելով և

խորհրդածութիւններ ընելով կ'ասլրիմ։ Պ. Մօնթէ-Քրիսթոյ  
կոմսը հայրական խնամքով կը խնամեց զիս, և աշխարհիս մէջ  
պատահած անցքերը ինձ անձանոթ չեն, միայն թէ հեռուեն  
կ'ըստանամ անոնց ձայնը։ Ամեն օրագիրները կը կարդամ,  
ինչպէս որ նոր հրատարակուած ամեն գրքերը ու երածշուռ-  
թեան եղանակաց տետրերը կ'ընդունիմ, և անտարբերու-  
թեամբ ուրիշներուն կենաց պատմութիւնը կարդալու ատենա։  
Վաենակաց ժողովին մէջ այս առառու պատահածը և այս  
իրիկուն տեղի ունենալիքը իմացայ . . . ուստի այն նամակը  
գրեցի։

« — Աւրեմն, հարցուց նախադահը, Պ. Մօնթէ-Քրիսթոյ  
կոմսը ձեր ըրածէն ամեննեին տեղեկութիւն չունի։

« — Ամեննեին, պարոն, և ես այս գործիս մէջ միայն մէկ  
բանէ կը վախնամ, որ շըլլայ թէ կոմսը ըրածս լսելով գըժ-  
կամակի։ Այսու ամենայնիւ երջանիկ կը համարիմ ևս այս  
օրս, շարունակեց նորատի աղջիկը իւր բոշավառ աշերը գետ  
՚ի երկինք վերցընելով, որ վերջապէս հօրս վրէժը լուծելու-  
առիթը կը ներկայացընէ ինձ —։

« Պ. տը Մորսէրֆ նորատի աղջկան հասնելէն՝ ի վեր  
խօսք մը շարտասաներ էր. իւր պաշտօնակիցները անոր ե-  
րեսը կը նայէին և անոտարակոյս կնոջ մը շնչովը կորսնցու-  
ցած բարեբաղդութեանը վրայ կը ցաւէին. իւր գժրաղղու-  
թիւնը աղետալի դիմերով իւր դիմոց վրայ կը նկարուէր։

« — Պ. տը Մորսէրֆ, ըստ նախադահը, այս տիեկինը  
եանեայի կուսակալ Թէրէ-տէլէնի Ալի-բաշային աղջիկն  
ըլլալը կը վկայէք։

« — Ոչ, ըստ Մորսէրֆ ոտք ելնելու չանալով, իմ թը-  
նամիներէս լարուած որոգայիթ մը կը համարեմ դան —։

« Հայտէ, որ գրան կողմէն մարդու մը սպառելու պէտք ա-  
չերը այն կողմը յարեր էր, յանկարծ դընիւրը դարձուց, և  
կոմսը ոտքի վրայ կանդնած տեսնելով, սոսկումի ձայն մը  
հանեց։

« — Զիս չե՞ս ճանշնար , ըստ . բայց ես կը ճանշնամ զքեզ . գուն Ֆէրնան Մոնտէկօ անուն այն Գաղղիայի պաշտօնատարն ես , որ ազնիւ հօրս զօրքերը կը վարժէիր : Գուն ես այն անձը որ Եշանեայի բերգերը մատնեցիր . գուն ես այն անձը , որ կայսեր հետ քու բարերարիդ կենաց կամ մահուան վրայ բանադնացութիւն ընելու համար կոստանդնուպօլիս զրկուեցար , և կեղծ հրովարտակ մը բերիր , որուն մէջ կայսրը կատարեալ թողութիւն կը շնորհէր . գուն ես այն անձը , որ այս հրովարտակին շնորհիւը բաշային ձեռքէն այն մատնին ստացար , զոր Աէլիմ տեսնելով քեզ պիտի հնազանդէր . գուն ես այն անձը , որ զիս ու մայրս Էլ-Գուպիր վաճառականին ծախսեցիր . դաւաճան , դաւաճան , դաւաճան , տիրոջդ արիւնը տակաւին ճակտիդ վրայ կը կրես . տեսէք ամենքդ ալ — :

« Այս խօսքերը Ճշմարտութեան այնպիսի յուզմամբ արտասանուեցան , որ ամենուն նայուածքը կոմինին ճակատին վրայ դարձան , և նոյն ինքն կոմոը Ալի-բաշային տակաւին զաղջ արիւնը զողցես իւր ճակտին վրայ զդալով ձեռքը անոր վրայ տարաւ :

« — Ուրեմն Պ . ուր Մորսէրֆին նոյն Ֆէրնան Մոնտէկօ պաշտօնատարն ըլլալը հաստատ կը վկայէք :

« — Ի՞նչպէս չէ , զոչեց Հայտէ . ո՞չ , մայրս միշտ կ'ըսէր ինձ . և Ազատ էիր գուն , հայր մը ունէիր զոր կը սիրէիր , և զբեթէ թաղուչի ըլլալու վիճակեալ էիր . բայց աղէկ նայէսսա մարդը . ան է զքեզ զերի ընողը , այս մարդն է որ հօրդ դլուիը ցիցի մը ծայրը անցուց , այս մարդն է որ զմեղ ծախսեց և մատնեց : Աղէկ նայէ անոր աշ ձեռքը , որ մնձ վէրք մը ունի . եթէ անոր զիմաց զծազրութիւնը մտնաս , անոր ձեռքէն կրնաս ճանշնալ զան , որուն մէջ Էլ-Գուպիր վաճառականին սոկիները մի առ մի թափեցան » . Զան կը ճանշնամ կ'ըսէք , ո՞չ , թող ըսէ հիմա թէ զիս չճանշնար — :

« Հայտէի ամեն մէկ խօսքը գաշոյնի մէկ մէկ հարուածի ողէս

Մորսէրֆի սրտին վրայ կ'իյնար և իւր ուժին մէկ մասը կը նուազեցընէր . վերջին խօսքերուն վրայ՝ յանկարծ և ակամայ իւր վերաւորեալ ձեռքը կուրծքին մէջ պահեց , և տխուր յուսահատութեան մէջ ընկղմալ վերստին թեաթոռին վրայ ինկաւ :

« Հիւսիսային բռնաշունչ հողմով ծառէն ինկած տերեներուն ցիրացան եղածին պէս այս տեսարանը ժողովականներուն մտքերը մրրկայոյզ շրջեց :

« — Պ. կոմս աը Մարսէրֆ , ըստ նախադահէր , մի վհանիք , պատասխան տուէք . Ատենակալաց ժողովին դատաստանը բարձր է , և Յթողուր որ ձեր թշնամիներէն յաղթահարիք առանց անոնց հետ վիճելու միջոցները ձեզ տալու Կուզէք որ վերստին քննութեան ժողով մը ըլլայ , կ'ուզէք որ ատեանին անդամներէն երկու հոգիի հրաման ընեմ որ գէպ 'ի եանեա Տամբորդութիւն ընեն . Խօսեցէք — :

« Մորսէրֆ ամենեին պատասխան շտուաւ :

« Այս ատեն յանձնաժողովին բոլոր անդամները զոզցեասուելումով մը իրարու երես նայեցան :

« Կոմսին ուժգին և բուռն բնութիւնը ամենուն յայտնի էր :

« Այս մարդուն պաշտպանութիւնը ջնջելու համար աւելի նուաստացուցիչ միջոց մը պէտք էր :

« Պէտք էր վերջապէս մտածել որ քունի նմանող այս ըսութեան այնպիսի զարթում մը պիտի յաջորդէր , որ կայծակի պիտի նմանէր :

« — Վերջապէս ըսէք ; ըստ նախադահէր , ի՞նչ կ'որոշէք :

« — Ոչ ինչ , ըստ կոմսը ցած ձայնով և ոտք ենելով :

« — Աւրեմն թէրէ-տէլէնի Ալիին աղջկան պատմածները ստոյդ Ճշմարտութիւններ են , հարցուց նախադահէր . ուրեմն այս կինը ստուգիւ այն սոսկալի վկայն է , որուն շատ անդամ յանցաւորը շշամարձակիր Ո2 պատասխանել : Աւրեմն ամբաստաննեալ ամեն զործերուն ստուգ ապէս հեղինակն էր — :

« Կոմսը իւր բոլորտիքը այնպիսի նայուածք մը շրջեց , «

րուն յուսահամ տպաւորութիւնը վաղքերուն գութն անդամ կրնար շարժել, բայց դատաւորաց սիրուը չերցաւ շարժել:

« Ետքը աշերը գեղ 'ի դմբէթը վերցուց, բայց շուտով անոր վրայէն ալ դարձուց զանոնք դողցես վախնալով որ չըլլայ թէ դմբէթը ձեղբուելով երկնից տաե անը բացուի, և երկնալին դատաւորին առջեն ելնե:

« Այն տաեն զինքը խեղդող կոճկուած զգեստին կոճակենքը բիրտ շարժումով մը քաշելով քակեց և տխուր յիմարի մը պէս սրահէն դուրս ելաւ . վայրկեան մը իւր քայլերուն արձադանքը ձայնատու կամարին տակը աղետազին հնչեց, և անմիջապէս ետքը կառքի մը անիւներու ձայնը լսուեցաւ, և իրենց կամարակաղ սրահը դզրդեց:

« — Պարոնայք, ըստ նախադահին երբ սրահին մէջ լուս թիւնը ափբեց, ո. ալ Մորոէրօ կոմսը ուխտագրուժ, մատնիչ և անարժան ձանցուած է:

« — Այս —, սպատասխանեցին միտքերան քննութեան յանձնաժողովին անդամերը:

« Հայտէ նիստին մինչեւ վերջը ներկայ գտնուեցաւ, և առանց իւր դիմաց դծերը սւրախութիւն կամ դթութիւն մը յայտնելու՝ կոմսին դատավճռոյն արուելը լսեց:

« Այն տաեն քողը իւր դիմաց վրայ ինցըընելով, հանգեստոր կերպով խորհրդականները բարեեց և Աիրդիլոսի տեսած դիցուհիներուն քալուածքով զուրս ելաւ:



ՊԼՈՒԹ  
Չ.

ՄԵՆԵՄՐԸՏԱԽԹԵԵՆ ԳՐԴԻՒԲԸ



Յն առեն, շարունակեց Պօշան, սրահին առաջնութեան և մթութեան միջոցին կարող ելայ առանց տեսնուելու անկե մեկնելու :

«Ինձ առաջնորդող նուիբակը գրան առջեւ կ'ըսպասէր. նրբադաւիթներուն մշտեանցընելով՝ մինչեւ Առժիբար փողոցին վրայ բացուղղ փոքր դուռը տարաւ զիս :

«Սիրտս կտրուած և միանգամայն սրանչացած գուրս ելայ. ներեցէք այս կերող խօսելուս, Ալպէր, բատ որում ձեզ մոտածելով սիրտս կտրեցաւ, սակայն իւր հօրը վրէժը լուծող այն նորատի աղջկան աղնուութեան վրայ ալ սրանչացայ և ճշմարիտ կ'ըսեմ. Ալպէր, որ և է կերպով որ այն դաղսնիքը երեան ելած ըլլայ, ես կը հատուամեմ որ թշնամիի մը կողմանէ ելած է, բայց այն թշնամին նախախնամութեան գործակատարն է — » :

Ալպէր գլուխը երկու ձեռացը մէջ բռնած էր. ամշնալէն կարմրած և արտասուօք թրջուած դէմքը վեր վերցընելով և գորշանին թեր բանի լով՝

— Բարեկամ, ըստւ, իմ կեանքս վերջացած է. միայն գործ մը կը մեայ ինձ ընել, և այն չէ թէ ձեզի պէս ըսել թէ նախախնամութեան կողմանէ եկած է ինձ այս հարուածը, այլ փնտուել այն անձը որ այս թշնամութիւնը կ'ընէ ինձ, և երբ հանչնամ դան՝ պէտք է որ սպանեմ և կամ այն

մարդը պէտք է որ զիս սպաննէ . ուստի ձեր բարեկամութեան վրայ կը վաստահիմ , Պոշան , եթէ սակայն եղած նախատինքը բարեկամութիւն մը լողուց ձեր սրտին մէջ :

— Նախատինք կ'ըսէք , բարեկամ , և ինչ բանի մէջ այս դժբաղզութիւնը ձեզ նախատինք կրնայ բերել . ամենեւին , փառք Աստուծոյ , անցան այն ժամանակները , որ մարդիկ առանց մտածելու զաւակները իրենց հարց գործերուն պատասխանառու կ'ընէին : Ցիշեցէք ձեր անցեալ կեանքը , Ալպէր , առոյդ է որ գեռ երիտասարդ էք , բայց երբեք գեղեցիկ օգուան մը արշալոյսը ձեր արեելքէն աւելի պայծառ եղած է . ոչ , Ալպէր , հաւատացէք ինծի . երիտասարդ և հարուստ էք , Տեռացէք քիչ մը ժամանակ Գաղղիայէն . այս յուզեալ և պոփոխական մեծ Բարելոնի մէջ ամեն բան շուտով կը մոռցուի . Ռուս իշխանուհերոյ մը հետ ամուսնանալով երեք կամ չորս տարիէն կը վերադառնաք , և ամենեն մէկուն մոքէն պիտի շանցնի թէ երեկ ինչ պատահեցաւ , որշափ ևս առանել ասկէ տասն ու վեց տարի առաջ պատահածը :

— Ծնորհակալ եմ , սիրելիդ իմ Պոշան , շնորհակալ եմ Ձեր սրտի աղնուութենէն , որ այս խօսքերս ձեզ խօսեցնել կու տայ , բայց ես այդպէս չպիտի ընեմ : Կմ փափաքս ըսի ձեզ , և հիմա եթէ պէտք ըլլոյ՝ կատար բառը իւն բառի պիտի փոխեմ : Այս գործը ինձ նկատելուն , անշուշտ ես ձեզմէ տարեր աչօք կը նայիմ անոր : Ձեզ երկնային աղպիւրէ մը բղիած երկեցածը ինձ նուազ վՃիտ աղբիւրէ մը բղիած կ'երեկի : Ճշմարիտ կ'ըսեմ : Նախախնամութիւնը բարերազդար այս ամեն պատահածներուն մէջ գործ չունի . քանզի երկնային վարձուց և սրատժոց անտեսանելի և անշօշափելի պատղ ամուռըին տեղ՝ այնպիսի շօշափելի և տեսանելի էակ մը պիտի գտնեմ , որմէ , ո՛չ , այս , կ'երդնում որ ամսէ մը 'ի վեր կը բած նեղութեանց վրէժը պիտի լուծեմ : Հիմա , կը կըրկնեմ ձեզ , Պոշան , վերստին մարդկային և նիւթական կենաց մէջ կ'ուղեմ մտնել , և եթէ գործ ձեր խօսքին համեմատ

տակաւին իմ բարեկամու էք, օղնեցէք ինձ որ այս հարուածը տուող ձեռքը զանեմ:

— Ըստ աղէկ, ըստ Պոշան. գուք կ'ուզէք որ Նախախնամութեան զործը մարդոց տամ, թող այնպէս բլազ. Եթէ ձեր թշնամին զանելու պիտի աշխատիք, ես ալ ձեզի չետ կ'աշխատիմ, և ես պիտի զանեմ զան. ըստ որում ձեր պատույն շափ իմ պատիւս ալ կը պահանջէ որ զանենք զան:

— Աւրեմն, Պոշան, առանց ժամանակ անցընելու մեր խուզարկութեան սկսինք: Յապազման ամեն մէկ վայրկեանը ինձ համար յաւիտենականութիւն մ'է. ամբաստանողը անպատիք մեացած է, զուցէ յուսայ իսկ որ պիտի չպատժուի. պատույն վրայ կ'երդնում որ իւր ակնկալութեանը մէջ կը սիսալի:

— Մաիկ ըրէք ուրեմն, Մորսէքփ:

— Ա՛չ, Պոշան, կը աեսնեմ որ գուք անդեկութիւն ունիք. սոսուզիւ կը կենդանացընէք զիս:

— Չեմ ըսեր թէ սոսուզութիւն մ'է, Ալպէք, բայց զոնէ մթութեան մէջ լոյս մը կ'երեսի ինձ. այս լոյսին հետեւլով զուցէ մեր նապատակին հասնինք:

— Ըսէք, աղէկ կը տեսնէք որ անհամբերութենէս կ'եռամ:

— Եշնեայէն վերադարձիս ձեզ պատմել չուզած սիմաըներմ ձեզ:

— Ըսէք:

— Եանեա զանուած ժամանակս՝ տեղեկութիւններ ստանալու համար բնականաբար քաղաքին առաջին սեղանաւորին զբառունը դացի. բերանէս ելած առաջին խօսքին՝ ձեր հօրը անունը տալիս իսկ առաջ սեղանաւորը ինձ ըստւ.

« — Ա՛չ, հասկըցայ ինչ պատճառի համար եկած էք:

« — Ի՞նչպէս, ինչ պատճառի համար:

« — Ասկէ հազիւ տասն և հինգ օր առաջ մի և նոյն խընդրույն վրայ մէկը տեղեկութիւն խնդրեց ինձմէ:

« — Ո՞վ:

« — Քարիզի սեղանաւոր մը , որ իմ թղթակիցս է :

« — Անոր անունը ի՞նչ է :

« — Պ . Տանկլար » :

— Պ . Տանկլարը , դոչեց Ալոեր . ո՛չ , ստուգիւ ան է որ այնափ երկար ժամանակէ ՚ի վեր իւր նախանձուա ատելու թեամբը խեղջ հօրս ետևէն ինկած է , և ինքզինքը ժողովրդա մէր կեղծելով՝ չկրնար մարսել որ ար Մորսէրֆ կամսը Գաղղիոյ առենակալ ըլլայ . առոր մէկ ապացոյցը մեր ամուսնութեան առանց պատճառի ետ ըլլալն է . այո՛ , անորմէ ուրիշ մէկը չէ :

— Նախ տեղեկացէք . Ալոեր , շուտով մի գրդուիք . նախ տեղեկացէք , կ'ըսեմ , և եթէ գործը ստուգուի . . . .

— Ո՛չ , այո՛ , եթէ գործը ստուգուի , դոչեց երիտասարդը , բոլոր կրած նեղութեանցս փոխարէնը պիտի լուծեմ :

— Զգուշացիք : Մորսէրֆ , արդէն ծերացած է ան :

— Ընտանեացս պատռոյն ակնածութիւն ըրածին չափ ես ալ իւր տարիին պիտի ընեմ . եթէ հօրս թշնամին եր , ինչ չո՞ւ չպահնեց զան : Ո՛չ , ըստ որում մարդու մը դիմացն ելնելէն վախցաւ :

— Ալոեր , չեմ դատապարտեր դձեզ . բայց չեմ ուզեր որ անխորհուրդ կերպով զործ տեսնէք . Ալոեր , խոչեմութիւն պէտք է :

— Ո՛չ , մի վախնաք , Պոշան , մանաւանդ որ գուք հետո պիտի դաք , հանդիսաւոր դործերը պէտք է վկաներու առջե կատարել : Եթէ դիշեր չեղած որ . Տանկլարի յանցաւոր ըլլալը յայտնուի , ովէտք է որ Պ . Տանկլար ապրելէ դադըի և կամ ես մեռնիմ : Մի զարմանաք , Պոշան , վասն զի իմ պատռույս հանդիսաւոր յուղարկաւորութիւն մը ընել կ'ուղեմ :

— Աւրեմն եթէ այդպիսի դիտաւորութիւններ ունիք . Ալոեր , պէտք է որ իսկոյն ՚ի զործ դնէք զանոնք : Կ'ուղեք որ . Տանկլարի տունը երթալ . քալեցէք երթանք — :

Շուտով վարձու կառք մը բերել տուին , և սեղանաւորին

տունը մասնելու տաեն՝ անոր զրան առջելը ու . Անտրէա գուվալդանթիի կառքն ու ծառան տեսան :

— Ահ , բաղդաւոր եմ եղեր , ըստ Ալպէր տիրադին ձայնով մը . եթէ ու . Տանկլար հետա կռուիլ չուզէ , անոր փեսայցուն կ'ըսպանեմ : Գավալդանթի մը անշուշտ կռուիլը չմերժեր — :

Երիտասարդին գալուստը սեղանաւորին իմաց տուին , որ առջե իրիկունը պատահածները իմացած ըլլալով . Ալպէրի առնունը լսելուն ոլէս՝ հրամայեց որ ներս ընդունին : Սակայն խիստ ուշ էր , քանզի երիտասարդը , որ սպասաւորին ետեւն կը մօտենար , եղած հրամանը լսելով , դուռը բռնութեամբ հոհց և Պաշանին հետ մինչեւ սեղանաւորին դաշլիճը մտաւ :

— Բայց , պարոն , զուզեց Տանկլար , միթէ մարդ իւր տանը մէջ տէր չէ իւր ուզած անձը ընդունելու կամ չուզածը մերժելու , կ'երեւի թէ ինքդինքնիդ բալսրովին մօոցեր էք :

— Ու , պարոն , ըստ Ալպէր պաղութեամբ , այնպիսի պարագաներ կան , և դուք այն պարագաներէն մէկուն մէջ կը դառնուիք , որ մարդս առանց վատ երմելու (ազատ էք այս կերպով ինքդինքնիդ պաշտպանելու) , չկրնար իւր տանը մէջ զտնուիլը պաշել զոնէ քանի մ'անձերէ :

— Բայց ինչ կ'ուզէք ինձմէ , պարոն :

— Ժամադրութիւն մը , ըստ Առուելի առանց ուշադրութիւն ընել ձեացը ներու Գավալդանթիին , որ կրակարանին կռօթըներ էր , ժամադրութիւն մը կ'առաջարկեմ ձեզ առանձնացեալ անկիւն մը , ուր ասաը վայրիկեան ազատ ըլլուք կենալու , և ուրիշ բան չեմ խնդրեր , մեր երկուքն մէկը տերեներուն մէջ պէտք է որ գլորի — :

Տանկլարի զոյնը նետեց :

Գավալդանթի չարժում մը ըրաւ , և Ալպէր երիտասարդին իողմը դարձաւ :

— Ո՛չ , եկէք դուք եթէ կ'ուզէք , պարոն կամս , դուք զըեթէ ընտանիքէն կը սեպուիք և իրաւունք ունիք դալու , և

ես այօ կերող ժամադրութիւնները ամեն ընդունողներուն պատրաստ եմ ընելու — :

Գավալդանթի ապուշ նայուածքով Տանկլարի երեսը նայեցաւ, որ իւր ոյժը ամփոփելով ոտք ելաւ և երկու երիտասարդներուն մէ չ տեղը մտաւ :

Ընտրէայի վրայ Ալգերի ըրած յարձակումը սեղանաւորին կարծիքը փոխեք էք, և կը յուսար թէ Ալգերի այցելութիւնը՝ ի սկզբան իւր յուսացածէն տարրեք պատճառ մը ունեք :

— Եթէ պարոնը ձեղմէ նախապատիւ համարելուս համար անոր հետ կոռւելու եկած էք, ըստ Տանկլար Ալգերին, կ'իմացընեմ որ թադաւորի դործակալին առջելը աեսնուելու զործ մ'է այս :

— Կը սխալիք, պարոն, ըստ Մորսէրֆ տխուր ժպիտով մը, ես ամենեին ամուսնութեան խօսքը շըբի, և միայն այն պատճառաւ ող. Գավալդանթիին ուղղեցի իմ խօսքս, ըստ որում ինձ այնպէս երեցաւ թէ վայրկեան մը մեր վիճաբանութեան միջամուխ ըլլալու դիտաւորութիւն ունի: Եւ սուզիւ ես այսօր ամենուն հետ կոիւ կը փնտոեմ. բայց անհոգ եղիք, ող. Տանկլար, յառաջաւորութիւնը ձերն է:

— Պարոն, պատասխանեց Տանկլար՝ բարկութենէն և երկիւղէն դունատեալ, կ'իմացընեմ ձեզի որ երբ Ճամբռու վրայ կատաղի դամփորի մը պատահիմ, կ'ըսպաննեմ զան, այս կերպով յանցանք մը շրործելէ զատ՝ մարդոց ծառայութիւն մը ընել կը յուսամ: Արդ եթէ դուք կատղած էք, և զիս խածնել կը ջանաք, կ'իմացընեմ որ առանց դժալու կ'ըսպաննեմ զձեղ: Զարմանալի բան, յանցանքը իմն է երբ ձեր հայրը կ'անդատուուի:

— Այս, թշուառական, դոչեց Մորսէրֆ, քուկդ է յանցանքը — :

Տանկլար քայլ մը ետ քաշուեցաւ :

— Յանցանքը իմն է, կ'ըսէք, բայց ուրեմն խենթեցեք էք

դուք : Միթէ յունաց պատմութիւնը զիտեմ ես . բոլոր այն քաղաքները ճանապարհորդողը ես եմ . և միթէ ես էի չօրդի խրաս տուողը որ Եանեայի բերդերը ծախէ , ու մատնէ զանոնք . . . :

— Առեցէք , ըստ Ալոյէր կամաց ձայնով մը . ոչ , ուղղակի կերպով դուք չեկը այն շուկը հանողը և այն գժրաղզ գութիւնը պատճառողը , բայց դուք էիք կեղծաւորութեամբ զրդիու տուողը :

— Ե՞ս :

— Այո , դուք . յայտարարութիւնը ուրկից եկած է :

— Կարծեմ թէ օրագիրը Եանեայէն եկած ըլլալը իմացուց :

— Ով զրեց Եանեա :

— Եանեա :

— Այո , հօրս վրայ տեղեկութիւններ հարցընելու համար Եանեա ովլ նամակ զրեց :

— Կարծեմ թէ ամեն մարդ կրնայ Եանեա նամակ զրել :

— Այսու ամենայնիւ միայն մէկ անձ մ'է զրողը :

— Միայն մէկ անձ մ'է :

— Այո , և այն անձը դուք էք :

— Այո , ես զրեցի . ինձ այնպէս կ'երեի թէ երբ մէկը իւր աղջիկը . երիտասարդի մը հետ ամուսնացընել կ'ուզէ , կրնայ այն երիտասարդին ընտանեացը վրայ տեղեկութիւններ հարցընել . ոչ միայն իրաւունք է այս այլ և պարագ մը :

— Գիտնալով անկէ դալիք պատասխանը , ըստ Ալոյէր , այն նամակը զրեցիք :

— Ե՞ս , ո՞չ , կ'երդնում , զուց Տանկլար այնպիսի վստահութեամբ և անկասկածութեամբ մը , որ դուցէ աւելի իւր երկիւզէն կը յառաջանար քան թէ երիտասարդին համար իւր սրտին մէջ զդացած համակրութենէն . կ'երդնում որ ամենին մոքէս չէր անցներ Եանեա նամակ զրել . միթէ ես Ալիքաշայի դէպքը զիտէի :

— Աւրեմն մէկը զրգուեց զձեզ որ այն նամակը գրէք :

- Անցուշաւ :
- Մէկը զրգուց զձեղ կ'ըսէք :
- Այս :
- Ավել . . . ըսէք . . . շուտ ըսէք :
- Զարմանալու բան չկայ . ձեր հօրը անցեալին վրայ խօսեցած ժամանակս՝ կ'ըսէի թէ անոր հարստութեան աղբիւրը անձ անօթ մասցած էր միշտ : Մէկը հարցուց ինձի թէ ձեր հայրը իւր հարստութիւնը ուր ստացած է . Յունաստանի մէջ պատասխանեցի : Ուրեմն Եանեա դրեցէք , ըսաւ ինձի :
- Եւ ձեղ այդ խրատը տուողը մէլ է :
- Մօնթէ-Քրիսթոյ կոմսը , ձեր բարեկամը :
- Մօնթէ-Քրիսթոյ կոմսը ձեղ ըսաւ որ Եանեա այն նամակը դրէք :
- Այս , և ես դրեցի . կ'ուզէք ընդունած նամակս տեսնել , կը ցուցընեմ — :
- Ալզէք և Պոշան իրարու երես նայեցան :**
- Պարոն , ըսաւ այն ատեն Պաշան , որ գեռ թերանը բացած չէր . կարծեմ թէ այնպիսի մէկը կ'ամբաստանէք որ հիմա Բարիկէն բացակայ է և այս միջոցիս չկրնար ինքզինքը արդարացընել :
- Ամենեին մէկը չեմ ամբաստաներ , պարոն , ըսաւ Տանկլար , այլ եղածը կը պատմիմ . ձեզի ըսածս Պ . Մօնթէ-Քրիսթոյ կոմսին առջևն ալ կրնամ կրկնելու :
- Ի՞նչ պատասխան ընդունելիք կոմսը գիտէ :
- Ստացած պատասխանս ցուցուցի անոր :
- Հօրս միքտութեան անունը Փերնան և ընտանեցս անունը Մանտէկօ ըլլալը գիտէր :
- Այս , շատ ժամանակ առաջ անոր ըսած էի . Ի՞նչ որ ուրիշը իմ տեղու պիտի ընէք , ես զուցէ անկէ ալ շատ աւելի պակաս ըթի : Այս պատասխանին հետեւեալ օրը՝ երբ ձեր հայրը Մօնթէ-Քրիսթոյէն խրատուած եկաւ պաշտանական կերպիւ աղջիկս ուղելու , ինչպէս որ դործը վերջացընել ու .

զողը այսպէս կ'ընէ , ես մերժեցի , սայդդ է , բայց առանց  
բացատրութիւն մը տալու և առանց շշուկ մը հանելու : Աւ  
ինչո՞ւ շշուկ մը հանէի . ու . առ Մորսէրֆին պատիւը կամ ան-  
պատութիւնը ինծի ինչ կը նկատէ : Այս քանի ոչ արձէ .  
թղթոց գինը կրնար ցածցընել և ոչ բարձրացընել — :

Ալպէր գգաց որ կարմրութիւնը մինչեւ իւր ճակատը բար-  
ձրացաւ . ամենելին տարակոյս շկար , Տանկլար գձձութեամբ  
բայց այնպիսի մարդու մը սառւզութեամբ ինքդինքը կը պաշտ-  
ոպանէր , որ եթէ ոչ բոլոր ճշմարտութիւնը , դոնէ ճշմար-  
տութեան մէկ մասը կ'ըսէ և այն չէ թէ խիղճ ընելուն այլ  
վախնալուն համար :

Մորսէրֆի փնտոածն ինչ էր :

Տանկլարին կամ Մօնթէ - Քրիսթոյին իրաբմէ նուազ կամ  
աւելի յանցաւոր ըլլունին չէր , այլ թեթև կամ ծանր թըշ-  
նամանաց պատասխանող և իրեն հետ կռուռդ մարդ մը կը  
փնտոէր , և յայտնի կ'երևէր որ Տանկլար չպիտի կռուէր :

Ասկէ զատ իւր մոռցած և չդիտած բաները իւր աչքին և  
մոռքին առջելը կը ներկայէին :

Մօնթէ - Քրիսթօ ամեն բան գիտէր , բայց որում Ալի - բա-  
շային աղջիկը դներ էր :

Ամեն բան գիտնալովը Տանկլարին յորդորեր էր որ եւա-  
նեա նամակ յրէ :

Այն նամակին պատասխանը կարդալէն ետե՝ Հայտէի ներ-  
կայացուելու համար Ալպէրին յայտնած փափաքը ընդուներ  
էր . երբ Հայտէի առջել ելաւ , կոմաը թթուցեր էր որ Ալիին  
մահուան վրայ խօսք բացուի՝ ամենեին ըընդդիմանալով Հայ-  
տէի պատմած պատմութեանը . բայց անտարակոյս անոր հետ  
յունարէն լեզուաւ խօսեցած քանի մը խօսքերուն մէջ այն-  
պիսի խրաներ տուած էր , որով Մորսէրֆ չկրցեր էր իւր  
Հայրը Ճանշնալ . բաց յայտմանէ՝ միթէ Մորսէրֆին շաղաշըր  
էր որ Հայտէին առջելը իւր հօր անունը չարտասանէ :

Ա. երջապէս Ալպէրը նորմանտիա տարեր էր այն միջոցին

որ աղեկ զիտէր թէ այն մէծ տարաձայնութիւնը պիտի հրաշտարակուէր :

Ամենեին տարակուսելու տեղի չէր մնար , այս ամենը հաշիւով եղած էր , և Մօնթէ-Քրիսթօ իւր հօրը թշնամիներուն չետ համամիտ էր :

Ալպէր Պոշանը անկիւն մը տարաւ և իւր բոլոր այս խորհուրդները անոր հաղորդեց :

— Խրաւունք ունիք , ըստ օրադրապետը . ու . Տանկլար այս պատահած գեղաքին մէջ բիրտ և պարզ դործիք մը եղած է . Մօնթէ-Քրիսթոյ կոմսէն աղեսք է բացատրութիւն խընդուկքը — :

Ալպէր Տանկլարի կողմը դառնալով՝

— Պարոն , ըստ անոր , ես առժամանակեայ կերպիւ կը մեկնիմ . միայն կը մնայ ինձ հաւաստել եթէ ձեր ըրած ամբաստանութիւնը ճշմարիտ է և զայն ստուգելու համար ուղղակի Մօնթէ-Քրիսթոյի տունը կ'երթամ — :


Եւ սեղանաւորը բարեելով՝ Պոշանին հնատ դուրս ելաւ առանց Գավալդանթիին ուշագրութիւն ընելու .

Տանկլար մինչև դուռը անոնց ընկերացաւ , ուր Ալպէրին վերսուին ապահովցուց որ ու . կոմս տը Մորսէրֆին դէմ ամենեին անձնական ատելութեան պատճառ մը չունի :



ՊԱՌԱՐ Ժ.

ԹՅԱԿՄԱՆՆԵՐ


**Ս**անաստիորին դրան առջին Պոշան Մոր  

 սէրֆը կեցուց :  
 — Մտիկ ըրէք ինծի , ըսաւ անոր .  
 քիչ մը առաջ Պ . Տանկլարի տունը ձեզ ըսի  
 թէ Մօնթէ - Քրիսթոէն աղէտք էք բայցատրութիւն  
 խնդրել :  
 — Այս , և հիմա անոր տունը կ'երթանք :  
 — Վայրկեան մը սպասեցէք , Մորսէրփ . կոմսին տունը  
 երթանէդ առաջ մտածեցէք :  
 — Ի՞նչ բանի մտածեմ :  
 — Ձեր բոնելու դործին ծանրութեանը :  
 — Միթէ Պ . Տանկլարի տունը երթալէն աւելի՝ ծանր է :  
 — Այս , Պ . Տանկլար արծաթապաշտ մարդ մ'է , և զի-  
 տէք աղէկ որ արծաթապաշտ մարդիկ իրենց գբամագլխին  
 յարդը աղէկ զիանալուն՝ այնչափ դիւրութեամբ չեն կոռուիր :  
 Ընդ հակառակն միւսը աղնուական մ'է , զոնէ այնպէս կ'ե-  
 րեի . բայց աղնուական երեսյթին տակը չէք վախնար չարա-  
 դործի մը հանդիպելու :

— Միայն մէկ բանէ կը վախնամ . չըլլայ թէ կոռուիլը մերժէ :  
 — Ա՛չ , անհոգ եղիք , ըսաւ Պոշան . կոմսը կոռւելէ չփախ-  
 չիր . ես ալ մէկ բանէ կը վախնամ , որ շատ աղէկ կոռուիլ  
 զիտէ . զզուշացէք , Ալպէր :

— Բարեկամ, ըստ Մարտէրի ժամիտով մը, իմ ուղածս ալ ատ է. և ես խիստ երջանիկ պիտի ըլլամ եթէ հօրս համար ես սպաննուիմ, որով երկուքս ալ կ'ազատինք:

— Այն ատեն ձեր մայրն ալ պիտի մնոնի:

— Ողորմելի մայր իմ, ըստ Ալպէր ձեռքը աշացը վրայ տանելով, դիտեմ որ պիտի մեռնի, բայց աւելի աղէկ է որ այս վիշտով մեռնի քան թէ ամօթով:

— Հաստատ որոշած էք, Ալպէր:

— Այս :

— Քալեցէք ուրեմն. բայց կը կաբծէք որ զինքը տունը դտնենք:

— Խնձմէ քանի մը ժամ եաբը Ճամբայ պիտի ելնէր և անշուշտ հիմա վերադարձած է — :

Կառքը հեծան և հրամայեցին կառավարին որ Ըանհ-Էլիզէի թիւ 30 տունը տանի զիրբնք:

Պոշան կ'ուզէր առանձին ելնել, բայց Ալպէր դիտողութիւն ըրաւ որ այս զործը հասարակ կանոնէն գուրս ելած ըլլալուն կը ներէր իրեն որ մենամարտութեան սովորական կարգէն շեղի:

Երիտասարդը իւր ըրած զործերը այնպէս նուիրական կը համարէր որ Պոշան անոր կամքը կատարելու պատրաստ դըտնուելէն ուրիշ բան չէր ըներ:

Ուսաի Մորուէրին խօսքին համազուեցաւ և անոր ընկերանալու դոչ եղաւ:

Ալպէր մէկ ոստիւնով դոնապանին սենեկէն մինչև սանդուելով զնաց :

Պաթիսթէն իրենց առջեն ելաւ :

Կոմոք իրօք նոր հասեր էր, բայց լողաբանին մէջ դըտնուելով արդիւր էր որ ո՛ր և է մէկը ներս ըընդունին:

— Լոգաբանէն ետե ի՞նչ պիտի ընէ, հարցուց Մորուէրի:

— Պիտի Ճաշէ :

— Ճաշէն ետե :

— Ժամ՝ մը պիտի ննջէ :

— Ետքը :

— Ետքը Օրէրային պիտի երթայ :

— Ստոյզ դիտե՞ս , հարցուց Ալզէր :

— Այս . պարոնը հրամայեց որ Ճիշդ ժամը վեցին ձիերը  
պատրաստ ըլլան :

— Շատ աղէկ , ըստ Ալզէր , այսափ դիտնալը բաւա-  
կան է — :

Ետքը Պոշանին դառնալով՝

— Եթէ դործ մը ունիք տեսնելու , Պոշան , շուտով կա-  
տարեցէք . եթէ այս իրիկուն ժամադրութիւն մը ունիք՝ վաղ-  
ուան թողուցէք . Անցուշտ Օրէրային կ'ըսողասեմ ձեզ . եթէ  
կրնաք՝ Շաթօ-Ռընօն հետերնիդ բերէք — :

Պոշան բաժնուելու հրամանը ընդունելուն ուես՝ խոստա-  
նալէն ետե . որ ժամը ութիւն քառորդ մասը պիտի զայ զինքը  
առնելու , Ալզէրէն զատուեցաւ :

Ալզէր իւր սենեակը մանելով՝ Ֆրանզին , Տըղբէին և Մո-  
րէլին տամակներ զբեց և նոյն իրիկունը Օրէրայի թատրոնը  
զիրենք տեսնելու բաղձանքը յայտնեց :

Ետքը իւր մօրը քովը վաղեց , որ առջի իրիկուտն պատա-  
հածները լսելէն 'ի զեր՝ սենեկի մը մէ չ փակուելով մարդ-  
ներս շէր ընդուներ :

Ալզէր զան անկողնոյ մէ չ զտաւ , քանզի հրապարակաւ եւ  
զած այն նախատինքը խորին վիշտեր որատնառեր էր անոր :

Ալզէրի ներկայութիւնը յուսացուած աղղեցութիւնը պատ-  
ճառեց Աէրսէտէսին :

Աղորմն լի կինը իւր որդւոյն ձեռքը սեղմեց և սկսաւ հեծ-  
իլառալով լու :

Սակայն թափած արտասուրը իւր սիրոը կ'ըսփոփէին :

Ալզէր վայրիեան մը ոտքի վրոյ և լո իկ մնաց իւր մօրը քով :

Անոր տժդոյն գէմքէն և կնճռած յօնքէն յայտնի կ'երե-

ւէր որ վրէժինդրութեան որոշումը երթալով աւելի հաստատութիւն կ'առնուր իւր սրտին մէջ :

— Մայր իմ, ըսաւ Ալպէր, ու, աշ Մորսէրք թշնամի մը ունի և դուն կը ճանչնաս դան — :

Մէրսէտէս սարստաց :

Կինը զիտեց որ երիտասարդը հայրս ջըսաւ, այլ պարոն տը Մորսէրք :

— Սիրելիս, ըսաւ Մէրսէտէս, հօրդ կացութեան մէջ դանուող մարդիկ շատ թշնամիներ կ'ունենան, զորոնք իրենք չեն ճանչնար : Բայց աղէկ զիտես որ ճանչցուած թշնամիները նուազ վտանգաւորներն են :

— Այո, զիտեմ. ես ալ քու խելացիութեանդ կը զիմմամ, մայր իմ. դուն այնպիսի անհամեմատ կին մ'ես որ ամեն բան կը հասկընաս :

— Ի՞նչ ըսել կ'ուղես :

— Ըսել կ'ուղեմ թէ մեր տուած պարահանդիսին իրիկունը դուն զիտեցիր որ ու. աշ Մօնթէ-Քրիսթօն մը տան մէջ բան մը հաւաքաւել չուզեց — :

Մէրսէտէս դողդղալով իւր ջերմակէզ բաղկին վրայ ելաւ :

— Ու. աշ Մօնթէ-Քրիսթօն կ'ըսես, զուզեց, և ի՞նչ յարաբերութիւն ունի մեր դործը անոր հետո :

— Գիտես, մայր իմ, ու. աշ Մօնթէ-Քրիսթօն զրեթէ արեելեան մարդ մ'է, և Արեելցիք վրէժինդրութեան քոլոր աղատութիւննին պահելու համար՝ իրենց թշնամաց տան մէջ ոչ կ'ուտեն և ոչ կը խմն :

— Ու. աշ Մօնթէ-Քրիսթօն մը թշնամին կ'անուանես, Ալպէր, կրկնեց Մէրսէտէս իւր վրայ ծածկուած սաւանէն աւելի զունատելով . եւ ովլ ըսաւ քեզ այդ բանը . խենթեցեր ես դուն, Ալպէր . Ու. աշ Մօնթէ-Քրիսթօն մը հետը միշտ քաղաքավարութեամբ վարուեցաւ : Ու. աշ Մօնթէ-Քրիսթօն քու կեանքդ աղատեց . դուն մեղ ներկայացուցիր զան . ոչ, կ'աղաւչեմ, զաւակս, եթէ այդպիսի զաղափար մը ունիս, հե-

հացուր մտքէդ, և եթէ յանձնարարութիւնմը կամ աղջանք մը  
ունիմ քեզ ընելու, կը ինդրեմ որ անոր հետ աղէկ վարուիս:

— Մայր իմ, կրկնեց երիտասարդը տիտուր նայուածքով մը,  
այդ մարդը պաշտպանելու համար անշռուտ ապացոյցներ ունիս:

— Ես, դոչեց Մէրսէտէս՝ իւր դեղնելուն չափ արագու-  
թեամբ կարմրելով և դրեթէ անմիջապէս ետքը առաջուանէ-  
աւելի դեղնելով:

— Այս, անտարակոյս, կրկնեց Ալպէր, և քու ունեցած  
ապացոյցդ այն է որ այն մարդը չկրնար մեղ չարիք ընել,  
այնպէս չէ:

Մէրսէտէս սարսուաց, և իւր հետազօտիչ նայուածքը իւր  
որդւոյն վրայ յարելով՝

— Տարօրինակ կերպով կը խօսիս, Ալպէր, ըստ, ինձ այն-  
պէս կ'երեկի թէ այն մարդուն վրայ եղական գաղափարներ  
ունիս: Ի՞նչ ըրաւ քեզ կոմսը, երեք օր առաջ անոր հետ  
նորմանտիս դացիր: երեք օր առաջ ես և դուն քու ամենէն  
ընտիր բարեկամդ կը նկատէինք դան:

Ալպէրի շրմանց վրայ հենգնական ժպիտ մը երեցաւ:

Մէրսէտէս այն ժպիտը տեսաւ, ու իւր կանացի և մայրա-  
կան կրկին բնազդմամբ ը ամեն բան գուշակեց: սակայն խո-  
րագէտ և քաջառիքս կին մը ըլլալուն՝ իւր շփոթութիւնը և  
սարսուոները յայտնի չըրաւ:

Ալպէր թողուց որ խօսակցութիւնը ընդհատի: բայց վայր-  
կեան մը ետքը կոմսուհին վերստին սկսաւ խօսիլ:

— Քիչ մը առաջ հարցուցիր ինձի թէ ինչպէս եմ, ըստ: Կ'իմացընեմ քեզ որ աղէկ վիճակի մէջ չեմ գտնուիր, սի-  
րելիս: Պէտք ես քովս նստիլ, Ալպէր, և ինձի ընկերութիւն  
ընել: պէտք չէ որ առանձին մնամ:

— Մայր իմ, ըստ երիտասարդը, հրամանդ կը կատարէի  
(և դիտես ինչ ուրախութեամբ ամեն անդամ զայն կը կա-  
տարեմ), եթէ ստիպողական և կարեռը զործով մը բոլոր ի-  
րիկունը քեզմէ հեռու դանուելու ստիպուած չըլլայի:

— ԱՇ, շատ աղջի, պատասխանեց Աէրսէտէս հառաջանքով մը . զնա, Ալպէր, չեմ ուզեր զքեղ քու որդիական սիրոյդ գերի ընել — :

Ալպէր այս խօսքերը չլսել ձեացուց, իւր մայրը բարեկց և գուրս ելաւ :

Հաղիւ թէ երիտասարդը դռնէն գուրս ելաւ, Աէրսէտէս իւր հաւատարիմ ծառայն կանչեց և հրամայեց անոր որ բոլոր իրիկունը Ալպէրին ետեէն ամեն տեղ երթայ, և չուտով դայ անոր ըրածները իրեն իմացընէ :

Ետքը զանդակը հնչեցուց, իւր սենեկապանուհին կանչեց, և թէպէտ տկար, բայց իւր զգեստները հազաւ, որպէս զի՞՞ր և է դէպքի պատրաստ ըլլայ :

Սպասաւորը իրեն տրուած հրամանը կատարելու գժուարութիւն չունէր :

Ալպէր իւր սենեկակը մտաւ և խիստ վայելուչ կերպով հազուեցաւ :

Ժամը ութին տասը մնալով զոշան եկաւ, և իմացուց թէ Շամթօ-Ռընօն խօսք տուեր էր իրեն որ վարադոյրին բացուելէն առաջ երածշոտց ետեի նստարաններուն վրայ պիտի դանուի :

Երկուքնին միասեղ կառքը հեծան, և Ալպէր ուր երթալը պահելու պատճառ մը չունենալով պոռաց :

— Օքէրայի թատրոնը քաշէ — :

Իւր անհամբերութեանը մէջ վարադոյրը բացուելէն առաջ հասեր էր :

Շամթօ-Ռընօն իւր նստարանին վրայ կը դանուէր :

Պոշան ամեն բան անոր իմացուցած ըլլալուն՝ Ալպէր բացատրութիւններ տալու պէտք չունէր :

Իւր հօրը վրէժը լուծող այս որդւոյն ընթացքը այնպէս բնական էր, որ Շամթօ-Ռընօ ամենեւին փորձ մը չըրաւ զան իւր խորհուրդներէն ետ կեցընելու :

{ Տըպրէ դեռ եկած չէր, բայց Ալպէր դիտէր որ Օքէրայի ներկայացումներէն շատ քիչ անդամ կը պակսէր,

Մինչեւ վարագոյրին բացուիլը Ալպէր թատրոնին մէջ պարը տեղաւ :

Կամ նրբագաւիթներուն մէջ և կամ սանդուխին վրայ կը յուսար Մօնթէ - Քրիսթոյի հանդիպիլ :

Վարագոյրին զանդակը Մորսէրֆը իւր տեղը կանչեց , որ Շաթօ - Ռընոյի և Պոշանի մէջ տեղը նստաւ :

Բայց իւր աչքը այն սիւնամէջ օթեակին վրայէն չէր վերըլներ , որ բոլոր առաջին արարուածին մէջ կարծես զոյ մնալու յամառեալ էր :

Աերջապէս երբ Ալպէր հարիւրերորդ անդամ մ'ալ իւր ժամացոյցը կը դիտէր , երկրորդ արարուածին սկիզբը օթեակին գուռը բացուեցաւ , և Մօնթէ - Քրիսթօ սե զիւտոններ հաղած ներս մտաւ և սրահին մէջ նայելու համար օթեակին քիւին կոթընեցաւ :

Անոր ետեւէն Մորէլ կը յառաջանար , և իւր նայուածքը զջելով՝ իւր քոյրն ու քեռայքը կը փնտուէր ,

Երկրորդ յարկը օթեակի մը մէջ զանոնք տեսնելով՝ նշան մը ըրաւ :

Կոմսը սրահին մէջ շրջահայեց նայուածքը մը պարացընելով , աճգոյն գեմք մը և բոցավառ աչքեր տեսաւ , որոնք կարծես իւր ուշագրութիւնը կը դրաւէին :

Կոմսը հանցաւ որ Ալպէրն էր ան . բայց անոր դիմաց այլայլութիւնը գիտելով՝ զան շտեսնել ձեւցուց :

Աւստի առանց իւր միտքը յայտնող շարժում մը ընելու՝ իւր տեղը նստաւ , կրկնագիտակը պահարանին մէջն հանեց և ուրիշ կողմ մը ուղղեց զայն :

Սակայն կոմսը առանց երեցընելու՝ աչքը երիտասարդին վրայէն վերցուցած չէր , և երբ երկրորդ արարուածին վերըլը վարագոյրը իջաւ , կոմսը իւր անվրիպելի աչքը տեսաւ որ երիտասարդը իւր երկու բարեկամաց հետ դուրս կ'ելնէր :

Քիչ մը ետքը իւր դիմացը եղող առաջին կարդի օթեակին պատուհանին առջին անոր դլուխը երեցաւ :

Կոմմը փոթորիկին դեպ ՚ի իրեն մօտենալը կ'ըղղար, և երբ  
իւր օթեակին փականքին մէ չ բանալիին դառնալը լսեց, թէև  
կոմմը նոյն միջոցին խիստ զուարժ դէմքով Սորէլի հետ կը  
խօսէր, սակայն պատահելիքը դիանալով՝ ամեն բանի պատ-  
րասառւեր էր:

Դուռը բացուեցաւ:

Այն ատեն Սօնթէ-Քրիսթօ միայն զ լուսը դարձուց և կա-  
պարագոյն ու դողդոջուն Ալպէրը տեսաւ:

Պոշան և Ծաթօ-Թրնօ անոր եակէն կը յառաջանային:

— Քարի եկաք, պարոն տը Մորոէրփ —, զուեց կոմմը  
այնպիսի աղնուութեամբ մը, որով իւր ողջոյնը ընկերութեանց  
քաղաքավարութեան սովորական ձեւրէն կը տարբերէր:

Եւ իւր դէմքը կատարեալ մաերմաւթեան մը նշանները կը  
յայտնէր:

Այն ատեն Սորէլ գերակոմսէն ընդունած նամակը յիշեց,  
որուն մէ չ երիտասարդը առանց իւր միտքը յայտնելու՝ կ'աղա-  
շէր որ Օրէբայի թատրոնը զ տնուի, և հասկըցաւ որ սոս-  
կալի դէպ մը աեղի պիտի ունենայ:

— Փոխադարձ բարեկամական և քաղաքավարական կեղծ  
ձեւր ընելու եկած չենք հսու, պարոն կոմմ, այլ բացատրու-  
թիւն մը խնդրելու:

Երիտասարդին դողդոջուն ձայնը հաղիւ թէ անոր սեղ-  
մուած ակռաներուն մէջէն դուրս կ'ելնէր:

— Թատրոնին մէ չ բացատրութիւն մը կը խնդրէք, ըստ  
կոմմը այն հանդարասութեամբն ու աղդու նայուածքովը, որ  
այս կրիին յատկութիւններէն այն բոլորովին անձնապատճան  
մարդը կը ճանցուէր: Քարիղեան սովորութեանց որշափ և  
օտար ըլլամ, չեմ կարծեր, պարոն, որ բացատրութիւնները  
թատրոնի մէջ խնդրուին:

— Սակայն երբ մէկը ըսել կու տայ թէ տան մէջ չէ,  
ըստ Ալպէր, և լոգարանի մէջ, սեղանի վրայ կամ անկող-  
նոյ մէջ ըլլալուն պատճառաւ՝ անկարելի է անոր քովն եր-

թալ, ուր որ անոր հանդիպինք, հոն պէտք է անոր հետ տեսակցիլ:

— Ինձի հետ տեսակցութիւնը ընելը շատ դիրին է, ըստ Մօնթէ-Քրիսթօ, ըստ որում, պարոն, եթէ չեմ սխալիր՝ երեկ դուք իմ տունս կը գանուէիք:

— Այս, պարոն, երեկ ձեր տունն էի, ըստ երիտասարդը բոլորովին շփոթեալ, վասն զի ձեր ովլ ըլլալը չէի զիտեր — ։

Եւ այս խօսքերը խօսելու առեն՝ Ալպէր իւր ձայնը բարձրացաւցեր էր, որպէս զի մօտակայ օթեակներուն մէջ զըտնողները և օթեակներուն նրբաղաւիթին մէջէն անցնողները լսեն:

Իրօք օթեակներուն մէջ նստողները նայուածքնին կոմսին օթեակին մէջ դարձուցին, և նրբաղաւիթին մէջէն անցնողները կոռույն ձայնը լսելով ոտշանի և Շաթօ-Ալընոյի ետին կեցան։

— Ուրկից ելնելով հոս եկաք, պարոն, ըստ Մօնթէ-Քրիսթօ առանց յայտնի յուղմունք մը ցուցընելու. խելքերնիդ դլուսնիդ չեք երեկիր ինձ։

— Իմ խելքս միշտ զլուխս է, պարոն, ըստ Ալպէր բարկութեամբ, բաւական է որ ձեր խորամանկութիւնները իմանամ, և կարող ըլլամ հասկըցընել որ անոնց վրեժը լուծել կ'ուղեց:

— Պարոն, ձեր ըստածները աղէկ չեմ հասկընար, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ, և եթէ հասկընայի իսկ, կը տեսնեմ որ խսիա բարձր ձայնով կը խօսիք: Ես իմ օթեակիս մէջն եմ, պարոն, և ես միայն համարձակութիւն ունիմ ուրիշներէն աւելի ձայնս բարձրացընելու. դուքս ելէք, պարոն։

Եւ Մօնթէ-Քրիսթօ հրամայական զարմանալի շարժումով մը դուռը Ալպէրին ցուցուց։

— Աչ, շատ աղէկ, ես ալ զձեզ ձեր օթեակէն դուրս պիտի նետեմ, կրկնեց Ալպէր իւր զողգոջուն ձեռաց մէջ ձեռնոցը ծռմոտկելով, զոր կոմսը տեսաւ։

— Աղէկ, աղէկ, ըստ կոմսը սրտի հանդարտութեամբ։

կը տեսնեմ որ ինձի հետ կռուիլ կ'ուղէք . բայց ձեզ խրատ մը տամ , դերակոմս , և աղէկ միտքերնիդ պահեցէք . — կռուի գրգռելու համար ձայն հանելը զէշ սովորութիւն մ'է . այս ձայները կրնան ամեն մարդու հաճելի չըլլալ , պարոն տը Մորսէրփ — :

Այս անունին վրայ այս տեսարանին ունկնդիրներուն մէջ շշուի մը տիրեց :

Առջի իրիկունէն 'ի վեր Մորսէրփի անունը ամենուն քերանը կը չըջէր :

Ալպէր կոմսին ակնարկութիւնը ամենէն աղէկ և ամենէն առաջ հասկրցաւ և շարժում մը ըրաւ իւր ձեռնոցը կոմսին դէմքին նետելու . բայց Մորէլ անոր դաստակը քռնեց , ինչ ատեն Պոշան և Շաթօ—Ռընօ վախնալով որ այս տեսարանը մենամարտութեան դրդուելու սահմանը շանցնի , անոր ետեն քռնեցին :

Բայց Մոնթէ-Քրիսթօ առանց ոտք ելնելու և իւր ամոռը ծռելով՝ ձեռ քը միայն երկնցուց և երիտասարդին կնշոած մատերուն մէջէն խանաւացեալ և ծռմութկաւած ձեռնոցը յափշտակելով՝

— Պարսն , ըսաւ ահազին ձայնով մը , ձեռնոցնիդ իրքն նետուած կ'ընդունիմ , և դնաւակով մը զայն ձեզ կը վերադարձնեմ : Հիմա դուրս ելէք սենեկէս , և թէ ոչ՝ ծառան կը կանչեմ և զձեզ գռնեն դուրս նետել կու տամ — :

Ալպէր շփոթած , արբածի պէս դեգեւելով և աշքը արիւնով լցուած երկու քայլ ետ քաշուեցաւ :

Մորէլ յարմար ժամանակ զաւ դուռը ետեն դոցելու :

Մոնթէ-Քրիսթօ վերսախն իւր կրկնադիտակը ձեռքը առաւ և ամենէնին բան մը չպատահածի պէս իւր աշաց մօտեցուց զայն և սկսաւ ամեն կողմ դիտել :

Այն մարդուն սիրաը պղնձէ էր և դէմքը մարմարիսնէ :

— Ի՞նչ ըրիք անոր , հարցուց Մորէլ կոմսին ականջին մօտենալով :

— Ե՞ս, ամենեւին բան մը չերի՝ զո՞նէ անձամբ, ըստ  
Մօնթէ-Քրիսթօ :

— Այսու ամենայնիւ՝ ոյս տարօրինակ տեսարանը անշառաւ  
պատճառ մը պիտի ունենայ :

— Տը Սորուէրք կոմսին դէպքէն ողորմն լի երիտասարդը  
ստատիկ զայրացած է :

— Բայց այն գէպքը պատահելուն մասնակից էք :

— Ըստձիամողովը անոր հօրը մատնութիւնը Հայտէն իմացեր է :

— Ստուդիւ լսած էի, բայց չուզեցի հաւատալ թէ այն  
Ծոյն աղախինը, զոր այս նոյն օթեակին մէջ ձեզի հետ տե-  
սայ, Ալի-բաշյան աղջիկն է :

— Սակայն ստոյդ է այդ, ըստ կոմսը :

— Ո՛չ, Տէր Աստուած, ուրեմն ամեն բան կը հասկընամ  
հիմա, և ոյս տեսարանը առաջէն մտածուած և պատրաս-  
տուած էք :

— Կ'նշղէս :

— Ալպէր ինձ տոմսակ մը զրեր էր որ այս իրիկուն Օքէ-  
բա դանուիմ, անշուշտ ձեզ ընելու նախատանաց վկայ ըլլա-  
լու համար :

— Հաւանականաբար, ըստ Մօնթէ-Քրիսթօ իւր անխռով  
հանդարտութեամբը ը :

— Բայց ինչ պիտի ընէք անոր :

— Որո՞ :

— Ալպէրին :

— Ալպէրին, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ նոյն ձայնիւ, որ-  
շափ ստոյդ է ձեր հօս ըլլալը և ձեր ձեռքը սեղմելս, նոյն-  
շափ ստոյդ է վաղը առտուան ժամը տասէն առաջ զան-  
նելը :

Մորէլ ալ Մօնթէ-Քրիսթոյի ձեռքը իւր երկու ձեռաց մէջ  
քռնեց և այն ցուրտ և հանդարտ ձեռքը սեղմելով սարտաց :

— Ո՛չ, կոմս, ըստ, հայրը այնշափ կը սիրէ զան :

— Այդպիսի խօսքեր մի՛ ընէք ինձի , դոչեց Մօնթէ - Քրիստութեամբ առաջին անգամ՝ բարկութեան շարժում մը ցուցընելով , պիտի տանջեմ զան — :

Մորէլ ապէալ՝ Մօնթէ - Քրիստոյի ձեռքը թողուց :

— Կոմն , կոմն , ըստա :

— Սիրելի իմ Մաքսիմիլիէն , ընդմիջեց կոմնը , մաիկ ըրէք՝ ինչ հիանալի կերպով Տիւրքէղ այս խօսքը կ'երդէ .

Ո Մաթիլդա , պաշտելիդ իմ հոգւուս :

Վոաջին անդամ Տիւրքէղը Դարբոլի լսեցի , և ես ամենէ առաջ ծափահարութիւն ըրի՝ կեցցես , կեցցես — :

Մորէլ հասկըցաւ որ առջի խնդրոյն վրայ ուրիշ բաելիք չկար , ուստի սպասեց :

Ալպէրի աեսարանին վերջը՝ վարադոյրը բացուած ըլլալով , շատ չանցաւ վերստին դոցուեցաւ : Այն ատեն օթեակին դուռը զարնուեցաւ :

— Կերս մտէք — , ըստ Մօնթէ - Քրիստօ առանց ամենեին յուզմունք մը յայանելու :

Պոշան դրան առջև երեցաւ :

— Բարի եկաք , պարօն Պոշան , ըստ Մօնթէ - Քրիստօ , նոյն իրիկունը առաջին անդամ զան տեսնելու պէս . Հրամեցէք նստէք՝ կ'աղաւեմ — :

Պոշան ներս մտաւ , բարեկց և նստաւ :

— Պարօն , ըստ Մօնթէ - Քրիստօյին , ինչպէս որ աեսաք՝ քիշ մը առաջ ու . տը Մորսէրֆին ընկերացած էի :

— Հաւանականաբար ըսել կ'ուզէք , ըստ Մօնթէ - Քրիստօ ծիծաղելով , թէ ինձի հետ ընթրելու պիտի դաք : Աւրախութեամբ կը աեսնեմ , պարօն Պոշան , որ դուք անորմէաւելի զգուշացող էք :

— Պարօն , ըստ Պոշան , կը խօստովանիմ որ Ալպէր բարկանալուն համար յանցաւոր է , և ես իմ հաշուիս եկած եմ ձեզմէ ներումն ինդրելու : Եւ երբ իմ խնդիրքս ընդունիք , զձեղ համարձակ Ճանշնալովս կը յուսամ թէ չէք մերժեր նաև ետանեայի մարզոց հետ ձեր ունեցած յարաքերութեանց վրայ

քիչ մը բաշատրութիւն տալ ինձ, ետքը ես ալ քանի մը  
խօսք ունիմ այն նորատի Յոյն կնոջ վրայօք ձեզ ըսելու — :

Մօնթէ-Քրիսթօ շուրթովը և աչքովը փոքր նշան մը ըրաւ,  
որով լուսթիւն կը խնդրէր :

— Աչաւասիկ, ըստ Մօնթէ-Քրիսթօ, իմ բոլոր յոյսերս  
պարագը կ'ելնեն :

— Ե՞նչ պատճառաւ, հարցուց Պողան :

— Անտարակոյս, քանզի ինծի տարօրինակ մարդու համար  
առաջ տալու կը փութաք, ձեր կարծեաց համեմատ՝ Նարա  
մը, Մանֆրէտ մը և լորա Ռիթվէն մ'եմ ես, և երբ զիս  
իբր տարօրինակ տեսնելու փափաքնիդ կ'անցնի, ձեր ծրադիրը  
կը փոխէք և զիս ուսմիկ մարդ մը ընել կը ջանաք, վերջա-  
պէս ինձմէ բացատրութիւններ կը խնդրէք . ուրեմն զիս ծրա-  
դել կ'ուզէք, պարոն Պողան :

— Այսու ամենայնիւ, կրկնեց Պողան ամբարտաւանու-  
թեամբ, այնպիսի պարագաներ կան, որոնց մէջ ուղղամասու-  
թիւնը կը հրամայէ . . . :

— Պարոն Պողան, ընդ միջեց տարօրինակ մարդը, Պ. Մօն-  
թէ-Քրիսթօյ կոմսին հրամայողը Պ. Մօնթէ-Քրիսթօյ կոմսն  
է : Աւստի այս խօսքերը դոցեցէք, եթէ կը հաճիք, ես ու-  
ղածս կ'ընեմ, պարոն Պողան, և հաւատացէք ինձ՝ ինչ որ  
ընեմ՝ աղէկ կ'ընեմ :

— Պարոն, պատասխանեց Պողան, պատուաւոր երիտա-  
սարդները այդ չափով զոհ չեն ըլլար. պատուաւոր երաշխա-  
ւորութիւններ պէտք են :

— Պարոն, ես ինքնս կենդանի երաշխաւորութիւն մ'եմ,  
կրկնեց Մօնթէ-Քրիսթօ անհաղութեամբ՝ բայց իւր աշերը  
սպառնադին հուրեր կը փայլատակէին : Երկուքս ալ երակներ-  
նուս մէջ արիւն ունիսք, զոր հոսելու կը փափաքինք, ահա  
մեր փոխադարձ երաշխաւորութիւնը : Այս պատասխանը գերա-  
կոմսին տարէք և ըսէք անոր թէ վաղը ժամը տասէն առաջ  
անոր արեան զոյնը տեսնել կը փափաքիմ :

— Աւրեմն, ըստ Պողան, մնամարտութեան պայմանները սբոշելէն ուրիշ ընելու գործ չնար:

— Ըոլորովին անտարբեր եմ այդ մասին, պարսն, ըստ Մօնթէ-Քրիսթօյ կամսը. այդպիսի փոքրիկ խնդրոյ մը համար թարթոնի մէջ անհանդիստ ընելու դալը ո՞րչափ անողուտ քան է: Վաղղիոյ մէջ սուրբվ կամ ատրճանակով կը կոռին, դաղթականութեանց մէջ՝ լայնափող հրացանով, Արարիոյ մէջ դաշոյնով: Չեր բարեկալին ըսէք որ թէպէտ թշնամանուողը ես եմ, սակայն զինուց ընտրութիւնը իրեն կը թողում, և առանց վիճարանութեան ու առանց ընդդիմութեան որ և է իւր ընտրութիւնը ինձ ընդունելի է, մինչեւ վիճակաձդութեամբ կոռիլը: Բայց ինձի համար գործը կը տարբերի. քանզի ես ապահով եմ որ պիտի շահիմ:

— Ապահով էք որ պիտի շահիմ, կրկնեց Պողան ապուշայուածքով կամսին նոյնելով:

— Անշուշտ, ըստ Մօնթէ-Քրիսթօ թեթև կերպով իւր ուսերը թոթվելով. եթէ ոչ Պ. աը Մորսէրֆի հետ չէի կոռւեր: Պիտի սպաննեմ զան, այո՛, քանզի պէտք է: Միայն թէ այս իրիկուն տունս կ'ըսպասեմ որ կարճ խօսքով մնամարտութեան զէնքը ու ժամը իմացընէք ինձ. սպասեցնելը չեմ սիրեր:

— Աւրեմն առտուան ժամը ութին, ԱԷնսանի անտառին մէջ ատրճանակով պիտի մնամարտիք, ըստ Պողան շփոթելով և չգիտնալով թէ իւր գիմացինը յանդուդն մեծարան մ'է թէ զերբնական էակ մը:

— Ծատ աղէկ, պարսն, ըստ Մօնթէ-Քրիսթօ, հիմա որ ամեն քան կարդի մտած է, կ'աղաչեմ թողուցէք ինձ որ ներկայացման ուշադրութիւն ընեմ, և ըսէք ձեր Ալպէր բարեկամին որ այս իրիկուն վերստին քովս չդայ, իւր ամեն անվայել կոպտութիւններովը յանցաւոր պիտի ըլլայ. թող իւր տունը վերադառնայ և քնանայ —:

Պողան դարմանքով գուրս ելաւ:

— Հիմա , ըստ Մօնթէ - Քրիսթօ Մորէ լին դառնալով , ձեր վրայ վստահ ըլլամ , այնպէս չէ :

— Անտարակոյս + ըստ Մորէ և եթէ հրաման մը ունիք՝ պատրաստ եմ կատարելու . սակայն . . . :

— Ի՞նչ ըստ կ'ուզէք :

— Պէտք է , կոմս , որ ոյս մժնամարտութեան բուն պատճառը իմանամ :

— Ըստ կ'ուզէք թէ խնդիրս կը մերժէք :

— Ամեն ին :

— Բուն պատճառը , Մորէ և , ոյն երիտասարդը անդամ չդիտեր . բանզի կոյր զկուրայն կը քալէ . բուն պատճառը միայն ես և Աստուած զիտենք : Բայց Ճշմարիտ կ'ըսեմ , Մորէ և , որ Աստուած անոր պատճառը զիտնալով մեր հետը պիտի ըլլայ :

— Բաւական է այդշափը , կոմս , ըստ Մորէ և Երկրորդ վկանիդ ո՞վ է :

— Չեզմէ և ձեր Էմմանուէ և զգքօրմէ զատ Բարիդի մէջ մէկը չեմ ճանչնար , որուն այս պատիւր ընել ուղեմ : Աը կարձէք որ Էմմանուէ բարեհաջի այս ծառայութիւնը մատոցանել ինձ :

— Ինձի պէս անոր համար ալ կ'երաշխաւորեմ ձեզ , կոմս :

— Աղէկ , իմ ուղածս ալ այս է . վաղը առտու ժամը եօթին իմ տունս պիտի գաք , այնպէս չէ :


— Այս :

— Կոեցէք , վարագոյրը բացուեցաւ , մտիկ ընենք . այս դռւանական խաղին մէկ եղանակն անդամ կորսնցը նելու սովորութիւն չունիմ . Կիլեօմ թէլի երաժշուաթիւնը ո՛բչափ քաղցր է — :



## ԳԼՈՒԽ ՀԱՅ

ԳԻՇԵՐԻ



Ս ՈՆԹԻ-ԳՐԱՎՈՅ իւր սովորութեան համար  
մատ սպասեց մինչեւ որ Տիւրբէլ իւր  
հռչակաւոր Եպուել էլիւ երդը երդեց ,  
և այս առեն ուռք ելաւ և թատրոնէն  
դռքը ելաւ :

Դրան առջին՝ Մորէլ հետեւալ առողու ժամը ճիշդ եօ-  
թին Եմմանուէլի հետ կոմսին տունը դահուելու համար տուած  
խոսքը նորոգելով , անորմէ բաժնուեցաւ :  
Կոմսը միշտ անխոռով և ժպտախառն դէմքով իւր կառքը  
հեծու և հինգ վայրկեան եաքը իւր տունը հասաւ :

Միայն թէ ողետք էր չճանշնալ կոմսը , որպէս զի իւր տունը  
մտած ժամանակից այս խօսքերը Ալիին ըսելու կերպէն խա-  
բուէր մարդ :

— Ալի , փղոսկրեայ բունով ատրճանակներս ինձ բեր — \*  
Ալի ատրճանակներու արկլիլը իւր ափողօք բերաւ , և կոմսը  
սկսաւ իւր զէնքերը քննել այնպիսի մարդու մը բնական  
անձկութեամբը , որ իւր կեանքը կտոր մը երկաթի և կա-  
պարի ողիսի յանձնէ :

Մօնթէ - Քրիսթօ իւր սենեակներուն մէ ջ նշան առնելու հա-  
մար այս ատրճանակները յատուկ շինել տուած էր : Կայծա-  
հան պարուտակի մը բաւական էր զնտակը մղելու , և քովի  
սենեկնեն ամենեին չէր իմացուեր որ կոմսը՝ ինչպէս կ'ըսեն  
նշան առնողները՝ իւր ձեռքը կը վարդէր :

Կոմար հաղիւ թէ զէնքը արկղիկին մէ ջէն հանելով ձեռքը  
բռներ էր և նպատակի մը համար պատին վրայ զետեղուած  
երկաթեայ փոքր տախտակին վրայ նշանին կէտը կը փնտոէր  
երբ իւր դահլչին դուռը բացուեցաւ և Պաթիսթէն ներս  
մտաւ :

Քայլց ծառան իւր բերանը բանալէն առաջ՝ կոմար կիսա-  
րաց դրան մէ ջէն մօտակայ սենեկին պատին քովը մթոթեան  
մէջ կանգնած քողարկեալ կին մը տեսաւ, որ Պաթիսթէնի  
ետեւէն եկեր էր :

Կինը կոմարին ձեռքը ատրճանակը և սեղանին վրայ երկու  
սուր տեսնելով, իսկոյն ներս նետուեցաւ :

Պաթիսթէն նայուածքով մը իւր աիրոջ Խորհուրդ կը  
հարցընէր :

Կոմար նշան մը ըրաւ, Պաթիսթէն դուրս ելաւ և դուռը  
դոցեց :

— Ա՞լ էր դուք, տիկին — , ըստ կոմար քողարկեալ կնոջ :  
Անծանօթ կինը իւր նայուածքը ըուլուտիքը պարտցուց,  
որպէս զի ապահով ըլլայ թէ բոլորավին առանձին կը դըտ-  
նուի . ետքը ծնրագրել ուզելու չափ ծոռելով և յուսաբեկ  
ձայնով ձեռքը միացընելով :

— Էտմօն, ըստ, զաւակս ովիտի չսպաննէր — :

Կոմար քայլ մը ես քաշուեցաւ, տկար ձայն մը հանեց և  
բռնած զէնքը ձեռքէն նետեց :

— Այդ ինչ անուն էր որ տուիք, տիկին աը Մորսէրփ,  
ըստ կոմար :

— Ձեր անունը տուիք, զուեց կինը իւր քովը նետելով :  
Ձեր անունը, զոր զույց ես միայն մոոցած չեմ : Էտմօն,  
ձեզի եկողը տիկին աը Մորսէրփը չէ այլ Մէրսէտէսը :

— Մէրսէտէս մնուած է, տիկին, ըստ Մօնթէ-Քրիսթօ,  
և ես այդ անունով ուրիշ անձ մը չեմ ճանշնար :

— Մէրսէտէս կենդանի է, պարոն, և զձեզ կը քիշէ .  
քանզի զձեզ տեսնելուն պէս ճանիցաւ, և զձեզ տեսնելոն

իսկ առաջ՝ ձեր ձայնեն, կամօն, ձեր ձայնին մէկ հնձիւնեն ճանչցաւ, և այն ժամանակէն 'ի վեր քոյլ առ քայլ ձեր եւ տեէն կու դայ, ձեր վրայ կը հսկէ, ձեզմէ կը զարհուրի, և ող. առ Մորուբիսին հարուածը առւող ձեռքը փնտոելու ովեաբ չունի:

— Ֆէրնանին ըսել կ'ուզէք, տիկին, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ գառն հենգնութեամբ մը. քանի որ մեր բուն անունով զիրար կը կոչենք, ամեն անուններն ալ յիշենք — :

Եւ Մօնթէ-Քրիսթօ այս Ֆէրնան անունը այնպիսի յայտնի ատելութեամբ մը արտասանեց, որ Մէրսէտէս իւր բոլոր մարմնոյն վրայ սոսկումի սարսուռ մը շրջապատելը զդաց.

— Կը տեսնէք, կամօն, որ սխալած չեմ, ոոչեց Մէրսէտէս և իրաւունք ունիմ ըսելու որ զաւկիս խնայէք:

— Եւ ով ըսաւ ձեզ, տիկին, որ ես ձեր զաւկին թշնամութիւն մը ընել կ'ուզեմ:

— Մարդ շոսաւ. բայց մայր մը կրկին տեսութիւն ունի. ես ամեն բան գուշակեցի և անոր ետեէն այս իրիկուն Օրէ-բային եկայ, և օթեակի մը մէ չ պահուելով ամեն բան տեսայ:

— Աւրեմն եթէ ամեն բան տեսաք, տիկին, անշուշտ տեսած էք որ Ֆէրնանի զաւակը հրապարակաւ զիս թշնամանեց, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ սոսկառիթ հանգարսութեամբ մը :

— Ա՛հ, զթութիւն, պարոն:

— Անշուշտ տեսած էք, տիկին, շարունակեց կոմսը, որ եթէ բարեկամներէս մէկը Պ. Մորէլ անոր թէը չքանէք, իւր ձեռնոցը երեսիս պիտի նետէք:

— Մտիկ ըրէք, զաւակս ալ ձեր ով ըլլալնիդ դուշակած է, և իւր հօրը գժբաղդութեանց պատճառը ձեղ կու տայ:

— Տիկին, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, խօսքերը կը շփոթէք, գժբաղդութիւններ չեն այլ պատիժ։ Ես չեմ Պ. առ Մորուբիս հարուածողը, այլ Կախախինամութիւնն է դան պատժողը։

— Եւ ինչո՞ւ ձեր դործը Կախախինամութեան կու տաք,

դոչեց Մէրսէտէս : Ինչո՞ւ կը յիշէք երբ Նախախնամութիւնը կը մտնայ : Եանեան և անոր կուսակալը ձեզ ի՞նչ կը նկատեն , Էտմօն : Գէրնան Մոհատէկօն Թէրէ-աէլէնի Ալին մատնելով ձեզ ի՞նչ յանցանք գործեց :

— Ես ալ կ'իմացընեմ , տիկին , պատառխանեց Մօնթէ-Քրիսթօ , որ այս ամեն պատահածները Գաղղիացի հարիւրապետին և Վասիլիքիին աղջկան մէջ տեղի ունեցած զործեր են : Իրաւունք ունիք՝ ինձ շեն նկատեր անոնք , և եթէ երգում ըրած եմ վրէժ մը լուծելու , իմ վրէժինդրութիւնս ոչ Գաղղիացի հարիւրապետէն է և ոչ աբ Մորսէրֆ կոմաէն , այլ Գաթալանուչի Մէրսէտէսի ամուսին Գէրնան ձկնորսէն :

— Ո՛չ , պարոն , դոչեց կոմսուհին , այդ ի՞նչ սոսկալի վրէժինդրութիւն մ'է այնպիսի յանցանքի մը համար , զոր Ճակատաղ իրս ինձ զործել տուաւ . բսա որում ես եմ յանցաւորը , Էտմօն , և եթէ վրէժ լուծել կ'ուղէք , ինձմէ պիտի լուծեք , որ ձեր բացակայութեանը և իմ առանձնութեան մէջ յաւոահատեցայ :

— Բայց , դոչեց Մօնթէ-Քրիսթօ , ինչո՞ւ ես բացակայ եղայ , և ինչո՞ւ դուք առանձին մատցիք :

— Ինչու որ զձեզ բոնեցին , Էտմօն , և զձեզ բանտարկեցին :

— Եւ ինչո՞ւ զիս բոնեցին ու բանտարկեցին :

— Չեմ զիսեր , բսաւ Մէրսէտէս :

— Այո , չէք զիտեր , տիկին , դանէ այնպէս կը յուսամաներեմ հիմա ես ձեզ բսեմ . վասն զի ձեղի հետ ամուսնանալու օրուանս առջի իրիկունը՝ Ծէղէրվի ձողաբարձին տուկը՝ Տանկլար անունով մարդ մը այս նամակը զբեր եր , զոր Գէրնան ձկնորսը թղթատան յանձնառու եղեր եր — :

Եւ Մօնթէ-Քրիսթօ զրագարանի մը մօտենալով , զդրոց մը բացաւ , ուրկից թուղթ մը հանեց , որ իւր նախնական դոյնը կորսնցուցեր էր , և որուն մելանը ժանդի զոյն ստացեր էր , և Մէրսէտէսի ներկայացուց զայն :

Թաղաւորի դործակալին զրուած Տանկլարի նամակն էր այն, զոր Մօնթէ-Քրիսթոյ կոմսը իրու Թոմուն և Գրէնչ վաճառատան ներկայացուցիչը՝ Պ. տը Պովիլին երկու հարիսր հաղար ֆրանքը վաճարած օրը Էտմօն Տանթէսի արձանադրութեան քովը պահուած թղթերուն մէջէն առեր էր:

Մէրսէտէս սոսկումով հետեւալ տողերը կարդաց.

« Արքայական դաշի և կրօնքի բարեկամ մը թագաւորի դործակալին կ'իմացընէ, որ Փարան նաւուն երկրորդ նաւապետը Էտմօն Տանթէս, որ այս առաւոտ Խղմբէն եկաւ, Դէասոլիս և Փօրմօ-Ֆէրրայո հանդիպելով, Մուրատէն Յափշտակչին նամակ մը տարաւ, և Յափշտակչին Բարիղի Պոնարադեան ժողովրդեան համակ մը առած է:

« Տանթէսի յանցանաց ապացոյցը ձեռք կրնայ բերուիլ դան բանտարկելով, ինչու որ յիշեալ նամակը կամ իւր վրայ, կամ հօրը տունը և կամ Փարան նաւուն մէջ իւր սենեակը պիխտի գտնէք»:

— Ա՛վ Աստուած իմ, ըսաւ Մէրսէտէս ձեռքը քրանաթոր Ճակտին տանելով, և այս նամակը . . . :

— Երկու հարիսր հաղար ֆրանքի զնեցի, տիկին, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ. բայց դարձեալ աժան է, ըստ որում այսօր կարող եղայ զայն ձեր աչաց առջև ներկայացընելու:

— Եւ այս նամակը ինչ հետեւանք ունեցաւ:

— Այս նամակին հետեւանքը զիս բանտարկելոնին եղաւ, ինչպէս որ զիտէք, տիկին, բայց ձեր չզիտցածը այն բանտարկութեան որշափ ժամանակ տեելն է. ձեր չզիտցածը այն է որ տասն և չորս տարի ձեզմէ քառորդ մը մղոն հեռու Իֆդղեակին ստորերկրեայ բանտի մը մէջ մնացի. Զեր չզիտցածը այն է որ այն տասն և չորս տարիներուն ամեն օրուան մէջ առջի օրը ըրած վրէժինդրութեան ուխտս նորոգեցի. այսու ամենայնիւ չէի դիտեր որ դուք զիս ամբատանող Ֆէրնանին հետ ամուսնացաք, և հայրս մեռաւ և անօթութենէ մեռաւ:

— Արդար Աստուած, զոչեց Մէրսէտէս զողդղալով:

— Տան և շորս տարի բանտի մէջ մնալէ ետե զորս ելնելով իմացածներու ասոնք են, և ահա այս պատճառաւ կենագանի Մէրսէտէսին և մոռեալ հօրս վրայ երդում ըրի որ Ֆէրնանէն վրէժո լուծեմ . . . և ահա կը լուծեմ:

— Բայց ստոյդ զիտէք որ թշուառ Ֆէրնանը ըրաւ այդ բանը :

— Հոգւսոյ վրայ կ'երդնում, տիկին, որ ան ըրաւ . բայց միթէ իւր զործերը աւելի սոսկալի չեն . որդէզրութեամբ Գաղղիացի էր, բայց պատերազմի ժամանակ Անդղիացւոց կողմնանցւ . ծննդեամբ Սպանիացի էր, բայց Սպանիացւոց դէմ պատերազմնցւ . Ալիին հասառուն էր, բայց մատնեց և ըստաննեց զան : Այսպիսի զործերուն քով կարդացած նամակնիդ ինչ է, բայց եթէ սիրահարական նշառակութիւն մը, զոր այն մարդուն հետ ամռւսնացող կինը պէտք է որ ներէ, բայց չներեր այն սիրահարը որ այն կնոջ հետ պիտի ամռւսնար : Գաղղիացիք այն նենգաւորէն վրէժնին շլոծեցին, Սպանիացիք այն մատնիջը հրացանի շրանեցին, Ալի իւր զերեղմանին մէջ պառկած ըլլալով՝ անպատիթ թողուց այն մատնիջը . բայց ես որ անորմէ մատնուեցայ, չարշրուեցայ և զերեղմանի մէջ նետուեցայ, Աստուծոյ շնորհօքը այն զերեղմանէն գուրս ելնելով՝ Աստուծոյ կը պարտաւորիմ իմ վրէժնանդրութիւնս, որուն համար զիս աղատեց, և ահա պատրաստ կը գտնուիմ անոր կամքը կատարելու — :

Աղորմիլի կնոջ զլուխը խոնարհելով ձեռացը մէջ ինկաւ, սրունքը կորացան և ծնկան վրայ եկաւ :

— Ներեցէք, Էտմօն, ըստու, ներեցէք ինձի համար որ տակաւին կը սիրեմ զձեղ — :

Ամուսնական պատիւը սիրահարական և մայրական եռ անդը սանձեց :

Իւր Ճակատը օթոցին զպէլու չափ խոնարհեցաւ :

Կոմու անոր քովը վաղեց և զան զետնէն վերցուց :

Այն ատեն կոմսուհին թեաթորի մը վրայ նստած իւր արտասուաց մշղն Սօնթէ-Քրիսթոյի տժդոյն դէմքը տեսսաւ, որուն վրայ վիշտն ու ատելութիւնը սպառնական դրոշմ մը տպաւորած էին:

— Ի՞նչպէս ջնջեմ ևս այն անիծեալ ցեղը, մըմաց կոմսը, զանոնք պատժելու համար զիս մահուանէ՝ ի կենդանութիւն կոչող Աստուծոյ անհնազանդ ըլլամ, ոչ, անկարելի է, տիկին, անկարելի է . . . :

— Էտմօն, ըսաւ ողորմնի կինը՝ ամեն միջոց՝ ի գործ դնելու չանալով, երբ զձեզ էտմօն կը կոչեմ, ինչու զիս Մէրսէտէս չէք կոչեր:

— Մէրսէտէս, կրկնեց Սօնթէ-Քրիսթօ, Մէրսէտէս, այս, իրաւունք ունիք, այս անունը տակաւին քաղցր է ինձ արտասանելու, և աչա այնչափ երկար ժամանակէ՝ ի վեր առաջին անդամն է որ այս անունը իմ շուրթերէս դուրս ելած ժամանակ այսպէս պարզ կը հնչուի: Ոչ, Մէրսէտէս, ձեր անունը մելամաղձութեան հառաջանքներով, վշտաց հեծեծանքներով, յուսահատութեան հեծկլատանօք արտասանեցի, այս, ցուրտէն սառած, ստորերկերայ բանախս յարդին վրայ կծկուած ժամանակս ձեր անունը արտասանեցի, տաքէն այսած ու բանախս սալաքարերուն վրայ դլորելու ատենս Մէրսէտէս կը զոչէի: Մէրսէտէս, պէտք է որ վրէժս լուծեմ, քանդի տասն և չորս տարի տանջուեցայ, տասն և չորս տարի լացի և անիծեցի, և հիմա, կը կրկնեմ, Մէրսէտէս, պէտք է որ վրէժս լուծեմ—:

Եւ կոմսը վախնալով որ չըլլայ թէ այն կնոջ աղաջանաց դիջանի, զոր այնչափ սիրած էր, անցեալ յիշատակները իւր ատելութեան օղնութեան կը կանչէր:

— Լուծեցէք վրէժնիդ, էտմօն, զոչեց ողորմնի մայրը, սակայն յանցաւորներէն լուծեցէք. վրէժնոնդիր եղիք անորմէ, վրէժնոնդիր եղիք ինձմէ, բայց իմ զաւակէս վրէժնոնդիր մի ըլլափ:

— Սաւրբ Գրոց մէջ դրուած է, պատասխանեց Մօնթէ՝  
Քրիսթօ, թէ՝ « Հարց մեղքը իրենց զաւակացը վրայ պիտի  
իշխան մինչեւ երեք և չորս սերունդ »։ Միթէ ես այս պատ-  
դամը տուողէն մնձ եմ — ։

Եւ այնպիսի հառաջանք մը հանեց որ մոնչիւնի կը նմա-  
նէր, ու իւր դեղեցիկ մաղերը սկսաւ շոյել։

— Ետմօն, ըստաւ Մէրսէտէս իւր բազուկները դէպ 'ի  
կոմոք տարածելով, Ետմօն, զձեզ ճանշնալէս 'ի վեր ձեր  
անունը պաշտելի եղաւ ինձ և ձեր յիշատակը յարգելի։  
Ետմօն, բարեկամն, սրտիս հայելիին մէջ անդադար ցոլա-  
ցած այն աղնիւ և յստակ պատկերը նսեմացընելու մի բըռ-  
նադատէք զիս։ Ետմօն, զձեզ կենդանի յուսացած ժամա-  
նակիս մէջ և մնեալ կարծելէս 'ի վեր դիտնայիք թէ որ-  
շափ աղօթք ըրած եմ ձեզի համար Աստուծոյ։ Այս, կը  
կարծէի թէ մնուած էք, ափսու, կը կարծէի թէ ձեր դիակը  
տիսուր աշտարակի մը խորը թաղուած է։ կը կարծէի թէ ձեր  
մարմինը այն անդունքներուն մէկուն խորութեանց մէջ զա-  
հավիժած է, որոնց մէջ բանտապահները մնեալ բանտար-  
կեալները կը զլորեն, և կաւ լայի։ Կ'ոչ կրնայի ընել ձեզի  
համար, Ետմօն, եթէ ոչ աղօթք ընել և լալ։ Ճաւատացէք  
ինծի, տասը տարի շարունակ ամեն դիշեր մի և նոյն երազը  
կը տեսնէի։ Ըսին թէ դուք փախչել ուզելով մնեալ բան-  
տարկեալի մը պատանովը պատահքուեր էք, և ձեր կենդանի  
դիակը իֆ դղեակին բարձրութենէն վար նետեր են։ Ժայ-  
ռերուն վրայ ջախջախուելու ժամանակնիդ ձեր հանած ձայ-  
նէն ձեր դահիճներն եղուշ դիապատիկները եղած փոփոխու-  
թիւնը իմացեր են։ Կ'երգնում, Ետմօն, այն միակ զաւկիս  
դլխուն վրայ, որուն ներողութիւնը խնդրելու եկած եմ, որ  
տասը տարի ամեն դիշեր երազիս մէջ մարդիկներ տեսայ,  
որոնք ժայոի մը դադարէլ անձեւ և անհան բան մը կը ճօ-  
ճէին, տասը տարի ամեն դիշեր ահսելի ձայն մը լսեցի, որ  
զիս սոսկացընելով և սառելով քունէս կ'արթնցընէր։ Ետ-

մօն, հաւատայեք ինծի, ես ալ, որչափ և յանցաւոր եղած ըլլամ, ես ալ շարաչար տանջուեցայ:

— Ձեր բայցակայութեան ժամանակ ձեր հօրը մնոնելը ըզդ դացած էք երբէք, զուեց Մօնթէ-Քրիսթօ ձեռքը մազերուն մէջ խօթելով. անդունդի մը խորութեանց մէջ խորդալու ժամանակնիդ ձեր սիրած կնոջ ձեռքը ձեր հակառակորդին տալը տեսած էք երբէք . . . :

— Աչ, ընդմիջեց Մէրսէտէս. բայց տեսայ իմ սիրած անձս, որ զաւկիս գահիձն ըլլալու պատրաստուած է — :

Մէրսէտէս այս խօսքերը այնպիսի աղդու վիշտով և այնպիսի յուսակտուր ձայնով մը արտասանեց, որ այս խօսքերուն և ձայնին վրայ հառաչանք մը կոմմին կոկորդը կը խեղդէր:

Առիւծը ընկճած էր և վրէժինդիրը յաղթահարած :

— Ի՞նչ կը խնդրէք, ըստւ. կ'ուզէք որ ձեր զաւակը ապրի. զիսցէք որ պիտի ապրի — :

Մէրսէտէս այնպիսի ձայն մը հանեց որ Մօնթէ-Քրիսթոյի աչերէն երկու կաթիլ արտասուք հոսեցուց, բայց այն երկու կաթիլները զրեթէ անմիջապէս աներեւոյթ եղան. քանզի անտարտկոյս Աստուած հրեշտակ մը զրկած էր ժողվելու այն արտասուքները, որոնք կիւզարաթի և Օֆիրի ամենէն ազնիւ մարգարիտներէն թանկազին էին :

— Ո՛չ, շնորհակալ եմ, Է՛տմօն, զուեց Մէրսէտէս կոմոին ձեռքը բռնելով և իւր շրթանց մօտեցը թնելով. շնորհակալ եմ. ահա Ճիշտ երազածիս և սիրածիս պէս կը զտնեմ զքեզ. ո՛չ, հիմա համարձակ այս խօսքը կրնամ ըսել քեզ :

— Մանաւանդ թէ, պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ, ոզորմէլի Էտմօնը երկար ժամանակ պիտի չունենայ ձեզմէ սիրուելու: Մեռեալը իւր զերեզմանը պիտի վերադառնայ, և ուրուականը մթութեանց մէջ պիտի խորասուզի:

— Ի՞նչ կ'ըսէք, Էտմօն:

— Կ'ըսեմ թէ որովհետեւ կը հրամայէք, Մէրսէտէս, պէտք է մնանիլ:

— Մեռնիլ, և ով ըստ այդպիսի խօսք մը։ ով մեռնելու խօսքը ըրաւ։ մեռնելու դաղափառները ուրիից ձեր միտքը կը վլերագառնան։

— Կը կարծէք, Մէրսէտէս, որ ես ապրելու փափաք ու նենամ, երբ հրապարակաւ, ամբողջ սրահի մը մէջ, ձեր զաւկին և ձեր բարեկամաց ներկայութեանը նախատուիմ, մասնուկէ մը մենամարտութեան հրաւիրուիմ, և իմ ներողութեանս վրայ իրը յազմող փառաւորուի։ Զեզմէ ետքը, Մէրսէտէս, ամենէն աւելի սիրած բանս իմ անձս է, այսինքն իմ պատիւս, այսինքն այն զօրութիւնը որ զիս ուրիշ մարդոցմէ բարձրագոյն կ'ընէ։ այն զօրութիւնը իմ կենդանութիւնս է։ մէկ խօսքով գուք իմ զօրութիւնս կը խորտակէք, ու ես կը մեռնիմ։

— Բայց այն մենամարտութիւնը տեղի պիտի չունենայ, Էստմոն, քանզի գուք կը ներէք։

— Տեղի պիտի ունենայ, տիկին, ըստ Մօնթէ-Քրիսթօ հանդիսաւոր կերպիւ։ միայն թէ ձեր զաւկին արեան տեղը զոր երկիրս պիտի խմէր, իմն պիտի հոսի —։

Մէրսէտէս բարձր ճիշ մը հանեց և դէպ ՚ի Մօնթէ-Քրիսթօ նետուեցաւ, բայց յանկարծ կեցաւ։

— Էստմօն, ըստ, մեր զլուուն վրայ Աստուած մը կայ, ( քանի որ գուք կենդանի էք, և ես զձեղ վերստին տեսայ ), ու ես իմ բոլոր սրտովս անոր կ'ապաւինիմ։ Անոր օգնութեան սպասելով՝ ձեր խօսքին վրայ կը վստահիմ։ Զաւակս պիտի ապրի, ըսիք, այնպէս չէ։

— Այո՛, պիտի ապրի, տիկին —, ըստ Մօնթէ-Քրիսթօ զարմանալով որ Մէրսէտէս առանց ուրիշ զգացում մը յայտնելու՝ իւր ըրած զիւցազնական զոհողութիւնը ընդուներ էր։

Մէրսէտէս իւր ձեռքը կոմսին երկնցուց։

— Էստմօն, ըստ աշերը արտասուօք լցուելով ու կոմսին երեսը նայելով, որչափ մնձ և բարձր զործ մ'է ձեր ըրածը։ որչափ վսեմ զործ մ'է զթալ այնպիսի թշուառ կնոջ մը,

որ իւր ակնկալութեանց հակառակ պատահանք ըով ինքինքը ձեզ կը յանձնէ: Ափսո՞ս, աարիքէս աւելի վիշտերէս ծերացած եմ, և չեմ կրնար ժպիտով մը կամ նայուածքով մը իմ էտմօնիս այն Մէրսէտէսը յիշեցընել, որուն երեսը դետելու համար ժամանակաւ այնչափ ժամեր անցուցած է: Ա՛յ, հաւատացէք ինձ, Էտմօն, ես ալ շատ նեղութիւններ կրեցի, ինչպէս ըսի ձեզ, վերստին կը կրկնեմ, առանց միակ ուրախութիւն մը յիշելու և առանց միակ յոյս մը տածելու կեանք մը անցընելը աղէտալի վիճակ մ'է . այս բանս կը ցուցընէ որ աշխարհի մէջ ամեն բան լմցած չէ . ոչ, ամեն բան լըմընցած չէ . սրտիս մէջ կ'ըզգամ: Ա՛յ, կը կրկնեմ, Էտմօն, ներելը քարձը, մեծ և վսեմ դործ մ'է, ինչպէս որ դուք ըրիք:

— Բայց ինչ պիտի ըսէիք, Մէրսէտէս, երբ ձեզի ըրած զոհողութեանս մեծութիւնը դիսնայիք: Ենթագրեցէք թէ գերազայն Տէրը աշխարհս ստեղծելէն և արդասաւորելէն ետե, արարչադուրծութեան երրորդ մասին հասնելով՝ իւր դործը դադրեցըներ հրեշտակի մը արտասուաց խնայելու համար, զորոնք մեր մեղքերը իւր անմահ աչէրէն հոսեցընել պիտի տային օր մը. ենթագրեցէք թէ ամեն բան պատրաստելէ, զանգելէ և արդասաւորելէ ետե՝ իւր դործին վրայ ըզմայլելու միջոցին՝ Աստուած արել մարեր և աշխարհս իւր ոտքովը մշտնչնաւոր խաւարին մէջ մզէր, այն ատեն կրնաք երեակայել, և կամ՝ ոչ, ոչ, չէք կրնար երեակայել թէ այս միջոցիս իմ կեանքս կորսնցընելով ինչ մեծ կորուստ պիտի ընեմ — :

Մէրսէտէս այնպիսի նայուածքով մը կոմսին երեսը նայեցաւ, որուն վրայ իւր զարմանքը, հիացումը և երախտագիտութիւնը միանգամայն դրոշմուած էին:

Վօնթէ-Քրիսթօ իւր ճակատը չերմակէղ ձեռացը մէջ բռնեց, զողցես զլուիր կարող չէր իւր խորհրդոց ծանրութիւնը վերցընել,

— Էսմօն, ըստ Մէրսէտէս, միայն խօսք մը ևս ունիմ  
ձեզ ըսկլու — :

Կոմսը դառնութեամբ ժպանցաւ :


— Էսմօն, շարունակեց Մէրսէտէս, եթէ Ճակատս զու-  
նատեալ է, աչերուս հուրը մարած, զեղեցկութիւնս կոր-  
սուած, վերջապէս եթէ Մէրսէտէս իրեն չնմանիր ալ, պի-  
տի տեսնէք օր իւր սիրտը միշտ նոյնն է . . . : Մնաք բարեաւ  
ուրիմ, Էտմօն . երկինքէն ալ ուրիշ խնդիրը մը չունիմ . . . :  
Առաջուան պէս զձեզ ազնիւ և բարձր տեսայ վերտափն: Մնաք  
բարեաւ, Էտմօն . . . մնաք բարեաւ և շնորհակալ եմ — :

Քայլց կոմսը չպատասխանեց :

Մէրսէտէս գահէլքին գուռը բացաւ, և աներեսյթ եղաւ  
կոմսին այն վշտալի և խօրունկ մասծութենէն սթափելէն ա-  
ռաջ, որուն մէջ իւր կարուսեալ վրէժխնդրութիւնը զինքը  
ընկղմբ էր:



Էնվալիտի ժամացոյցը ժամը մէկ կը հնձէր երբ տիկին տը  
Մարսէրքը տանող կառքը Շանդ-Էլիզէի քարայրատակին վրայ  
դլորելով՝ Մօնթէ-Քրիսթոյ կոմսին զլուխը վեր վերցուց :

— Ի՞նչ յիմար եմ եղեր, ըստ ինքնին, որ վրէժս լու-  
ծելու համար որոշում ըրած օրս սիրտս ալ չխեր եմ — :



Ք Ա Ո Ւ Բ Ք Ժ Բ ։

ՀԵՆԴԻՊՐԻՄԼ

  
 Կ Ր Ա Խ Ե Կ Ս Ի մ ե կ ն ե լ է ն ե տ ե ՝ Մ օ ն թ է ։ Ք ր ի ս ։  
  
 Թոյի համար ամեն բան ստուերի մէջ  
 ընկղմցաւ վերստին . իւր խորհուրդ -  
 ները դադրեցան . իւր եռանդուն  
 միտքը խիստ յոդնած մարդու մը պէս թմբրեցաւ :

— Ի՞նչ, ըստ իւրովի՛ մինչդեռ Ճարգներն ու մոմերը տըփ-  
 րութեամբ կ'ըսպառէին և ծառաները անհամբերութեամբ  
 նախասենեկին մէջ կ'ըսպառէին , միթէ այնչափ յամրութեամբ  
 պատրաստուած և այնչափ նեղութիւններով ու հոգերով բար-  
 ձրացած շէնքը մէկ հարուածով , միայն մէկ խօսքով և մէկ  
 շունչով պիտի կործանի . ես որ ինքզինքս բան մը կը կար-  
 ծէի և իմ անձիս վրայ կը պարծէի , ես որ Եֆ դղեակին ըս-  
 տորերկեայ բանտին մէջ այնչափ նուաստանալէ ետե՝ անկէ-  
 գուրս ելնելով այս աստիճան բարձրանալու կարող եղայ ,  
 վաղը ափ մը փոշի պիտի դառնամ : Ափսոս , մարմնոյս մահ-  
 ուանը վրայ չեմ ցաւիր . այս կենդանական տարրին եղ-  
 ծումը միթէ այն հանդարտութիւնը չէ , ուր ամեն բան հա-  
 կում մը ունի , ուր ամեն թշուառ շունչ կ'առնու . միթէ մար-  
 մոյ այն հանդարտութիւնը չէ , որուն համար այնչափ երկար  
 ժամանակ հառաչեցի , և որուն առջե անօթութեան վշտաղին  
 Ճամրուն մէջ կը Ճանապարհորդէի , երբ Գարիս իմ բան-  
 տիս մէջ երեցաւ : Ի՞նչ է ինծի համար մահը , բայց եթէ

մէկ աստիճան աւելի հանգարառութիւն և զույցէ երկու աստիճան աւելի լռութիւն։ Աչ, ուրեմն դոյսւթեանս վրայ չեմ ցաւիր, այլ այնչափ յամբութեամբ պատրաստուած և այնշափ աշխատութեամբ արդիւնաւորած խորհուրդներուս չնջուելուն վրայ կը ցաւիմ։ Ուրեմն նախախնամութիւնը, որ իմ խորհրդոցս նպաստաւոր կը կարծէի, անոնց հակառակ է ։ Ուրեմն Աստուած չուզեր որ զանոնք 'ի գործ դնեմ։

«Այս բեռը, որ զբեթէ աշխարհի մը չափ ծանր է և ես վերցուցի զայն և կը կարծէի թէ մինչև վերջը կարող պիտի ըլլամ կրելու, իմ փափաքանացս համաձայն էր և ոչ զօրութեանս, կամացս և ոչ կարօղութեանս, և հիմա պիտի ստիպուիմ հաղիւ կէս Ճամբան թողուլ զայն։

«Ահ, ուրեմն վերտանին բաղդին պիտի հնազանդիմ, մինչդեռ տասն և չորս տարուան յուսահատութիւնս և տասը տարուան ակնկալութիւնս նախախնամային ըրած էին զիս։

«Եւ ինչո՞ւ կը պատահին սյս ամենը, վասն զի մեռեալ կարծած սիրտս պարզ թմբրութեան մէջ կը զտնուի եղեք. վասն զի թմբրութենէ վերտանին սթափեցաւ այն, վասն զի բարախեց, վասն զի կնոջ մը ձայնովը կուրծքիս խորութենէն և զած այս բարախման զիջայ։

«Այսու ամենայնիւ, շարունակեց կոմսը՝ հետեւալ առտուան մենամարտութեան վրայ նախատեսութիւններ ընսլով և աստիճանաբար խորունկ մտածութեանց մէջ ընկղմալով, այսու ամենայնիւ, անկարելի է որ այնչափ ազնիւ սիրտ ունեցող կին մը այնպէս եսութեամբ թողու որ ես սպաննուիմ, ու իմ զօրութիւնս և դոյսւթիւնս չնջուիւ։

«Անկարելի է որ իւր սէրը կամ զոնէ իւր մայրական յուսահատութիւնը գործը այն կէտին տանի։

«Այնպիսի առաքինութիւններ կան, որոնց չափաղանցութիւնը կընան յանցանք մը ըլլալ։

«Աչ, անշուշտ սրտաշարժ տեսարան մը երեակայած է. զուցէ պիտի դայ սուրերուն մէջ տեղը նետուի, և այն ատեն

քիչ մը առաջ վեեմ երեցածը ծաղրականի պիտի դառնայ — : Եւ մեծանանութեան կարմբութիւնը կամնին ձակատը պատեց, — Ծաղրելի՛ պիտի ըլլամ, կրկնեց Աօնթէ - Քրիսթօ, և այն ծաղրը իմ վրաս պիտի իշնայ . . . : Ես ծաղրելի՛ ըլլամ, ո՛չ, աւելի աղէկ է որ մոռնիմ — :

Եւ այսպէս կանխաւ չափազանցօրէն մտածելով հետեւ ալ առառւան տարաբախութեանց վրայ, որոնց դատապարտուած էր ինքը Ըլլերը կենդանի թողելու համար Մէրսէտէսի խօսք տարվը, կոմոր վերջապէս ինքնիրեն ըստ .

— Յիմարութիւն, յիմարութիւն, միթէ յիմարութիւն չէ երիտասարդին ատրճանակին դիմացը իրքե անշարժ նշան մը կենալը . միթէ երբէք պիտի հաւատայ ան թէ ես անձնասովանութեամբ մեռայ, ամենեին . այսու ամենայնիւ իմ յիշատակիս պատուոյն համար (սնապարծութիւն մը չէ այս, այլ մեծանձնութիւն մը) հարկ է որ ամեն մարդ զիսնայ թէ ես իմ կամքովս և իմ աղատ ինքնիշխանութեամբս հաւանեցայ զարնելու համար վերցուցած ձեռքս կեցընելու, և իմ թշնամիներուս գէմ զննեալ ձեռքովս ես ինքնինքս զարկի . պէտք է որ այսպէս ըլլայ, և ես այսպէս պիտի ընեմ — :

Եւ զրիչ մը առնելով իւր զրադարանին զաղտնի պահանջին մէջէն թուղթ մը հանեց, որ ուրիշ բան չէր բայց եթէ իւր կտակը, զոր իւր Բարիզ հասնելէն 'ի վեր պատրաստեր էր. այն թղթին տակովը յաւելուած մը ըրաւ, որուն մէջ դժուարահաւատ մարդոց իւր մահը կ'իմացըներ :

— Այս բանս ես իմ պատուոյս համար կ'ընեմ, ըստ . և պէտք չէ որ այն Տանկլար, Ակիլլիքոր և Մորուէլֆ թշուառականները կարծեն թէ զիպուածը զիրենք իրենց թշնամիէն աղատեց : Ընդ հակառակն թող դիսնան թէ պատիժէն աղատելնին իմ աղատ կամքէս կախեալ էր, թէ այս աշխարհիս մէջ պատիժէն աղատելով՝ միւս աշխարհին մէջ պիտի պատժուին և թէ միայն իրենց ժամանակը յաւիտենականութեան հետ փոխեցին — :

Այս տիսուր անստուգութեանց մէջ զեղեւելու տաեն, որոնք տրամութեամբ արթնցով մարդու մը ձախօղ երազներու կը նմանէին, առառան լոյսը պատուհանները լուսաւորեց և իւր ձեռաց տակը եղած զունատեալ կապոյտ թուղթը երկցուց, որուն վրայ իւր վերջին խօսքերը զբեր էր:

Առառաւն ժամը հինգն էր:

Յանկարծ իւր ականջին յուշիկ ձայն մը եկաւ:

Մօնթէ - Քրիսթօ կարծեց թէ հեղձեալ հառաւանքի ոկտամայն մը կը լու:

Գլուխը գարձուց, բոլորտիքը նայեցաւ և մարդ չտեսաւ:

Սակայն ձայնը աւելի որոշակի կրկնուելով՝ իւր տարակոյսը ստուգութեան փոխուեցաւ:

Այն տաեն կօմաը ոտք ելաւ, կամաց մը սրահին դուռը բացաւ և թեաթոռի մը վրայ Հայտէն տեսաւ՝ թեերը կախած և իւր զեղեցիկ զլուխը զունատեալ և դէպ 'ի ետին հակած. ողորմիլի աղջիկը իւր թեաթոռը ճիշդ գրան մէջ տեղը զբեր էր, որպէս զի կոմը զի՞նքը շանսած դուրս չելնէ. բայց երկար ժամանակ արթուն կենալէն յոզնելով, երիտասարդութեան վրայ զօրացող քունէն յաղթուեր էր:

Դրան բացուելու ժամանակ հանսած ձայնը չկրցաւ Հայտէն քունէն արթնցընել:

Մօնթէ - Քրիսթօ քաղցր և տիսուր նայուածք մը յարեց անոր վրայ:

— Մէրսէտէս իւր զաւակը յիշեց, ըստ, և ես մոոցայ որ աղջիկ մը ունիմ — .

Ետքը արամութեամբ իւր զլուխը շարժելով՝

— Խեղջ Հայտէ, ըստ, անշուշտ ուղած է զիս տեսնել և հետս խօսիլ, և անտարակոյս բանէ մը վախցած կամ բան մը զուշակած է . . . : Ո՛չ, առանց անոր մնաս բարեաւ ըսելու չեմ կրնար մնկնիլ, և զան մէկուն յանձնելէս առաջ չեմ ուզեր մնոնիլ — :

Եւ կամաց մը իւր տեղը վերադարձաւ ու առջի տողերուն տակը զրեց.

« Մարսիլիոյ նաւայարդար Բիեր Մորէլ նախնի տիրոջը որդի և հեծելաղօրաց հարիւրապետ Մաքսիմիլիէն Մորէլին կտակաւ կը թողում քսան միլիոնի դումար մը , որուն մէկ մասը իւր ժիւլի քրոջը և իւր քեռայր Էմմանուէլին պիտի նուիրէ , եթէ սակայն կը կարծէ որ իրենց հարմատութեան վրայ այս աւելորդ գումարը իրենց երջանկութեանը պիտի շվետակէ :

« Այս քսան միլիոնը Մոնթէ - Քրիսթոյի քարայրիս մէջ թաղուած է , որուն դաղանիքը ուէրթուշին դիտէ :

« Եթէ իւր սիրտը ազատ է և կ'ուղէ ամսւսնանալ նաև այի կուսակալ Ալիի աղջկան Հայտէին հետ , զոր ես հայրական սիրով մեծցուցի , և ան որդիական սիրով սիրեց զիս , չեմ ըսեր իմ վերջին կամքս այլ իմ վերջին փափաքս պիտի կատարէ :

« Ներկայ կտակս Հայտէն իմ մեացեալ հարստութեանցս ժառանգը ըրած է արդէն , որոնք կը բաղկանան Անգղոյ , Աւստրիոյ և Հոլանտիոյ մէջ ունեցած կալուածներէս , եկամուտներէս , և զանազան պաշտաներու և տուներու մէջ ունեցած կահ կարստիքներէս , և որոնք , 'ի բաց հանեալ վերսոյիշեալ քսան միլիոնի դումարը և ծառաներուս թողուցած դանազան ժառանգութիւններս , գարձեալ վաթսուն միլիոնի դումար մը կը կազմն » :

Այս վերջին տողը վերջացընելու վրայ էր երբ իւր ետեւն ձայն մը լսելով զրիջը ձեռքէն թողուց :

— Հայտէ , ըսաւ , կարգացի՞ր — :

Եւ իրօք նորատի աղջիկը իւր արտեանանց զարկած օրուան լրյուէն արթնաւով , ոտք ելեր և կոմսին մօտեցեր էր առանց իւր թեթե քայլափոխներուն ձայնը հանելու , որոնք թէե գորդին վրայ անլսելի կ'ըլլային :

— Ո՛չ , տէր իմ , ըսաւ Հայտէ ձեռքը միացընելով , այս ժամանս ինչո՞ւ զիր կը զրես , ինչո՞ւ բոլոր հարստութիւնդ ինձ կը թողուս , տէր իմ . արդեօք զիս պիտի թողմաւ :

— Ճամբռողութիւնն մը պիտի ընեմ, սիրելի հրեշտակո, ըստ Մօնթէ-Քրիսթօ անսահման տիրութեամբ և խանդաղատանօք, և եթէ ինձ գժբաղդութիւնն մը պատահի . . . — :

Կոմսը խօսքը բնդմիջեց :

— Ծարունակէ, ըստ նորատի աղջիկը այնպիսի հրամայական ձայնիւ մը, զոր կոմսը երբէք անոր քերանէն լսած չէր և որմէ սարսապց :

— Եթէ ինձ գժբաղդութիւնն մը պատահի, կրկնեց Մօնթէ-Քրիսթօ, կ'ուզեմ որ աղջիկս երջանիկ ըլլայ — :

Հայտէ տիրութեամբ ժպտելով և զլուխը շարժելով ըստ .

— Մեռնելու կը մտածես, աէք իմ,

— Մահուան վրայ մտածելը կեանք է, աղջիկս, ըստ է իմաստունը :

— Աւրեմն եթէ դուն մեռնիս, ըստ Հայտէ, քու հարստութիւնդ ուրիշներուն թող, վասն զի եթէ դուն մեռնիս . . . , աշապրելու պէտք չունիմ ես — :

Եւ թուղթը առնելով չորս կտոր ըրաւ, ու սենեկին մէջ տեղը նետեց :

Ազորմելի աղջիկը այն աստիճանն յուղուելու սովորած չըլլալուն՝ ուժէ կտրելով, զետինը ինկաւ և այս անդամ փխանակ քնանալու՝ նուաղեցաւ :

Մօնթէ-Քրիսթօ կճքուեցաւ, իւր բաղկացը մէջ առնելով վերցուց զան, և անոր դիմաց զեղեցիկ զոյնին զունատութիւնը, զեղանի աշաց զոցուիլը, ու անոր զեղեցիկ մարմայն ուժաթափ ըլլալը և անշնչանալը տեսնելով, առաջին անդամ դիտեց որ Հայտէ աղջիկան մը իւր հայրը սիրելէն տարբեր կերպով զինքը կը սիրէր :

— Եւաղ, մըմռաց կոմսը խորունի վհատութեամբ մը, ուրեմն տակաւին պիտի կրնայի երջանիկ ըլլալ — :

Ետքը նուաղեալ Հայտէն իւր սենեկը տարաւ և սենեկապանուհիներուն յանձնեց զան, և ինքը իւր դահլիճը մըտնելով, այս անդամ շուտով զոցեց զայն, և պատուած կտակը վերսակին օրինակեց :

Ա երջացընելու մօտ Եր Երբ տան բակին մէջ կառքի մը  
ձայնը լսուեցաւ :

Մօնթէ-Քրիսթօ պատուհանին մօտեցաւ և Մաքսիմիլիէնը  
ու Էմմանուէլը տեսաւ :

— Ճիշդ ժամանակին լմցուցի — , ըստ Մօնթէ-Քրիսթօ  
և իւր կատկը երեք կնիքով կրգեց :

Այրկեան մը ետքը սրահին մէջ ոտքի ձայն լսելով՝ ինքը  
գնաց իւր դուռը բանալու :

Մորէլ դրան սեմոց վրայ երեցաւ :

Արոշուած ժամէն քսան վայրկենի շափ առաջ եկեր Եր :

— Գուցէ շատ կանուխ եկայ , պարոն կոմն , ըստ երի-  
տասարդը . սակայն համարձակ կը խոստովանիմ որ վայրկեան  
մը շիրցայ քնանսալ , ինծի պէտ բոլը տան մէջ զտնուողնե-  
րուն ալ նոյնը պատահեցաւ : Ինքզինքս զտնելու համար ձեր  
արիածիրա քաջութիւնը տեսնելու խիւտ պէտք ունէի — :

Մօնթէ-Քրիսթօ երիտասարդին իրեն յայտնած սիրոյն չի  
կրցաւ ինքզինքը զստէլ . և իւր շնորհակալութիւնը յայտնե-  
լու համար չէ թէ իւր ձեռքը երկնցուց անոր , այլ իւր եր-  
կու բաղուկները բացաւ :

— Մորէլ , ըստ յուղեալ ձայնիւ մը , սիրելի է ինձ այն  
օրը երբ տեսնեմ որ ձեզի պէտ անձէ մը սիրուած եմ , բարի  
եկաք , Պ . Էմմանուէլ : Աւրեմն ինծի հետ պիտի զաք , Մաք-  
սիմիլիէն :

— Զարմոնալի բան , ըստ երիտասարդ հարիւրապետը ,  
արդեօք տարակոյս ունէիք :

— Սակայն եթէ ես յանցաւոր ըլլայի . . . :

— Մտիկ ըրեք , կոմն , երէկ իրիկուան տեղի ունեցած  
այն տեսարանին մէջ զձեզ գիտեցի , և բոլը դիշերը ձեր  
արիութեանը վրայ մտածեցի , և ես ինքնին ըսի որ արդա-  
րութիւնը ձեր կողմն ըլլալ պէտք է , եթէ ոչ մարդոց գի-  
մաց վրայ երբէք դատողութիւն ընել պէտք չէ :

— Այսու ամենայնիւ , Մորէլ , Ալղէր ձեր բարեկամն է :

- Պարզ ծանօթութիւն մը ունիմ հետք, կոմս։  
 — Առաջին անգամ ձեր զիս տեսած օրը զան ալ տեսաք։  
 — Այու, ստոյդ է . բայց ինչ կ'ուղէք որ ընեմ, զան յիշելու համար պէտք է որ միտքս ձգեք։  
 — Ընորհակալ եմ, Մորէլ—։  
 Ետքը զանգակը անգամ մը հնչեցընելով՝  
 — Առ այս թուղթը, ըստ Ալիին որ իսկոյն ներս վազեք էր, և նոտարիս տար։ — Մորէլ, կտակս է այս, երբ մեռնիմ, դացեք անորմէ տեղեկութիւն ստանալու։  
 — Ի՞նչպէս, դոչեց Մորէլ, պիտի մեռնիք կ'ըսէք։  
 — Ե՛ս, ամեն բանի մէջ կանխատես ըլլալ պէտք է, սիրելիս։ Բայց երէկ ինձմէ բաժնուելնեղ ետե ինչ ըրիք։  
 — Թորթոնիի սրճանոցը դացի, ուր ինչպէս որ կը յուսայի՛ գոշանը և Ծաթօ-Ռընօն զտայ։ Ստոյդ կ'ըսեմ որ դանոնք կը փնտուի։  
 — Քանի որ ամեն բան որոշուած էր, ինչ պէտք ունեիր զանոնք փնտուելու։  
 — Ստուգիւ, կոմս, գործը ծանը և անխուսելի էր։  
 — Միթէ տարակոյս ունէիք։  
 — Ոչ, բայց եղած թշնամանքը հրատարակուած է, և ամն մարդ արդէն անոր խօսքը կ'ընէ։  
 — Ետքը։  
 — Կը յուսայի զէնքը փոխել, ու ատրանակին տեղը սուրը ընդունել տալ, ատրանակը կոյր է։  
 — Յաջողեցաք, հարցուց Մօնթէ-Քրիսթօ աշխուժիւ ակընկալութեան աննշմարելի լոյս մը ստանալով։  
 — Ոչ, վասն զի սրամարտութեան մէջ ձեր ոյժը կը ճանչնան։  
 — Եւ ովհ մտաներ է զիս։  
 — Չեզի հետ կռուող սրամարտութեան վարպետները։  
 — Եւ առաջարկութիւննիդ չընդունուեցան։  
 — Բացարձակ մերժեցին զայն։

— Մորէլ, ըսաւ կոմսը, երբէք ատրճանակ քաշէլս տեսած էք:

— Ամենեին:

— Գեր ժամանակ ունինք, տեսէք ուրեմն — :

Մօնթէ-Քրիսթօ վերստին ձեռքը առաւ այն ատրճանակը, որ Մէրսէտէսի ներս մտած ժամանակը բոներ էր, և երկաթ տախտակին վրայ խաղի խաչանիշ (սպաթիի) միաւոր մը փակցընելով չորս հարուածով հետզիտէ միաւորին չորս ճիւղերը ջնջեց:

Խրաքանչիւր հարուածին Մորէլի գոյնը կը նետէր:

Երիտասարդը Մօնթէ-Քրիսթոյի այս քաջութեան զործը կատարող զնտակները քննեց, և տեսաւ որ այծեամենը սպաննելու զնտակիկներու շափ էին անոնք:

— Կը տեսնե՞ս, Էմմանուէլ, ըսաւ, յիբաւի սոսկում կը պատճառէ ինձ — :

Ետքը դէպ 'ի Մօնթէ-Քրիսթօ դառնալով՝

— Կոմս, ըսաւ, յանուն Աստուծոյ, մի՛ սպաննէք Ալոկը. ողբանին մայր մը ունի:

— Ստոյդ է, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ, և ես չունիմ — :

Այս խօսքերը այնպիսի ձայնիւ արտասանեց, որմէ Մորէլ սարսուաց:

— Դուք էք թշնամանուողը, կոմս:

— Անտարակոյս, բայց ի՞նչ ըսել կ'ուղէք:

— Ըսել կ'ուղեմ թէ առաջ դուք պիտի քաշէք:

— Առաջ ես պիտի քաշեմ:

— Ո՛չ, այս, և ատոր համար ես սկնեցի և խօսքս ըրի:

— Երարմէ քանի՛ քայլ հեռու սիկտի կանդնինք:

— Քսան — :

Կոմսին շրթանց վրայ սոսկալի ժպիս մը երեցաւ:

— Մորէլ, ըսաւ, տեսածնիդ մի՛ մոռնաք:

— Ես ալ, ըսաւ երիտասարդը, ձեր զթասրտութենէն կը յուսամ որ Ալոկը աղատէք:

— Ես դժամ՝ ըսաւ Մօնթէ-Քրիսթօ:

— Եւ կամ ձեր ազնուասիրտ մեծանձնութենէն . ձեր հարուածին մէջ չվրիպելնիդ զիմնալիմ բան մը պիտի ըսեմ ձեզ, որ կընայ ձիճաղելի ըլլալ եթէ ուրիշ մը ըսեմ :

— Ի՞նչ բան :

— Անոր մէկ թեը խորտակեցէք, վերաւորեցէք զան, բայց մի՛ սպաննէք :

— Մորէլ, աղէկ մտիկ ըրէք, ըսաւ կոմոը, ո. աը Մորսէ բրֆին խնայելու համար աղաչելու պէտք չկայ, կանիւու կ'իմացընեմ ձեզ որ ո. աը Մորսէ բրֆին մնաս ըլլալու համար այնչափ հօդ պիտի առարտի որ գերակոմոը իւր երկու բարեկամաց հետ ողջամբ պիտի վերադառնայ, իսկ ես . . . :

— Ըսէք, դուք ի՞նչ պիտի ըլլաք :

— Ո՛չ, զիս պիտի վերցընեն ու այնովէս պիտի բերեն :

— Ի՞նչ կ'ըսէք, զուեց Մաքսիմիլիէն ինքն իրմէ դուք ելնելով :

— Ըսածիս պէս պիտի ըլլայ, սիրելիդ իմ Մորէլ, ո. աը Մորսէ բրֆ պիտի սպաննէ զիս — :

Մորէլ ապուշ մարդու պէս կոմոին երեսը նայեցաւ :

— Երէկ իրիկուանէ ՚ի վեր ի՞նչ պատահեցաւ ձեզ, կոմս :

— Ի՞նչ որ Ֆիլիփինի պատերազմին նախընթաց իրիկունը զրիւթիւսի պատահեցաւ . ուրուական մը տեսայ :

— Ուրուական մը :

— Այն ուրուականը ըսաւ ինձ, Մորէլ, թէ բաւական է որչափ որ ապրեցայ — :

Մաքսիմիլիէն և Էմմանուէլ իրարու երես նայեցան . Մօնթէ-Քրիսթօ իւր ժամացոյցը բացաւ :

— Երթանք, ըսաւ, ժամը եօթը հինգ վայրկեան անցածէ, և ժամադրութիւնը ժամը Շիշդ ութին եղած է — :

Պատրաստ կառք մը իրենց կ'ըսպասէր . Մօնթէ-Քրիսթօ իւր երկու վկաներուն հետ կառքը մտաւ :

Պատիթէն անցնելու առեն՝ դրան մը առջև կեցաւ ու ականջ դրաւ, և Մաքսիմիլիէն ու Էմմանուէլ, որոնք քաղա-

քավարութեան համար քանի մը քայլ յառաջ անցեր էին, ներսէն լսուած հեծկլուանաց կոմսին հառաջանքով մը պատասխանելու լսել կարծեցին :

Ժամը ճիշդ ութին ժամագրութեան վայրը հասեր էին :

— Եկանք, ըսաւ Մորէլ դլուխը զռնակէն դուրս հանելով, առաջ մենք հասանք :

— Ներեցէք, պարոն, ըսաւ Պաթիսթէն, որ անպատճելի սոսկումով մը իւր տիրոջ հետ եկեր էր. Հոն ծառերուն տակը կարծեմ թէ կառք մը կը տեսնեմ — :

Ամենէն առաջ Պօնթէ - Քրիսթօ թեթևաշարժութեամբ վար ցատկեց և ձեռքը կմմանուէլին ու Մաքսիմիլիէնին տուաւ որպէս զի կառքէն իշած ժամանակնին անոնց օդնէ :

Մաքսիմիլիէն կոմսին ձեռքը բռնեց և շթռղուց :

— Ա՛չ, սիրելի է ինձ այս ձեռքը որ այնպիսի ազնիւ սիրտ ունեցող մարդու մը կը վերաբերի :

— Իրօք երկու երիտասարդ կը տեսնեմ հօն, ըսաւ կմանուէլ, որոնք կը պտըտին, և կարծես թէ մարդու կ'ըսպասն « :

Պօնթէ - Քրիսթօ Մորէլը կեցուց բայց չէ թէ մէկ կողմ քաշելով այլ անոր քեռայրէն մէկ կամ երկու քայլ ետ մնալով :

— Մաքսիմիլիէն, ըսաւ, ձեր սիրտը աղամա է — :

Մորէլ զարմանքով Պօնթէ - Քրիսթոյի երեսը նայեցաւ : Ըրած հարցումն մտերմաբար չէ, սիրելիդդիմ Մաքսիմիլիէն, այլ պարզ հարցում մը կ'ընեմ. միայն կը խնդրեմ որ այս կամ ոչ պատասխան տաք ինձ :

— Ծաղկահաս աղջիկ մը կը սիրեմ, կոմս :

— Ըստ կը սիրէք :

— Խմ կեանքէս աւելի :

— Ահա այս յոյսս ալ 'ի գերե ելաւ — :

Ետքը հառաջանք մը հանելով

— Խելչ հայտէ, մբմուց կոմսը :

— Ատուգիւ, կոմս, զոչեց Մորէլ, եթէ զձեզ աղէկ ճանչ ցած ըսլայի, պիտի կարծէի թէ արիասիրու չեք:

— Քանզի այնպիսի անձի մը կը մտածեմ, որմէ պիտի բաժնուիմ և որուն համար կը հառաջեմ: Ի՞նչ կ'ըսէք, Մորէլ, միթէ ներելի՛ է զինուորականի մը որ աներկիւզ սիրուունցողը չճանչնայ: Ես իմ կենաց վրայ չեմ ցաւիր. ես որ քսան տարի կենաց և մաշուան մէ ջանցուցեր եմ, միթէ հնգս է ապրելը կամ մոռնելը: Ասկէ զատ, հոգ մի՛ ընէք, Մորէլ, եթէ տկարութիւն մը տեսաք իմ վրաս, այս ալ ձեզի համար եր միայն: Գիտեմ որ մարդս սրահ մ'է, ուրիշ վայելուչ և պատշաճ կերպով պէտք է որ գուրս ելնէ:

— Իրաւունք ունիք, բայց աղէկ միաբս եկաւ, ձեր զէնքը ըստերնիդ բերիք:

— Ի՞նչ ընելու համար. կը յուսամ որ այն պարունաբը իրենցը բերած են:

— Երթամը տեղեկանամ, ըսաւ Մորէլ:

— Այս, բայց միջամտութիւն պէտք չէ, կը լսէք:

— Ո՛չ, անհոգ եղիք — :

Մորէլ Պոշանին և Շաթօ-Ռընոյին մօտեցաւ, որոնք Մաքսիմիլիէնի յառաջանալը տեսնելով՝ իրենք ալ քանի մը քայլ յառ աջացան:

Երեք երիտասարդները եթէ ոչ սիրով զոնէ քաղաքավարութեամբ զիրար բարեցցին:

— Ներեցէք, պարոններ, ըսաւ Մորէլ, ու. ալ Մորսէր ֆը չեմ տեսներ ձեր մէջը:

— Այս առտու, պատասխանեց Շաթօ-Ռընօ, մեղ իմաց տուաւ թէ ժամադրութեան տեղին զմեզ պիտի դայ զանէ:

— Ա՛չ — , զոչեց Մորէլ:

Պոշան ժամացոյցը բացաւ:

— Ժամը ութը հինգ անցեր է, ըսաւ, կորսուած ժամանակ չկայ, ու. Մորէլ:

— Ո՛չ, ես այդ դիտաւորութեամբ չըսի, պատասխանեց Մաքսիմիլիէն:

— Աչա կառք մը կու զայ — , ընդմիջեց Շամօ-Ռընօ :  
Իրօք իրենց գտնուած տեղոյն քառառաջ անկիւնը վեր-  
ջացող մէկ ծառուղիէն կառք մը կը յառաջանար :

— Պարոնայք , ըսաւ Մորէլ , անտարակոյս ատրճանակներ  
բերիք հետերնիդ . ու . աը Մօնթէ-Քրիսթօն իրը դործածե-  
լու համար ունեցած իրաւունքը կը մերժէ :

— Կոմսին կողմէն այս աղնաւութիւնը դուշակեցինք , ու .  
Մորէլ , սկատախանեց Պոշան , և ես իմ ատրճանակներս  
բերիք , որոնք ութ կամ տասը օր առաջ դնած եմ կարծե-  
լով որ այսպիսի գործի մը պէտք պիտի ունենամ : Բոլորո-  
վին նոր են և դեռ մարդու ծառայած չեն : Առողքը տեսնել  
դանոնք :

— Ա՛յ , ու . Պոշան , ըսաւ Մորէլ խոնարհութիւն մը ը-  
նելով , երբ կ'ասպահովէք զիս թէ . ու . աը Մորսէրֆ ամսնե-  
ւին այն զէնքերը տեսած չէ , ձեր խօսքը բաւական է ինձի :

— Պարոնայք , ըսաւ Շամօ-Ռընօ , այն կառքին մէջ ե-  
ղողը Մորսէրֆը չէ , ոյլ Քրանդ և Տըպրէ — :

Եւ սառւդիւ երկու յիշեալ երիտասարդները իրենց մօ-  
տեցան :

— Դո՞ւք ալ հոս եկաք , պարոններ , ըսաւ Շամօ-Ռընօ  
իւրաքանչիւրին ձեռքը թոթվելով , և ինչ առթիւ եկած էք :

— Վասն զի , ըսաւ Տըպրէ , Ալպէր այս առտու աղաչեց  
զմիզ որ հոս գտնուինք — :

Պոշան և Շամօ-Ռընօ զարմանքով մը իրարու երես նա-  
յեցան :

— Պարոնայք , ըսաւ Մորէլ , կարծեմ թէ զործին ինչ  
ըլլալը հասկըցայ :

— Կ'նչպէս :

— Երեկ կէս օրէն ետև . ու . աը Մորսէրֆէն նամակ մը  
ընդունեցի , որուն մէջ կ'աղաչէք զիս որ Օքէրոյին դանուիմ :

— Ես ալ , ըսաւ Տըպրէ :

— Ես ալ , ըսաւ Քրանդ :

— Ես ալ, ըսին Շախօ-Ռընօ և Պոշան:

— Կ'ուզէր որ կոմսը մենամարտութեան հրաւիրելը տեսնէք, ըսաւ Մորէլ, և հիմա կ'ուզէ որ մենամարտութեան ներկայ դանուիք:

— Այս, ըսին երիտասարդները, այդպէս է, ու. Մաքսիմիլիէն, և հաւանականաբար Շիշտ գուշակութիւն ըրբք:

— Բայց Ալպէր ուր մեաց արդեօք, մըմոաց Շախօ-Ռընօ. տասը վայրկեան ուշացաւ:

— Ահա տեսէք, ըսաւ Պոշան. իւր ծառային հետ ձի հեծած արշաւանօք կու զայ:

— Ի՞նչ անխոչեմութիւն, ըսաւ Շախօ-Ռընօ, ատրահանակով կուռելու համար ձիով զայ. ամեննին խրատս մտիլ է ըրեր:

— Ասկէ զատ, ըսաւ Պոշան, տեսէք կապած փողկապը, հաղած բաց զգեստը և սպիտակ բանկոնը. ինչո՞ւ արդեօք իւր սրտին վրայ նշան մ'ալ չէ փակցուցեր, որով զօրծը աւլի շուտով կը լննար — :

Այս միջոցին՝ Ալպէր հինգ երիտասարդներէ բաղկացեալ խմբեակէն տասը քայլ հեռու հասնելով՝ ձին կեցուց, վար իշտ և անոր սանձը իւր ծառային նետելէն ետև անոնց մօտեցաւ:

Ալպէրի զոյնը նետած էր, աշերը կարմրած և ուռած:

Յայտնի կ'երևէր որ բոլոր դիշերը մանրերկորդ մը անդամ չքնացեր էր:

Իւր դիմոաց վրայ այնպիսի տխրալի ծանրութիւն մը տպաւորուած էր որ իրեն սովորական չէր:

— Ծնորհակալ եմ, պարոններ, ըսաւ, որ բարեհաճեցաք հրաւերիս վրայ հօս դալու. հաւատացէք ինձ որ ձեր բարեկամութեան այս նշանին համար յանչափս երախտապարտ եմ ձեզ — :

Մորսէրքին մօտեցած միջոցին Մորէլ տասը քայլ չափ ետ քաշուեր էր և անոնցմէ բաժնուած կը դանուէր:

— Եմ շնորհակալութիւններս ձեզի համար ալ են, պարոն Մորել, ըստ Ալպէր . ինչո՞ւ չէք մօտենար, շատ հեռու էք իեցեր :

— Պարոն, ըստ Մաքսիմիլիէն, զույցէ չէք գիտեր թէ ես ո՛յ, ար Մօնթէ-Քրիսթովին վկան եմ :

— Ատոյդ չէի գիտեր, բայց մտքէս անցաւ : Աւելի աղէկ, որչափ որատուառը մարդիկ դանուին հոս, այնչափ աւելի դոհ պիտի ըլլամ :

— Ո. Մորել, ըստ Շախո-Ռիբնօ, կրնաք իմացընել ո. Մօնթէ-Քրիսթոյ կոմսին որ ո. ար Մորուէրի եկած է և մնիք իրեն կ'ըսպասենք — :

Մորել շարժում մը ըրաւ այն յանձնարարութիւնը կատարելու :

“Նոյն միջոցին զոշան ալ կառքին մէջէն ատրահանակներուն արկղիլը գուրս կը հանէր :

— Կեցիք, պարոններ, ըստ Ալպէր, ո. Մօնթէ-Քրիսթոյ կոմսին երկու խօսք ունիմ ըսելու :

— Առանձին իրեն պիտի խօսիք, հարցուց Մորել :

— Ոչ, պարոն, ամենուն առջեւ — :

Ալպէրի վկաները զարմացմամբ իրարու երես նայեցան : Ֆրանլ և Տըսպէր ցած ձայնով իրարու քանի մը խօսք խօսեցան, և Մորել այս անակնունելի հրաւերին վրայ կոմսին քովը դնաց, որ Էմմանուէլի հետ կողմնական ծառուղիի մը մէջ կը պարստէին :

— Ի՞նչ կ'օւզէլ, հարցուց Մօնթէ-Քրիսթո :

— 2եմ գիտեր, բայց ձեզի հետ խօսիլ կ'ուղէ :

— Ո՛չ, նոր թշնամանք մը ընելով թող զՎատուած չփորձէ :

— 2եմ կարծեր որ այդպիսի գիտաւորութիւն մը ունենայ, ըստ Մորել :

Կոմսը Մաքսիմիլիէնին և Էմմանուէլի հետ Ալպէրի մօտեցաւ :

Իւր հանդարս գէմքը և գոյնը տարօրինակ ընդդիմադատեկեր մը կը ներկայէին Ալպէրի այլայլեալ գէմքին և գոյնին

Հետ ու որ չորս երիտասարդներուն հետ ինքն ալ կոմսին կը մօտենար :

Երբ իրարու երեք քայլ հեռու հասան, Ալպէր ու կոմսը կեցան :

— Պարոնայք, ըստ Ալպէր, ինձի մօտեցէք. կուղեմ ար Մօնթէ-Քրիսթոյ կոմսին ըսելու պատիւ ունեցած խօսքերս աղէկ լսէք, որանք թէու խիստ զարմանալի պիտի երկին ձեզ, սակայն աղաս էք, որու որ կ'ուզէք՝ կրնաք պատմել :

— Խօսեցէք, պարոն, ըստ կոմսը :

— Պարոն, ըստ Ալպէր՝ նախ դողդոջուն ձայնով բայց ստիւտ առ սակաւ քաջալի բուելով, պարոն, Խովիռոսի մէջ ող. ար Մորսէրֆի ունեցած ընթացքը հրատարակելնուդ համար զձեզ կը մեղադրէի. վասն զի ող. ար Մորսէրֆ կոմսը որչափ և յանցաւոր ըլլար, չէի կարծեր որ զան պատժելը ձեզ իյնար: Բայց այսօր, պարոն, զիտեմ որ գուք իրաւունք ունիք: Ալի-բաշային գէմ Ֆէրնոն Մոնտէկոյի ըրած մատնութիւնը չէ որ կը փութացընէ զիս ձեզմէ ներումն իընդրելու, այլ ձեզի գէմ Ֆէրնան ձկնարսին ըրած մատնութիւնը, և այն մատնութեան հետեւու անլուր գժրազգութիւններն են: Աւստի կ'ըսեմ և բարձրաձայն կը պոռամ. այս, պարոն, հօրմէս վրէժնիդ լուծելու իրաւունք ունիք, և ես անոր զաւակը շնորհակալ կ'ըլլամ ձեզ որ աւելի մեծ գժրազգութիւն մը շատաձառեցիք անոր — :

Այս անակնկալ տեսսարանին ներկայ դտնութիւնը մէջ եթէ կայծակ մը իյնար, Ալպէրի այս խօսքերէն աւելի պիտի շաղշեցընէր զանոնիք :

Իսկ Մօնթէ-Քրիսթո անսահման երախտադ խոռութեան ըլլդացմամբ կամաց կամաց իւր աշերը դէպ 'ի երկինք վերցուցեր էր, և չէր կրնար իւր զարմանքը զսպել թէ ինչպէս Ալպէրի եռանգաղին բնութիւնը, որուն աներկիւղութեան փորձը հռոմայեցի աւաղակներուն մէջ տեսնը էր, այս յանկարծական նուաստութեան առջե կը խօնարհէր:

Աւստի այս դործին մէջ Մէրսէտէսի ազգեցութիւնը ճանչցաւ , և հասկըցաւ թէ այն ազնիւ սիրտը ինչպէս չէր ընդդիմացեր իւր այն զոհողութեան , որուն անօղուտ ըլլալը կանխաւ զիտէր :

— Հիմա , պարոն , ըստ Ալպէր , եթէ այս խնդրած ներբութիւնս բաւական կը համարիք , կ'աղաշեմ որ ձեռքերնիդ տաք ինձ : Չսխալելու համար այն հաղուադիւտ արժանաւորութենէն ետքը , զոր դուք ունիք , ամեն արժանաւորութեանց առաջինը իմ կարծեօքս մարդուս իւր յանցանքը խոստովանիլ դիմանալն է : Բայց այս խոստովանութիւնը ինձ կը նկատէ միայն : Ես մարդոց բնութեան համեմատ կը վարուէի , բայց գուք նախախնամութեան կամաց համեմատ վարուեցաք : Հրեշտակ մը մեզմէ մէ կը մահուանէ պիտի ազատէր , այն հրեշտակը երկինքէն իջաւ , ու զմեզ եթէ ոչ երկու բարեկամներ , (ափսոս , բաղդը անկարելի կ'ընէ այս բանս) , գոնէ զիրար յարդուլ երկու անձեր ըրաւ : —

Մօնթէ-Քրիսթօ՝ աչերը թրջուած , չունչը հատած և բերանը կիսաբաց՝ իւր մէկ ձեռքը Ալպէրին երկնցուց . երիտասարդը այս ձեռքը այնպիսի զգացմամբ սեղմաց որ ակնածական սոսկումի կը նմանէր :

— Պարոններ , ըստ Ալպէր , Պ. Մօնթէ-Քրիսթօյ կոմմը կը բարեհանջի ներել ինձի : Չմասածելով և շտափելով յարձակում մը ըրի անոր վրայ : Ծտապելով դէշ խրատատու մ'է , ու ես անխոհչեմութեամբ վարուեցայ անոր հետ : Հիմա յանցանքս ներուած է , և կը յուսամ որ խղչիս ինձ հրամայածը ընելուս համար վատ պիտի չհամարուիմ : Սակայն որ և է պարագայի մէջ եթէ իմ վրայօքս սիսալ կարծիք ունենայ մէ կը , յաւելցուց երիտասարդը սէզութեամբ՝ թէ իւր բարեկամները և թէ թշնամիները յասպարելո կոչել ուզելով , պիտի ջանամ անոր կարծիքը ուղղելու :

— Բայց ինչ պատահեցաւ այս իրիկուն , հարցուց Պաշտօ-Ռընոյին . ինձ այնպէս կ'երեսի թէ տիրալի գեր մը կը խաղանք հսս :

— Երօք, պատասխանեց սեպուհը, Ալոերի ըրածը իմաստ  
դէշ կամ խիստ աղէկ զործ մ'է :

— Ո՛չ, ինչ կ'ըսէք, ըստ Տըսդրէ Ֆրանդին, Մօնթէ-  
Քրիսթոյ կոմսը Պ. տը Մորսէրֆը անպատճէ, և իւր որդւոյն  
աշաց իրաւացի երեխ : Իմ ընտանիքս Նանեայի ալէս տասը  
դէպքեր ունենար, պիտի ստիպուէի տասը անգամ կռուիլ — :

Խոկ Մօնթէ-Քրիսթօ գլուխը կախած, թե ըր անշարժ և  
քսան ու չըրս տարուան յիշատակաց տակ քնկչած՝ ոչ Ալ-  
պէրին կը մտածէր, ոչ Պոչանին, ոչ Շաթօ-Արքնոյին և ոչ  
Հոն զանուողներէն մէ կուն, այլ այն քաջասիրտ կնոշ, որ  
եկեր էր իւր որդւոյն կեանքը խնդրելու, (որուն տեղը կոմսը  
իրը նուիրեր էր), և զոր կինը ազատեր էր ընտանեկան այն-  
ովիսի սոսկալի զաղունիք մը խոստափանելով, որ կրնար այս  
երիտասարդին սրտին մէջ որդիսկան սիրոյ զդացումը բո-  
լորովին ջնջել :

— Միշտ նախախնամութիւն, մրմուց կոմնը, և այսօր  
ստոյդ իմացայ որ ես անոր կամաց դործադիրն եմ եղեր — :



## ԳԱԼՈՎԱՆ ՓԱՌ

## ՄԱՅՐԻ ՈՒ ՈՐԴԻՆ

Ութէ-Քրիստոց կոմսը տիրալի և սէգ  
 ժողովով մը հինգ երիտասարդները  
 բարեկց և Մաքսիմիլիէնի ու Էմմանու-  
 էլի հետ վերստին կառքը հեծաւ :  
 Ալզէր, Պոշան և Շաթօ-Ռընօ մենամարտութեան դաշտը  
 տուանձին մնացին :  
 Երիտասարդը երկու վկաներուն վրայ այնպիսի նայուածք  
 մը յարեց, որ առանց երկչուութիւն մը ցուցընելու՝ այն  
 եղածին վրայ զողցես անսնց կարծիքը կը հարցըներ :  
 — Եւրեցէք ինձ, սիրելի բարեկամ, որ ձեզ խորակից  
 ըլւամ, ըստ Պոշան թիստ դիւրազգած ըլւալուն և թէ  
 ամեննեին կեղծաւորութիւնը չսիրելուն իւր ընկերեն առաջ  
 բերանը բանալով, որ այնպիսի տհաճելի դործի մը այսպիսի  
 անյութալի վախճան մը կու տաք :  
 Ալզէր լուռ և իւր մոածութեանց մէջ կենդրոնացած մնաց:  
 Շաթօ-Ռընօ իւր դիւրակոր եղէզովը իւր կաշիկը ծեծե-  
 լով զոհ եղաւ :  
 — Զմեկնինք, ըստ վերջինը այս տաղտուկ լուսթենէն  
 ետեւ :  
 — Երբ որ կ'ուզէք, պատասխանեց Պոշան, միայն թէ թո-  
 զուցէք ինձ որ իմ մնծարանքս ո՛, տը Մորսէրֆին մատու-  
 ցանեմ. քանզի այսօր այնպիսի ասպետական և այնպիսի  
 հազուազիւտ մնծանձութեան ապացոյցը տուաւ . . . :

— ԱՇ, այս, ըստ Ծամթօ-Ռունօ :

— Մեծ բան է, շարունակեց պոշան, այսպէս իւր անձին վրայ իշխել կարենալը :

— Սաոյդ է, ըստ Ծամթօ-Ռունօ խիստ յայտնի պաղութեամբ մը . ես չեի կրնար այդպիսի բան մը ընել,

— Պարոնայք, ընդմիջեց Ալպէր, կարծեմ շշասկըցաք որ իմ ու ու. Մօնթէ-Քրիսթոյի մէջ խիստ ծանր անցք մը անցած է....

— Այս, այս, ըստ անմիջապէս պոշան, բայց մեր աղութշները ձեր գիւցադնական զործը պիտի չկարենան հանչնալ, և վաղ կամ անազան սլիմի պարտաւորիք այնպիսի աղդու խոսքերով բացատրել զայն, որ ձեր մարմեոյ առողջութեան և կենաց տեղութեան պիտի վնասէ : Կ'ուղէք բարեկամական խրատ մը տամ ձեզ, Կարոլի, լու Հե կամ Ա. Բէթրսպուրի դաշեք, որանք խաղաղիկ քաղաքներ են, և անոնց բնակիչները մնը Կարիգեան բորբոքեալ ուղեղներէն աւելի աղէկ կը հասկընան պատուայ զործերը : Այն քաղաքներուն մէջ զեշ չեք ըներ եթէ սրամարտութեան և ատրճանակ քաշելու կը թութիւններ ընէք . քանի մը տարիէն Գաղղիա վերադաշնամար մտքերնէզ հանեցէք և ձեր հանգստութեանը համար ակագեմիան կրթութեանց պարապեցէք : Այնուէս չէ, ու. ուր Ծամթօ-Ռունօ, ըստու ստոյդ չէ :

— Ես ալ այդ կարծիքէն եմ, ըստ այնուականը, ամենէն ծանր մնամարտութիւնը առանց հետեւութեան տեղի ունեցածն է :

— Ընորհակալ եմ, պարոններ, պատասխանեց Ալպէր պազժութունը մը . և ես ձեր խրամին պիտի հետեւիմ չէ թէ ինձ տալերնուգ՝ այլ Գաղղիայէն մեկնելու դիտաւորութեանն համամատ ըլլալուն համար : Ընորհակալ եմ միանգամայն իրեւ վկայ ձեր ինձ ըրած ծառայութեանը համար . զիսցեք որ սրաիս մէջ խօրունի քանդակուած է այն . վասն զի լսած խոսքերէս ետեւ կը տեսնեմ որ միայն անոր յիշատակը պիտի մեայ սրտիս մէջ — :

Շամթօ-Ռունօ և Պողան իրարու երես նոյեցան :

Այս խօսքերը երկարին վրայ ալ նոյն աղդեցութիւնը ըստեր էին, և Առըսէրֆի ձայնը այնպիսի հաստատամութիւն մը կը ցուցընէր, որ ամենքնին ալ գժուարին կացութեան մը մէջ պիտի կյային եթէ խօսակցութիւնին շարունակուէր:

— Մնաք բարեաւ, Ալպէր, ըստ յանկարծ Պողան իւր ձեռքը անտարբերութեամբ երիտասարդին երկնցընելով. սակայն Ալպէր իւր մտածութեանց մէջ ընկղմած կ'երևէր, և Պողանին երկնցուցած ձեռքին շպատասխանեց :

— Մնաք բարեաւ —, ըստ և Շամթօ-Ռունօ՝ փոքր զաւանը ձախ ձեռքը բռնելով, և աջովք բարեելով :

Ալպէրի շուրջերը հաղիւ թէ մրմնացին .

« Երթաք բարեաւ » :

Իւր նոյուածքը ամեն բան աւելի կը յայտնէր :

Զսպուած բարկութեան, մնծալիստ արհամարհութեան և աղնուասիրտ սրտմասութեան նկարաց իրը կը պարունակէր :

Երբ իւր երկու վկաները վերստին իրենց կառքը հեծան, Ալպէր քիչ մը ժամանակ ևս իւր անշարժ և մելամաղձոտ դիրքին մէջ մնաց :

Ետքը յանկարծ իւր ձին այն փոքր ծառէն քակելով, ուրուն իւր ծառան որախուցը կապեր էր, թեթեաշարժութեամբ անար թամբին վրայ ցատկեց և հարիղի ճամբան դարկաւ :

Սէկ քառորդէն Հէլուէր փողոցի տունը հասաւ :

Զիեն իջած ժամանակը՝ իրեն այնպէս երեցաւ թէ կոմսին պառկելու խուցին վարադոյրին ետին իւր հօրը տժզոյն դէմքը կը տեսնէ :

Ալպէր հառաջանքով իւր դէմքը միւս կողմը դարձուց և իւր սենեակը մտաւ :

Հոն վերջին ակնարկ մը շրջեց բոլոր այն հարստութեանցը վրայ, որոնք իւր մանկութենէն 'ի վեր իւր կեանքը քաղցր և երջանիկ ըրեր էին :

Անդամ մ'ալ այն նկարներուն նոյեցաւ, որոնց դէմքերը

դողցես կը ժպտէին իրեն, և որոնց գաշտանկարները ուայա-  
ծառ զոյներով քնական կ'երեւին :

Ետքը կաղնի շրջանակինմէջէն իւր մօրը պատկերը հանեց,   
դլորեց զայն և անոր սսկեզօծեալ շրջանակը գատարկ թողուց :

Այսուհետեւ կարդի դրաւ դեղլցիկ տաճկական դէնքերը,   
անդղիական վայելուչ հրացանները, ճարոնական յախճապա-  
կիները, քանդակուած բաժակները, արուեստաշէն պղինձները,   
որոնք Փէօլէրի կամ Ալարիի ստորադրութիւնները կը կրէին,   
իւր պահանոցները աչքէ անցուց և ամեն մէ կուն բանալին իւր  
տեղը դրաւ . ծոցը ունեցած բոլոր ստակը իւր դրագարանին  
մէկ զգացիկն մէջ պարպեց, և բաց թողուց զայն, և որուն մէջ  
դրաւ նաև իւր ակնաղարանները . ամեն բանին Ճիշդ ցուցակ  
մը շինեց, և սեղանի մը ամենէն աւելի երեցած կողմը դրաւ՝  
անոր վրայ կուտուած զրբերը և թղթերը վերցընելէն եաւ :

Այս աշխատութեան սկսած մրցոցին՝ ծառան, որուն թէ և  
Ալպէր հրամայած էր որ զինքը առանձին թողու, իւր սենեա-  
կը մտեր էր :

— Ի՞նչ կ'ուղես, հարցուց անոր Մորսէրֆ աւելի տիսեր  
քան թէ զայրացեալ ձայնիւ :

— Կերեցէք, պարոն, ըստ սենեկապահը, ստոյգ է որ  
արդիլեցիք զիս զձեղ անհանդիստ ընելէ, սակայն ո՛ւ, տը  
Մորսէրֆ կոմսը զիս կանչել տուաւ :

— Ի՞նչու չես երթար :

— Չեղմէ հրաման չտոած չուղեցի ո՛ւ . կոմսին քովն երթաւլ :

— Ի՞նչ պատճառաւ :

— Վասն զի Պ. կոմսը անտարակոյս դիմէ որ ես ձեզի  
շետ մնամարտութեան տեղը ընկերացած էի :

— Հաւանական է, ըստ Ալպէր :

— Եւ երբ զիս կանչել կու տայ, անտարակոյս մնամար-  
տութեան հետեւութիւնը ողիտի հարցընէ, ի՞նչ ողիտի պատաս-  
խանեմ:

— Տշմարասութիւնը :

— Արեմն պիտի ըսեմ որ մանամարտութիւնը տեղի չունեցաւ :

— Չու ո՞ր ո՞ւ տը Մօնթէ - Քրիսթոյ կոմսէն ներումն խընդրեցի . դնա՛ — :

Սպասաւորը խոնարհութիւն մը ընելով դուրս ելաւ :

Ալպէր իւր աշխատութեան դարձաւ , և ցուցակը վերջացընելու վրայ էր երբ իրենց տան քակին մէջ ձիերու ոտնաձայնը և բոլոր տունը դղրդող կառքի մը անիւներուն ձայնը իւր ուշադրութիւնը դրաւեցին :

Պատուհանին մօտեցաւ և իւր հօրը կառքը մտնելն ու մեկնիլը տեսաւ :

Հազիւ տան դուռը կառքին ետեկն դոցուեր էր երբ Ալպէր դեպ ՚ի իւր մօրը սենեակը վազեց , և իւր գալուստը իմացընող մէկը չգտնուելուն՝ մինչեւ անոր պառկելու խուցը մտաւ , և իւր ահսածներուն ու գուշակածներուն վրայ սիրուուռելով՝ դրան սենոց վրայ կեցաւ :

Երկու մարմնի մէկ հոգի եղածի ոկտօ' Ալպէրի իւր սենեկաց մէջ ըրած կարդադրութեանց նոյնը Մէրսէտէս ալ իւր սենեկաց մէջ կը դնէր :

Ամեն քան կարդի դրաւած էր . ասղնեգործ քանուածները , զարդերը , զոհարները , ճերմկեղէնները և ստակները պահանցնոցներու մէջ տեղաւորուեր էին , որոնց քանալիները կոմսուհին զգուշութեամբ կը ժղվէր :

Ալպէր բոլոր այս պատրաստութիւնները տեսնելով՝ անոր միտքը հասկըցաւ , և — Մայր իմ — պոռալով Մէրսէտէսի պարանոցը նետուեցաւ :

Եթէ պատկերահան մը Մէրսէտէսի և որդւոյն երկու գէմքերը նկարելով , անոնց այն միջոցին զդացածն ալ կազենար անոնց գիմաց վրայ նկարել , անտարակոյս խիստ զեղցիկ պատկեր մը պիտի չլինէր :

Ալպէր իւր պատրաստութիւնները ըրած միջոցին ամենեն չվախցեր էր , ընդ հակառակն իւր մօրը պատրաստութիւնները տեսնելով սոսկում մը զգացեր էր :

— Ե՞նչ կ'ընես, մայր իմ, հարցուց երիտասարդը:

— Դուն ի՞նչ կ'ընէիր քու սենեակդ, պատասխանեց Սէր՝  
ուէտէս:

— Ա՛յ, մայր իմ, զոչեց Ալպէր՝ խօսել շկարենալու չափ  
սիրտը փղձկելով, զուն ինծի ինչ կը նայիս . ոչ, իմ որո՞  
շածո գուն շես կրնար որոշած ըլլալ. վասն զի ես եկայ իմա-  
ցընելու որ կը բաժնուիմ այս տունէն և . . . քեղմ:

— Ես ալ մնկնելու պատրաստուեցայ, Ալպէր, պատասխա-  
նեց Սէրսէտէս, վատահ էի որ զաւակս ինձ պիտի ընկերա-  
նայ . սխալի՞ր եմ:

— Մայր իմ, ըստ Ալպէր հաստատամութեամբ, ինծի  
համար սահմանած ճակատազրիս զքեղ մասնակից ընել չեմ  
կրնար, այսուհետեւ պէտք է որ առանց անունի և առանց  
հարստութեան ապրիմ, և այս խիստ կեանքը սկսելու համար՝  
մինչև ապրուստս ճարելու կարող ըլլալ՝ իմ ուտելու հացս  
ուրիշէն փոխ պիտի ուղեմու նւստի, սիրելի մայր իմ, այս նը-  
պատակաւ ֆրանդին պիտի երթամ և ինձ պէտք եղածին չափ  
փոքր զումար մը պիտի խնդրեմ:

— Խեղձ զաւակս, զոչեց Սէրսէտէս, զուն թշուառու-  
թեամբ, ապրիս, և անօթութեան համբերես, ո՛չ, մի բոեր  
ինձ այդպիսի խօսք մը, որ իմ բոլոր որոշումներս չփոխես:

— Բայց իմ որոշումներս անփոփիս պիտի մեան, մայր իմ,  
պատասխանեց Ալպէր, ես դեռ երիտասարդ եմ և ուժեղ, զու-  
ցէ քաջասիրտ ալ եմ. երեկուանէ՝ ի վեր հասկըցայ որ  
մարդս եթէ կամք ընէ՝ ինչեր չըներ: Ա՛յ, մայր իմ, այն-  
չափ թշուառ կեանք անցընողներ կան, օրոնք ոչ միայն չի  
մեռան, այլ երկինքէն անոնց խոստացուած երջանկութեան  
կորսաեան և Աստուծոյ անոնց տուած ամեն ակնկալութեանց  
մնացորդներուն վրայ նոր երջանկութիւն մը կանգնեցին: Նոյն  
մարդերը տեսայ և իմացայ, մայր իմ, որ իրենց թշնամիէն  
անլունդին խորը ընկղմլէն ետև՝ այնպիսի զօրութեամբ և  
փառքավ անօր մէջէն ելան որ իրենց հին յաղթողը ընկաւ-

լով, զան իրենց տեղը դահավիճեցին։ Ա՛չ, մայր իմ, այս օրուանէ սկսեալ իմ անցեալս չեմ ընդունիր, և իմ անցեալս բան մը չեմ ուզեր, ոչ իսկ անունս։ վասն զի՞ կը հասկընաս, այնպէս չէ, մայր իմ, որ զաւակդ շկրնար այնպիսի մարդու մը անունը կրել, որ ուրիշի առջե ամօթով կը մնայ։

— Ալպէր, զաւակս, ըսաւ Մէրսէտէս, եթէ ես աւելի զօրաւոր սիրտ մը ունենայի, քեզի տալու խրատս այդ պիտի ըլլար։ իմ մարած ձայնս լոելու ատեն քու խիղջդ խօսեցաւ, ուստի խիղջիդ ականջ դիր, Ալպէր։ բարեկամներ ունէիր դուն, առժամանակեայ կերպով գաղրեցուր քու բարեկամութիւններդ, քայլ քու մօրդ անուանը համար մի՛ յուսահատիր։ Քու հասակիդ մէջ կեանքը քաղցր է տակաւին, սիրելիդ իմ Ալպէր, քանզի հազիւ քսան և մէկ տարեկան ես։ և որովհետեւ քեզի պէս անարատ սիրտ մը ունեցողը անրիծ անուն մը ունենալ պէտք է, իմ հօրս անունը կրէ, որ Հէրէբա կը կոչուի։ Զքել աղէկ կը ճանչնամ, Ալպէր։ կենաց որ ասսպարէ զին մէջ որ մանես, այս անունը քիչ ժամանակի մէջ երեելի պիտի ընես։ Եյն ատեն, սիրելիս, քու անցեալ թշուառութեանդ տեղ վերստին փառաւոր սկիտի հանդիսանաս աշխարհի մէջ, և եթէ բոլոր իմ զուշակութեանցս հակառակ այս ըսածս շըլլայ, դոնէ թող տուր որ յուսամ, ես որ ասկէ զատ մտածութիւն մը պիտի չունենամ, ուրիշ ասպարայ մը չունիմ, և ինձի համար իմ զերեղմանս այս տանը սեամէն կ'ըսկսի։

— Քու փափաքդ կատարէլու պիտի ջանամ, մայր իմ, ըսաւ երիտասարդը։ այս, քու յուսոյդ ես ալ մասնակից պիտի ըլլամ։ երկնից բարկութիւնը պիտի չհալածէ ալ զմեզ, դուն որ այդշափ անրիծ ես, և ես այսշափ անմեղ։ Քայլ քանի որ որոշումնիս ըրած ենք, շտապենք զործերնիս։ դրեթէ կէս ժամ կայ որ Պ։ տը Մորսէրֆ զուրս ելաւ, ինչպէս որ կը տեսնես՝ ձայներէ և բացատրութիւններէ աղատ ըլլալու համար առիթը յաջող է։

— Ես պատրաստ եմ, զաւակս ։ ըսաւ Մէրսէտէս ։

Ալպէր շուտով մինչեւ ծառողին զնաց և կառք մը բերաւ :  
Աէն-Բէր փողոցը կահուած փոքր բայց վայելու տուն մը  
կը յիշէր , ուր իւր մայրը կրնար բնակիլ :

Կոմսուհին առնելու եկող կառքը ու . տը Մորսէրֆի դրան  
առջել կեցած միջոցին երբ Ալպէր կառքէն կ'իջնէր , մարդ մը  
երիտասարդին մօտեցաւ և նամակ մը տուաւ անոր :

Ալպէր զործակատարը Ճանչցաւ :

— Կոմսէն է այս նամակը — , ըստ Պէրթուչիօ :

Ալպէր նամակը առաւ , բայց և կարդաց դայն :

Աերջացընելէն ետե՝ իւր նայուածքովը Պէրթուչիօն փըն-  
տոեց . սակայն Պէրթուչիօ երիտասարդին նամակը կարդալու  
ատենը աներեւյթ եղեր էր :

Այն ատեն Ալպէր աշերը արտասուօք լցուած և սիրտը զգա-  
ցած յուզմունքէն ուուած՝ Մէրսէտէսի քով զնաց , և առանց  
խուք մը խօսելու նամակը անոր ներկայացուց :

Մէրսէտէս կարդաց .

#### « Ալպէր :

« Իմացընելով ձեզ որ ձեր զաղոտնի խորհուրդը իմացած  
եմ , կարծեմ պէտք եմ իմացընել նաև որ ձեր սրտին փափ-  
կութիւնն ալ կը Ճանչնամ :

« Ազատ էք դուք հիմա , և կոմսին տունէն մեկնելով՝ զատ  
տուն մը պիտի քաշուիք ձեր մօրը հետ , որ ձեզի պէս ազատ  
է : Բայց մուածեցէք , Ալպէր , դուք որ խեղճ ազնիւ սիրտ  
մը ունիք , ձեր ընել կրցածէն աւելի պարտքեր ունիք ձեր  
մօրը համար :

« Մը ումը ձեզի համար պահեցէք , նեղութիւնները դուք  
կրեցէք , բայց խնայեցէք զան այն առաջին թշուառութենէն ,  
որ ձեր առաջին ջանքերուն մէջ անխուսափելի կերպիւ ձեր  
բաժինը պիտի ըլլայ . վասն զի այսօրուան զան հարուածող  
գժրաղդութեան ցոլացմանը անդամ արժանի չէ , և Նախա-  
ինամութիւնը չուղեր որ անմեղը յանցաւորին տեղը պատժուի :

«Գիտեմ» որ երկուքնիդ ալ Հէլլաէր փողոցի տունէն պիտի  
մեկնիք առանց անկէ բան մը առնելու . այս բանս ես ո՞րկից  
իմացայ , ամեննին մի հարցընէք , ձեր ընելիքը դիտեմ , այս-  
չափս բաւական է :

«Մտիկ ըրէք , Ալպէր :

«Քսան և չորս տարի առաջ մեծ ուրախութեամբ և զոհ  
սրտով հայրենիքս կը վերադառնայի :

«Նշանած մը ունէի ես , Ալպէր , նորատի ոուրբ աղջիկ  
մը , զոր չափազանց կը սիրէի , և անդադար տաժանելի աշխա-  
տութիւններով ձեռք բերած հարիւր յիսուն Լուի ոսկիներս  
օժիտ կը բերէի անոր :

«Այս գումարը անոր համար էր , և անոր համար սահմա-  
նած էի . բայց դիտնալով որ ծովը նենդաւոր է , մեր զան-  
ձը Մարսիլիոյ Աէլլան ծառուղիին վրայ հօրս բնակած տան  
փոքր պարտիզին մէջ թաղած էի :

«Չեր մայրը , Ալպէր , այն սիրելի ինդակ տունը աղէի  
կը ձանձնայ :

«Աերջին ժամանակներս Բարիդ դալու միջոցիս Մարսի-  
լիայէն անցայ :

«Այն ախրալի յիշատակներ ունեցող տունը տեսնելու դա-  
ցի , և իրիկունը բահ մը առնելով , պարտիզին անկիւնը փո-  
քցի , ուր զանձս թաղած էի :

«Երկաթեայ արկղիկը տակաւին նոյն տեղն էր . մարդ չէր  
դպած անոր :

«Պարտիզին այն անկիւնը կը դանուի , ուր իմ ծննդեանս  
օրը հօրմէս անկուած դեղեցիկ թղենի մը իւր ստուերովը  
կը ծածկէ :

«Այս ստակը , Ալպէր , որ ժամանակաւ իմ նշանածիս ապ-  
րուստին և հանդստութեանը պիտի ծառայէր , ահա այսօր  
զարմանալի և ցաւալի դիպուածով մը միենոյն դործածութեան  
պիտի ծառայէ :

«Ո՛չ , աղէի հասկըցէք իմ միտքս . ես որ կընայի միլիոն՝

ներ նուիրել այն թշուառ կնոջ, միայն այն սև հացին կտորը կը վերադաբճնեմ անոր, որ այն սիրած անձէս բաժնուած օրէս՝ ի վեր իմ խեղջ տանս մէջ մոցուած է :

« Ազնուասիրտ մէկն էք դուք, Ալպէր, բայց սակայն զուցէ հպարտութիւնէ կամ ոխակալութենէ կուրացած ըլլաք :

« Եթէ իմ բարեկամութիւնս մերժէք, և եթէ ուրիշչէ մը խնդրէք ինչ որ ես իրաւունք ունիմ ձեզ նուիրելու, պիտի ըսեմ թէ դուք կը մերժէք ձեր մօրը կեանքը, որ այնպիսի անձէ մը շնորհուած է, որուն հայրը ձեր հօրը պատճառաւ անօթութեան և յուսահատութեան տառապանաց մէջ մեռաւ » :

Դամակին ընթերցումը վերջանալէն ետե՛ Ալպէր զունաւեալ և անշարժ կ'ըսպասէր որ իւր մօրը որոշումը տեսնէ :

Մէրսէտէս իւր նայուածքը անպատում զգացմամբ զէպ ՚ի երկինք վերցուց :


Կ'ընդունիմ, ըստ : վանք մը մտնելու համար հետո տանելու օժիտս վճարելու իրաւունքը ունի — :

Եւ ձեռքը սրտին վրայ դնելով՝ իւր զաւկին թեր մտաւ և զուցէ իւր յուսացածէն աւելի համարձակ քալուածքով զէպ ՚ի սանդուխը յառաջացաւ :



Պ Ա Ա Խ Ի Բ Ժ Գ :

ԸՆՉՆԵՑՊԵՆՔ

  
**Յ** օնթէ-ՔՐԻՍՏՈ. Էմմանուէլի և Մաքսիմի-  
 լիէնի հետ միւսներուն պէս քաղաքը  
 վերադարձեր էր, բայց աւելի զուարթ  
 կ'երեւէր :

Կոռուոյն տեղ խաղաղութեան յաջորդելը տեսնելով՝ Էմմա-  
 նուէլ իւր ուրախութիւնը և իւր մարդասիրական զդայումները  
 բացարձակ կը յայտնէր :

Մորէլ կառքին մէկ անկիւնը կոթընած կը թօղուր որ իւր  
 քեռայրին զուարթութիւնը խօսքերով շողիանայ և իւր սըր-  
 տին մէջ կատարեալ անկեղծ ուրախութիւն մը կ'ըշտար, որ  
 իւր աչաց մէջ մփայն կը փայլէր :

Թարոն կոչուած Բարիզի գրան առջին ուէրթուչիոյին հանգի-  
 պեցան :

Իւր պաշտօնին մէջ եղող պահանորդի մը պէս զործակա-  
 տարը կեցեր էր հան :

Մօնթէ-Քրիսթօ զլուխը դռնակէն դուրս հանեց, ցած-  
 ձայնով անոր հետ քանի մը խօսք ըրաւ, և զործակատարը ա-  
 ներեցոյթ եղաւ :

— Պ. կոմս, ըստ Էմմանուէլ երբ կառքը Յօյալ հրա-  
 պարակին մօտերը հասաւ, կը խնդրեմ որ զիս գրանս առջե-  
 դուրս հանէք, որպէս զի կինս թէ ձեզի և թէ ինձ համար  
 անհանդիստ չըլլոյ :

— Եթե յաղթութիւնը ցուցընելու համար զալը ծաղրելի չհամարուելը, կը հրաւիրէի պարոն կոմսը որ մեր տունը իջնէ, սակայն անտարակոյս ո՛. կոմսն ալ իրեն համար գողացող սրտեր հանդարտելու պէտք ունի: Ահա հասանք, եմ մանուէլ, ողջունենք մեր բարեկամը և թողունք զան որ իւր ձամբան շարունակէ:

— Վայրիեան մը սպասեցէք, ըստ Մօնթէ-Քրիսթօ, մէկ հարուածով այսպէս երկու բարեկամներէս մի զրիէք զիս: Եմանուէլ, դուք ձեր սիրելի կնոջը քով դացէք, և կը իրն դրեմ որ իմ յարդանքս անոր մատուցանէք, իսկ դուք, Մորէլ, մինչեւ Շանդ-Էլիզէ հետո եկէք:

— Ըստ աղէլ, ըստ Մաքսիմիլիէն, մանաւանդ որ ձեր թաղին մէ չ զործ մը ունիմ, կոմս:

— Կախաճաշի պիտի սպասենք քեզ, հարցուց էմմանուէլ:

— Ա'չ —, ըստ երիտասարդը:

Կտորին դռնակը դոցուեցաւ, և կառքը իւր ձամբան շարունակեց:

— Կը տեսնէք որչափ բաղդաւոր ըրի զձեզ, ըստ Մորէլ:

— Այս, ըստ Մօնթէ-Քրիսթօ, և ես այս պատճառաւ աւզեցի որ միշտ քովս ըլլափ:

— Ստուդիւ հրաշք մ'է, շարունակեց Մորէլ իւր բուն մտածութեան պատասխանելով:

— Ի՞նչ բանը, ըստ Մօնթէ-Քրիսթօ:

— Տեղի ունեցածը:

— Այս, պատասխանեց կոմսը ժպտելով, Ճիշդ բառը խօսեցաք, Մորէլ, սառեղիւ հրաշք մ'է:

— Վասն զի վերջապէս Ալպէր քաջասիրտ երիտասարդ մ'է, կրկնեց Մորէլ:

— Այս, խիստ քաջասիրտ է, ըստ Մօնթէ-Քրիսթօ. դիսուն վրայ դաշոյն մը կախուած պառկելը տեսած եմ:

— Ես ալ զիտեմ որ երկու անդամ կոռւեցաւ, և խիստ աղէլ կռուեցաւ, հիմա այս առտուան ընթացքը ըսածիս հետքաղատեցէք:

— Անշուշտ ձեր աղջեցութիւնն էք, կրկնեց Մօնթէ - Քրիստօ ժպտելով:

— Երջանիկ է Ալպէք որ զինուորական չէ, ըսաւ Մորէլ:

— Ինչու համար:

— Միթէ մենամարտութեան ասպարեզին մէջ ներումն կը խնդրուի, ըսաւ երիտասարդ հարիւրակետը դլուխը շարժելով:

— Միթէ դուք ալ հասարակ մարդոց նախագաշարմանց մէջ չէք կրնար իշնալ, Մորէլ, ըսաւ կոմը քաղցրութեամբ:

— Միթէ չէք կրնար համոզուած ըլլալ որ Ալպէք քաջառիրտ ըլլալով վատասոիրտ չկրնար ըլլալ, և թէ այս ընթացքը բռնելուն համար պէտք է որ պատճառ մը ունենայ, և այս ըրածը աւելի դիւցազնական էք քան թէ ուրիշ բան:

— Անտարակոյս, անտարակոյս, պատասխանեց Մորէլ. բայց ես ալ Սովանիացիին պէս կ'ըսեմ. — Երէկ քաջ էք, բայց այսօր վատ է:

— Ինծի հետ պիտի ճաշէք, այնպէս չէ, Մորէլ, ըսաւ կոմը խօսակցութիւնը ընդհատելու համար:

— Աչ, ժամը տասին ձեզմէ պիտի բաժնուիմ:

— Ուրեմն նախաճաշի համար է ձեր ժամադրութիւնը — :

Մորէլ ժպտեցաւ և դլուխը շարժեց:

— Սակայն անշուշտ տեղ մը պիտի ճաշէք:

— Բայց եթէ անօթի չեմ, ըսաւ երիտասարդը:

— Աչ, երկու զգացում կը ճանչնամ, ըսաւ կոմը, որոնք ախորժակը կը կտրեն, և որոնց մէկն է վիշտը (բարերադաբար զձեղ խիստ ուրախ կը տեսնեմ, անշուշտ այս չէ), և միւրը՝ սէրը: Չեք սրտին համար ըսածնիդ յիշելով, ներելի է ինձ կարծել որ . . . :

— Առոյդ է, կոմ, կրկնեց Մորէլ զուարթութեամբ, չէ չեմ ըսեր:

— Ես ինձ չէք պատմեմ ձեր սէրը, Մաքսիմիլիեն, կրկնեց կոմը այնպիսի եռանդուն ձայնով մը, որուն մէջ այս դադունիքը իմանալու փափաքը կը յայտնէր:

Այս առառու ցուցուցի ձեզ թէ սիրո մը ունիմ, այն պէս չէ, կոմա — :

Մօնթէ-Քրիսթո ՚ի պատառանի իւր ձեռքը երիտասարդին երկնցուց :

— Այս սէրը ԱՀնաէնի անտառին մէջն ձեզմէ բաժնուել լով ուրիշ տեղ կը դանուի, և ես զայն դանելու կ'երթամ :

— Գացէք, ըստ կամաց մը կոմսը, գացէք, բարեկամ, բայց կ'աղաքմ՝ եթէ ձեր առջել գժուարութիւն մը ելնէ, մի մառնաք որ այս աշխարհիս մէջ կարողութիւն մը ունիմ, և երջանիկ կը համարիմ ինքզինքս եթէ այն կարողութիւնս ինծի սիրելի եղող անձերուն օդտին համար զործածեմ, կը սիրեմ զձեզ, Մորէլ . . . :

— Աղէկ, ըստ երխտասարդը, պիտի յիշեմ զձեզ այն ինքնասէր զաւակաց պէս, որոնք պէտք ունեցած ժամանակնին իրենց ծնողքը կը յիշեն: Երբ ձեզ պէտք ունենամ, և այս առիթը անշուշտ պիտի պատահի, ձեզ կը դիմեմ, կոմա :

— Ծատ աղէկ, ձեր խօսքը կ'ընդունիմ, Երթաք բարեաւ ուրեմն :

— Նորէն տեսնուինք — :

Կառք Շանզ-Ելիզէի տան դրան առջին հասեր էր:

Մօնթէ-Քրիսթո դռնակը բացաւ :

Մորէլ քարայտակին վրայ ցատկեց, ոլերթուչիո դրան սանդուխին վրայ կ'ըստասէր:

Մորէլ Մարինեիի Շամբէն աներեսյթ եղաւ և Մօնթէ-Քրիսթո շուտով պէրթուչիոյի մօտեցաւ :

— Ի՞նչ լուր, հարցուց անոր :

— Կոմսուհին իւր տունէն պիտի մեկնի :

— Իւր որդւոյն հետ :

— Անոր Ֆլօրանթէն սենեկապանը կը կարծ որ ան աւ նոյնը պիտի ընէ :

— Եկու — :

Մօնթէ-Քրիսթո Պէրթուչիոն իւր սենեակը տարաւ և քիւ

մը առաջ կարդացած նամակնիս դրեց և դորձակատարին յանձնեց զայն :

— Գնաւ, ըսաւ, և շուտ ըրէ . աղջկ միտքս եկաւ, Հայտէին իմացընել տուր որ ես եկած եմ :

— Աչա հոս եմ — , ըսաւ նորատի աղջիկը , որ կառքին ձայնը առնելով արդէն վար իջեր էր , և որուն դէմքը ուրախութենէն կը փայլէր կոմսը ողջ առողջ տեսնելուն համար :

Պէրթուչիօ դուրս ելաւ :

Հայտէ այնչափ անհամբերութեամբ սպասած այն վերադարձին առաջին վայրկեաններուն մէջ այն ամեն սրտի յուղունքները զգաց . որոնք աղջիկ մը իւր սիրելի հայրը և սիրուհի մը իւր սիրահարը վերստին տեսած ժամանակ կ'ըզգայ :

Մօնթէ - Քրիսթոյի ուրախութիւնն ալ նորատի աղջկան ուրախութենէն նուազ չէր , թէ և անոր չափ չէր յայտներ . երկար ժամանակ նեղութիւններ կրող սրտերուն համար ուրախութիւնը արեէն չորցած երկրի վրայ իջնող ցողին կը նըմանի . սիրտը և երկիրը իրենց վրայ իջած այս ցողի կաթիւները կը ծծեն , և դուրսէն բան մը չերեկիր :

Քանի մը օրէ ՚ի վեր Մօնթէ - Քրիսթօ բան մը դիտեր էր , որուն բաւական ժամանակէ ՚ի վեր չէր համարձակեր հաւատալու . դիտեր էր որ աշխարհի մէջ երկու ԱԷրսէտէս կար , և ինքը կրնար տակաւին երջանիկ ըլլալ :

Կոմսին սիրավառ նայուածքը Հայտէի խոնաւացեալ տչաց մէջ անյագութեամբ գոզցես ընկղմած էր , երբ յանկարծ դուռը բացուեցաւ :

Կոմսը իւր յօնքը կնշոեց :

— Պ . աը Մօրսէրֆը եկաւ — , ըսաւ Պաթիսթէն՝ կարծելով թէ այս խօսքին մէջ իւր ներում խնդրելը պարունակուած էր :

— ԱՌԸ , հարցուց կոմսը , դերակոմնը թէ կոմսը :

— Կոմսը :

— Ով Աստուած իմ, դոչեց Հայտէ, տակաւին չլմնցա՞ :

— Լմնցած ըլլալը չեմ զիտեր, սիրելի զաւակս, ըստ Մօնթէ-Քրիսթօ նորատի աղջկան ձեռքը բռնելով, բայց դիտցածս սա է որ դուն վախնալու տեղ չունիս :

— Այսու ամենայնիւ եկողը այն թշուառականն է որ . . . :

— Այս մարգը բան մը չկրնար ընել ինձ, Հայտէ, ըստ Մօնթէ-Քրիսթօ. իւր որդւոյն հետ ունեցած դործիս ժամանակ պէտք էր վախնալ :

— Եւ այն միջոցին զգացած նեղութեանս վրայ ամեննին զաղափար մը պիտի չկրնաս ունենալ, տէր իմ — :

Մօնթէ-Քրիսթօ ժպտեցաւ :

— Հօրս զերեղմանին վրայ կ'երդնում, ըստ Մօնթէ-Քրիսթօ իւր ձեռքը նորատի աղջկան զլիսուն վրայ երկնցը-նելով, որ եթէ դժբաղդութիւն մը պատահի, ինձի պիտի չպատահի :

— Կըհաւատամ խօսքիդ, տէր իմ —, ըստ նորատի աղջկը իւր Ճակատը կոմսին ներկայացընելով :

Այն անարատ և զեղեցիկ Ճակատին վրայ Մօնթէ-Քրիսթօ համբոյր մը զետեղեց. մի և նոյն ժամանակը երկու սրտեր բարբախեցին՝ մէկը ուժդ դին և միւսը զաղոնի :

— Ով Աստուած իմ, մրմռաց կոմսը, միթէ ներելի՞ է ինձ որ տակաւին սիրեմ . . . Պաթիսթէն, Պ. տը Մորսէր կոմսը սրահը մացուր —, ըստ կոմսը զեղանի Յոյն աղջիկը դէս ՚ի զաղոնի սանդուխ մը տանելով :

Քանի մը խօսք աւելցընենք այս այցելութենէն առաջ, որուն զուցէ Մօնթէ-Քրիսթօ կը ըսպասէր, բայց անտարակոյս մը ընթերցողները չեին սպասեր :

Ինչպէս ըսինք՝ երբ Մէրսէտէս իւր սենեակներուն մէջ ամեն բանի ցուցակը կը չինէր, որուն նմանը Ալպէր ալ իւր սենեակներուն մէջ չիներ էր, երբ կոմսուհին իւր զոհարեղենները կարդի կը գնէր, պահանցները կը դոցէր, և բանալիները կը միացընէր, ամեննին չէր դիտած որ տժդոյն

և աղէտալի գլուխ մը նրբաղաւթին ըսյո տուող ասրակեպատ դրան առջին երսցեր էր, ուրիից սենեկին մէջ կը տեսնուէր և եղած խօսակցութիւնը կը լսուէր։ Հաւանականաբար առանց տեսնուելու և առանց իւր ձայնը լսուելու այն դրան սպակիէն նայողը տիկին տը Մորսէրփի սենեկին մէջ ամեն բան տեսներ և լսեր էր։

Այն առջոյն գէմքով մարդը ապակեպատ դրան առջեւէն տը Մորսէրփ կոմսին սենեակը զնաց, և բակին վրայ նայող պատուհանի մը վարագոյրը կարկամեալ ձեռքով մը վերցուց. տասը վայրկեան անշարժ, անձայն և իւր սրտին բարսիման ականջ դնելով հոն կեցաւ, իրեն համար տասը վայրկեանը խիստ երկար ժամեր երեցան։

Այն միջոցին Ալպէր իւր մենամարտութեան ժամադրութենէն գառնալով վարագոյրի մը ետին պահուած իւր հայրը տեսաւ և գլուխը դարձուց։

Կմամին սիրտը ընդարձակուեցաւ, զիտէր որ Ալպէրէն Մօնթէ-Քրիսթոյին եղած թշնամանքը սոսկալի էր, և այնպիսի թշնամանաց հետեւութիւնը աշխարհիս ամեն կողմը ցմահ մենամարտութիւն մ'էր։

Քանի որ Ալպէր այն մենամարտութենէն ողջամբ կը դառնար, ուրեմն կոմսը իւր վրէժը լուծած էր։

Սնկատում ուրախութեան փայլակ մը այն աղէտալի գէմքը լուսաւորեց՝ արեւուն վերջին ճառագայթին պէս, որ ամդերուն մէջ կորսուելէն առաջ կը փայլի։

Բայց ինչպէս ըսինք՝ պարապ տեղը սպասեց որ երիտասարդը իւր յաղթութեան պատմութիւնը ընելու համար իւր սենեակը զայ։

Իւր հօրը պատուոյն վրէժը լուծելու համար Ալպէրին կը ուելու երթալէն առաջ իւր հայրը տեսնել չուզէլուն պատճառը կրնայ իմացուիլ. բայց այն վրէժը լուծելէն ետե ինը արդեօք այն զաւակը չէր դար իւր հօրը բազկացը մէջ նետուելու։

Այն ատեն՝ կոմսը Ալպէրին դալը անսնելով անոր ծառ ու ան կանչել տուաւ :

Ինչպէս զիտենք՝ Ալպէր հրամայեր էր անոր որ կոմսէն բան մը չպահէ :

Տասը վայրկեան ետքը՝ տը Մորսէրֆ զօրապետը ուե վերաբկու, զինուորական փողկապ, ուե սոնազդեստ և ուե ձեռնոցյներ հագած՝ դրան սանդուխին վրայ երեցաւ :

Ա'երեի թէ առաջէն հրամաններ տուած էր. քանդի հազիւ թէ սանդուխին վերջին ստքը իջաւ, երբ իւր Ծուած կառքը կառակայանէն ելնելով իւր առջին եկաւ կեցաւ :

Այն ատեն կոմսին սենեկապանը կառքին մէջ զինուորական կրկնոց մը դրաւ, որ մէջը ամփոփուած երկու սուրերուն պատճառաւ աղղողորդ դիրք մը ունէր. ետքը դռնակը զոցելով կառավարին քովը նստաւ :

Կառավարը երժալու անդը հարցուց :

— Ըանդ-Էլիզէ, ըստ զօրապետը, Մօնթէ-Քրիսթոյ կոմսին առւնը, շուտ — :

Զիերը մարակին հարուածէն թեւառորեցան. Հինդ վայրէկինի մէջ կոմսին տան առջև հասան :

Պ. տը Մորսէրֆ իւր ձեռօքը դռնակը բացաւ, և կառքը գեր բոլորովին չկեցած՝ երիտասարդի մը պէս կողմնակի ծառուղոյն մէջ ցատկեց, զանդակը հնչեցուց, և իւր ծառային հետ բաց դրան մէջ աներեւոյթ եղաւ :

Մանրերկորդ մը երքը՝ Պաթիսթէն տը Մորսէրֆ կոմսին դալուստը Մօնթէ-Քրիսթոյին կ'իմացընէր, և Մօնթէ-Քրիսթօ Հայտէն անոր սենեակը տանելով հրաման ըրաւ որ տը Մորսէրֆ կոմսը սրահը մոոցընեն :

Զօրապետը երբորդ անդամն էր որ սրահին երկայնքը կը չափէր, երբ զլուխը դարձուցած ժամանակը Մօնթէ-Քրիսթօն դրան սեմոց վրայ կանգնած տեսաւ :

— Պ. տը Մորսէրֆն է եղեր, ըստ Մօնթէ-Քրիսթօ սրտի հանդարտութեամբ մը. կը կարծէի թէ աղէկ չկրցան հասկըցնել ինձ :

— Այս, ես եմ, ըստ կոմսը շուրթերու այնպիսի սոսակալի կարկամութեամբ մը, որ իւր խօսքերը մաքուր աբտասանելու արգելվէ կ'ըլւաը:

— Աւրեմն կը փափաքիմ դիտնալ թէ այսպէս կանուխ տը Մորոէրֆ կոմսը իմ տաւնս տեսնելու ուրախութիւնը ներկայացընող պատճառը ի՞նչ է:

— Այս առառու որդւոյս հետ ժամադրութիւն մը ունէիք, պարոն, ըստ զօրապետը:

— Գիտէք այդ բանը, պատասխանեց կոմսը:

— Գիտեմ նաև որ տղաս աղէկ պատճառներ ունէր ձեզի հետ կոռուիլ ուղելու և զնեզ սպաննելու համար ամեն կը ցածը ընելու:

— Եւ ստուգիւ պարոն, իւր ունեցած պատճառները խիստ իրաւացի էին. բայց կը տեսնէք որ այն պատճառներուն հակառակ՝ չսպաննեց զիս և ոչ իսկ հետո կոռուեցաւ:

— Այսու ամենայնիւ իւր հօրը անպատճութեան և իմ ընտանեաց կօրստեան պատճառը զնեզ կը նկատէր:

— Ստոյդ է, պարոն, ըստ Մօնթէ-Քրիսթօ իւր սոսկառիթ հանդարատութեամբը, երկրորդական պատճառը կը նըկատէր և ոչ սկզբնական:

— Անտարակոյս ներում մը խնդրեցիք կամ բացատրութիւն մը տուիք:

— Ես ամենեին բացատրութիւն չտուի, ընդ հակառակն անինձմէ ներում խնդրեց:

— Բայց այս ընթացքը ի՞նչ բանի կու տաք:

— Իւր համոզմանը. հաւանականաբար այն դործին մէջ ինձմէ աւելի յանցաւոր մէկը կար:

— Եւ ով է այդ մարդը:

— Իւր հայրը:

— Թող այնպէս ըլւայ, ըստ կոմսը գունատելով, բայց դիտէք որ յանցաւորը չուղեր որ իւր յանցանքը ձանցուած ըլլալը իմանայ:

— Գիտեմ . . . : Եւ ես այս տեղի ունեցածին կ'ըսպասէի :  
 — Կ'ըսպասէիք որ տղաւ վատ մը ըլլար, զուց կոմուը :  
 — Պ. Ալպէր տը Մորսէրֆ ամենեին վատ չէ, ըստ Մօնթէ - Քրիսթօ :

— Մարդ մը որ ձեռքը սուր կը կրէ, մարդ մը որ իւր սուրին տակը մահացու թշնամի մը ունի, այն մարդը երբ չկոռւիր՝ վատ է, հոս ըլլար՝ իրեն երեսին ըսէի :

— Պարոն, պատասխանեց Մօնթէ - Քրիսթօ պաղութեամբ չեմ կարծեր որ ձեր ընտանեկան պատմութիւնները ինձ ընելու համար հոս եկած ըլլար : Գացէք ատոնք Ալպէրին պատմեցէք, զուցէ ան ձեզ պատասխան տայ :

— Ո՛չ, ոչ, ոչ, կրկնեց զօրապետը վաղանցուկ ժպիտով մը, իրաւունք ունիք, ես այս բանիս համար եկած չեմ, այլ եկայ ձեզ ըսելու թէ ես ալ զձեզ իմ թշնամիս կը նկատեմ, եկայ ձեզ ըսելու թէ բնազդմամբ կ'ատեմ զձեզ, թէ զձեզ միշտ ձանցած և միշտ ատած եմ : Եւ վերջապէօ քանի որ այս գարուս երիտասարդները ալ չեն կոռւիր, մեզ կ'իշնայ կոռւիլու . . . : Ի՞նչ կ'ըսէք, պարոն :

— Բոլորովին համամիտ եմ, երբ ըսի ձեզ թէ պատաշելիքը զուշակած էի, ձեր այցելութեան ինչ նպատակաւ պատիւ ունենալս կ'ուզէի իմացընել :

— Աւելի աղէկ . . . ուրեմն ձեր պատրաստութիւնները աեսած էք :

— Միշտ պատրաստ եմ, պարոն :

— Գիտէք որ մինչեւ մեզմէ մէկը սպաննուիլը պիտի կըռուինք, ըստ զօրապետը կատաղութենէն ակռաները սեղմելով :

— Այսուհետեւ մեզմէ մէկուն մոռնիլը պիտի կոռւինք, կըրկնեց Մօնթէ - Քրիսթօ զլսովը վերէն վար թեթև շարժում մը ընելով :

— Քալեցէք երթանք ուրեմն, վկանեցու պէտք չունինք :

— Երօք վկաները օգուտ մը չունին, ըստ Մօնթէ - Քրիսթօ, քանի որ մենք զիրար աղէկ կը ձանցանք :

— Ըստ հակառակն, ըստ կոմոք, զիրար չնանշնալու տհամար վկայի պէտք չունինք:

— Ե՞նչ կ'ըսէք, ըստ Մօնթէ-Քրիսթօ նոյն յուսահամեցոցին հանդարտութեամբ: Միթէ դուք չեք այն ֆէրնան զինուորը, որ Ուսմէրլոյի պատերազմին առջի իրիկունը փախաւ, գուք չեք այն ֆէրնան աեղակալը, որ Սպանիոյ մէջ Գաղղիական բանակին իբր առաջնորդ և լրտես ծառայեց: Դուք չեք այն հարիւրապետ ֆէրնանը, որ իւր բարեբարը Ալի-բաշան մատնեց, ծախեց և սպաննեց: Եւ այս ամեն ֆէրնանները մէկ ըլլալով՝ տը Մորսէրլի կոմս զօրապետի տեղակալ և Գաղղիոյ առենակալ չեղան:

— Ո՛չ, զուց զօրապետը՝ հրաշեկ երկաթէ զարնուածի պէս կոմսին խօսքերէն վիրաւորուելով, ովք թշուառ որ իմ յանցանքներս երեսիս կը զարնես այսպիսի միջոցին որ զուցեղիս պիտի սպաննես, ո՛չ, ամենեին անձանօթ չեմ քեզ, ովք սատանայ. ովք ես զուց որ անցեալիս մթութեանց մէջ կը թափանցես, և չեմ զիտեր որ ջահին լուսովը կենացս պատմութեան ամեն երեսները կը կարդաս. սակայն իմ ընդունած նախատանացս մէջ զուցեղ քեզմէ աւելի պատիւ ունիմ: Ոչ, ոչ, զուն կը ճանշնաս զիս, զիտեմ, բայց ես չեմ ճանշնար զքեզ, ովք ոսկեզեղ և զոհարազեղ բազդախնդիր: Բարիդի մէջ ինքզինքդ Մօնթէ-Քրիսթոյ կոմս կ'անուաննս, Ետալիոյ մէջ՝ Սէնսկատ նաւաստի, Մալթայի մէջ՝ զիտեմ ես, ժողած եմ: Բայց ես քու բուն անունդ կը հարցընեմ, և քու բուն անունդ կ'ուզեմ զիտնալ, որպէս զի մնամարտութեան ասպարէզին մէջ սուբս սրտիդ միած առենս քու անունովդ կումը զքեզ — :

Մօնթէ-Քրիսթոյ կոմսը սոսկալի կերպիւ դունատեցաւ և իւր խարտեաշ աչքը զողցես բոցավառեցաւ. մէկ սոտիւնով սրահին քովի դաշլիճը դնաց և հաղիւ մանրերկրորդի մը մէջ իւր փողկապը, թիկնոցը և բաճկոնը հանեց, նաւաստիի բաճկոնակ մը հաղաւ, և զլուխը զիսարկ մը դրաւ, որուն տակէն իւր երկար ու մազերը կ'երեւէին:

Այս հաղուստով, սոսկալի և անողոք դեմքով, ու բաշուկները կուրծքին վրայ իրարու պլած զօրապետին առջենելաւ, որ կոմսին աներեցոյթ ըլլալէն բան մը չհասկընալով անոր կ'ըսպասէր, և իւր ակրաները կափկափելով ու սրունքներուն ոյժը կորսնցընելով ետ ետ քաշուեցաւ՝ մինչեւ որ սեղանի մը քովը հասաւ, ու իւր կնձռած ձեռքը անոր կը թընցուց:

— Ֆէրնան, դոչեց կոմմը, իմ հարիւր անունիս տեղը քեզ միայն անուն մը կու տամ գքեզ կայծակնահար ընելու համար, բայց այս անունը որուն ըլլալը դիտես դուն, այնպէս չէ, կամ դոնէ կը յիշես. քանզի այնչափ վիշտեր և այնչափ նեղութիւններ կը լէս ետե՛ այսօր այնպիսի դեմք մը կը ցուցընեմ քեզ, զոր վրէծինդրութեան բարեբաղդութիւնը կը մատաղցընէ, այնպիսի դեմք մը, զոր դուն շատ անգամ երազած պիտի ըլլաս. . . իմ Մէրսէտէս նշանածիս հետ ամուսնանալէդ 'ի վեր — :

Զօրապետը՝ դլուխը դեպ 'ի ետին ծռած, ձեռքերը տարածած և իւր նայուածքը յարած՝ լութեամբ այն ահռելի տեսարանը կը դիտէր:

Ետքը կը թընելու տեղ մը գտնելու համար պատին մօտենալով, կամաց մը մինչեւ գուռը սահեցաւ, ուրիշ ետ ետ քալելով դուրս ելաւ՝ աղէտալի, ողբազին և սրտաճմլիկ ձայնով միայն « Էտմօն Տանթէս » անունը լսուելով անոր բերանէն:

Եւ այնպիսի հառաջանքով մը, որ մարդու ձայնի չէր նմաներ, մինչեւ տան սիւնաղարդ գաւիթը հասաւ, ուրիշ դինովի պէս դուրս ելնելով իւր սենեկապանին բազկացը մէջ նետուեցաւ անհասկանալի ձայնիւ մը միայն մբմուալով՝

— Տունը, տունը — :

Ճամբան՝ զով օդը և իւր ծառաներուն ուշադրութենէն պատճառած պատկառանքը իւր խելքը դլուխը բերին:

Ճամբան երկար չտեսեց, բայց որչափ իւր տունը կը մօռեւ նար, այնչափ իւր ցաւերը կը նորոգուեին:

Տունին քանի մը քայլ մնալով կոմու կառքը կեցընել տուաւ և կառքէն իջաւ:

Տան դուռը բոլորովին բացուած էր:

Փոքը կառք մը զողցես այսպիսի շքեղ տան մը մէջ կանչ չուելուն զարմանքով մը բակին մէջ տեղը կեցեր էր:

Կոմու սոսկումով այն կառքին նայեցաւ, բայց չհամար հակեցաւ մէկուն հարցուփորձ ընել, և դէս ի իւր սենեակը վազեց:

Սանդուխէն երկու հողի կ'իջնային, անոնցմէ շտեսնուելու համար հազիւ ժամանակ ունեցաւ դահլիճ մը մանելու:

Մէրսէտէսն էր ան որ իւր որդւոյն բազկին կոթընած տունէն կը մնկներ:

Եղեկելի զօրապետէն հազիւ երկու բթաշափ հեռուէն կ'անցնէին անսնք, որ վարադոյրի մը ետին պահուած զողցես Մէրսէտէսին մետաքսիւայ շրջազդեստին դպցաւ, և իւր որդւոյն այս խօսքերը ըսելու ատեն անոր զաղջ շունչին իւր երեսին զալը զգաց:

— Քաջալերութիւն, մայր իմ. եկու, եկու, այս տունը ալ մերը չէ — :

Խօսքերը վերջացան և ոտնաձայնները հեռացան:

Զօրապետը կնճռած ձեռօք վարադոյրը բոնած կը կենար, և իւր սրտին մէջ այսպիսի սոսկալի հառաջանք մը կը զպէր, որ իւր կնոջմէն ու զաւկէն դրկուած հայր մը երբէք անոր նմանը հանած չէր:

Ծատ չանցաւ կառքին երկաթեայ զոնակին զոցուիլը, ետքը կառավարին ձայնը, և իւր սենեկին ապակինները գլբդող կառքին անիւներուն դառնալը լսեց:

Այն ատեն իւր պառկելու խուցը վազեց որսէս զի աշխարհիս մէջ իրեն ամենէն աւելի սիրելի եղող անձերը անդամ մը ևս տեսնէ անկէ. սակայն կառքը մնկնեցաւ, և Մէրսէ-

տէս կամ Ալպէր իրենց առանձնացուցած տունը կամ թողուցած հայրը և ամուսինը վերջին անդամ մ'ալ տեսնելու , մատք բարեաւ մը ըսելու և վշտակրութիւն մը այսինքն ներողութիւն մը յայտնելու համար զլուխնին կառքէն դուրս շանեցին :

Կառքին անիւններուն ձայնը բակին զմբէթին մէջ կը գդրուգէր տակաւին երբ ատրճանակի հարուածի մը ձայնը լսուեցաւ , և տիրալի մուխ մը դուրս ելաւ այն պառկելու խուցին պատռէ հանէն , որուն ապակին ատրճանակին ձայթման ուժ զնութենէն խորտակուեր էր :



### ՊԼՈՒՐ ԺԱՎ

#### ՎԵԼԻՆԹԻՆ



**Ս**ՈՐԵԼի ունեցած զործին և տուած ժամադրութեան ուր ըլլալը դիւրին է զուշակել :

**Վ**ԵՐԻՄԱՍԱՐԴԸ Մօնթէ-Քրիսթոյէն քաժնուելով՝ յամր քալուածքով՝ դէպ 'ի Ափլքֆօրի տունը ձամբայ ինկաւ :

Յամբ քալուածքով ըսինք , քանզի Մորել հինգ հարիւր քայլ տեղ քալելու համար կէս ժամէն աւելի ժամանակ ուներ . բայց ոյս ընդարձակ ժամանակին չնայելով՝ ինքզինքը առանձնապես իւր մտածութեանց յանձնելու փափաքով Մօնթէ - Քրիսթոյէն բաժնուելու շոապեր էր :

Երիտասարդը իւր այցելութեան ժամանակը գիտէր . Աւալանթին նոյն միջոցին Նոուարթիէի նախաձաշը տանելով՝ ապահով էր որ այս դորովալիքը պարտաւորութեան մէջ անհանդիստ պիտի ըլլայ :

Նոուարթիէ և Աւալանթին հրաման տուած էին իրեն որ շաբաթը երկու այցելութիւն ընէ , և երիտասարդը իրեն եղած այս շնորհքը վայելելու կ'երթար :

Մորել սրոշեալ ժամանակին հասաւ . Աւալանթին իրեն կ'ըսպասէր :

Անհանգիստ և զբեթե այլայլեալ դէմքով անոր ձեռքը բռնեց և իւր հումքու քովը տարաւ զան :

Այս անհանդառութեան պատճառը Մորսէրմի դէպքին հրատարակուիլն էր . Օքէրային դէպքը ամեն մարդ լսած էր (ժողովուրդը ամեն բան կը լսէ) .

Աիլըֆօրի տան մէջ ամեն մարդ աղէկի համոզուած էր որ այս դէպքին հետեւութիւնը անհրաժեշտ մենամարտութիւն մը պիտի ըլլայ :

Աւալանթին իւր կանացի՛ բնաղդմամբը դուշակեր էր որ Մորել Աօնթէ - Ըլիւմայի միան պիտի ըլլար . Երիտասարդին ամենուն ծանօթ քաջութիւնը և կոմսին համար ունեցած սերտ բարեկամութիւնը շիտնալով , նորատի աղջիկը կը վախնար որ Մորել միոյն պարզ վկայ ըլլալով զուցէ չբաւականանար :

Ուստի ոչիւրին և երեակայել թէ ինչ հետաքրքրութեամբ մանրամասն աեղեկութիւններ հարցուեցան և անոնց պատասխանները տրուեցան , և Մորել իւր սիրուհոյն աշաց մէջ անպատման ուրախութիւն մը նշաբեց երբ ծաղկահաս աղջիկը իմացաւ որ մենամարտութեան դործը այնպէս անյուսալի կերպով յաջուլ վախճան մը ունեցեր էր :

— Հիմա, ըստ Ա.ալանթին նշան մը ընելով Մորէլին որ ծերին քովզ նստի և ինքն ալ իւր հաւին ոտնաթոռին վրայ նստելով, հիմա մեր գործերուն վրայօք խօսինք քիչ մը։ Գիտես, Մաքսիմիլիէն, որ հաւս միտք ունէր այս տունէն մեկնելու և ու տը Ա.իլլոֆորէն հեռու առւն մը բնակելու։

— Այո՛, գիտեմ, ըստ Մաքսիմիլիէն։ այդպիսի դիտաւորութիւն մը ունենալը կը յիշեմ, և ես ալ շատ հաւանեցայ այդ խելքին։

— Հիմա, Մաքսիմիլիէն, ըստ Ա.ալանթին, իւր դիտաւորութիւնը կը հաստատէ։

— Կեցցէ՛, ըստ Մաքսիմիլիէն։

— Եւ զիտե՞ս ինչ սլատձառ պիտի դտնե առւնէն մեկնելու համար —։

Դուարթիէ աղջկան կը նայէր որպէս զի աշքովը լոռութիւն հրամայէ, բայց Վալանթին նուարթիէ ի երեսը չէր նայեր. իւր աշքը, իւր նայուածքը, ժղիտը և ամնն բան Մորէլի համար էր։

— Ի՞նչ որ ըլլայ Պ. Նուարթիէի դտած սլատձառը, ըստ Մորէլ, ապահով եմ որ իրաւացի է։

— Այո՛, ըստ Վալանթին պիտի ըսէ որ Սէնթ-Օնօրէ արուարձանին օդը ինձ վեասակար է։

— Եւ ստուգիւ, Վալանթին, Պ. Նուարթիէ իրաւունք ալ ունի, տասն և հինգ օրէ՝ ի վեր կը աեսնեմ որ առողջութիւնդ աւրուած է։

— Այո՛, քիչ մը, պատասխանեց Վալանթին. և այս բանիս համար հաւս բժիշկն եղած է, և որովհետեւ ամնն բան զիտէ, մեծ վստահութիւն ունիմ անոր վրայ։

— Բայց վերջապէս հիւանդ ես, Վալանթին, հարցուց Մորէլ աշխուժիւ։

— Ո՛չ, աս ալ հիւանդութիւն կ'ըսուի. բոլոր մարմնոյս վրայ ընդհանուր անհանդստութիւն մը միայն կ'ըզգամ, և ոչ ուրիշ բան. ախորժակս կորսնցուցած եմ, և կարծես թէ ստամոքսս ուրիշ բանի մը սովորելու համար կը մըցի։

— Եւ այդ անծանօթ հիւանդութեան ի՞նչ դեղ կ'ընես :

— Ո՛չ, խիստ պարզ դեղ մը, ըսաւ Վալանթին . հաւիս բերուած դեղի օշարակէն դդալ մը կ'առնում . դդալ մը ըսի, վասն զի մէկ դդալով սկսայ և հիմա չորս դդալ կ'առնում : Հաւս կը պնդէ որ ամենարոյժ դեղ մ'է այն — :

Վալանթին կը ժպտէր, բայց այն ժպիտին մէջ տիրութիւն մը կ'երկէր :

Մաքսիմիլիէն սիրավառ աշօք լուսթեամբ անոր կը նայէր :

Նորատի աղջիկը խիստ զեղանի էր, բայց իւր դեղնութիւնը գեճիին աւելի սպիտակութիւն մը տուեր էր, աչքը սովորականէն աւելի հրավառ կը փայլէին, իւր ձեռքը, ուրոնք սովորաբար դաղստակուրի սրէս սպիտակի էին, կարծեսթէ մամէ թափուած էին, և վրան դեղնութիւն մը պատած էր :

Երիտասարդը իւր նայուածքը Վալանթինի վրայէն Կուտարթիէի վրայ տարաւ :

Ծերունին իւր տարօրինակ խելացիս թեամբը սիրածարծ ծաղկահաս աղջիկը կը դիտէր :

Եւ Մորէլի սրէս ան ալ Վալանթինի վրայ այն դաղոնի անհանդստութեան հետքը դիտեր էր, որոնք թէպէտ այնշափ քիչ կը նշմարուէին, որ հաւէն և սիրահարէն զատ մէկը չէր դիտած :

— Բայց այն դեղը, ըսաւ Մորէլ, որմէ մինչև չորս դդալ առնելու կարող եղար, կարծեմ թէ նոյն համը ունի — :

— Այս, այնշափ դառն է, ըսաւ Վալանթին, որ անկէ ետքը ինչ որ ուտեմ՝ կարծեմ թէ նոյն համը ունի — :

— Այս, սիրելի հաւս, ըսաւ Վալանթին, խիստ դառն է : Քովդ դալէս քիչ մը առաջ բաժակ մը շաբարով ջուր և մեղի . բայց այն ջուրը այնշափ դառն էր որ կէսը թողուցի — :

— Առարթիէի գոյնը նետեց, և նշան բրաւ որ խօսիլ կ'ուզէ : Վալանթին զնաց բառարանը բերելու :

Նուարթիէ սրտի յայտնի անձկութեամբ մը իւր աչքը աշոր վրայէն չէր վերցըներ :

Եւ ստուդիւ նորատի աղջկան արիւնը դլուխը կ'ելնէր , և այտերը կը կարմրէին :

— Խ'նչ զարմանալի բան , զոշեց Աալանթին առանց իւր զուարթութիւնը փոխելու , աշերս շացան . արդեօք արեւը զարկաւ աշերուս . . . — :

Այս ըսելով պատուհանին նիդին կոթընեցաւ :

— Արե չկայ հօս — , ըսաւ Մորել Աալանթինի անհանգըստութենէն աւելի նուարթիէի դէմքին այլայլութենէն զփոթեալ :

Եւ Աալանթինի քովը վաղեց :

Աալանթին ժպտեցաւ :

— Անհոգ եղիք , սիրելի հաւս , ըսաւ նուարթիէին . բան մը չէ , Մաքսիմիլիէն , անցաւ . բայց մտիկ ըրէ , կառքի մը ձայնը չէ այն որ բակին մէջ կը լսուի — :

Այս ըսելով նուարթիէի դուռը բացաւ , նրբագաւիթին պատուհանին քովը վաղեց և արտօրալով ետ դարձաւ :

— Այո , ըսաւ , աիկին Տանկլար և իւր աղջիկն է , որոնք եկած են մեղ այցելութիւն ընելու : Մնաք բարեաւ , ես կ'երթամ . վասն զի հիմա պիտի զան զիս փնտուն , և կամ նորէն կը տեսնուինք . ու . Մաքսիմիլիէն , հաւիս քովը կեցիր , կը խոստանամ որ ես երկար ժամանակ չեմ կեցըներ զանոնք — :

Մորել անոր ետեէն նայեցաւ , անոր դուռը զոցելը տեսաւ , ու աիկին ար Աիլը Փօրի և միանգամայն իւր սենեակը տանող փոքր սանդուխէն վեր ելնելը լսեց :

Աներենյթ ըլլալուն պէս՝ նուարթիէ նշան ըրաւ Մորելին որ բառարանը բերէ :

Մորել հնագանդեցաւ :

Երիտասարդը Աալանթինին օգնութեամբը ծերին միտքը շուտով հասկընալ սորմիեր էր :

Այսու ամենայնիւ՝ որովհետեւ այբուբենին քսան և չըրս  
դիրերը պէտք էր մի առ մի արտասանել և բառարանին մէջ  
ամեն մէկ խօսքը փնտոել, հաղիւ տասը վայրկենի մէջ կըցաւ  
ծերին միտքը հետեւեալ խօսքերով թարգմանել.

«Վալանթինի սենեկին մէջ եղած բաժակը և շիշը հոս  
բերել տուր» :

Մորէլ իսկոյն զանդակը հնչեցուց, Պարուային տեղը անց-  
նող ծառան կանչեց և Նուարթիէի անունովը այն հրամանը  
ըրաւ :

Ծառան վայրկեան մը ետքը վերադարձաւ :

Ճիշը և բաժակը բոլորովին պարզուած էին :

— Այս բաժակն ու շիշը ինչո՞ւ պարապ են, հարցուց ծերը.  
Վալանթին ըստու թէ բաժակին կէսը խմեց միայն — :

Այս նոր հարցման թարգմանութիւնը հինգ վայրկեան տեսեց:

— Զեմ զիտեր, ըստու ծառան. բայց սենեկապանուհին  
օրիորդ Վալանթինի սենեակին է, դուցէ ան խմեց :

— Հարցուր —, ըստու Մորէլ այս անգամ Նուարթիէի  
նայուածքէն անոր միտքը հասկընալով:

Ծառան դուրս ելաւ և զրեթէ անմիջապէս ետ դարձաւ :

— Օրիորդ Վալանթին տիկին տը Վիլֆօրի սենեակը եր-  
թալու ատեն իւր սենեկէն անցեր է, ըստու, և ծարաւի ըլ-  
լալուն բաժակին մէջ եղածը խմեր է. իսկ շիշին մէջ եղածը  
Պ. Էտուար բադերուն լճակ մը ընելու համար պարպեր է — :

Նուարթիէ իւր նայուածքը դէպ 'ի երկինք վերցուց, ինչ-  
պէս կ'ընե խաղամուլ մը իւր բոլոր ունեցածը մէկ անդամին  
խաղալու ատեն :

Այսուհետեւ ծերը իւր նայուածքը դրան վրայ յարեց և  
անոր վրայէն շվերցուց :

Երօք եկողները տիկին Տանկլար և իւր աղջիկն էին, զո-  
րոնք Վալանթին տեսեր էր :

Տիկին տը Վիլֆօր հրամայեր էր որ իւր սենեակը հրա-  
ւիրեն զանոնք :

Ահա ինչ պատճառաւ Վալանթին իւր սենեկէն անցեր էր :  
վասն զի իւր սենեակը մօրուին սենեկին հետ մէկ յարկի  
վրայ շինուած էր, և երկու սենեակները միայն էտուարի  
սենեկէն բաժնուած էին :

Տիկին Տանկլար և իւր աղջիկը սենեակը մտան, և տիկին  
տը Ափլքֆօր անոնց ցուցուցած քաղաքավարութեան համե-  
մատ քաղաքավարութեամբ ընդունեց զանոնք :

Նոյն միջոցին Վալանթին ալ հասաւ և քաղաքավարական  
ձեւը վերստին սկսան :

— Սիրելի բարեկամուչի, ըսաւ տիկին Տանկլար՝ ինչ ա-  
տեն երկու ծաղկահաս աղջիկները իրարու ձեռքը կը բռնէ-  
ին, կօժէնիին հետ եկայ ամենէն առաջ ձեզ իմացընելու որ  
խիստ մօա օրերս աղջիկս Գավալդանթի իշխանին հետ պիտի  
ամուսնանայ — :

Տանկլար նախամմծար ընտրեր էր իշխանի տիտղոսը կոմսի  
տիտղոսէն :

— Ռւբեմն ներեցէք ինձ որ իմ անկեղծ ինդակցութիւնս  
յայտնեմ, պատասխանեց տիկին տը Ափլքֆօր : Պ. Գավալ-  
դանթի իշխանը անհամեմատ ձերքեր ունեցող երիտասարդ մը  
կ'երեի :

— Մտիկ ըրէք, ըսաւ տիկին Տանկլար ժպանելով, եթէ  
իրը երկու բարեկամուչի մեր մէջը կը խօսինք, կընամ ըսել  
որ իշխանին ինչ ըլլալը դեռ չենք դիտեր: Իւր վրայ քիւ-  
մը այն տարօրինակութիւնը ունի . զոր մէք Գաղղիացիքս ա-  
ռաջին անգամ տեսնելով՝ Խոտալցի կամ Գերմանցի աղ-  
նուական մը կը կարծենք: Այսու ամենայնիւ խիստ բարե-  
սիրտ և խիստ խելացի կ'երեի . և հարստութեան կողմանէ  
Պ. Տանկլար կը պնդէ թէ խիստ երեելի է:

— Ասկէ զատ, ըսաւ կօժէնի տիկին տը Ափլքֆօրի նկա-  
րատետը թղթատելով, յաւելցուցէք նաև, տիկին, ձեր այն  
երիտասարդին վրայ ունեցած մասնաւոր սէրը :

— Եւ ես պէտք չունիմ հարցընելու, ըսաւ տիկին տը  
Ափլքֆօր, թէ դուք այն սիրոյն մասնակից էք:

— Ես, պատասխանեց Էօծէնի իւր սովորական համարձակութեամբը, ո՛չ, ամեննեին, տիկին . անային հոգերու և որ եւ մարդու մտային հաճոյից մէջ շղթայուելու համար ծնած չեմ ես, այլ արուեստագէտ և հետեաբար սրտով, անձամբ և մտածութեամբ ազատ ըլլալու համար ծնած եմ — :

Էօծէնի այս խօսքը ըստ այնպիսի համարձակ ձայնով արտասանեց, որով Վալանթինի երեսը կարմրեցաւ : Երկշուա աղջիկը կը զարմանար իրեն հասակակից աղջկան մը վրայ այս աստիճան բուռն բնութիւն մը տեսնելով, որ կանացի երկշուաթիւնն ունենալ չէր ցուցըներ :

— Սակայն, շարունակեց Էօծէնի, քանի որ կամայ ակամայ ամուսնանալու ստիպուած եմ, ալէտք եմ շնորհակալ ըլլալ Նախախնամութեան որ դոնէ զիս Պ. Ալպէր որը Մորուէրփէն ազատեց, եթէ ոչ՝ այսօր անպատիւ մարդու մը կինը պիտի ըլլայի :

— Ստոյդ է, ըստ տիկին Տանկլար այն զարմանալի պարզմատութեամբ, որ երբեմն մնծ տիկիններու վրայ կ'երեի, և յաճախակի տմարգութիւններով չեն կրնար բռլորովն ուղղել զայն . ստոյդ է, եթէ Մորուէրփի ընտանիքը երկմատութիւն ցուցըներ, աղջիկս Պ. Ալպէրի հետ պիտի ամուսնանար . զօրապետը ամուսնութիւնը կատարելու մնծ փափաք ունէր, մինչեւ անձամբ եկաւ անոր խօսքը կարելու . բայց մենք աղէկ ազատեցանք :

— Բայց, ըստ Վալանթին երկշուաթեամբ, միթէ հօրը անսպատուութիւնը որդւոյն վրայ կրնայ իյնալ : Կարծեմ թէ Պ. Ալպէր զօրապետին այն ամեն մատնութեանց մէջ բռլորովն անմեղ է :

— Կը ներես, սիրելի բարեկամուհիս, ըստ անողաքէլի ծաղկահաս աղջիկը, Պ. Ալպէր ալ նոյնպէս անպատուեալ կը համարուի . կ'երեի թէ երեկ իրիկուն Օրէրային մէջ Պ. առ Մօնթէ - Քրիսթօն մնամարտութեան հրաւիրելէն ետեւ այսօր ասպարէզին մէջ ներումն ինդրեր է :

— Անկարելի է, ըստ տիկին առ Վիլֆօր:

— Ա՛հ, սիրելի բարեկամուհիս, ըստ տիկին Տանկլար նոյն պարզմտութեամբը, բոլորովին ստոյդ է . Ես պ. Տըղբէն իմացայ, որ ներումն խնդրած ժամանակը ներկայ է եղեք — :

Վալանթին ալ եղելութեան ճշմարտութիւնը դիտէր, սակայն ամենեին շղատառիանեց :

Այս խօսքերը իւր միտքը բան մը ձգելով, իւր լքը առուարթիէի սենեակը դնաց, ուր Մորէլ իրեն կ'ըսպասէր:

Այս ներքին մտածութեանց մէջ ընկղմնով՝ Վալանթին անկէ 'ի վեր գագրեր էր խօսակցութեան մասնակից ըլլալէն, և քանի մը վայրիենէ 'ի վեր եղած խօսքերն ալ չէր հասկցցեր, երբ յանկարծ տիկին Տանկլարի ձեռքը իւր բաղկին դպչելով՝ իւր մտածութենէն սթափեց զան :

— Ի՞նչ կը խնդրէք, տիկին, ըստ Վալանթին ելեքտրական հաղորդութենէ սարսալու պէս տիկին Տանկլարի մատերուն իրեն դպչելէն սարսալով :

— Սիրելիդ իմ՝ Վալանթին, անշուշտ տիկարութիւն մը բւնիք :

— Ե՞ս, ըստ նորատի աղջիկը ձեռքը հրատասոյ ճակարին տանելով :

— Այս, նայեցէք անդամ մը սա հայելիին մէջ՝ վայրիենի մը մէջ երեք կամ չորս անդամ յաջորդաբար կարմրեցաք և գեղնեցաք :

— Երօք շատ գեղնած ես, ըստ հօծէնի :

— Ա՛հ, հսկ մի ընկը, հօծէնի . քանի մը օրէ 'ի վեր այսպէս եմ — :

Եւ որչափ ալ խորամանկութիւն ընել չէր կրնար, նորատի աղջիկը հասկցաւ որ դուրս ելնելու առիթ մ'էր այն, մանաւանդ որ տիկին տը Վիլֆօր ալ իրեն օդնութեան կը հասնէր հետեւալ խօսքերով :

— Գնա, Վալանթին, ըստ . իրազէս առողջութիւնդ

տեղը չէ, և այս տիկինները անշուշտ պիտի բարեհաջին ներել քեզ, բաժակ մը պարզ չուր խմէ և կ'աղէղինաս — :

Աւալանթին Էօծէնին համբուրեց, տիկին Տանկլարը բարեց, (որ մեկնելու համար արդէն ելեր կանգներ էր,) և դուրս ելաւ :

— Այս խեղճ աղջիկը, ըսաւ տիկին տը Վելլֆօր Աւալանթինի մեկնելէն ետեւ, մնձ հոգ կը պատճառէ ինձ, և պիտի չզարմանամ եթէ անոր գծ բաղդութիւն մը պատահի — :

Սակայն Աւալանթին իւր տկարութեան սաստկութեամբը, որուն պատճառը ինքը չէր հասկընար, կտուարի սենեակէն անցեր էր առանց պատասխանելու այն մանկան չեմ դիտեր ինչ տեսակ չարութեան, և իւր սենեակէն սանդուխին քովը եկեր անոնց աստիճաններէն վար կ'իջնէր. վերջին երեք ոտքերուն հասնելով, արդէն Մորէլի ձայնը կը լսէր, երբ իւր աչաց վրայ ամպ մը պատեց, իւր կարկամեալ ոտքը սխալեցաւ, իւր ձեռքերը սանդուխին վանդակապատը բռնելու համար ոյժ չունեցան, և վերջին երեք աստիճանները իջնալէն առաջ գետինը դլորեցաւ :

Մորէլ վազելով դուռը բացաւ և Աւալանթինը սանդուխին դաւթին վրայ տարածուած դուաւ :

Փայլակի արագութեամբ զան զետնէն վերցուց, իւր բազկացը մէջ առաւ և թեւաթոփ մը վրայ նստեցուց :

Աւալանթին իւր աչքը բացաւ :

— Ո՛չ, ո՛չափ անզոյշ եմ եղեր, ըսաւ ջղային արագելսակ հնչմամբ, խելքս զլուխս չէ, մոռցայ որ մինչեւ դաւթիթը երեք աստիճան ես կայ :

— Մէկ տեղդ ցաւցուցիր, Աւալանթին, զոշեց Մորէլ, ով Տէր Աստուած իմ — :

Աւալանթին իւր բոլորտիքը նայեցաւ, և նուարթիէի աչաց մէջ խորունկ սոսկում մը նշմարեց :

— Անհոգ եղեր, սիրելի հաւս, ըսաւ նորատի աղջիկը ժպտելու ջանալով, բան մը չէ, բան մը չէ . . . միայն զլուխս դարձաւ :

— Դարձեալ նուազում մ'եւ, ըստ Մորէլ իւր ձեռքը միացընելով. ո՛չ, Վալանթին, զգուշացիր, կ'աղաւեմ:

— Ոչ, ոչ, ըստ Վալանթին, բան մը չունիմ կ'ըսեմ: Հիմա ձեզի լուր մը տամ, ութ օրէն Էօծէնին պիտի ամուսնանայ և երեք օրէն մեծ խնջոյքի պէս հարսնախօսութեան ձաշ մը տեղի պիտի ունենայ: Ամենքնիս ալ հրաւիրուած ենք, հայրս, տիկին տը Ակլլոֆօր ու ես... զոնէ այնպէս հասկըցայ:

— Մեր կարդը երբ պիտի գայ արդեօք այս զբաղմանց մէջ զանուելու. ո՛չ, Վալանթին, դուն որ քու հաւիդ այնչափ համակրութիւնը դրաւած ես, աշխատէ որ « Քիչ ժամանակէն » պատասխանէ քեզ:

— Ուրեմն բարի հաւիս անհօգութիւնը դրդելու և անոր յիշողութիւնը արթնցընելու համար ինծի՞ կը վստահիս:

— Այո, դոչեց Մորէլ-աճապարէ, Վալանթին, մինչեւ որ իմ չըլլաս, պիտի կարծեմ թէ պիտի կորսնցընեմ զքեզ:

— Ո՛չ, պատասխանեց Վալանթին գողդոջուն շարժումով մը, ստուգիւ, Մաքսիմիլիէն, խիստ երկշոտ ես եղեր գուն իրը այնպիսի պաշտօնատար և զինուորական մը, որ երեք երկիրով ձանցած չէ կ'ըսեն: Հա, հա, հա —:

Եւ վշտակին կերպով սկսաւ ծիծաղիլ: իւր բազուկները կարկամեցան և դարձան, դլուխը իւր թեաթոռին վրայ ինչաւ և անշարժ մնայ:

Սսոկումի ձայն մը, զոր Աստուած նուարթիէի շրթանց վրայ կը շվթայէր, անոր աշաց վրայ ցայտեց:

Մորէլ հասկըցաւ որ օգնութիւն կանչել կ'ուզէր:

Երիտասարդը զանդակը ուժգին հնչեցուց:

Վալանթինի սենեակն եղող սենեկապանուչին և Պարուայի տեղն անցնող ծառան միատեղ վաղեցին եկան:

Վալանթին այնպէս գունատեալ, այնպէս պաղ և այնպէս շնչառապառ կը զանուէր, որ ծառաները առանց իրենց հրամայուածներուն ականչ դնելու սենեկէն դուրս ելան օդ-

Նութիւն պրոռալով, քանդի սյս անիծեալ տան մէջ անդա-  
դար տիրող երկիւղը զիրենք պաշարեր եր :

Տիկին Տանկլար և կօձէնի նոյն միջոցին կը մնկնէին, և  
այն աղմուկին ովատձառը իմացան :

— Ես ըսի ձեզ արդէն, զուեց տիկին տը Ա.իլքֆօր, որ  
ազորմնի աղջկան վլրակիը գէշ է — :



## ՊԼՈՒԹ ՓՁ.

ԽՈՍՑՈՎԸՆՈՒԹԻՒՆԸ

**ՊԼՈՒԹ** միջոցին Պ. տը Ա.իլքֆօրի ձայնը լըս.  
ուեցաւ, որ իւր դահլճին մէջէն կը  
պռռար .

— Ի՞նչ կայ արդեօք — :

Մորէլ նայուածքով ծերին խոր-  
հուրդ հարցուց . Նուարթիէ վերստին իւր սրտի հանդար-  
տութիւնը ստանալով՝ աչքովը այն դահլիճը ցուցուց, ուր  
զրեթէ ասոր նման պարադայի մը մէջ արդէն անդամ մը ե-  
րիտասարդը պահուեր էր :

Հաղիւ իւր դլիսարկը առնելու և շնչառառ այն դահլիճը  
նետուելու ժամանակ ունեցաւ :

Նրբաղաւթին մէջ թագաւորի դործակալին ոտնաձայննեւ-  
րը կը լսուէին :

Ա.իլքֆօր սենեկին մէջ ցատկեց , Ա.ալանթինի քովը վա-  
զեց և իւր բաղկացը մէջ առաւ զան :

Բժիշկ մը կանչեցէք , բժիշկ մը , Պ. տ'Ավրինեին ,  
զուցեց Ա.իլքֆօր , բայց կեցիք ես անձամբ կ'երթամ — :

Եւ սենեակէն դուրս նետուեցաւ :

Միւս դուռէն ալ Մորէլ վաղեց եկաւ :

Սոսկալի յիշատակ մը իւր սիրտը չարաչար կը տաղնապէր :

Տիկին ար Սէն-Սէրանի մեռած զիշերը Ա.իլքֆօրի և  
բժշկին մէջ տեղի ունեցած այն խօսակցութիւնը իւր միտքը  
եկեր էր :

Ա.ալանթինի տկարութեան հշանները ռարուայի մահուան  
առաջնորդող նշաններուն կը նմանէին , թէև այն աստիճան  
սոսկալի չէին :

Նոյն միջոցին իրեն այնպէս երեցաւ թէ Մօնթէ-Քրիս-  
թոյի ձայնը իւր ականջին կը զբնչէ , որ երկու ժամ՝ առաջ  
իրեն բսեր էր .

«Եթէ երբէք բանի մը ակտք ունենաք , Մորէլ , ինձի  
եկէք . ես կարող եմ ամեն բան ընելու :»

Իւր մտածութենէն աւելի շուտով Սէնթ - Օնորէ արուար-  
ձանէն Մաթինեօն փողոցը զնաց , և Մաթինեօն փողոցէն  
Շանզ-Ելիշէ :

Նոյն միջոցին Պ. տը Ա.իլքֆօր վարձու կառքով մը Պ.  
տ'Ավրինեիի տունը հսկեր էր :

Այնչափ ուժով զանզակը հնչեցուց որ դռնապանը վախնա-  
լով եկեր էր դուռը բանալու :

Ա.իլքֆօր առանց խօսք մը խօսել կարենալու դէպ 'ի սան-  
դուիը նետուեցաւ :

Դռնապանը կը ճանչնար զան , ուստի թողուց որ անցնի  
ետևէն միայն այս խօսքերը սկսուալով .

— Խոր դաշլիքնը կը դառնուի, ո՞ւ թաղաւորի դործակալաւ, իւր դաշլիքնը — :

Վ. իլլուստր դաշլակին դուռը խորտակելու շափ ուժզնութեամբ հռեց :

— Ո՞չ, ըսաւ բժիշկը, դո՞ւք էք :

— Այս, ըսաւ Վ. իլլուստր դուռը դոցելով, այս, պարոն բժիշկ, ես եմ ու եկայ հարցընելու թէ բոլորովին առանձին ենք. ո՞ւ բժիշկ, տունս անիծեալ տուն մ'է :

— Ե՞նչ, ըսաւ բժիշկը արտաքուստ պաղութեամբ բայց ներքնապէս խորին յուղմամբ, արդեօք դարձեալ հիւանդամը ունի :

— Այս, պարոն բժիշկ, գոչեց Վ. իլլուստր դողդոջուն ձեռքով մը իւր մազերը բռնելով, այս — :

Տ' Ավրինեիի նայուածքը ըսել կ'ուղեքը. — Ես կանխաւ ըսի ձեզ — :

Ետքը իւր շուրթերը կամաց մը այս խօսքերը արտասանեցին.

— Ո՞վ է հիմա ձեր տունը մեռնելու վրայ եղող անձը, և ո՞ր զոհը մը տիկարութեանը համար Աստուծոյ տոջե պիտի ամբաստանէ զմնդ — :

Վ. շաղին հառաջանք մը Վ. իլլուստր սրտէն բղիսցաւ, բժկին մօտեցաւ և անոր թէր բռնելով

— Վալանթինը, ըսաւ, կարգը Վալանթինին է :

— Ձեր աղջիկը, դոչեց ա'Ավրինեի ցաւելով և զարմանքով մը :

— Կը տեսնէք որ սխալեր էք, մրմաց դատաւորը, եկէք տեսէք զան, և անոր վշտաց անկողնոյն մէջ ներումն խընդրեցէք անոր վրայ կասկածելնուդ համար :

— Ամեն անդամ զիս կանչած տառննիդ խիստ ուշ էր, ըսաւ ո. ա'Ավրինեի. հոդ չէ, կու դամ, բայց շուտ ընենք, ձեր տան մէջ եղող թշնամիներուն հետ ժամանակ կորսնցընել ըսլլար :

— Ա՞՛ս ; այս անդամ , Պ . բժիշկ , ալ իմ տկարութեանտ համար պիտի չմեղադրեք զիս . այս անդամ սովանիշը պիտի գտնեմ և ես պիտի սպաննեմ զան :

— Զոհ եղողը ազատելու ջանանք անոր վրեժը լուծելու մտածելէ առաջ , ըստ տ'Ավրինեի . եկէք — :

Եւ Վիլլֆօրը բերող կառքը մեծ արշաւանօք դատաւորն ու բժիշկը Վալանթինի առւնը տարաւ այն միջոցին որ Մուռէլ ալ Մօնթէ-Քրիսթովի գուոը կը զարնէր :

Կոմսը իւր դահլձին մէջ կը դտնուէր , և ուերթուչիոյի իրեն զրկած տոմսակը մեծ անհանդ ստութեամբ կը կարդար :

Մորէլի դալը իմանալով , որ հազիւ երկու ժամ առաջ իրմէ բաժնուեր էր , կոմսը զ լուխը վերցուց :

Անտարակոյս անոր , ինչպես և կոմսին , երկու ժամուան մէջ շատ բաներ պատահեր էին . վասն զի երիտասարդը՝ որ ուրախութեամբ իրմէ բաժնուեր էր , այլայլեալ դէմքով կը վերադառնար :

Կոմսը ստք ելաւ և Մորէլի առջին վազեց :

— Ե՞նչ կայ , Մաքսիմիլիէն , հարցուց անոր . զոյնդ ներտեր է և քրտինքը ճակտէդ կը հոսի — :

Մորէլ թեալթոռի մը վրայ դոդցես ինկաւ :

— Այս , ըստ , շուտ եկայ , բայց ձեզի հետ խօսելու պէտք ունէի :

— Բոլոր ընտանիքդ առողջ վիճակի մէջ է , հարցուց կոմսը սիրալիր մարդասիրութեամբ մը , որուն անկեղծութենէն անկարելի էր խարուիլ :

— Ծնորհակալ եմ , կոմն , շնորհակալ եմ , ըստ երիտասարդը՝ խօսքը սկսելու համար յայտնասղէս շփոթելով :

— Քարի , սակայն անշուշտ խօսք մը ունիք ինձ ըսելու , կը կնեց կոմսը ևս քան դէս անհանդիստ երեելով :

— Այս , ստոյդ է , ըստ Մորէլ . ձեզի գիմելու համար այնպիսի տունէ մը կու զամ , որուն մէջ մահը մտած է :

— Արդեօք ու . տը Մորսէրֆի տունէն կու զաք , հարաց Մօնթէ-Քրիսթօ :

— Ա՛Հ , ըսաւ Մորէլ , ու . տը Մորսէրֆի տան մէջ ով մլուաւ :

— Զօրապետը քիչ մը տոաջ ատրախանակով ինքզինքը սովաններէ , պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ :

— Ա՛Հ , այդ ինչ սոսկալի գճբաղդութիւն մ'է , դոչեց Մաքսիմիլիէն :

— Այդ գճբաղդութիւնը ոչ կոմուհուոյն համար է և ոչ Ալպէրի համար , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ , մեռեալ հայր մը և ամուսին մը անպատուեալ հայրէն և ամուսինէն ընտրելի է . արիւնը նախատինքը կը մաքը :

— Թշուան կոմուհի , ըսաւ Մաքսիմիլիէն , ամենէն աւելի անոր համար կը ցաւիմ , ազնիւ կին մ'է :

— Ալպէրին համար ալ ցաւեցէք , Մաքսիմիլիէն , քանդի հաւատացէք ինծի , կոմուհուոյն արժանաւոր զաւակն է . բայց ձեր դործին գառնանք , ըսիք որ ինծի կը դիմէիք , արդեօք երջանիկ պիտի ըլլամ որ ինձ պէտք ունենաք :

— Այս , պէտք ունիմ ձեզի , և ես յիմարի մը պէս այն պէս կարծեցի թէ գուք պիտի կրնաք ինձ օդնութեան հասնիլ այնպիսի պարագայի մը մէջ , ուր Աստուած միայն կառող է օդնել :

— Ըսէք հոգ չէ , ինչ է ուղածնիդ :

— Ա՛Հ , չեմ զիտեր ստուզիւ թէ այսպիսի գաղտնիք մը մարդկային ականջներու յայտնելը ներելի՞ է ինձ . բայց Ճակատագիրս կը դրդէ զիս , և հարկը կը բռնադատէ , կոմս — :

Մորէլ երկմանելով խօսքը ընդմիջեց :

— Կը կարծէք որ զձեղ սիրեմ , ըսաւ Մօնթէ-Քրիսթօ դորովանօք երիտասարդին ձեռքը բռնելով :

— Ա՛Հ , ստուզիւ կը քաջալերէք զիս , ասկէ զատ՝ հոս կ'ըզդամ (Մորէլ ձեռքը իւր սրախն վրայ դրաւ) որ ամենեին ձեզմէ գաղտնիք պահել պէտք չիմ :

— Երանունք ունիք, Մորէլ, ձեր սրտին չետ խօսողը Աստուած է, և ձեզի չետ խօսողը ձեր սիրտը, ուրեմն ըստ ինձ ինչ որ ձեր սիրտը ձեզ կ'ըսէ:

— Կոմս, հրաման կու տաք ինձ որ ձեզի ծանօթ մէկուն վրայ լուր ստանալու համար Պաթիսթէնը ձեր կողմանէ զրկեմ:

— Երբ ես պատրաստ եմ ձեր կամքը կատարելու, ո՞րշապէ ես առաւել իմ ծառաներս ողարաստ պիտի ըլլան ձեր հրամանը՝ ի գործ գնելու:

— Ա՛յ, պատճառը այն է, կոմս, որ մինչեւ որ անոր աղէլ ըլլալը չիմանամ՝ պիտի չկրնամ աղբիլ:

— Կ'ուզէք որ Պաթիսթէնը հսու կանչեմ:

— Ա՛չ, ես անձամբ կ'երթամ անոր հետ կը խօսիմ — : Մորէլ դուրս ելաւ, Պաթիսթէնը կանչեց և խիստ կամաց ձայնով քանի մը խօսք ըստաւ:

Սենեկադանը վաղելով մնկնեցաւ:

— Գործերնիդ լմցուցիք, հարցուց Մօնթէ-Քրիսթօ՝ Մորէլի գալը տեսնելով:

— Այս, և հիմա աւելի հանդիսատ պիտի ըլլամ:

— Կիալէք որ ձեզ կ'ըսպասեմ, ըստ Մօնթէ-Քրիսթօ ժպտելով:

— Այս, ես ալ պիտի սկսիմ խօսիլ. մտիլ ըրէք, կոմս, իրիկուն մը ստարտիզի մը մէջ խիստ ծառերու ետին պաշտամձէի և հոն ըլլալս մէկուն մաքէն չէր անցներ. Երկու հզգի քովէս անցան. (Ներեցէք ինձ որ առ այժմ անոնց անունը չափեմ) թէե խիստ կամաց ձայնով իրարու հետ կը խօսէին, սակայն ես անոնց խօսակցութիւնը լսելու այնպէս մէծ փափաք մը ունէի որ ըստաներնէն խօսք մը անդ ամ՝ չիախցուցի:

— Չեր զունատութիւնը և սարսուռը աղէտ մը կը յայտնեն, Մորէլ:

— Այս, քարեկամ, մեծ աղէտ մէկը պատահածը. քիչ

մը առաջ մէկը մեռեր էր այն տանը մէջ, որուն պարտիզին մէջ ես կը դանուէի: Երկու խօսակիցներէն մէկը այն տանը և պարտիզին տէրն էր և միւսը բժիշկը: Առաջինը իւր երկիւղը և վլիշտը կը յայտնէր երկրորդին: Վասն զի ամսէ մը 'ի վեր երկրորդ անդամն էր որ մահը այս տան վրայ այնպիսի յանկարծակի և արագութեամբ իւր հարուածը կ'իշեցընէր, որ կարծես թէ սատակիչ հրեշտակ մը զայն Աստեծոյ բարկութեանը կը յանձնէր:

— Ի՞նչ կ'ըսէք, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ իւր նայուածքը Մորէլի վրայ յարելով և աննշմարելի շարժումով մը իւր թեաթոռը այնպէս դարձընելով, որով ինքը ստուերին մէջ մնայ և պատուհանէն եկած լոյսը Մորէլի երեսին կը զարնէր:

— Այս, շարունակեց երիտասարդը, ամսուան մը մէջ մահը երկու անդամ՝ այն տանը մէջ մտաւ:

— Եւ ինչ կը պատասխանէր բժիշկը, հարցուց Մօնթէ-Քրիսթօ:

— Կը պատասխանէր թէ այն մահը բնական չէր, և անոր պատճառը . . . :

— Ի՞նչ բանի կու տար:

— Թողնի:

— Ստո՞յդ կ'ըսէք, ըսաւ Մօնթէ-Քրիսթօ այնպիսի թէ թէ հազոր մը, զոր սաստիկ յուղման միջոցներուն կամ իւր կարմրութիւնը, կամ դեղնութիւնը և կամ խօսակցութեան ժամանակ իւր ուշադրութիւնը չայտնելու համար կը դորձածէր. ստո՞յդ կ'ըսէք, Մաքսիմիլիէն, այս խօսքերը դուք լսեցիք:

— Այս, սիրելի կոմա, ականջովս լսեցի, և բժիշկը կը յաւելուր որ եթէ այս օրինակ դէստ մը վերստին տեղի ունենար, ոստիկանութեան իմացընելու ստիտուած կը կարծէր ինքզինքը — :

Մօնթէ-Քրիսթօ խիստ մնձ հանդարտութեամբ մտիկ կ'ընէր և կամ այնպէս կ'երեցընէր:

— Մահը, ըստ Մաքոնիլիէն, երրորդ անդամ իւր հարուածը կրկնեց, բայց ոչ տան տէրը և ոչ բժիշլը բան մը չըսին. գուցէ չորրորդ անդամ մ'ալ պիտի հարուածէ. կոմս, ի՞նչ բան կը կարծէք որ ստիպէ զիս այն դաղանիքը իմանալու համար:

— Սիրելիս, ըստ Մօնթէ-Քրիսթօ, կարծեմ թէ այն պիսի պատմաւթիւն մը կը պատմէք որ ամեն մարդ բերան սորված է. կը ճանչնամ ես այն տունը, որուն մէջ այն խօսակցութիւնը լսեցիք, կամ զոնէ անոր նման տուն մը կը ճանչնամ, որուն մէջ պարտեղ մը, ընտանիքի հայր մը և բժիշկ մը կայ, այնպիսի տուն մը, որուն մէջ երեք տարօրինակ և անյուսալի մահ տեղի ունեցան: Ինձի նայեցէք, ես որ այն դաղտնիքը մտերմաբար մէկէ մը լուած չեմ, և սակայն ձեզի չափ աղէկ դիտեմ զայն. միթէ կը կարծէք որ իսկզա անհանդարու է: Ո՛չ, ինձի չվերաբերիր այն. կ'ըսէք թէ սատակիչ հըեշտակ մը կարծես թէ այն տունը Աստուծոյ բարկութեանը կը մատնէ. բայց ո՞վ կ'ըսէ թէ ձեր ենթադրութիւնը ճշմարտութիւն մը չէ: Մի տեսնէք այն բաները որոնք տեսնելու շահ ունեցողներն անդամ չեն ուղեր տեսնել: Եթէ այն տան մէջ շըջողը չէ թէ Աստուծոյ բարկութիւնը այլ անոր դատաստանն է, Մաքոնիլիէն, դըլուինիդ գարձուցէք, և Աստուծոյ դատաստանը արգիլել մի ուղէք — :

### Մորէլ սարսուաց :

Կոմսին ձայնին մէջ աղէտալի միանդ ամայն հանդիսաւոր և սոսկալի բան մը կար:

— Բայց ո՞վ կ'ըսէ, շարունակեց այնպիսի փոխուած ձայնով մը որ կարծես թէ այս վերջին խօսքերը նոյն մարդուն բերանէն չէին ելներ, ո՞վ կ'ըսէ որ այն աղէտը վերստին պիտի սկսի :

— Աերստին սկսած է, կոմս, դոչեց Մորէլ, և ես այս պատճառաւ ձեզի դիմեցի :

— Ի՞նչ կ'ուղէք որ ընեմ, կ'ուղէք որ թաղաւորի ո՛վ գործակալին խմացընեմ — :

Մօնթէ-Քրիսթօ այս վերջին խօսքերը այնպէս յստակ եւ ազդու ձայնով արտասառնեց, որ Մորէլ յանկարծ ոտք ելնելով դուեցաց .

— Կոմս, կոմս, խօսքս որու վրայ է դիակէք, այնպէս չէ :

— Կատարելապէս, սիրելիս, և հիմա ասպացուցանելու շամար՝ ամենայն ձշդութեամբ պատմեմ ձեզ, կամ զոնէ մարդոց անունները տամ: Չեր խօսքին նայելով իրիկուն մը ո՛վ. ար Ափլաֆօրի պարտիզին մէ ջ պտղաւեր էք, և կարծեմ տիկին ար Աէն-Աէրանի մաշօւան իրիկունը պիտի ըլլայ, ո՛վ. ար Աէն-Աէրանի և անկէ ոչ նուազ զարմանալի մարքեղուշոյն մահուան վրայ ո՛վ. ա'նվրինեիի հետ ո՛վ. ար Ափլաֆօրի խօսիլը լսեցիք: ո՛վ. ա'նվրինեիի կ'ըսէր թէ մոռեալը կամ երկու մոռեալներն անդամ թունաւորուած էին, և դուք աղնուասիրտ մարդ մը ըլլալովիդիդ այն օրէն 'ի վեր ձեր սրտին բարախումը կը շօշափէք, ձեր խիղջը կը քննէք, որպէս զի զիտնաք թէ այն զաղտնիքը յայտնել ոկտք էք թէ լոել: Միջին դարու մէ ջ չենք զտնուիր, բարեկամ, ալ Ա. Ա. Հ. կոչուած զաղունի ատեաններ և Ազատ-դատաւորներ շնան. բայց ինչ օդիտի հարցընեք այն մարդերուն. ով խեղջ, ինչ կ'ուղես ինձմէ, ըստ Սթէրն: Աւըեմն եթէ կը ննջեն անոնք, սիրելիս, թողուցէք որ ննջեն, եթէ քուներնին կորսնցուցած են, թողուցէք որ իրենց քնատութեան մէ ջ գեղնին, և դուք որ քնանալու համար խղջի տաղնապներ չունիք, քնացէք 'ի սէր Աստուծոյ:

Մորէլի դիմաց զծերաւն վրայ աշուկի տիսրութիւն մը նըկարուեցաւ:

Մօնթէ-Քրիսթօյի ձեռքը բռնեց :

— Բայց աղէտը վերստին կ'ըսկսի կ'ըսեմ, կոմս:

— Թողդ սկսի, ըստ կոմսը զարմանալով երիտասարդին նոյն խօսքը պնդելուն վրայ, որմէ բան մը չէր հասկընար, և ուշադրութեամբ անոր երեսը նայելով. թող սկսի, Ա.

թրիտեան ընտանիք մ'է այն . Աստուած դատապարտած է զանոնք , և անոնք իրենց վճռոյն սղատիմը պիտի կրեն . ամենքն ալ պիտի ոչնչանան այն ծալլուած թղթէ վանականներուն ողէս , զորոնք փոքր տղայք կը շինեն , և որոնք շինողին մէկ շունչովո իրարու ետե կ'իյնան եթէ երկու հարիւր հատ անդամ ըլլան : Երեք ամիս առաջ որ ալ Աէն-Մէրան մնուաւ , երկու ամիս առաջ՝ տիկին ար Աէն-Մէրանը , անցեալ օր ուարուան , այսօր ձերունի նոււարթիէն կամ նորատի Աւանթինը :

— Ուրեմն դուք դիտէիք , դոչեց Մորէլ այնպիսի սաստիկ սոսկումով մը , որմէ Մօնթէ-Քրիսթօ սարստաց , այն անկարեկիր մարդը որ երկնից կամարին անկման առջեւ անդամ անտարբեր պիտի կենար . դուք դիտէիք և բան մը չէիք ըսեր ինձի :

— Եւ ի՞նչ կը նկատէ ինծի այս բանս , կրկնեց Մօնթէ-Քրիսթօ ուսերը թոթվելով . միթէ ես այն անձերը կը ճանչնամ , և միթէ պէտք է մէկը աղատելու համար միւսը կրոսրցնել , ոչ . վասն զի յանցաւորը և զոհ եղողը իրաբմէ նախամեծար չեմ սեպեր :

— Բայց ես , ես , դոչեց Մորէլ իւր վիշտէն հեծելով , ես կը սիրեմ զան :

— Կը սիրեմ , զով , դոչեց Մօնթէ-Քրիսթօ իւր սակց վրայ ցատկելով և Մորէլի դէպ ՚ի երկինք բարձրացուցած կարկամաւ երկու ձեռքերը բռնելով :

— Մալեբար և յիմարանալու չափ կը սիրեմ զան այնպիսի մարդու մը պիտս որ անոր մէկ կաթիլ արտասուքը խնայելու համար իւր բոլոր արիւնը կու տայ , այս , Վալանթին ար Աիլքօրը կը սիրեմ , զոր այս միջոցիս սպաննելու կ'աշխատին . կը լսէք , կը սիրեմ զան , և Աստուածոյ ու ձեզ կը հարցընեմ թէ ի՞նչ կերպով կրնամ աղատել զան — :

Մօնթէ-Քրիսթօ այնպիսի վայրադ ձայն մը հանեց , որուն վրայ միայն վիրաւորեալ առիւծի մը մոնիւնը լսողները կրնան գաղափար մը ունենաւ :

— Թաշուան մարդ , զոշեց կոմաը նոյնպէս իւր ձեռքերը դալարելով , Աալանթինը կը սիրես , անիծեալ ցեղեմը աղջեկը կը սիրես — :

Երբէք Մարէլ պյաղիսի խօսուած մը լսած չէր :

Երբէք այս ասաինան ահուելի աչք մը իւր երեսին բոցավուած չէր :

Երբէք սոսկումի ոգին , զոր այնչափ անդամ թէ պատերազմի գաշտերուն և թէ Ալէքէրիայի մահացոյժ դիշերներուն մէջ տեսեր էր , իւր բոլորակը աւելի աղէտարեր հուրեր սփռուած չէր :

Մարէլ սարսափով մը ետ քաշուեցաւ :

Խոկ Մօնթէ-Քրիսթօ այս բարձրաձայն և կրիւք արտասահուած խօսքերէն ետեւ վայրկեան մը աչքը զոյեց արտաքին շաղիւնէ մը շլացածի պէս :

Եւ այն մէկ վայրկենին մէջ այնպիսի զօրութեամբ ինք զինքը ամփոփեց որ դոգյես մըրիկներէ ուռած իւր կուրծքին ալէծուփ շարժումը կամաց կամաց հանդարտեցաւ , ինչպէս մըրկածին ամպերէն ետեւ մըրկածուփ և փրփրագէղ ալիքները արևէն կը խաղաղին :

Կոմմին այս լուութիւնը , այս մոքի ամփոփումը և այս մըրցումը զրեթէ քսան մանրերիկորդ տևեցին :

Որմէ ետքը կոմաը իւր դունատեալ ճակատը վերցընելով :

— Տեսէք , սիրելի բարեկամ , ըսաւ հաղիւ հանդարտ ձայնով մը , տեսէք ինչոյէս կը պատժէ Շստուած այն մարդնըը որոնք սնասարծութեամբ և պաղութեամբ անսարքեր կը կենան իրենց ներկայացած սոսկալի տեսարաններուն առջև : Ես որ իրը անկարեկիր և հետաքրքիր հանդիսատես մը այն եղեռնային աղէտը կը դիտէի , ես որ իրը չար հրեշտակ մը մարդոց ոճրագործութեանց վրայ կը ծիծաղէի զաղանեաց ետին ապաստանելով , (հարուստ և զօրաւոր մարդիկ դիւրաւ իրենց գաղանիքը կը պահէն ) , և ահա ես ինքս այն օձին խածուածը կ'ըզգամ , որուն խեղաթիւր ընթացքը կը դիտէի , և այն խածուածը սրտիս կ'աղդէ — :

Մորէլ դադտնի հառաջանք մը հանեց :

— Բաւական է , շարունակեց կոմսը , դադրնցուցէք ձեր չեծեծանքը . մարդ եղէք , զօրացիք և մի յուսահատիք . վասն զի ես ձեր քովն եմ , վասն զի ես ձեր վրայ կը հսկեմ — :

Մորէլ տիրութեամբ գլուխը շարժեց :

— Յուսացէք կ'ըսեմ , կը հասկընաք , դոչեց Աօնթէ - Քրիսթօ : Գիտէք որ բնաւ սուա չեմ խօսիր ևս և բնաւ ալ չեմ խարուիր : Կես օր է , Մաքսիմիլիէն , փառք տուէք Աստուծոյ որ կես օրին եկաք . և իրիկուան կամ առտուան չըսդուցիք գործը : Մտիկ ըրէք ըսածներուս , Մորէլ . կես օր է . եթէ այս ժամուս Վալանթին մեռած չէ , չպիտի մեռնի :

— Ո՛չ , Աստուծ իմ , Աստուծ իմ , դոչեց Մորէլ , ոդեւ վարդի մէջ թողուցի զան — :

Աօնթէ - Քրիսթօ իւր ձեռքը ճակատին յարեց :

Աչուէլի դադտնիքով ծանրացած այն զլսին մէջէն ի՞նչ կ'անցնէր արդեօք :

Լուսոյ կամ խաւաբի հրեշտակը ի՞նչ կ'ըսէր արդեօք իւր սրտին , որ միանգամայն անողոքելի և մարդառէր էր :

Աստուծ միայն կիսէ :

Աօնթէ - Քրիսթօ իւր ճակատը բացաւ . այս անդամ քունէն արթնցող մանկան մը ուէս հանդարս էր այն :

— Մաքսիմիլիէն , ըսաւ , հանդարս սրտով ձեր տունը դացէք . կը հրամայեմ ձեզ որ քայլ մը չընէք , հոն երթաւու փորձ մը չփորձէք և ձեր գիմաց վրայ մտատանջութեան ստուերը չերեցընէք . ես ձեզ լուր կու տամ , դացէք :

— Աստուծ իմ , Աստուծ իմ , ըսաւ Մորէլ , ձեր անտարքերութեամբը կը սարսափեցընէք զիս , կոմս : Միթէ մահուան դէմ իշխանութիւն մը ունիք . միթէ ձեր կարողութիւնը մարդուս կարողութենէն վէր է . միթէ հրեշտակ մը կամ Աստուծ մ'էք — :

Երիտասարդը որ ամեննեին վտանգի առջեն փախած չէր . Աօնթէ - Քրիսթոյի առջեն ետ ետ կը քաշուէր անպատճակ սոսկումով մը :

Քայլց Մօնթէ - Քրիստո տիրալի և միանդամայն քաղցր ժպիտով մը անոր նայեցաւ, որով Մաքսիմիլիէնի աչքը արտասուուր լցուեցաւ:

— Ըստ բանի մէջ կարողութիւն ունիմ, բարեկամ, պատասխանեց կոմուր, դայէք, մինակ մնալու պէտք ունիմ — :

Մոլէլ յաղթահարեալ այն զարմանալի իշխանութենէն, զոր Մօնթէ - Քրիստո իւր բոլորտիքը եղողներաւն վրայ կը բանեցընէր, դիմադրելու անդամ փորձ չփորձեց . կոմունին ձեռքը թութիւց և մեկնեցաւ :

Միայն թէ դրան առջև Պաթիսթէնի սպասելու համար կեցաւ, որուն Մաթինեօն փողոցին անկիւնէն վազելով դալը առեր էր :

Ակլըֆօր և ա'նվրինեի շուտով հիւանդին քովը հասեր էին : Վալանթին նորադած էր և բժիշկը պարագային համեմատինամքով և անոր հիւանդութեան զաղանեաց վրայ ունեցած ծանօթութեամբը հիւանդը քններ էր :

Ակլըֆօր բժշկին նայուածքէն և շուրթերէն կախուած մնացեր էր, և անոր քննութեան հետեւութեանը կը բապանէր :

Նորարթիէն նորատի աղջիկէն աւելի գունատեալ և Ակլըֆօրէն աւելի բժշկին ձայնը լսելու փափաքելով նոյնպէս կ'ըսպասէր, և ամեն բան իւր խելքովն ու զգացողութեամբը կը յայտնէր :

Ակլըֆապէս ա'նվրինեի կամաց ձայնով այս խօսքերը հանեց : Կենդանի է տակաւին :

— Տակաւին կ'ըսէք, դոչեց Ակլըֆօր . ո՛չ, Պ. բժիշկ, ինչ սոսկալի խօսք մը արտասանեցիք :

— Այս, ըստ բժիշկը, կը կրկնեմ ըստածս . կենդանի է տակաւին, և ես այս բանիս վրայ խիստ կը զարմանամ :

— Քայլց աղատած է, հարցուց հայրը :

— Այս, ըստ որում կենդանի է — :

Այս միջոցին ա'նվրինեի նայուածքը նորարթիէի աչքին հանդիպեցաւ :

Այնպիսի անսովոր ուրախութեամբ կը փայլէր այն, և այն չափ ըստ խօսքեր ունենալը կը յայտնէր, որ բժիշկը դարձացաւ:

«Թաղկահաս աղջիկը թեամսո ին վրայ թողուց, որուն շուրջերը իրենց դունասութեամբն ու սովորակութեամբը հաղին գեմքին միւս մասերէն կ'որոշուէին, և անշարժ մասց նուարթիէի երեսը նայելով, որ բժշկին ամեն շարժումները ուշադրութեամբը կը դիմէր»:

— Պարոն, ըստ այն ատեն ա՛նվրինեի Վելլըֆօրին, օրիորդ Աւալանթինի սենեկապանուհին հոս կանչեցէք, եթէ կը հաճիք — :

Վելլըֆօր սենեկին դուռը զոցելուն ոյէս՝ ա՛նվրինեի նուարթիէին մօտեցաւ:

— Ինձ ըստ խօսք մը ունիք, պարօն — , հարցուց:

«Դերունին յայտնի նշաններով աշքը դոցեց. ինչու արդէն կը յիշենք՝ այս ըստ ըստ միակ նշանն էր այն:

— Ինձի միայն:

— Այո, ըստ նուարթիէ:

— Հաստ աղէկ, հիմա ձեզի հետ առանձին կ'ըլլամ — :

«Այս միջոցին Վելլըֆօր սենեկապանուհին հետ մէկ տեղ վերադարձաւ. այս մէրջինին ետքէն տիկին տը Վելլըֆօր ալիու զար:

— Ի՞նչ եղաւ արգեօր իմ սիրելի զաւակս, ըստ տիկինը. հիմա իմ սենեակս էր, ու քիչ մը անհանդիսու ըլլալուն կը տրանջար, բայց չէի կարծեր որ իւր տկարութիւնը այսչափ ծանր ըլլայ — :

Եւ ծաղկահաս կինը լալով ու ձշմարիտ մօր մը խանդաղատութեան ամեն նշաններով Վալանթինին մօտեցաւ և անոր ձեռքը բռնեց:

Տ' Ավրինեի շարունակ նուարթիէի աչքը կը դիմէր, որոնք

կ'ընդարձակուեին և կը բոլորակուեին, իւր այտերը կ'այ-  
լագունէին և կը դողային, ու քրտինքը մարդ արտանման  
հակտին վրայէն վար կը հստէին:

— Ո՛չ —, ըստ բժիշկը ակամայ՝ ինքն ալ ։ Նուարթիեի  
նայուածքին ուղղութեամբը դիտելով, այսինքն իւր աշքը  
տիկին տը Ա. իլլոֆօրի վրայ յարելով, որ այս խօսքերը կը  
կրկնէր.

— Այս խեղա աղջիկը իւր անկողնոյ մէջ աւելի հանդիսա-  
պիտի ըլլայ . եկու, ֆաննի, իւր անկողինը պառկեցընենք  
զան — :

Պ. ա՛ւլիքինեի, որ այս առաջարկութեան մէջ ։ Նուարթիեի  
չետ առանձին մեալու միջոց մը կը դիտէր, դլուով նշան ը-  
րաւ թէ իրօք խիստ աղէկ կ'ըլլայ զան իւր անկողինը տանիլ,  
սակայն խստիւ արդիլց որ իւր հրամայածէն զատ բան մը  
չտան անոր:

Աւստի երկու կիները Ա. ալանթինը բռնելով տարին, որ  
իւր նուալզումէն սթափիք էր, բայց շարժելու և խօսելու ան-  
կարող էր, այնչափ իւր անդամները զգացած ցնցումն ուժէ  
կտրեր էին:

Այսու ամնայնիւ Ա. ալանթին կարող եղաւ իւր հաւը բա-  
րելու, որ կարծէր թէ իւր հոգին իրմէ կը խլեն զան իւր  
քովէն հեռացընելով:

Տ. Ավրինեի հիւանդին ետեւէն դնաց, անոր համար պատ-  
ուէրներ տուաւ և հրամայեց Ա. իլլոֆօրին որ կառք մը բռնէ,  
անձամբ դեղադործին երթայ, հրամայած դեղերը իւր առ-  
ջին շինել տայ, իւր ձեռքովը բերէ զանոնք ու իւր աղջկան  
սենեկին մէջ իրեն սպասէ:

Ա. ալանթինին բան մը չտալու համար ըրած պատուէրը  
նորող ելէն ետեւ ։ Նուարթիեի քովը իջաւ, զդուշութեամբ  
դուռը դոցեց, և ապահով ըլլալէ ետեւ որ մէկը իրենց խօ-  
սակցութիւնը պիտի չլուէ,

— Ըսէք ինծի, ըստ, ձեր աղջկան հիւանդութեան վրայ  
բան մը դիտէք:

- Այսի, ըստ ծերունին :
- Մարիկ ըրէք, կորսոցընելու ժամանակ չունինք . ևս ձեզի հարցումներ ընեմ և գուք պատասխանեցէք — :
- Կուարթիկ նշան ըրաւ թէ պատասխանելու պատրաստ է :
- Վալանթինի այսօրուան պատահած դէպքը դուշակեցի՞ք :
- Այսի — :
- Տ'Ավրինեի վայրիեան մը մտածեց, եաքը Կուարթիկի մուենալով :
- Կերեցիք ինձի ըսելու խօսքերուս համար, յաւելուց . մեր այս սոսկալի կացութեան մէջ ամեն բան պէտք է որ յայտնի ըսենք, ողոքմիլի Պարուային մոռնիլը տեսա՞ք — :
- Կուարթիկ իւր աչքը դէպ ՚ի երկինք վերցուց :
- Գիտէք ինչ բանէ մոռաւ, հարցուց ա'Ավրինեի իւր ձեռքը Կուարթիկի ուսին վրայ գնելով :
- Այսի, պատասխանեց ծերունին :
- Կը կարծէք որ բնական մահուամբ մեռած ըլլայ — :
- Ժաղիաի պէս բան մը Կուարթիկի անշարժ շրթանց վրայ նկարուեցաւ :
- Աւրեմն կը կարծէք որ Պարուա թունաւորուած ըլլայ :
- Այսի :
- Եւ այն թոյնը, որուն ինքը զո՞ւ եղաւ, կը կարծէք որ իրեն համար սահմանուած ըլլար :
- Ոչ :
- Հիմա կը կարծէք որ Պարուան թունաւորող ձեռքը ու ըիշի մը վեասել ուզելով՝ այսօր Վալանթինին կը վեասէ :
- Այսի :
- Աւրեմն Վալանթին ալ պիտի մռոնի՞ — , հարցուց ա'Ավրինեի իւր ամենէն ուշադիր նայուածքը Կուարթիկի վրայ յարելով :
- Եւ կ'ըսպասէր որ իւր այս խօսքին ազդեցութիւնը ծերին վրայ տեսնէ :
- Ոչ, պատասխանեց Կուարթիկ այնովիսի յաղթական նայ :

ուսածքով մը , որ կարող էր ամենեն յաջող դռւակողի մը  
կօրծիքը՝ ի գերե հանել :

— Ուրեմն կը յուսածք , ըստ ո՞ւվարինեի զարմանքով :

— Այս :

— Ի՞նչպէս կը յուսածք — ?

Ծերաւնին աչօք հասկըցուց որ չէր իրնար պատասխանել :

— Ո՛չ , այս , սասոյդ է — , մրժաց ո՞ւվարինեի :

Ետքը նուարթիէի դառնալով ըստ :

— Կը յուսածք որ մարդասպանը պիտի ձանձրանայ :

— Աչ :

— Ուրեմն կը յուսածք որ Առյնը Աւալանթինի վրայ աղ-  
ղեցութիւն պիտի շռնէ :

— Այս :

— Աւալանթինը Առյնաւորելու փորձ փորձելնին զիտէք ,  
այնպէս չէ — :

Ծերաւնին աչքով նշան ըրաւ որ ամենեին տարակոյս չունի  
այս մասին :

— Ուրեմն ի՞նչպէս կը յուսածք որ Աւալանթին պիտի ա-  
ղատի — ?

Կուարթիէ իւր աչքը մէկ կողմ յարած կեցաւ . ո՞ւվարինեի  
անոր նայուածքին ուղղութիւնը դիտեց , և հոն շիւ մը տե-  
սաւ , որուն մէջ ամեն առտու իրեն բերուած գեղը կը զըտ-  
նուէր :

— Ո՛չ , իմացայ , ըստ ո՞ւվարինեի յանկարծ միտքը բան  
մը զալով , արդեօք նախաղղուշութեալբ . . . — :

Կուարթիէ չմողուց որ խօսքը վերջացընէ :

— Այս , ըստ :

— Թունաւորուելէ զգուշացընելու համար . . . :

— Այս :

— Քիչ քիչ այս գեղին սովորեցուցիք զան . . . :

— Այս , այս , այս , ըստ Կուարթիէ իւր միտքը հասկը-  
ցընելուն ուրախանալով :

— Երօք ձեղ տուած դեղերուս մէջ բեւեկնի թոյն դնել  
տալս ըսեր էի :

— Այո :

— Եւ այս թոյնին սովորեցընելով թոյնի մը ազգեցու  
թիւնները ոչնչացընել ուղեցիք — :

Նուարթիէ իւր ուրախութիւնը յայտնեց :

— Եւ իրօք ձեր նպատակին հասած էք, դուք տ' Ավրիւ  
նի : Առանց այս զգուշութեան Վալանթին այսօր պիտի ըս-  
պանուէր և մնեք օգնութիւն մը պիտի չկարենայինք ընկլ.  
իւր ցնցումը սաստիկ էր բայց առանց ազգեցութեան, և այս  
անգամ թոյնը պիտի չկրնայ Վալանթինը սպաննել — :

Դերմարդկային ուրախութիւն մը ձերին աչաց մէջ փայ-  
էցաւ, զորոնք անսահման երախտազիտութեամբ դէս ՚ի եր-  
կինք վերցուց :

Նոյն միջոցին Վիլլֆօր ներս մտաւ :

— Աչա, պարոն թժիշլ, ըսաւ, ձեր խնդրած դեղը բերի :

— Այս դեղը ձեր առջին պատրաստուեցաւ :

— Այո, պատրաստանեց թաղաւորի զործակալը :

— Ձեր ձեռքէն ուրիշ մարդու ձեռք անցաւ :

— Ոչ — :

Տ' Ավրինեի շեշը առաւ, և անոր մէջ պարունակուած դե-  
ղէն քանի մը կաթիլ իւր ափին մէջ դրաւ և խմեց :

— Աղէի, ըսաւ, Վալանթինի քովը երթանք հիմա, հոն  
պէտք եղած պատուէրները պիտի տամ, և դուք անձամբ պի-  
տի հսկէք, պարոն աը Վիլլֆօր, որ իմ ըսածներէս դուրս  
բան մը չընեն — :

Երբ ա՛Վրինեի Վիլլֆօրի հետ Վալանթինի սենեակը կը  
մտնէր, խիստ երեսութով, մնդմ և որոշ ձայնով Խտալացի  
քահանայ մը Պ. աը Վիլլֆօրի տան պատկից տունը իւր զոր-  
ծածութեանը համար կը վարձէր :

Զգիտցուիր թէ ինչ դաշնաց զօրութեամբ այն տանը ե-  
րեք վարձակալները երկու ժամ ետքը կարասիքնին պարզե-

յին . բայց թաղին մէջ ընդհանուր տարածայնութիւն մը եւ լեռ էր թէ այն տունը իւր չիմանց վրայ հաստատ շըլալուն օր մը պիտի փլչէր . սակայն այս բանս արդելք չէր ըլլար նոր վարձակալին որ իւր սակաւապետ կարասիովք նոյն օրը յամը դէպ 'ի հինգին դայ անոր մէջ բնակելու :

Նոր վարձակալը վարձու դաշնիքը երեք , վեց կամ ինը տարուան համար ըրաւ , և կալուած ատէրերուն սովորութեան համեմատ վեց ամիս առաջ վճարեց :

Ինչպէս օր ըսինք՝ նոր վարձակալը Խոտալացի էր և պարոն ձիազօմ Պիւզոնի կը կոչուէր :

Խոկայն զործաւորներ կանչուեցան , և արուարձանին վերէն աւշ մնացող սակաւաթիւ անցնողները նոյն գիշերը զարմանքով որմադիրներ և հիւսներ կը տեսնէին , որոնք տառանեաւ տան հիմերը նորոգելու զբաղեալ էին :



ՊԱՌՈՒԹ ԺԱ.

ՀԱՅՐՆ ՈՒ ԾՂՋԻՐ



**ՍԱԿՐԵՎՈՅՑ ՊԼԻՒՐՆ ԱՇ-Խ ՄԵՍԱՆՔ ՈՐ ՄԻԼԻՆ**  
**ՏԱՆԿԼԱՐ պաշտօնական կերպիւ տիլին**  
**ՄԸ Ա-ԽԼՌՓՈՐԻՆ ԽՄԱՑԲՆԵԼՈՒ ԵԿԵՐ ԵՐ**  
**Պ. ԱՆՈՐԵԿ ԴԱՎԱԼՐ ԱՆՌԻՒ ՀԵՄ ՕՐԻՌՐԴ Խ-**  
**ՃԵՆԻ ՏԱՆԿԼԱՐԻՆ մօտաւոր ամուսնութիւնը:**

Այս պաշտօնական յայտաբարութենքն առաջ, որ այս ամուսնութեան մեծ դործը կատարելու փափաքողներուն որոշումը կը ցուցըներ, տեսարան մը տեղի ունեցեր եր, զարգէտք ենք մը ընթերցողներուն պատմել:

Աւստի կ'աղաւենք զանոնք որ քայլ մը ետ դառնան, և այն մեծ աղետից առառւն այն փառաւոր ոսկեզօծ սրահը յիշեն, որուն վրայ արդեն խօսեցանք, և որուն փառաւորութիւնը անոր տիրոջը Պ. սեպուհ Տանկլարին դռողութիւնը կ'աւելցըներ:

Նոյն սրահին մէջ առուռւան ժամը դէօլ ՚ի իննին սեպուհը քանի մը վայրկենէ ՚ի վեր խիստ մասախորչ և յայտնի անհանդիստ երեսյթով կը ստըռեր ամեն դոներէն ներս նայելով և ամեն լած շշուիրին տկանջ դնելով:

Երբ իւր համբերութեան սահմանը անցաւ, սենեկապանը կանչեց:

— Եթիէն, ըստ անոր, նայէ անդամ մը ինչ բանի հա-

մար օրիորդը աղաւեր է որ սրահը իրեն սպասեմ, և իմացիր թէ ինչ պատճառաւ այսշափ երկար առեն զիս հոս կ'ըստասեցընէ — :

Սեղուհիը իւր անհամբերութիւնը այս խօսքերով յայտնելէն ետև՝ սիրութ քիչ մը հանգարած երեցաւ :

Իրօք օրիորդ Տանկլար արթննալէն ետև իւր հօրը հետ առանձին տեսնութիւն ուղեր էր, և իրենց տեսակցութեան տեղը ոսկեզօծեալ սրահը որոշեր էր :

Աղջկան այս նորանշան ընթացքը, մանաւանդ անոր պաշտօնական ձեւը, քիչ զարմանք պատճառած չէին սեղանաւորին, որ անմիջապէս իւր աղջկան փափաքը կատարեր էր անորմէ առաջ սրահը երթալով :

Եթիէն շատ չանցաւ Տանկլարին պատասխանը բերաւ :

— Օրիորդին սենեկապանուհին, ըստու, իմացուց ինձի թէ օրիորդը վրան զլուխը շիտկելուն պէս պիտի չուշանայ ձեր քովը դալու — :

Տանկլար զլուզվե նշան մը ըրաւ իմացընել ուղելով թէ դոհի է տուած պատասխանէն :

Սեղանաւորը ամենուն և իւր մարդոց իսկ առջին ինքշինքը բարեմիտ մարդ մը և տկար հայր մը կը ցուցընէր :

Իւր խաղացած ժողովրդային խաղին մէջ իրեն սեփհականած դերին մէկ երեսն էր այն, որ կարծէր թէ իրեն կը յարմարէր, ինչպէս կը յարմարէր նախնի թատրոնի հայրերուն կրած դիմակներուն, որոնց կողմնակի աջ երեսը ամփոփ եղուարթ շուրբ մը ունէր, և ձախ երեսը՝ կախուած և տընթագին շուրբ մը :

2ժողոնանք ըսելու որ մտերմութեան մէջ իւր ամփոփ և զուարթ շուրբ կախուած և տիրադին շուրթին ուղղութեանը հաւասար կ'իշնէր, այնպէս որ ժամանակին մեծադոյն մասին մէջ բարեմիտ մարդը կ'աներեսութանար և բիրտ ամուսինի մը կամ ինքնիշխան հօր մը տեղի կու տար :

— Այս իննթը ինչ բանի համար հետս խօսիլ կ'ուզէ ար-

դեօք, մըմսաց Տանկլար, և ինչո՞ւ համար պարզապէս իմ դահլիճն չգար ու հոս կը հրաւիրէ զիս — :

Քսան անդամ՝ այս անհանդստութիւն պատճառող մտածութիւնը իւր ուղեղին մէջ կը դառնար երբ գուռը բացուեցաւ և հօծէնի ներս մտաւ սև ծաղկիներով բանուած սև մնդուսէ շրջազգեստ մը հազած, մազերը շխտկած և ձեռքը ձեռնոց դրած, կարծես թէ Խտալական մատրոնին մէջ իւր թեաթոռին վրայ նստելու կ'ընթար:

— Ի՞նչ խօսք ունիս ինծի, հօծէնի, զուեց հայրը, և ինչո՞ւ այս հանդիսաւոր սրահը ուղեցիր զալ և ոչ իմ դահլիճո, ուր աւելի հանդիսաւ կ'ըլլայինք:

— Խրաւունք ունիք, պարոն, պատասխանեց հօծէնի նշան մը ընելով իւր հօրը թէ կրնայ նստիլ, և մեր առջելը երկու խնդիրներ կը զնէք, որոնք մեր ընելու խօսակցութիւնը կանխաւ կը համառօտեն: Աւսահ երկու խնդիրներուն ալ պատասխանեմ, և սովորական օրինաց հակառակ նախ երկրորդէն սկսիմ որ աւելի պարզ է: Մեր ժամադրութեան տեղին սրահը որոշելուս պատճառը, պարոն, սնդանաւորի մը դահլիճին անհանոյ տպաւորութիւններէն և ազդեցութիւններէն հեռու ըլլալու համար է: Դրամարկղի այն տետրէը՝ թէև ազէկ ոսկեզօծեալ ըլլան, բերդի դռներու պէս գոցուած այն պահանցները, լումայատումսերուն այն կոյտերը, որոնց ուրիշ դալը շնիցուիր, և այն բաղմաթիւ նամակները, որոնք Անդղիայէն, Հոլանտայէն, Սպանիայէն, Ճնդկաստանէն, Զինաստանէն և Բէրուէն կու դան, ընդհանրապէս հօր մը մտաց վրոյ տարօրինուկ ազգեցութիւն մը կ'ընեն և մասցընել կու տան անոր որ աշխարհիս մէջ դորձելէն աւելի մծ և աւելի նուիրական բան մը կոյ: Աւսահ որոշեցի որ այս սրահը դահլիք, որու մէջ զեղեցիկ շրջանակներով ձեր, իմ և մօրս կենդանադիրերը և ամեն տեսակ հովուական դաշտանկարներ և ուրատառուչ լինպասանական պատկերներ կը տեսնէք: Արտաքին երկոյթները մծ ազգեցութիւն կ'ընեն ինձ: զույգէ՝ մանա-

ւանդ ձեղի համար սիսալմաւնք մը համարուի այս : սակայն ինչ ընեմ, եթէ այսպէս մասցածին խորհուրդներ չունենայի, արուեստաւոր չէի ըլլար :

— Ծառ աղջկ, պատասխանեց Տանկլար, որ անխոռվ հանդարտութեամբ իւր աղջկան ըսածներուն ականջ գրեր էր, բայց անոր մէկ խօսքն անդամ չէր հասկըցեր, քանզի թագուն խորհուրդներ ունեցող մարդու մը պէս ոյնչափ մասծութեանց մէջ ընկլմած էր, որ իւր խօսակցին դադափարներուն մէջ իւր բուն դադափարին թելը փնտաելու ժամանակ չունէր :

— Ահա երկրորդ խնդիրը զրեթէ պարզեցի, ըսաւ կօժէնի բոլորովին անխոռվ սրտիւ և իւր շարժմանց և խօսքերուն մէջ ցուցուցած առնական համարձակութեամբը, ու գուք կարծեմ թէ զոհ եղաք: Հիմա դառնանք առաջին խնդրոյն: կը հարցընէ իք թէ ինչո՞ւ ձեզմէ այս տեսակցութիւնը իւրնդրեցի: երկու խօսքով պատճառը ձեղ ըսեմ, պարոն: չեմ ուզեր պարոն Անտրէա Գալիալզ անթի կոմսին չեմ ամուսնանալ:

Տանկլար իւր թեաթոռին վեր ցատկեց, և իւր աչքն ու միանգամայն բազուկները զէպ'ի երկինք վերցուց:

— Այս, պարոն, շարունակեց կօժէնի միշտ մի և նոյն հանդարտութեամբ: զձեղ զարմանքի մէջ կը տեսնեմ: քանզի այս փոքր զործին խօսքը ըլլալէն 'ի վեր ամսնեին ընդդիմութիւն մը չայտնեցի, միշտ հաւաստի ըլլալով որ ժամանակը հասած տաենը կընամ ընդդիմանալ բոլոր անոնց, որոնք ինծի խորհուրդ չարցուցին և բոլոր այն գործերուն, որոնք իմ անկախ և աղաս կամքիս անհաջոյ են: Այսու ամենայնիւ այս անդամուան իմ հանդարտութիւնս և անտարբերութիւնս ուրիշ պատճառ մը ունէր: հնաղանդ և անձնուէր աղջկի մը ըլլալվս... (թեթև ժպիտ մը նորատի աղջկան ծիրանեղոյն շրթանց վրայ նկարուեցա), հնաղանդ ելու կը ջանայի:

— Ետքը, հարցուց Տանկլար:

— Ետքը , պարոն , կրկնեց իօմէնի , բոլոր կարելի ջանքերս ըրի , և չիմա որ ժամանակը հասած է , իմ բոլոր ջանիցս հակառակ՝ կըզդամ որ անկարող եմ հնագանքելու :

— Բայց վերջապէս — , ըստ Տանելլար , որ տկարամոռութեամբ այս խիստ արամագառութեան բեռին տակը ընկածեալ կ'երևէր , և իւր աղջկան անխռովի սրտով այն խօսքերը խօսիլը կը ցուցընէր որ կանխաւ անոնց վրայ մտածած էր և կամքի զօրութիւն ունէր — , վերջապէս այս մեքման պատճառը ի՞նչ է , իօմէնի :

— Պատճառը կը հարցընէք , կրկնեց նորատի աղջկելը . ոչ , պատճառը այն մարդուն մէկ ուրիշէն աւելի տղեղ , աւելի խենթ կամ աւելի անհաճոյ ըլլալը չէ , ոչ . Պատճառէա Գաղպալլանթին կրնայ խել բաւական դեղեցիկ տիստը մը ըլլալ այն անձանց համար , որոնք դիմաց վայելչութիւնն ու հասակը կը դիտեն . և կամ անոր վրայ ուրիշէ մը նուռազ համակրութիւն ունենալը չէ . դիշերօթիկ դպրոցէ ելնող աղջկները այսպիսի պատճառներ կ'ունենան . բայց ես ամենեւ ւին մէկը չեմ սիրեր , պարոն , դուք աղէկ դիտէք , այնպէս չէ : Աւստի չեմ կրնար հասկընալ թէ ի՞նչ պատճառաւ առանց անհրաժեշտ կարեսութեան մը մշտնջենաւոր ընկերի մը հետ ասպելու համար կեանքս նեղութեան մէջ սիտի դընեմ : Սիթէ իմաստունը տեղ մը ըստած չէ թէ՝ « Աւելըդ բան մի առնուր » , և ուրիշ տեղ մը թէ՝ « Ամեն բան քու վրադ կըէ » : Այս երկու առակները լստիներէն և յաւնարէն լինուով խել սորված եմ . մէկը կարծեմ Ֆէտըն է և միւսը Պիասը : Աւստի , սիրելի հայր իմ , կենաց ալէկոծութեան մէջ , (ըստ որում կեանքը մը ակնկալութեանց մշտնջենաւոր ալէկոծութիւնն է) , անօգուտ բեռս ծովը կը նետեմ , և լոկ իմ կամքով կը մնամ կատարեալ առանձին և չետեղար կատարեալ ազատ ապրելու տրամադիր ըլլալով :

— Ազորենի աղջկէ , մըմուաց Տանելլար դոյնը նետելով ,

քանզի երկար փորձառութեամբը աղէկի կը ճանչնար այսպէս յանկարծ իւր դիմացն ելնող արդելքին դժուարութիւնը:

— Աղորմիլի աղջիկ կ'ըսէք, կրկնեց կօձէնի, ողորմիլի աղջիկ կ'անուանէք զիս, պարոն, ո՛չ, ամենեին, ստուդիւ այդ բացագանչութիւնը թատրոնական և կեղծ կ'երեխի ինձ: Ընդ հակառակն՝ երջանիկ եմ ես. քանզի կը հարցընեմ ձեզ՝ ինչ կը պակսի ինձի: Եմն մարդ իմ զեղեցկութիւնս կը զովէ, նպաստաւոր ընդունելութիւնները կը սիրեմ, որոնք զէմքերը կը զուարթացընեն, և զիս շրջապատողները նուազ տղեղ կ'երեխին ինձ այն ատեն: Բաւական խելք և զզացողութիւն ունիմ, որոնցմավ կարող պիտի ըլլամ ամենուն կեանքը դիտելով բարի օրինակներ քաղել, ինչպէս կ'ընէ կապիկը երբ կանաչ ընկոյզը կտրելով անոր մէ չ պարունակուածը կը քաղէ: Հարուստ եմ ես, քանզի դուք Գաղղիոյ ամենէն մծ հարուստներէն մէկն էք, քանզի ես ալ ձեր միակ աղջիկն եմ, և դուք Բորթ-Սէն-Մարթէն և Կէթէ թատրոններուն հարց շափ յամառ չեք, որոնք իրենց աղջիկները ժառանգութենէ կը զբին նոռոներ չունենալուն համար: Մանաւանդ որ զիս ժառանգութիւնէ զոնէ բոլորովին զրկելու իշխանութիւննիդ օրէնքը նախազ զուացութեամբ վերցուցած է ձեզմէ, ինչպէս որ Պ. այս ինչին կամ այն ինչին չետ ամուսնանալու համար զիս բռնագատելու իշխանութիւննիդ կ'արդիլէ: Այսպէս զեղանի, հանձարեղ, տաղանգաւոր՝ ինչպէս կ'ըսեն կատակախառն զուսանական խաղերուն մէջ, և հարուստ եմ ես. միթէ բարեբաղդութիւն մը չէ այս, պարոն, ինչո՞ւ ու բեմ զիս ողորմիլի կ'անուանէք — :

Տանիլար տեսնելով որ իւր աղջիկը կը ժպտէր և յիմարաբար կը պարձենար, չկրցաւ իւր մէկ բիրա շարժումը զըսպէլու, զոր ձայնով մը յայտնեց, բայց շուասվ լոեց:

Իւր աղջիկան հետազօտիչ նայուածքին, և կնճռած զեղեցիկ ու յօնքին զիմացը զտնուելով, իսկոյն իւր բարկութիւնը իջեցուց:

— Երօր, աղջիկս, պատասխանեց Տանկլար ժպիտով մը, քու այն ամեն պարծենցած յատկութեանցդ տէրն ես բաց ՚ի մէկ բանէ, զոր չեմ ուղեր անքաղաքավարութեամբ յայտնի ըսել, աւելի կ'ուղեմ որ դուն քեզմէն գուշակես — :

Էօծէնի Տանկլարի երեսը նայելով կը զարմանար թէ ինչ-պէս սեղանաւորը կ'ուղէր վիճիլ այն պարծանաց պսակին ծաղիկներէն մէկուն վրայ, զոր այնչափ աէզութեամբ իւր դլին վրայ զետեղեր եր:

— Աղջիկս, շարունակեց սեղանաւորը, ամեննին շամուս-նանալու համար որոշումկ յայտնած ատենդ՝ կատարեալ կերպիւ բացատրեցիր ինձ թէ քեզի պէս աղջկան մը զիտաւորութիւնները կազմող զդացումները որո՞նք են, հիմա ես ալ պիտի ըսեմ քեզի թէ ինծի պէս հօր մը իւր աղջիկը ամուս-նացընելուն պատճառները որո՞նք են — :

Էօծէնի խոնարհութիւն մը ըբաւ չէ թէ մոխի ընող հլու աղջկան մը այլ վիճաբանելու պատրաստուող հակառակորդի մը պէս :

— Աղջիկս, շարունակեց Տանկլար, երբ հայր մը իւր աղջկան ամուսին մը տալ կ'ուղէ, միշտ ո՞ր և է պատճառ մը ունի այն ամուսնութիւնը կատարելու համար: Ամանք այն փափարը ունին, զոր քիչ մը առաջ դաւն կ'ըսէիր, այսինքն կ'ուղեն իրենց թոռները տեսնել: Ես այս տկարամութիւնը չունիմ, և համարձակ կ'ըսեմ թէ ընտանեկան ուրախութիւն-ները բոլորովին անտարբեր են ինծի համար: Այս բանս կրնամ յայտնի ըսել այնպիսի աղջկան մը, զոր բաւական իւրացի Ճանչնալուս համար առաջնով եմ որ այս անտարբերութեան պատճառը կը հասկընայ և զիս չմղագրեր:

— Ուզածիս պէս կը խօսիք, ըսաւ Էօծէնի. համարձակախօս ըլլանք, պարոն, իմ ուղածս ալ այս է :

— Ա՛չ, ըսաւ Տանկլար, ընդհանրապէս համարձակութեան համար քու ունեցած համակրութեանդ մասնակից չեղած ալ կը տեսնես որ երբ առիթը պատահի՝ քեզ համափառ եմ:

Աւրեմն ես ալ համարձակ պիտի խօսիմ . քեզի ամուսին մը առաջարկելու չէ թէ քեզի համար էր , քանզի սառւղիւ այն միջոցին ամնեին քեզի շմածեցի , ( համարձակ խօսիլը կը սիրես գուն , ես ալ քու կամացը համաձայն կը խօսիմ ) , այլ ուղեցի որ կարելի եղածին շափ շուառիւ այն ամուսինը առնուս քանի մը առևարական պատճառներու համար , որոնք ինձի նպաստաւոր են — :

Էօժէնի շարժում մը բրաւ :

— Ատոյդ են ըսածներս , աղջիկս , բայց պէտք չէ որ մեղադրես զիս . քանզի գուն ստիպեցիր զիս որ այսպէս խօսիմ . տկամայ թուարանական մակութեանց մէջ կը մանեմ քեզի պէս անձի մը հետ , որ կը վախնաս սեղանաւորի մը դահլիճը մանելու , որպէս զի անհաջոյ և հակարանասեղծական առաւորաւթիւններ շընդունիս , կարծեմ այսպէս կ'ըսեն փիլիսոփաները : Սակայն այն սեղանաւորի դահլիճին մէջ , ուր թէե անցեալ օր բարեհաջեցար մանելու որպէս զի այն հաղար ֆրանքը ընդունիս , զոր ամն ամփս քու հաճոյիցդ գործածելու համար կը շնորհէմ , դիտցիր , սիրելի օրիսրդս , որ սեղանաւորի դահլիճին մէջ կարդուիլ շուզող ծաղկահաս անձանց համար իսկ իսիս օդտակար բաներ կան սորմելու : Քաւ ջզային դիւրազգացութեանդ և օրինակի համար կ'իմացրնեմ քեզ այս սրահիս մէջ թէ այն դահլիճին մէջ կը սորմի մը մարդ թէ սեղանաւորի մը վարկը իւր ֆիզիքական և բարոյական կեանքն է , թէ վարկը մարդս կը կենդանացընէ , ինչպէս որ շնորհ զմարմինը . և այս խնդրոյն վրայ Պ. Մօնթէ-Քրիսթօն այնպիսի խօսքեր ըստաւ որոնք երբէք չեմ մասնար : Այն դահլիճին մէջ կը սորմինք որ մարդս ո՛չչափ վարկը կը կորսնցընէ , աշնչափ մարմինը կը դիմականայ , և այս բանս խիստ քիչ ժամանակի մէջ պիտի պատահէր այն սեղանաւորին , որ այսպիսի լաւ գատողութիւն ունեցող աղջկան մը հայրն ըլլալու պատիւն ունի — :

Բայց Էօժէնի փոխանակ այն խօսքէն խոնարհելու՝ դլուիը աւելի բարձրացուց :

— Աւրեմն հարստութիւննիդ կորսնցուցիք, ըստ :

— Այս, Շիշդ է ըստգր, ըստ Տանկլար իւր բղունդներ բոված կուրծքը քերելով, և իւր զժնեայ զիմացը վրայ վատասիրա բայց խորամանկ մարդու մը ժպիտը ցուցընելով :

— Ի՞նչ կըսէք :

— Այս, կորսնցուցիք, աչա այս սոսկալի զաղունիքն ալ յայտնուեցաւ, ինչպէս կ'ըսէ ողբերգու բանաստեղծը ։ Հիմա, աղջիկս, կ'իմացընեմ քեզ թէ ինչպէս այս դժբաղութիւնը կրնայ քու միջոցաւդ թեթևնալ չեմ ըսեր ինծի այլ քեզի համար :

— Ա՛չ, դոչեց հօճէնի, եթէ կը կարծէք թէ ձեր ըստա դժբաղութեան վրայ ինծի համար կը ցաւիմ, կը սխալիք, պարո՞ն :

« Ձեր հարստութիւնը կորսնցընելնիդ ինձ ի՞նչ մկաս ունի. միթէ ես տաղանդս կը կորսնցընեմ և չեմ կրնար բառաթայի, Մալիպրանի և Կրիզիի պէս ձեռք բերել այն հարստութիւնը, զոր գուրք բնաւ պիտի չուայիք ինձ, որշափ և հարուստ ալ ըլլայիք. ձեր կշամքական խօռքերով և խոժոռնայուածքով ինձ տուած տաներկու հաղար խեղչ ֆրանքերնուգ տեղ՝ ծափահարութիւններով, կեցցէններով և ծաղկի փունջերով հարիւր կամ հարիւր յիսուն հազար ֆրանքի եւ կամուտ մը պիտի ստանամ տանց մէ կուն պարտաւոր ըլլալու։

« Եւ եթէ շունենայի իսկ այն տաղանդը, որուն վրայ տարակուսելնիդ ձեր ժպիտը կ'ապացուցանէ, միթէ պիտի թուզուր դիմ զոհս ըլլալու անկախութեան մոլի սէրը, որ միշտ ամեն գանձերուն տեղը կը բռնէ և իմ վրաս այնչափ կը տիրել որ դրեթէ բնադրում մը եղած է։

« Ոչ, պարօն, ես ինծի համար երբեք չեմ ցաւիր, իմ դործս ամեն ժամանակ կրնամ զլուխ հանել, բաւական է որ ձեռքս դրբեր, մատիտներ, զաշնակ մը ունենամ, որոնք թանկադին բաներ շըլլալուն միշտ կրնամ զնել։

« Գուցէ կարծէք որ տիկին Տանկլարի համար ցաւիմ, ձեր

ոյս սիսալն ալ ուղղեցէք, պարսն, եթէ չեմ սիսալիր՝ մայրս  
իւր ամեն զդուշութիւնները՝ ի գործ դրաւ ձեզ սպառնացող  
դժբաղդութենէն շնչասուելու համար. կը յուսամ՝ որ մայրս  
ապահովցուցած է իւր գործը, բայց հարստութեան այս ըջ-  
բաղմանց պարապելու ժամանակ՝ ինձի ամենաին հսկողութիւն  
շորաւ, այլ աղատասիրութիւնս պատճառ բռնելով՝ բոլորո-  
վին անկախ թողուց զիս:

«Ո՛չ, ոչ, պարսն, մանկութենէս՝ ի վեր շատ բաներու  
պատահիլու տեսայ, և զանոնք աղէկ հասկընալուս համար չեմ  
կարծեր որ դժբաղդութիւնը արժան եղածէն աւելի ներդոր-  
ծէ ինձի. ինքզինքն Ճանչնալէս՝ ի վեր՝ մէկը զիս չսիրեց,  
իմ ուղածս ալ այս է, և այս պատճառաւ բնականաբար  
ես ալ մէկուն վրայ սէր չձգեցի: Ահա, պարսն, բոլոր իմ  
դդացումներս ասոնք են:

— Աւրեմն, ըսաւ Տանկլար այնպիսի բարկութենէ մը գեղ-  
նելով, որուն աղըիւրը թշնամանուած հայրական սէրէն ծա-  
զած չէր երեսեր, ուրեմն, օրինրդ, անշուշտ կ'ուզես որ ես  
կորսուիմ:

— Ե՞ս ձեր կորուսաը ուզեմ, պատասխանեց Էօժէնի, չեմ  
հասկընար ի՞նչ ըսել կ'ուզէք:

— Աւելի աղէկ, այդ կերպով ես ալ յուսոյ լոյս մը կ'ու-  
նենամ. մտիկ ըրէ:

— Խօսեցէք, պարսն, ըսաւ Էօժէնի՝ այնպիսի ուշադրու-  
թեամբ իւր հօրը երեսը նայելով, որ սեղանաւորը պէտք էր  
խիստ մեծ ջանք մը ըրած ըլլար որ ծաղկահաս աղջկան աղ-  
դուն նայուածքէն իւր աչքը չխոնարհեցընէր:

— Պ. Գալվալդանթին, շարունակեց Տանկլար, քեզի հետ  
ամուսնանալով՝ երեք միլիոն ֆրանք օժիտ պիտի բերէ, զօրոնք  
իմ քովս շահու պիտի դնէ:

— Ո՛չ, շատ աղէկ, ըսաւ Էօժէնի խիստ մեծ արհամար-  
հական կերպով և իւր ձեռնոցները իրարու վրայ յղկելով:

— Կը կարծես որ այն երեք միլիոն ֆրանքը քեզ կորսըն-

ցընել պիտի տամ, ըստ Տանկլար, ամենեին, այն երեք մի լիոնը գոնէ տառը միլիոն պիտի բերէ, Պաշտօնակից սեղանաւորի մը հետ երկաթուղիի մը չինութեան հրամանադիրը ստացած եմ. այնպիսի գործ մ'է այս, որ անմիջական յաջողութեան առասպելական բազդաւորութիւնները կը ներկայացընէ: Աւստի ութ օրէն իմ հաշուիս չորս միլիոն ֆրանք գնել պէտք եմ. այս չորս միլիոնը, վերստին կ'ըսեմ, առաջ կամ առան երկու միլիոն պիտի բերէ:

— Բայց անցեալ օր ձեզ ըրած այցելութեանու ժամանակ, պարոն, զոր պիտի բարեհաջիք մաքերնիդ բերել, կրկնեց հօծէնի, չինդ ու կէս միլիոն ֆրանք ձեր զրամարկղին մէջ գնելնիդ տեսայ. աղէկ կը յիշեմ օր նոյն զումարը երկու լումայատամսեր էին, և դուք կը զարմանայիք թէ այսպիսի մեծ արժողութեամբ թուղթ մը բնշպէս փայլակի մը պէս աէքս չէր շացըներ:

— Այս, բայց այն չինդ ու կէս միլիոնը իմա չէ, և հասարակութեան իմ վրաս ունեցած վատահութեանը ապացոյցն է միայն. ժողովրդային սեղանաւորի տիտղոսս հիւանդանոցներու վերատեսչաց վստահութիւնը զրաւած է, և այն չինդ ու կէս միլիոնը հիւանդանոցներու կը վերաբերի: Եթէ ուրիշ ժամանակ ըլլար՝ զանոնք զործածելու ամենեին չէի երկմտէր, բայց այսօր ըրած մեծ կորուսաներս ամեն մարդ զիտէ, և ինչպէս որ ըսկ՝ վարկս պակսիլ սկսաւ: Ամեն վայրկեան աեսչութիւնը կրնայ իւր աւանդը պահանջել, և եթէ ուրիշ բանի զործածած եմ դանոնք, պիտի ստիպուիմ ամօթալի կերպիւ սնանկութիւնը չեմ տտեր, հաւատա ինձ, սակայն հարստացընող և ոչ աղքատացընող սընանկութիւնը: Եթէ որ, Գավալլգանթիին հետ ամուսնանաս և ես երեք միլիոն ֆրանքը առնում կամ այնպէս կարծուի թէ ես առի զանոնք, իմ վարկս վերստին տեղը պիտի զայ, և հարստութիւնս պիտի հաստատուի, որ մէկ կամ երկու ամսէ ՚ի վեր անիմանալի չար բաղդէ մը ոտիցս ներքե փորուած

անդունիներուն մէջ կը դահավիճիք ։ Հասկըցա՞ր ըստածներս ։  
— Ամենքն ալ, երեք միլիոնի համար զիս գրաւ կը դնեք,  
այնպէս չե՞:

— Գումարը որչափ մեծ ըլլայ, այնչափ մարդիկ կը խար-  
ռին, և վարկ կ'ըստացուի ։

— Անշւշտ, բայց վերջին խօսք մը ըսեմ, պարոն. կը  
խոստանա՞ք ինձ որ ո՛. Գավալդանթիին ինձ քերելու օժտին  
անունը զործածէք և զումարին չդպչեք: Անձնասիրական զործ  
մը չէ այս այլ փափուկ: Հարսառւթիւննիդ վերահաստատե-  
լու համար կ'ուղեմ ձեզ ծառ այսութիւն մը ընել, բայց միւս-  
ներուն աղքատնալուն համար ձեք զործակիցը չեմ ուղեր  
ըլլալ.

— Ճշմարիտ կ'ըսեմ, զուեց Տանկլար, որ այս երեք մի-  
լիոն ֆրանքով . . . :

— Կը կարծէք որ առանց այն երեք միլիոնին դուք ըս-  
դործերնիդ կընաք տեսնել:

— Կը յուսամ, բայց այն դաշնքով որ ըլլալու ամուս-  
նութիւնը իմ վարկս ովիտի հաստատե՞:

— Ովիտի կընա՞ք ո՛. Գավալդանթիին վճարել այն հինգ  
հարիւր հազար ֆրանքը, զոր ինձ օժիտ ովիտի տաք:

— Քաղաքապետին քովէն դարձած ժամանակը ովիտի ըն-  
դունի:

— Աղէկ:

— Բայց ինչ ըսել կ'ուղես աղէկ ըսելով:

— Ըսել կ'ուղեմ թէ ամուսնութեան դաշնադիրը ստորա-  
գրելով, զիս բոլորովին ազատ ովիտի թողուք:

— Բոլորովին:

— Աւրեմ դարձեալ կ'ըսեմ՝ Աղէկ, պարոն, Անորէա  
Գավալդանթիին հետ ամուսնանալու ովատրաստ էմ:

— Բայց դիտաւորութիւնդ ինչ է:

— Ո՛չ, այդ բանը իմ դազմոնիքս է. ուր ովիտի մեայ իմ  
ձեր վրայ ունեցած գերազանցութիւնս երբ ձեր դաշնակքը  
իմանալով՝ իմս ալ ձեզ յայտնեմ — :

Տանկլար ամօթահար մնաց :

— Աւրեմն , ըստ , պատրաստ ես քանի մը պաշտօնական ոյցելութիւնները բնելու , սրոնք անշրածեշտ պէտք են :

— Այս , ողատասխանեց Խօժէնի :

— Եւ երեք օրէն դաշնադիրը ստորագրելու :

— Այս :

— Աւրեմն ես ալ հիմա կ'ըսեմ՝ Աղեկ — :

Եւ Տանկլար իւր աղջկան ձեռքը բռնեց և իւր ձեռացը մէջ սեղմեց դայն :

Բայց ի՞նչ զարմանալի բան , այս ձեռքի ձնշման միջոցին՝ ոչ հայրը՝ Ծնորհակալ եմ , զաւակս , համարձակեցաւ ըսելու և ոչ աղջիկը անոր երեսին ժպուցաւ :

— Խորհուրդնիս լինցաւ — , հարցուց Խօժէնի ոտք ելնելով :

Տանկլար դիմովը նշան ըրաւ թէ ալ ըսելու խօսք չունի : Հինդ վայրկեան ետքը դաշնակը օրիորդ տ'Արմիլիի մատներուն տակը կը հնձեր , և օրիորդ Տանկլար Տէտէմոնայի վրայ որապանթիոյի անէծքը կ'երգէր :


Հատուածին վերջը Էթիեն ներս մտաւ և իմացուց Խօժէնին թէ ձիերը կառքին լծուեցան և տիկին Տանկլար իրեն կ'ըսպասէր իւր այցելութիւններն ընելու համար :

Երկու տիկիններուն Վիլօֆօրի տունը երթալը տեսանք , ուրկից մեկնեցան իրենց այցելութիւնը շարունակելու համար :



## ԳԼՈԲԱՐ ԾՐ.

ԳԵՂԵԿԵԴԻԲԻ

  
**Բ**ը մը առաջ պատմուած տեսարանէն երեք  
 օր եաքը, այսինքն օրիորդ կօձէնի  
 Տանկլարի և Անտրէ ա Գավալզ անթիի  
 ամսունութեան դաշնազիբը ստորա-  
 դրելու համար որոշուած օրուան իրիկուան ժամը հինգին՝ երբ  
 քաղցր օդ մը Մօնթէ - Քրիոթոյ կոմսին տան առջին գտնուած  
 որարտիղակին ծառոց բոլոր տերեները կը շարժէր, կանը  
 դուրս ելնելու կը պատրաստուէր, իւր ձիերը ոտքերնին դե-  
 տինը զարնելով իրեն կ'ըսպասէին և կատաղանը արդէն քա-  
 ռորդէ մը՝ ի վեր անոնց սահնձը բռնած իւր նստարանին վրայ  
 նստած էր. նոյն միջոցին փառաւոր կառք մը, զոր արդէն  
 շատ անզամ մեր ընթերցողաց Ճանչցուցինք, մանաւանդ Օ-  
 թէ օյլի երեկոյթին իրիկունը, արշաւանօր կոմսին դրան ան-  
 կիւնը դարձաւ, և անոր սանդուխին վրայ Պ. Անտրէ ա Գա-  
 վալզ անթին դուրս հանեց. այնովէս փառաւոր հաղուած ուր-  
 ուած էր, որ կարծես թէ իշխանուչի մը հետ ամոււնանա-  
 լու կու զար:

Իւր սովորական ընտանութեամբը կոմսին առողջութեանը  
 վրայ հարց ու փորձ ըրաւ ու թեթևաշաքճութեամբ առաջին  
 դստիկոնը ելնելով՝ սանդուխին վրայ անոր պատահեցաւ:

Երիտասարդը տեսնելով՝ կոմսը կեցաւ, իսկ Անտրէ ա Գա-  
 վալզ անթին արտորնօք վեր ելնելու սկսած ըլլալվ՝ շեցաւ  
 իւր ընթացքը կեցընել:

— Բարի իրիկուն, սիրելիդ իմ ո՛. Մօնթէ-Քրիսթօ, ըստ կոմային:

— Ո՛չ, ո՛. Անտրէա, դո՞ւք էք, ովատասխանեց կոմոը կէս-հեղնական ձայնով մը, ինչպէս էք:

— Խիստ աղէկ, ինչպէս որ կը տեսնէք. ձեզի հազար տեսակ խօսքեր ունիմ. բայց նախ ըսէք, դո՞ւրս կ'ելնէիք թէ դուրսէն կու դայիք:

— Դուրս կ'ելնէի, ովարոն:

— Ուրեմն որպէս զի չուշնաք, ձեր կառքը կը հեծնեմ եթէ կը հաջիք, և կառքին մէջ կը խօսինք, ու Թոմ իմ կառքս ետենէս կը բերէ:

— Ոչ, ըստ արհամարհական անհշմարելի ժպիտով մը կոմոը, որ երիտասարդին հետ ընկերանալ չէր ուղեր. աւելի կ'ընտրեմ ձեզի հետ հոսիլ, սիրելիդ իմ պարոն Անտրէա. սենեկի մը մէջ աւելի աղէկ կը խօսի մարդ, և կառավարէն լսուելու վտանգէն աղատ կ'ըլլայ — :

Այս ըսելով կոմոը առաջին դստիկանին մէկ փոքը սրահը մտաւ, աթոռ մը նստաւ, և մէկ սրունքը միւսին վրայ զնելով նշան ըրաւ երիտասարդին որ նստի:

Անտրէա խիստ զոււարթ գէմք մը ցուցուց:

— Գիտէք, սիրելի կոմս, ըստ, որ ամուսնութեան դաշնադիրը ստորագրելու արարողութիւնը այս իրիկուն ժամը իննին աներին տունը տեղի պիտի ունենայ:

— Ստոյդ կ'ըսէք, ըստ Մօնթէ-Քրիսթօ:

— Ի՞նչպէս, չէիք դիտեր, և միթէ ո՛. Տանկլար չիմացո՞յց ձեզ:

— Այս, ըստ կոմոը, երէկ նամակ մը ընկալայ անորմէ, բայց չեմ կարծեր որ անոր մէջ ժամը որոշուած ըլլայ:

— Կարելի է. աները կարծելով որ արարողութեան ժամը ամենուն յայտնի է՝ փոյթ չէ ըրեր նշանակելու:

— Ուրեմն վերջապէս երջանիկ պիտի ըլլաք, ո՛. Գավալդանթի, ըստ կոմոը. և խիստ բաղդաւոր միութիւն մ'է այդ. ասկէ զատ՝ օրիորդ Տանկլար ալ զեղեցիկ է:

— ԱՇ, այո՛, պատասխանեց Գրավալդ անթի խիստ համեստ ձայնով մը :

— Մանաւանդ որ խիստ հարուստ ալ է, զոնէ այնպէս կը կարծեմ, բայտ Մօնթէ-Քրիսթօ :

— Կը կարծէք, կրկնեց երիտասարդը :

— Անսարակոյս + կ'ըսեն թէ ո՛. Տանկլար իւր հարստութեան զոնէ կէսը կը պահէ :

— Եւ տասն ու հինգ կամ քսան միլիոն ֆրանք ռւնենութ կը խոստովանի, ըստ Անտրէտ ուրախութեան բոցավառ աչքօ :

— Մանաւանդ որ ո՛. Տանկլար զեռ նոր մոտած է այն շահագիտութեանց մէջ, որոնք Միացեալ-Կահանցաց և Անդղիոյ մէջ հինցած են, բայց Գաղղիոյ մէջ բոլորովին նոր են :

— Այո՛, այո՛, զիտեմ ինչ ըսել կ'ուզէք . երկաթուղւոյ համար անոր ընդունած հրամանադրին վրայ է ձեր խօսքը, այնպէս չէ :

— Ամենուն ըսածին նայելով՝ այս դործէն զոնէ տասը միլիոն մը պիտի շահէ :

— Տասը միլիոն, կը կարծէք, դէշ դումար մը չէ ոյդ, ըստ Գրավալդանթի, որուն գլուխը սոկեզօծեալ խօսքերուն մետաղեայ ձայնէն կը դառնար :

— Բայց այս հարստութիւնները ձերը պիտի ըլլան, կըրկնեց Մօնթէ-Քրիսթօ, և խիստ իրաւամբ . քանզի օրիորդ Տանկլար սեղանաւորին միակ աղջիկն է : Մանաւանդ որ ձեր հարստութիւնն ալ, զոնէ ձեր հօրը խօսքին նայելով, ձեր նշանածին հարստութեանը կը հաւասարի : Բայց ստակի խօսքերը մէկ դի թողունք Գիտէք, ո՛. Անտրէտ, որ բոլոր այս դործէրը ձեր յաջողութեամբն ու հարտարութեամբը կատարուեցան :

— Ե՛ս, ըստ երիտասարդը, քաղաքադէտ մ'ըլլալու համար ձնած էի ես :

— Եւ զուք քաղաքադիտաց կարդը պիտի անցնիք . քաղաքադիտութիւնը՝ ինչպէս որ զիտէք՝ չսորվուիք, ոյլ բնադզում մ'է . . . : Աւքեմն սրտերնիւյ յափշուակուած է :

— Ստուգիւ այն աստիճան որ կը վախնամ, պատասխանեց Անտրէա այն ձայնով, որով Գաղղիական-Թատրոնին մէջ Տորանթ կամ Վալէր Ալսէսթին կը պատասխանէ:

— Օրիորդը զձեղ կը սիրէ:

— Անշուշտ պէտք է որ սիրէ, ըստ Անտրէա սէդ ժպիտով մը, ըստ որում հետո պիտի ամուսնանայ: Սակայն մեծ կէտ մը չմոռնանք:

— Ի՞նչ բան:

— Ըսել կ'ուզեմ թէ պարագաները ինձ մեծ ապէս օդ նեցին:

— Ի՞նչ կ'ըսէք:

— Անշուշտ:

— Պարագաները կ'ըսէք:

— Ոչ, դուք:

— Ես, ինչ կ'ըսէք, իշխան, ըստ Մօնթէ-Քրիսթօ անոր այս տիտղոսը աղէկ արքասանելով: Ես ինչ կըցայ ընել ձեզ. ձեր անունը, ընկերային համարումը և ձեր արժանաւորութիւնը բաւական չէ ին:

— Ոչ, ըստ Անտրէա, ոչ, ինչ կ'ուզէք՝ ըսէք. ես կը պնդեմ որ ձեզի պէս մարդու մը համարումը իմ անունէս, ընկերային համարումէս և արժանաւորութենէս աւելի դորձ տեսան:

— Չարաշար կը խարուիք, պարոն, ըստ Մօնթէ-Քրիսթօ երիտասարդին խորամանկութիւնը և անոր խօսքերուն նպատակը հասկընալով. ձեր պարոն հօրը աղդեցութեանն ու հարըստութեանը վրայ տեղեկանալէս և տքը միայն զձեղ պաշտպանեցի. վասն զի վերջապէս զձեղ հանչնալու բարե բաղդութիւնը ով շնորհեց ինձի, որ զձեղ և ձեր մեծաշուք ծնողքը երբէք տեսած չէի, բայց եթէ՝ իմ երկու մտերիմ բարեկամներս, որոնք են լըրտ Վիլմոր և աբբայ Պիւզոնի: Ի՞նչ բանէ խրախուսեալ հաւանեցայ չէ թէ երաշխաւորել այլ պաշտպանել զձեղ, բայց եթէ՝ ձեր հօրը անունէն, որ Խտալիոյ մէջ այն-

շափ ծանօթ և յարդելի է . անձամբ ես չեմ ճանչնար զձեղ — :

Այս կատարեալ հանդարտութեամբ արտասանուած խօսքերէն Անտրէա համկըցաւ որ առ այժմ իրմէ աւելի զօրաւոր ձեռքի տակ կը գտնուէր , և այն զօրութիւնը դիւրութեամբ չէր խօրտակուեր :

— Ուրեմն ստուդիւ հայրս խիստ հարուստ է , Պ. կոմս , ըստ երիտասարդը :

— Այսպէս կ'երեի , պարոն , պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ :

— Արդեօք ինձ խոստացած օժիուը դրկանձ է :

— Անորմէ նամակ մը ստացայ :

— Եւ երեք միլիոն ֆրանքին համար ի՞նչ կ'ըսէ :

— Հաւանականաբար ճամբայ հանած է :

— Ուրեմն ստուդիւ պիտի ընդունիմ զանոնք :

— Զարմանալի բան , կրկնեց կոմսը , կարծեմ թէ մինչև հիմա ստակի պակսութիւն չունեցաք — :

Անտրէա այն աստիճան զարմանքի մէջ մնաց , որ ակամայ վայրկեան մը մտածել ոկտաւ :

— Ուրեմն , ըստ վերջապէս , միայն կը մնայ ինձ առաջարկութիւն մը ընել ձեզ , զոր կը յուսամ թէ պիտի չմրգէք՝ եթէ անհաջոյ իսկ երեի ձեզ :

— Խօսեցէք , ըստ Մօնթէ-Քրիսթօ :

— Հարստութեանս չնորհիւ երեկ լի շատ մարդոց հետ յարաբերութիւններ ունեցայ , և գոնէ առ այժմ բազմաթիւ բարեկամներ ստացայ : Բայց Բարիգեան ընկերութեանց մէջ այսպէս ամուսնանալու ժամանակ՝ պէտք է որ երեկ լի մէ կը պաշտպանէ դիս , և քանի որ հայրեկան ձեռքը բացակայ կը դտնուի , զօրաւոր ձեռք մը պէտք է զիս խորանին առջեւ տանելու համար . և որովհետեւ հայրս Բարիգ չկընար դալ , այնպէս չէ . . . :

— Ձեր հայրը ծերացած է և վերքերով ծածկուած . ամեն անդամ . որ ճամբորդութիւն կ'ընէ՝ մահու շափ կը նեղուի :

— Այիմանամ, ես աշ առաջարկութիւն մը պիտի ընեմ ձեզ:

— Ինձի:

— Այս, ձեղի:

— Ի՞նչ առաջարկութիւն:

— Ար իմ հօրս տեղը բռնէք:

— Սիրելիդ իմ պարօն, ձեզի հետ պատիւ ունեցած անթիւ յարաբերութիւններէս ետև կ'երեւի թէ զիս աղեկ չէք ճանցեր որ այդպիսի առաջարկութիւն մը կ'ընէք ինձ: Կէս միլիոն ֆրանք փոխ ուղեցեք ինձմէ, ստուգիւ այնչափ պիտի չնեղաւիմ, թէև այսպիսի փոխատուութիւն մը քիչ անդամ պատահէ: Գիտոցիք ուրեմն որ Աօնթէ - Քրիսթոյ կոմսը աշխարհային գործոց մանաւանդ բարոյական հազորդութեանը մէջ միշտ խիղջ կ'ընէ և կրնամ իսկ ըսել՝ Արեւելեան մարդու մը աւելորդապաշտութիւնները կը պահէ: Գահիրէի, Զմիւռնիոյ և Կոստանդնուպօլսոյ մէջ պալատներ ունենամ և ամսաւնութեան մը նախադաշն ըլլամ, ամսնե ին:

— Ուրեմն կը մերժէք առաջարկութիւնս:

— Պարզապես եթէ զաւակս կամ եղայրս ըլլայիք, դարձեալ պիտի մերժէի:

— Ո՛չ, ուրեմն հիմա ինչ պիտի ընեմ, զովեց Անտրէայուսահատեալ:

— Քիչ մը առաջ ըսիք թէ բազմաթիւ բարեկամներ ունիք:

— Աղեկ, բայց դուք զիս ո: Տանկլարին տունը ներկայացուցիք:

— Ամնեին, Հշմարտութիւնը պարզենք, ես մի ենույն Հայշին Օթէօյլ հրաւիրեցի զձեղ անոր հետ, բայց դուք անձամբ անոր ներկայացաք, զործը ըսլորովին կը տարբերի:

— Այս, բայց իմ ամսաւնութեանս դուք օդնեցիք:

— Ամնե ին, հաւատացէք ինձ, բայց ինչո՞ւ չէք յիշեք ձեզ տուած պատասխանս երբ առաջարկութիւնը ընելու համար ինձ աղաւշելու եկաք, ես ամենեին խնամաւթիւն չեմ ըներ, սիրելի իշխանս, իմ սկզբունքս եւ այս — :

- Անտրեա յուսահատեալ մեաց :
- Քայց վերջապէս զոնէ ներկայ պիտի զանուի՞ք, ըսաւ :
- Բոլոր բարիզ ներկայ պիտի գտնուի՞ :
- Ո՛չ, անշուշտ :
- Ուրեմն ես ալ բոլոր բարիզի ալէս ներկայ պիտի զըս-նուիմ, ըսաւ կոմսը :
- Դաշնագրին դուք ալ պիտի ստորագրէ՞ք :
- Անպատեհութիւն մը և խիղճ ընելու բան մը չեմ ահա-ձեր այդ գործին մէջ :
- Ուրեմն քանի որ ատկէ աւելի շնորհք մը չէք ուղեր ը-նել ինձ, պէտք եմ զո՞ւ ըլլալ այդչափէն ալ : Քայց վեր-ջին խօսք մը ունիմ, կոմս :
- Ի՞նչ խօսք :
- Խրատ մը :
- Զգուշացէք . Խրատը ժառայութիւն մը ընելէն աւելի ծանր է :
- Քայց այս ըսածս առանց ձեզի դպիւթ լու կրնաք ընել ինձ :
- Ըսէք ուրեմն :
- Կնոջս օժիտը հինդ հարիւր հաղար ֆրանք է :
- Պ. Տանկլար ալ ինձ այդպիսի զումար մը իմացուց :
- Ընդունիմ զայն թէ նօտարին թողում :
- Երբ վայելու կերպով գործերը կատարել կ'ուղէք :
- ահա այսպէս կը կատարուին անոնք . ձեր երկու նօտարները դաշնագրին հետեւեալ կամ միւս օրը ժամագրիր կ'ըլլան, ու երկու օժիտները իրարու հետ կը փոխեն և իրարմէ ընկա-լաղիր կ'ընդունին . և ամուսնութիւնը կատարուելէն ետեւ միլիոնները ձեր ձեռքը կը յանձնեն իբրև տէր այն ստա-յուածոց :
- Կարծեմ, ըսաւ Անտրեա կեղծ անհանդ ստութեամբ մը, աներիս բերանէն լսեցի թէ դիտաւորութիւն ունի մնը դրա-մագլուխը այն երկաթուղիին երեւլի զործին մէջ դնել, ո-րուն խօսքը քիչ մը առաջ կ'ընէինք :

— Տարբուան մը մէջ ձեր գրամագլուխը եռապատկելու միշաց մ'է այս , ինչպէս որ ամեն մարդ կ'ըստուզէ , կրկնեց Մօնթէ-Քրիսթօ : Պ. սեպուհ Տանկլար բարի հայր մ'է և աղեկ կը վճարէ :

— Ահա ամեն բան կարդին է ուրեմն , ըստ Անտրէա , ձեր մերժումէն զատ , որ սիրտս կը վիրաւորէ :

— Անոր պատճառը այսպիսի սղարագայի մէջ խիզչ ընելուս տուէք :

— Ուզածնուդ պէս թող ըլլայ , ըստ Անտրէա . ուրեմն այս իրիկուն՝ ժամը իննին :

— Ծառ աղէկ , այս իրիկուն՝ ժամը իննին — :

Մօնթէ-Քրիսթոյի թեթև ընդդիմութեան հակառակ , ուրուն շուրթերը զունատեցան առանց իւր ժոհիոր փոխելու , Անտրէա կոմսին ձեռքը բռնեց , թոթվեց զայն և իւր կառքին մէջ նետուելով աներեղիթ եղաւ :

Մինչեւ ինը՝ Անտրէա չորս կամ հինգ ժամ ունէր . ուստի փութաց իւր բարեկամներուն այցելութիւն ընելու իմացընելով անոնց որ մեծ փառաւորութեամբ ներկայանան սեղանաւորին տունը , շացընելով միանդամայն անոնց միտքը այն ապագայ զործոց յաջողութեամբը , որոնք ամենուն ուշագրութիւնը զբաւերէին , և զորոնք Տանկլար ոկտելու իրաւունքն ունէր :

Իրիկուան ժամը ութու կէսին՝ Տանկլարի մեծ սրահը , անոր գուիթը և նոյն յարկին վրայ եղած միւս երեք սրահները անուշաբոյր զգ եստներով բազմութեամբ մը լցուած էին , որոնք խիստ քիչ համակրութիւն բայց նոր բան մը տեսնելու մեծ հետաքրքրութիւն մը կը ցուցընէին :

Ակադեմնան մը պիտի ըսէր թէ այս տեսակ երեկոյթները ծաղկանց փունջներ են , որոնք անհաստատ թիթեռներ , անօթի մեղուներ և բզզող իշամեղուներ կը ժողվեն :

Աւելորդ է ըսել թէ սրահները բաղմաթիւ ճրագներով լուսաւորուած էին , մետաքսեայ վարագոյններուն վրայ եղած

ոսկեզօծ քիւերուն վրայէն լրյսերը կը շողային և տձե բայց մեծադին կարասիները խիստ փառաւորութեամբ կը փայլէին :

Օրիորդ Տանկլար խիստ վայելուչ պարզութեամբ մը հազ ուած էր . սպիտակ ծաղիկներով բանուած սպիտակ սնդուռե շրջադիմս մը հազած էր . սպիտակ վարդ մը սև սաթի նըման մազերուն մէջ կիսով չափ աներեոյթ եղած էր , և իւր վրայ ամեննեին գոհար մը չեր կրեր :

Միայն թէ իւր աշաց մէջ յայտնի կ'երե էր այն կատարեալ սուսուղութիւնը , որ ռամկօրէն կուսական համարուած իւր անբիծ հաղուստին կեզ ըլլալը կը յայտնէր :

Անորմէ երեսուն քայլ հեռու տիկին Տանկլար Տըպրէի , Պողանի և Շաթօ-Ռընոյի հետ կը խօսակցէր : Տըպրէ այն արարողութեան մեծ հանդիսին ներկայ զանուելու համար՝ ամնուն պէս և առանց առանձնաշնորհի մը սյն տունը մօներ էր :

ոլ . Տանկլար պատղամաւորներէ և տէրութեան ելեմտից պաշտօնեաններէ շրջապատեալ , նոր հարկապահանջի եղանակ մը կը բացառորէր անոնց , զոր ՚ի զործ դնել կը յուսար երբ կառավարութիւնը ստիպուէր զինքը պաշտօնատունը հրաւիրել :

Ընտրէա Օքէրայի ամեննէն պճնասէր և զուարթ երիտասարդը իւր թէնը առած բաւական ամբարտաւանութեամբ՝ թէ և ըստ բաւականի համարձակութեան պէտք ունէր , իւր ապագայ կենաց ծրադ իրը և իւր հարիւր եօթանատուն և հինդ հաղար ֆրանք եկամուտով Բարիկնեան շռայլութեանց մէջ ընելու յառաջադիմութիւնները կը բացատրէր :

Բազմութեան մեծադոյն մասը դոչազմներու , սուտակներու , զմրուխաններու , արևակներու և ադամանդներու մակընթացութեան և տեղատութեան պէս սրահներուն մէջ մէկ կողմնան միւսը կը շարժէին :

Ենապէս ամեն տեղ՝ այս հանդիսին մէջ ալ ամեննէն շատ աչքի երեցողները ամեննէն տղեղները և ամեննէն պառաւ կիներն էին , որոնք աւելի զարդարուած էին :

Եթէ սպիտակ զեղեցիկ շուշան մը կամ քաղցրարոյր վարդ

մը տեսնել ուղէր մէ կը , պէտք էր պարզ հաղուած մօր մը կամ մօրաքեռ մը ետին պահուած անկիւնը փնտո ել և դանել զայն :

Այս աղմկալի բազմութեան , շփոթ ձայներուն և աղաղականերուն մէջ մերթ ընդ մերթ նուիրակներուն ձայնը ելմտից պաշտօնատան մէջ ծանօթ մէկուն , կամ բանակի մէջ յարգելի և կամ զիտութեան մէջ երեելի եղող անձի մը դալուստը իմացընելու համար անոնց անունը կ'արտասանէր . այն տտեն բազմութիւնը թեթև շարժումով մը այն անձին ընդունելութիւն կու տար :

Բայց այս մարդկային ալեաց ովկիանը դողացընելու իշխանութիւնն ունեցող մէկուն համար ո՛րչափ անձինք անտարբերութեամբ կամ արհամարհական ժպիտով մը կ'ընդունուէին :

Երբ միաձոյլ ժամացոյցին լեզուակը ժամը ինը կը նշանակէր , և երբ անոր մեքենայից հաւատարիմ թարգման հնչիւնը ինը անդամ կը հնչէր , Մօնթէ-Քրիսթոյ կոմսին անունն ալ միանդամայն հնչեց , և բոլոր բազմութիւնը ելեքտրական բոցէ մը մղուածի պէս՝ զէպ 'ի գուոը դարձան :

Կոմսը իւր սովորական պարզութեամբը սե զզեստներ հազած էր . իւր սպիտակ բաճկոնը լայն և ձեւաւոր կուրքքը կը նկարէր , իւր սե փողկապը այնպիսի փայլուն դոյն մը ունէր , որ իւր մարմեոյ աղօտ գեղնութիւնը պայծ առ կ'երեցնէր :

Իւր վրայ դոչար մը չէր կրեր բաց 'ի բարտկ շղթայէ մը , որ սպիտակ բաճկոնին վրայ հաղիւ կ'երեէր :

Նոյն միջոցին բազմութիւնը բոլորտիքը շրջան մը կաղմացին :

Կոմսը մէկ ակնարկով տեսաւ որ տիկին Տանկլար սրահին մէկ ծայրն էր , Պ. Տանկլար միւս ծայրը և օրիորդ Եօծէնի իւր առջելը կը դանուէր :

Նախ տիկին Տանկլարի մօռեցաւ , որ տիկին աը Վելքֆօրի հետ կը խօսակցէր . Ալալանթին միշտ հիւանդ ըլլալուն՝ անոր մօրուն առանձին եկեր էր :

կոմսը առանց իւր ճամբայէն շեղելու՝ բազմութեան մէջ չէն անցնել կրցածին չափ Էօժէնիին մօտեցաւ, և այնավ արտորնօք ու զգոյշ կերպով ողջունեց զան որ սէդ արուեստաւորը զարմացուց:

Անոր քովը օրիորդ Լուիլ ա'Արմիլլին կը դանուէր, որ շնորհակալ եղաւ կոմսին ազնուալ թենէն որ Խատալոյ համար յանձնարարական նամակներ տուեր էր, և որոնք կը յուսարթէ, կ'ըսէր, մօտերս պիտի հարկաւորին:

Օրիորդներուն քովէն չեռանալով՝ Մօնթէ-Քրիսթօ Տանկարին քովը դնաց, որ կոմսը տեսնելով՝ նոյնակէս մօտեցեր էր անոր ձեռքը բռնելու համար:

Ընկերային այս երեք պարտքերը կատարելէն ետե՛ Մօնթէ-Քրիսթօ կեցաւ և իւր անզրէպ նայուածքը իւր բոլորտիքը շրջեց, որով ըսել կ'ուզէր. «Ես իմ պարտքս կատարեցի. Հիմա ուրիշները իրենց պարտքը թող կատարեն» :

Անտրէս, որ իից սրաշի մը մ.ջ կը գանուէր, բազմութեան վրայ Մօնթէ-Քրիսթոյի տպաւորած սարսուռը ինքնաւ զգալով, վաղելով եկաւ զան ողջունելու :

Կոմսին բոլորտիքը բազմութիւնը բոլորովին շրջապատեր էին, և անոր խօսքերուն վրայ իրարու հետ կը վիճարանէին, ինչպէս որ քիչ խօսող և ամենեին բերանէն պարապ խօսք մը չհանող մարդոց կը պատահէի:

Այս միջոցին ներս մնան և իրենց գրութիւնները ստորագրութեան համար պատրաստուած ուիեզօծ սեղանին ուկերկուու թաւշեայ ծածկոյթին վրայ դրին:

Կոտարներէն մէ կը նստաւ և միւսը ոտքի վրայ կեցաւ:

Դաշնագրին ընթերցումը սկսելու կը պատրաստուէին, ոյս այս հանգիսին ներկայ եղաղ Բարիզի կէս ժողովուրդը պիտի ստորագրէր:

Իւրաքանչիւր ոք նստաւ, կիները շրջան մը կազմցին, և մարդիկ, որոնք այս արարողութեան աւելի անտարբեր էին, Անտրէայի ջերմային յուղմանը, Պ. Տանկելարի ուշադրու-

թեանը, իօսէնիի անոտարքե բութեանը և այս երկելի դործին մէջ տիկին Տանկլարի Ճարապիկ և զուարթ ընթացքին վրայ զանազան մեկնութիւններ կու առյին :

Դաշնագիրը խորին լուսութեամբ կարգացուեցաւ . բայց ընթե բցումն անմիջապէս ետքը՝ որահներուն մէջ ձայները առաջուանէ կրկնապատիկը աւելցան :

Երկու երիտասարդներուն այն մեծ դումաբներուն և միլիոններուն արձագանքը բոլոր նախանձուու բազմութեան մէջ կը հնչէր :

Դաշնագիրը օժիտը և աղամանդները մասնաւոր սենեկի մըջ ՚ի տես դրուած էին :

Օրփորդ Տանկլարին դեղցիկութիւնը երիտասարդներուն աշաց կրկնապատկուած կ'երկեէր և նոյն միջոցին արեւուն պայծառութիւնը կը դերազանցէր :

Վւելորդ է ըսել թէ կիները այս միլիոններէն նախանձելով չէին կարծեր որ մէկը զեղցիկ ըլլալու համար այնչափ միլիոններու պէտք ունենայ :

Անտրէա իրեն եղած պատիւը, փաղաքշանքը և համակրութիւնը տեսնելով սկսեր էր կարծելու թէ տեսած երազը կ'ըստուգուի, այսովէս որ իւր խելքը կորսնցընելու մըայ էր : Կատարը հանդիսաւոր կերպիւ զրիշը առաւ, իւր զլիէն վեր բարձրացուց և ըստաւ .

— Պարօնալյ.ք, դաշնագիրը պիտի ստորագրուի — :

Կախ սեպուհը պիտի ստորագրէք, ետքը Պ. Գավալզանթիի հօր փոխանորդութիւնն ընողը, անոնցմէ ետքն ալ տիկին Տանկլար և ապառնի ամոլները :

Սեպուհը զրիշը առաւ և ստորագրեց, անորմէ ետքը Պ. Գավալզանթիի փոխանորդը :

Տիկին Տանկլար տիկին տը Ա.իլֆօրի թէը մտած մտեցաւ .

— Սիրելիս, ըստ անոր՝ զրիշը ձեռքը առնելով, յուսատութիւն մը չէ այս որ Պ. Մօնթէ-Քրիսթոյ կոմսին տան մէջ պատահած սպանութեան և դողութեան անյուսալի

գեղըը, որուն քիչ մեաց կոմսը զահ պիտի ըլլար, Պ. որ Ավելոփորը մեզմէ կը զրկէ:

— Ավ Աստուած, ըսաւ Տանկլար այնպիսի ձայնով մը ուրով ըսելու ըլլար, Շշմարիտ, իմ ամնեխն հողս չէ:

— Կը վախնամ, ըսաւ Մօնթէ-Քրիսթո անոնց մօտենաւով, որ անոր բացակայութեան ակամայ պատճառ եղած եմ:

— Եթէ դուք ըլլայիք պատճառը, կոմս, ըսաւ տիկին Տանկլար ստորագրելով, զզուշացէք, երբէք պիտի չների Ճեղի — :

Անտրէա իւր ականջները բացաւ:

— Սակայն ես յանցանք չունիմ, ըսաւ կոմսը. հիմա եղելութիւնը պատմեմ Ճեղ — :

Անն մարդ անհամբերութեամբ ականջ կը դնէր. Մօնթէ-Քրիսթո, որ այնչափ քիչ անդամ իւր քերանը կը բանար, խօսելու կը պատրաստուէր:

— Կը յիշեք, ըսաւ կոմսը ամենուն խորունկ լոռւթեան մէջ եղած միջոցին, դողնալու համար եկող այն թշուամարդը իմ տանս մէջ մեռաւ. քանզի իմ տունէս մեկնածժամնակը՝ կարծեօք իւր մեղսակից ընկերէն սպաննուեր է:

— Այս, ըսաւ Տանկլար:

— Անոր օդնութեան համար՝ հանուեցընել և զգեստները անկին մը նետել տուի, ուրկից ոստիկանութիւնը զանոնք առաւ դիւանատան յանձնելու համար. սակայն ոստիկանութիւնը անոր թիկնոյն ու սոնազգեստը վերցուցած ատենը՝ մոցեր էր անոր բաճկոնն ալ առնելու — :

Անտրէա յայտնապէս դունատեցաւ և կամաց մը դրան մօտեցաւ. հորիզոնին վրայ ամպի մը երեիլը տեսաւ, և այն ամպին տակը մրրիկ մը կը կարծէր:

— Այն ցնցոտի բաճկոնը այսօր դտնուեցաւ բոլորովին արիւնաթաթաւ և սրտին վրայ ծակուած — :

Տիկինները վախնալու ձայն մը հանցին, և անոնցմէ երկու կամ երեք հողի նուաղելու պատրաստուեցան:

— Ինձ բերին զայն և մարդ չէր գիտեր թէ այս հին բղոքութը ուրկից եկած է . ես միայն մտածեցի որ հաւանականաբար զոհ եղաղին բաձկոն է այն : Սենեկապանս գարշելով և զգուշանալով այն աղետալի զղեստը խառնելու ժամանակ՝ յանկարծ ծոցին մէջ թուղթ մը գտնելով մէջէն հանեց զայն . նամակ մ'էր այն , բայց որու ուղղուած կը կարծէք . ձեզ ուղղուած էր այն , պարոն սեղուէ :

— Ինծի , զուեց Տանկլար :

— Այո , արիւնով թաթիսուած թղթին վրայ ձեր անունը կարդացի , պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ՝ ինչ ատեն բազմութիւնը ընդհանուր զարմանքի ձայներ կը հանէր :

— Բայց , հարցուց տիկին Տանկլար անհանդ ստութեամբ իւր երկան երեսը նայելով , այս բանս ու . տը Ամիլքֆօրի գալուն ինչ արգելք կ'ըլլայ :

— Խնդիրը բոլորովին պարզ է , տիկին , պատասխանեց Մօնթէ-Քրիսթօ . այն բաձկոն ու նամակը ասկացոյցներն եին . ուստի երկուքն ալ ու . թագաւորի դործակալին զրկեցի , Այսպիսի խնդրոյ մէջ ամենէն ապահով շամբան ոստիկանութեան դիմելն է , այնպէս չէ , սեղուէ . կարելի է որ ձեզի գէմ դաւաճանութիւն մ'էր այն — :

Վնտրէա աղջութեամբ Մօնթէ-Քրիսթօյի երեսը նայեցաւ և երկրորդ սրահին մէջ աներեսոյթ եղաւ :

— Կարելի է , ըստ Տանկլար . այն սպաննուած մարդը հին թիապարտ մը չէր :

— Այո , պատասխանեց կոմսը . Քատրուս անունով հին թիապարտ մ'է եղեր — :

Տանկլարի դոյնը քիչ մը փոխուեցաւ . Վնտրէա երկրորդ սրահէն ալ մեկնելով՝ նախասենեակն անցաւ :

— Բայց ինչո՞ւ չէք ստորագրեր , ստորագրեցէք , ըստ Մօնթէ-Քրիսթօ . կը տեսնեմ որ պատմութիւնս ամեն մարդու յուղմունը կը պատճառէ , որուն համար խոնարհարար ներումն կը խնդրեմ ձեղմէ , տիկին և օրիորդ Տանկլար — :

Տիկին Տանկլար ստորագրելէ ետե դրիշտ նօտարին յանձնեց : — Պարոն Գավալդանթի իշխան , ըստ դպիրը , պարոն Գավալդանթի իշխան , ուր էք :

— Անտրէա , Անտրէա , կրկնեցին քանի մը երիտասարդ ներ , որոնք այն աղնուական Խտալացիին հետ այնչափ ընտանեցեր էին , որ զան մղբտութեան անունով կը կոչէին :

— Կանչէ իշխանը , պոռաց Տանկլար նուիրակի մը , և իմացուր որ ստորագրելու կարգը իրն է — :

Քայլ նոյն միջոցին հանդիսականաց բազմութիւնը սարսա- փով մը զլսաւոր սրահը յորդեց , կարծես թէ ահոելի հրէշ մը մտեր էր սենեակներուն մէջ :

Իրօք վախալու , պոռալու և փախչելու տեսարան մը կար :

Զինակրաց պաշտօնատար մը իւրաքանչիւր սրահին դրան առջին երկերիւ զինակիրներ դնելէ ետե՝ Տանկլարի կը մօ- տենար ստիկանութեան կամարակալ դործակալի մը հետ :

Տիկին Տանկլար երկիւզալի ձայն մը հանեց և մարեցաւ :

Տանկլար , որ հարուածը իրեն ուղղուած կը կարծէր (մարդս երբեմն այնպիսի խիզճեր ունի , որոնք ամենեին հանդարա- շեն թողուր զան) , մած սուկումով մը իւր կոչնականներուն երեսը կը նայէր :

— Ի՞նչ կը խնդրէք , պարոն , հարցուց Աօնթէ-Քրիսթօ- սստիկանութեան դործակալին մօտենալով :

— Պարոններ , Անտրէա Գավալդանթի կոչուած անձը ով է ձեր մէջը — , հարցուց պաշտօնատարը առանց կոմսին պա- տասխանն լու :

Սրահին ամեն անկիւններէն ապշութեան ձայներ ելան :

Ամեն կողմ նայեցան և ամեն կողմ փնտռեցին :

— Քայլ ով է այդ Անտրէա Գավալդանթին , հարցուց Տանկլար գրեթէ խելքը կորսնցուցած :

— Թուլոնի թիապարութենէ փախած հին թիապարտ մը :


— Եւ ինչ է դործած յանցանքը :

— Քատրուս անունով իւր շղթայակից ընկերը Աօնթէ-

Քրիսթոյ կոմսին տունէն դուրս ելած ժամանակ՝ սպաննելուն համար ամբաստանուած է —, ըստ պաշտօնատարը առղոքելի ձայնիւ մը :

Մօնթէ-Քրիսթօ իւր բոլորտիքը ակնարի մը շրջեց :

Անտրէա աներեզյթ եղեր էր :



### ԳԼՈՒԽ ԺԹ.

### ՊԵՂՋՎԱԾԻ ՇԵՄԲԱՆ

**Պ**ԵՂՋՎԱԾԻ տասնապետին անյուսալի զալուստէն և անոր ըրած յայտարարութենէն պարոն Տանկլարի սրահներուն մէջ տեղի ունեցած շփոթ տեսարանէն քանի մը վայրկեան ետքը, սեղանաւորին ընդարձակ տունը այնպիսի արագութեամբ պարպուեր էր, որ կարծես թէ կոչնականներուն մէջ ժանտախտի կամ համաձարակ ախտի դէպք մը պատահէր էր. քանի մը վայրկենի մէջ իւրաբանչիւր ոք ամեն դռներէն, ամեն սանդուխներէն և ամեն կողմէն մեկնելու կամ թէ ըսենք փախչելու կը փութար. վասն զի այնպիսի դէպք մ'էր այն, որուն մէջ պէտք չէ անգամ փորձ

փորձել այն սովորական միսիթարութիւնները տալու , որոնք մեծ աղջանեցու մէջ ամենէն մօտ բարեկամներն անդամ տաղու կալի կ'երեցը նեն :

Սեղանաւորին տան մէջ մնացողներն էին Տանկլար , որ իւր գահշլիճը փակուած՝ զինակրաց պաշտօնատարին հարցմանց կը սղատասխանէր . տիկին Տանկլար , որ դողասարսափ իւր դահշլիճը մտեր էր , և հօժէնի որ սէդ նայուածքով և ար համարհոտ շըթամբը իւր սենեակը քաշուեր էր օրիորդ Լուիդ ա՛նրմիյլի իւր անբաժանելի ընկերին հետ :

Խոկ բազմաթիւ ծառաները , որոնք նոյն իրիկունը սովորականէն աւելի կրկնապատկուեր էին , քանզի արարողութեան հանդ իսին պատճառաւ՝ Բարիզի Սրճանոցին պաղպաղակ շինողները , խոհարարները և սեղանայարդարները անոնց վրայ աւելցուած էին , իրենց պաշտօնին մէջ զողցես եղած նախատանաց համար բարկութիւննին տէրերնուն վրայ դարձընելով , խմբովին խոհանոցները և իրենց սենեակները ժողվուեր էին , ամեննեին հոդ չընելով իրենց ծառայութեանը , որ թէե բնականաբար ընդմիջուեր էր այն :

Այս զանազան շահերով սարսուցող զանազան անձանց մէջ միայն երկու անձեր կան , որոնց վրայ խօսիլ արժան կը համարինք , և որոնք են օրիորդ հօժէնի Տանկլար և օրիորդ Լուիդ ա՛նրմիյլի :

Խնչողէս ըսինք՝ ծաղկահաս նշանած աղջիկը սէդ կերպարանքով և արհամարհոտ շուրթով ու թշնամանոււած թագուհույ մը քալուածքով իւր սենեակը քաշուեր էր իւր ընկերուհոյն հետ , որ իրմէ աւելի դեղներ և աւելի յուղուեր էր :

Հօժէնի իւր սենեակը հասնելով՝ դուռը ետեկն փակեց , իսկ Լուիդ աթոռի մը վրայ ինկաւ :

— Ո՛վ Աստուած իմ , այս ինչ սոսկալի բան է , ըստ նորատի երածշուուին , և ո՛վ կը տարակուսէր որ Պատրէա Գավալդանթին սրիկայ մը . . . մարդասպան մը . . . և թիապարաութենէ փախչող մը ըլլայ . . . —

Հենգնական ժպիտ մը Էօժէնիին շուրջերը կարկամց :

— Ստուզիւ Շակատագիրս է եղեր , ըստ . Մորսէրֆէն աղատեցայ որպէս զի Գավալդանթիին իշխամ :

— Ա՛չ , իրարու հետ մի շփոթեր զանոնք , Էօժէնի :

— Լուէ , մարդիկ անարժան են , և ես զանոնք տաել կարենալուս համար երջանիկ եմ . բայց հիմա աւելի կը նախատեմ դանոնք :

— Հիմա ի՞նչ պիտի ընենք , հարցուց Լուիզ :

— Ի՞նչ պիտի ընենք կ'ըսես :

— Այս :

— Ի՞նչ որ երէկ պիտի ընէինք . . . պիտի մեկնինք :

— Բայց հիմա որ ալ պիտի չկարդուիս , միշտ նոյն դիտառութիւնն ունիս :

— Մտիկ ըրէ , Լուիզ . մեր երաժշտութեան թղթին պէս շտփուած և կանոնաւորուած հասարակաց կեանքը ինձ տաելի է . իմ սիրած և փափաքած կեանքս արհեստաւորի կեանքն է , աղատ և անկախ կեանք մը , որու մէջ մարդս ուղածը կ'ընէ և իւր ըրածին վրայ մէկուն հաշիւ տալու պէտք չունի : Ի՞նչու համար կենամ , որպէս զի ասկէ մէկ ամիսէն վերստին զիս ամուսնացընել ուզեն , և որո՞ւ հետ , զուցէ ու . Տըղրէին , ինչպէս որ ժամանակաւ խօսքը եղած էր : Ա՛չ , Լուիզ , ոչ , այս իրիկուան դէպքը պատճառ մը կընայ ըլլալ ինծի . իմ հարցընելէս և փնտռելէս առաջ Աստուած կ'իմացընէ ինձի , օրհնեալ ըլլայ Աստուած :

— Ի՞նչպէս աներիկուղ և քաջասիրտ աղջիկ մ'ես , ըստ խարտեաշ և նուրբ աղջիկը իւր թխազ ոյն ընկերուհոյն :

— Մինչև հիմա զիս չէ իր Շանչնար , Լուիզ . հիմա մեր զործերուն վրայ խօսինք . կառքը ի՞նչպէս եղաւ :

— Բարեբաղդաբար երեք օրէ ՚ի վեր ծախու առնուած է :

— Որոշուած աեղը տանել տուիր :

— Այս :

— Մեր անցազիբերը ի՞նչ ըրեր :

— Ահաւասիկ — :

Եւ Էօծէնի իւր սովորական համարձակութեամբը Լուիզին  
ներկայացուցած թուղթը բանալով կարդաց .

« Ո . Լէօն տ' Արմիլլին քսան տարեկան , արուեստաւոր՝  
ու մազերով , ու աչուի , իւր քրոջը հետ պիտի ճանապար-  
հորդէ » :

— Շատ աղէկ . այս անցագիրը որո՞ւ ձեռօք ստացար :

— Հռոմի և Կարոլիի թատրոններուն վերատեսչաց վրայ  
Մօնթէ - Քրիսթոյէն նամակներ խնդրած ժամանակս , կնոջ  
զգեստով Ճանապարհորդելու համար ունեցած երկիւղս յայտ-  
նեցի անոր . իմ միտքս հասկըցաւ , և մարդու անցագիր մը  
ստանալու աշխատեցաւ . երկու օր ետքը՝ այս անցագիրը ստա-  
ցայ , որուն վերջը իմ ձեռօքս իւր ժրդը հետ ուրիշ ճանապա-  
հորդէ խօսքը աւելցուցի :

— Ուրեմն , ըստ Էօծէնի ուրախութեամբ մը , միայն մեր  
արկղները պատրաստելը մնաց . հարսանեաց իրիկունը մեկնե-  
լու տեղ՝ դաշնագրին ստորագրութեան իրիկունը կը մեկնինք :

— Աղէկ մտածէ , Էօծէնի :

— Ո՛չ , ես աղէկ մտածած եմ . հաշիներու , ամսալերջ-  
ներու , զիներուն բարձրանալուն և ցածնալուն , Սպանիա-  
կան արժէթթոց , Հայիթիի տոմսերուն խօսքերը լսելէն  
ձանձրացած եմ : Այս ամենուն տեղը , կը հասկընաս , Լուիզ ,  
աղատութեան օդը պիտի վայելենք , թռչնոց երդը , Լոմպար-  
տիոյ մարզադետիները , Անենետիկի ջրանցքը , Հռոմի պա-  
լատները և Կարոլիի ծովեզը : Ո՞րչափ է մեր ունեցածը ,  
Լուիզ — :

Ծաղկահաս աղջիկը գրասեղանի մը մէջէն բանկիքուած թըդ-  
թագարան մը հանեց , բացաւ զայն և քսան և երեք լումա-  
յատումներ համբեց :

— Քսան երեք հաղար Փրանք , ըստ :

— Գոնէ նոյն չափ դումար արժողութեամբ ալ մարդ արիտ :

ներ, աղամանդներ և դոհարներ ունինք, ըստ Էօծէնի՝ Հարուստ ենք մմնք և քառասուն և հինգ հազար ֆրանքով երկու տարի իշխանուհիներու պէս կամ չորս տարի վայելու և կերպով աղբելու միջոց ունինք։ Բայց վեց ամիս շեղած դունքու երաժշտութեամբ գ և ես իմ ձայնովս մեր դրամաղլուսը կը կրկնապատկենք։ Դրամմերը դուն առ և դոհարեղինաց արկղին ալ ես կ'առնում, որպէս զի եթէ մեզմէ մէ կը իւր դանձը կորսնցընելու դժբաղդութիւնն ունենայ, միւսինը միշտ ձեռքերնիս ըլլայ։ Հիմա արկղը պատրաստենք, շուտ ընենք, արկղը։

— Կեցիր, ըստ Լուիզ՝ տիեզն Տանկլարի դրան ականջ դնելով։

— Ի՞նչ բանէ կը վախնաս։

— Որպէս զի յանկարծ վրայ չդան։

— Դուռը դոցած եմ։

— Գույցէ ըսեն որ բանանք զայն։

— Թող ըսեն եթէ կ'ուզեն, մմնք չենք բանար։

— Ճշմարիտ ամազոնեան աղջիկի մ'ես, Էօծէնի։

Եւ երկու ծաղկահաս աղջիկները զարմանալի դործունեութեամբ մը միսան մորթարկի մը մէջ զետեղել ճամբարդութեան ամեն պէտք եղածները։

— Աղէկ, ըստ Էօծէնի, Հիմա զզ եստներս փոխելու միջոցին՝ դուն արկղը դոցէ։

— Բայց ես չեմ կրնար զոյել զայն, ըստ Լուիզ, ես քեզի չափ ոյժ չունիմ։ Գուն դոցէ։

— Ոչ, ստոյդ է, ըստ Էօծէնի ծիծաղելով, մոռցայ որ ես Հերքիլլէսն եմ և դուն անզօր նմիաղէ սը։

Եւ ծաղկահաս աղջիկը իւր սրունքը արկղին վրայ կոթնցընելով՝ իւր սպիտակ և ջղապինդ թեւերը պրկեց մինչեւ որ արկղին երկու բաժանումները իրարու միացան, և օրիորդ տ'Արքիլլին փակազակին ակիշը երկու օղակներուն մէջ անցուց։

Այս զործողութենէն ետեւ Էօծէնի պահանոց մը բացաւ,

որուն բանալին իւր վրայ կը կրէր, և Ճամբռը դութեան համար բամբակով լցուած մանիշակաղոյն մետաքսեայ կրկնոց մը հանեց:

— Ահա, ըստու, կը տեսնես որ ամեն բան մտածեցի. այս կրկնոցով ճամբան ամեննեին պիտի չպաղիս:

— Բայց գուն:

— Ես ամեննեին չեմ սլաղիր, գուն աղէկ դիտես, մանաւանդ այս մարդու զգեստներով . . . :

— Հո՞ս պիտի հաղուիս:

— Անշուշտ:

— Բայց ժամանակ պիտի ունենամ:

— Ամեննեին հոգ մի ըներ, վախկոտ աղջիկ. մնր ամեն ծառաները իրենց գործին զբաղեալ են. մանաւանդ որ ի՞նչ կրնան ըսել երբ յուսահատութեանու մէջ իմ սենեակո փակուիմ, ըսէ:

— Ստոյգ է, բան մը չեն կրնար ըսել:

— Կեռ ուրեմն օդնէ ինձի — :

Եւ նոյն պահանոցին մէջէն, (ուրիկց օրիորդ ա'Արակիլին համար կրկնոց մը հաներ էր, և նուրբ օրիորդն ալ իւր թիկանց վրայ առեր էր զայն), կոշիկէն մինչև թիկնոցը ամբողջ հագ մը մարդու զգեստ, և Ճերմկեղէններու միայն ուետք եղածները հանեց:

Այն ատեն կօժէնի այնպիսի արագութեամբ մը, որ կը ցուցընէր թէ անտարակոյս տուաջին անգամը չէր որ զուար. Ճանալու համար ուրիշ սեռի մը զգեստները կը հագնէր, կոշիկները և սոնազդեստը հագաւ, փաղկապը կապեց, զոց բաճկոն մը մինչև պարանոցը կոճկեց, և թիկնոց մը հագաւ, որ իւր մարմնոյ բարակ ու կոր ձեւը կը նկարէր:

— Ստուդի այդ զգեստները խիստ վայելու դային վրադ, ըստու Լուիզ զարմանքով անոր նայելով. բայց այդ զեղեցիկ սե մազերդ, այդ շքեղ հիւսակներդ, որոց համար բոլոր կիները նախանձելով կը հառաջն, այս մարդու զընարկին մէջ կրնան պահուիլ:

— Հիմա կը տեսնես — , ըստ հօձէնի :

Եւ ձախ ձեռքովը թանձր մազերուն հիւսակը բռնելով ,  
որոնք հաղիւ երկար մատերուն մէջ կը սլարունակուեին , աջ  
ձեռքովն ալ երկար միջրատ մը առաւ , և իւր թիկնոցէն հեռա-  
ցընելու համար գէպ 'ի ետե ծռուելով՝ իւր առատ ու դեղե-  
ցիկ մազերը կարեց , որոնք նորատի աղջկան ոտքն բռւն ինկան :

Դիմաւոր հիւսակը կտրելէն ետե՝ հօձէնի հետղհետէ իւր  
քունքերուն մազերն ալ կտրեց առանց ամենեին վիշտ մը  
յայտնելու . ընդ հակառակն՝ իւր աշքը սովորականէն աւելի  
վառվառւն և աւելի զուարթ կը փայլէին եպենոսի նման ու  
յօնքերուն տակը :

~~— ԱՇ , մեղք դեղբցիկ մազերուդ , ըստ Լուիզ ցաւելով :~~

— ԵՇ , այսպէս հարիւր անդամ աւելի աշէկ չեմ , դուքց  
հօձէնի իւր ստուար խռապուիքը ձեռօքը ուղղելով , որոնք բո-  
լորովն առնական եղեր էին , և այսպէս աւելի դեղբցիկ չեմ  
երե իր :

— ԱՇ , կարծեմ թէ երդում ըրած ես — , հօձէնի :

Եւ երկու ծազկահաս աղջիկները , որոնց աշքը գրեթէ  
արտասուօք լցուած էր՝ մէկը իւր անձին և միւսը իւր բա-  
րեկամուհւոյն վրայ ունեցած անձնուիրութեանը համար , վա-  
խըսեան պատրաստութիւնները տեսած ժամանակնին տակն  
ու վրայ եղած առարկաներուն հետքը չնչելու ջանացին :

Ետքը ճրագնին մարեցին , և ամեն կողմ զիտելով ու ականչ  
դնելով երկու փախառականները զարդարանաց սենեկի մը  
դուռը բացին , որ մինչեւ ատան բակը տանոսու սանդուխին վրայ  
կը բացուէր . հօձէնի առջնէն կը քալէր և արկղին մէկ կող-  
մէն բռնած էր , իսկ անոր միւս ճարմանդէն օրիսրդ տ' Ար-  
միլին հաղիւ երկու ձեռօքը կը վերցընէր :

Քակին մէջ մարդ չկար . ժամացոյը կէս դիշեր կը հնձէր :

Դրոնապանը դեռ իւր անկողինը դաշած չէր :

Հօձէնի կամաց մը անոր մօնեցաւ և առաւ որ թեաթուն  
վրայ երկնցած իւր իցիկին մէջ կը գնտնաւ :

Լուիզի քովը վերադարձաւ, և զետինը թողուցուծ արկղը իւր ընկերուհոյն հետ առնելով, և պատին տակի սառւերին մէջէն քալելով, դրան մօտեցան:

Էօժէնի Լուիզին հրամայեց որ դրան անկիւնին մէջ պահուի, որպէս զի եթէ դռնապանը դիպուածով արթննայ՝ միայն մէկ հոգի տեսնէ:

Այս ատեն աներկիւղ օրիորդը բակը լուսաւորող ճրագին մէջ դալով՝

— Բաց դուռը —, պոռաց բարձրաձայն երգող դերասանի մը զեղեցիկ ձայնովը ու խցիկին պատուհանը զարկաւ:

Դռնապանը ոտք ելաւ, ինչպէս որ Էօժէնի դուշակեր էր, և քանի մը քայլ իսկ յառաջ եկաւ, որպէս զի դուրս ելնողը Ճանչնայ. բայց տեսնելով որ սպասողը երիտասարդ մ'էր, որ անհամբերութենէն եղեգեայ զաւաղանովը իւր սըռնաղեստը կը ծեծէր, անմիջապէս դուռը բացաւ:

Լուիզ կիսաբաց դոնէն օձի պէս իսկոյն դուրս սահեցաւ:

Էօժէնի ալ անոր ետեէն դուրս ցատկեց. թէե հանդարակերեր, սակայն հաւանականաբար իւր սիրտը սովորականէն աւելի կը բարախէր:

Այս միջոցին բեռնակիր մը կ'անցնէր, արկղը անոր բեռնաւորեցին, ու իրենց երթալու տեղը Ալիքթուար փողոցը, թիւ Յնն ըլլալը իմացընելով՝ այն մարդուն ետեէն քալեցին, որուն ներկայութիւնը Լուիզին երկիւղը կը փարատէր. իսկ Էօժէնի Յուդիդի կամ Տալիլայի մը պէս աներկիւղ էր:

Որոշուած փողոցին թիւ Յնն հասնելով Էօժէնի հրամայեց բեռնակիրին որ արկղը զետինը դնէ, քանի մը ֆրանք տուաւ անոր, և դուռը զարնելէ ետե Ճամբեց զան:

Էօժէնիին զարկած դուռը լաթ լուացող կնոջ մը տան դուռն էր, որ առաջուց ազդարարուած ըլլալով դեռ քնացած չէր և իսկոյն դուռը բացաւ:

— Օրիորդ, ըսաւ Էօժէնի, կառքը դռնապանին դուրս հանել տուր, և զբկէ զան որ ձիերը բերէ. ահա իւր աշխա-

առւթեանը՝ համար հինգ ֆրանքոց մը:

— Ստուդիւ զարմանք կը պատճառես ինձ, ըստ Լուիզ, և կրնամ իսկ ըսել որ քեզմէ կ'ակնածեմ:

Լուացարար կինը զարմանքով անոր կը նայէր. Թակայն որովհետեւ առաջուց համաձայնած էին որ իրեն քսան Լուիզ ուսկի պիտի տան, ամենենին դիտողութիւն մը չըրաւ:

Քառորդ մը ետքը դունապանը կառավարով և ձիերով վերադարձաւ, որոնք իսկոյն կառքին լծուեցան, որուն վրայ դունապանը արկղը չուանով մը հաստատեց:

— Ահա անցագ իրնիդ, ըստ կառավարը. ո՞ր Ճամբան պիտի բռնենք, երիտասարդ քաղաքացի:

— Գոնթէնը լույսոյի Ճամբան, պատասխանեց Էօժէնի գրեթէ առնական ձայնով մը:

— Ի՞նչ կ'ըսես, հարցուց Լուիզ:

— Մեզմէ քսան ոսկի առնող կինը քառասուն ոսկի ընդգունելու համար կրնայ մատնել զմեղ, ըստ Էօժէնի, ծառուղւոյն վրայ մեր Ճամբան կը փոխենք — :

Եւ ծաղկահաս աղջիկը գրեթէ ոտքը պատուանդանին չդըպցուցած՝ կառքին մէջ նետուեցաւ:

— Միշտ իրաւունք ունիս, Էօժէնի — և ըստ երգի վարժապետուհին իւր բարեկամուհւոյն քովը նստելով:

Քառորդ մը ետքը կառավարը շիտակ Ճամբան զարնելով իւր մտրակին շաշիւնովը Աէն-Մարթէն կոշտած Բարիզի դռնէն կ'անցնէր:

— Ա՛ս, ըստ Լուիզ ողի առնելով, ահա Բարիզէն դուքս ելանք:

— Այս, սիրելիս, և ըրած յափշտակութիւնս աղէկ կը յաջողի, պատասխանեց Էօժէնի:

— Այս, բայց առանց բռնութիւն բանեցընելու, ըստ Լուիզ:

— Պատութիւն կը համարիմ ես այդպիսի գործ մը — , պատասխանեց Էօժէնի:

Լա Ա.իլէ՛լի քարայտառակին վրայ կառքին հանած ձոյնին  
մէջ պատուեցան :

Պ. Տանկլար աւ աղջիկ շունէր :



### ՊԱԼՈՒԹ Բ.

#### ԶԵՆԴԱԿԻՆ ԵՒ ԾԵԾԻՆ ԳԵՆԴԱԿԻՆ

Ունկանակ օրիսրդ Տանկլարը և իւր քարե-  
կամուչին պրիւեէլի ճամբռուն վրայ ,  
ու գառնանք ողօրմելի Անտրէա Գա-  
լալդանթիին ,որ երջանկութեան թե-  
ւերով թոշելու միջոցին՝ յանկարծ  
իւր ընթացքին մէջ իյնայ :

Պ. Անտրէա Գալալդանթին իւր ծաղկաչաս տարիեքին  
մէջ իիստ խորամանկ և խորամիտ էր :

Աւստի սշահին մէջ իւր սշապարծութեան խոսքը սկսուած  
միջոցին տեսանք որ աստիճանարար դրան կը մօտենար , մէկ  
սենակէն միւսը կ'անցնէր և զերշապէս աներեւոյթ եղեր էր :

Մարցանք դէս մը շիշելու , զոր ալեաք չենք զանց ընել .  
Գալալդանթիի տնօցած սենեակէն բուն մէկուն մէջ կօժէնիին  
օժիսը ՚ի տես ուրածած էր , ոյսինքն՝ անոր աղամանդեայ

զարգերը, Գաշմիք ցփսիները, Վալանսի ասղնեղործերը, Անդրեյաց քողերը, վերջապէս այն անթիւ առարկաները, որոնց մլոյն անունը նորատի աղջկանց սիրաը կը խայտացընէ:

Այն սե նեկին մեջէն անցնելու առեւն՝ Ընտրէա այն ադամանդեայ զարգերուն ամենէն թանկադինը վերցուց, այս բանս կը ցուցընէ որ երիտասարդը ոչ միայն խորամանկ և խորամուտ էր, այլ և հեռատես ալ էր:

Ճանապարհօրդութեան այս պաշարով՝ աւելի թե թեսութիւն մը զզացեր էր պատուհանէն դուրս ցատկելու և զինակրաց ձեռքէն փախչելու:

Նսխինի բմբշամարտի մը պէտ բարձրահասակ ու յաղթամարմին, և Սպարդացիի մը պէտ չղապինդ երիտասարդ մը ըւլալովը՝ քսոսրդ մը վաղելով փախչեր էր անկէ՝ առանց զիտնալու թէ ուր կ'երթայ, միայն այն առւնեն հեռ անալու նպատակաւ, որու մէջ քիչ մնաց պիտի բռնուեր:

Ման-Պլան փողոցէն մեկնելով՝ Լավայէթ փողոցին ձայրը հասեր էր, քաղցրին գոնէն դուրս ելնելու համար զողերու յատակ եղած բնադդում.վ.:

Ընտրէա շնչառպատ եղած հոն կանգ առաւ:

Բոլորովին առանձին էր, և ձախ կողմը Սէն-Լազարի ընդարձակ արաը կը դատնուէր, ու աջ կողմը բարիդ իւր բռլոր ընդարձակութեամբը կը տարածուէր:

— Երդեօք պիտի կորսուիմ, հարցուց իւրովի, ոչ, եթէ իմ թշնամիներս աւելի ճարապկութիւն մը բանեցընեմ, ուրեմն աղատութիւնս դեռ վլանդի մէջ է — :

Նոյն միջոցին բուասոնիէր արուարձանին վրայէն եկող կառք մը տեսաւ, որուն կառավարը լոին ու իւր ծխափողը քաշելով կ'երեւէր թէ Սէն-Տրնի արուարձանը մտնել կ'ուրէր, ուր անստարակոյս իւր սովորական կայանը պիտի կենար:

— Ե՞ս, բարեկամ, պոռաց Պէնէտէթթօ:

— Ե՞նչ կայ, պարոն, հարցուց կառավարը:

— Զիդ յոդնամծ է:

— Յօդինած կ'ըսէք , ո՛չ , այս՝ բոլոր օրը բան մը չըրաւ . չորս անդամ՝ Հանապարհորդ ունեցայ , և քսան ու ընծայ առի , ընդ ամենը եօթը Փրանք , և ես տասը Փրանք կառքին աիրոջը պիտի տամ :

— Այդ եօթը Փրանքին վրայ կ'ուղե՞ս քսան Փրանքնոց մ'ալ աւելցնել , զոր ես պիտի տամ քեզ , չէ՞ , ի՞նչ կ'ըսես :

— Յօժարութեամբ , պարոն . միթէ քսան Փրանքը կը մեր ճուի՞ . ի՞նչ կը խնդրէք , ըսէք :

— Խիստ գիւրին բան մը , միայն եթէ ձիդ յոդնած չէ :

— Զեփիւոի պէս պիտի թուչի կ'ըսեմ . միայն ըսէք ինձ թէ ո՞ր կողմը կ'ուղե՞ք երթաւ :

— Լուվրին կողմը :

— Ո՛չ , հասկըցայ , համեմօղիի երկիրը պիտի երթաք :

— Կ'ուղեմ բարեկամացս մէկուն ետեէն հասնիլ , որուն շետ վաղը Շաբէլ-ան-Աէրվալ որսի պիտի երթամ . իւր կառ քովը մինչեւ ժամը տասնըմէկ ու կէս հոս պիտի սպասէր ինձ . հիմա կէս դիշեր է . կ'երեի թէ սպասելէն ձանձրանալով մինակ մեկներ է :

— Հաւանական է :

— Ուրեմն անոր ետեէն հասնլու համար կրնա՞ս փորձ մը ընել :

— Խմ ուղածս ալ այս է :

— Եթէ ասկէ մինչեւ Պուրծէ անոր չհասնինք՝ միայն քսան Փրանք պիտի ընդունիս , իսկ եթէ մինչեւ Լուվրը չհասնինք՝ երեսուն Փրանք :

— Իսկ եթէ հասնինք :

— Քառասուն , ըստ Անտրէա վայրկեան մը երկմտութիւն ցուցընելէ ետե , բայց մտածելով որ խոստանալով բան մը չէր կորսնցըներ :

— Ըստ աղեկ , ըստ կառավարը , հեծիք , յառաջ , բրրուն :

Անտրէա կառքը հեծաւ , որ մէծ արշաւանքով Աէն-Տընի արուարձանէն Սէն-Մարթէն արուարձանին բոլոր երկայնու-

թեամբը անցաւ, ու դռնէն դուրս ելնելով՝ անվերջանալի Վիլէթը մտաւ:

Այն երեակայական բարեկամին հասնելու հոդ չէին ըներ, թէև Գավալղանթի մնրթ ընդ մերթ ուշ մացաղ անցաւորանքուն և գեր բաց զտնուող պանդոկներուն կը հարցընէր թէ աշխէտ ձիու մը լծուած կանաչ կառքի մը անկէ անցնելը տեսան, և որովհետեւ Ստորին-Նահանդաց Ճամբուն վրայ խիստ շատ կառքեր կը բանին, և անոնց տասնին ինը կանաչ են, ամեն քայլափոխին տեղեկութիւնները կը տեղային:

Միշտ այնպիսի կառքի մը անցնելը տեսած էին. հինգ հարիւր, երկու հարիւր կամ հարիւր քայլ առջնէն՝ տրուած նշանին նման կառք մը կ'երթար, անորմէ առաջ կ'անցնէին, բայց իւր բարեկամինը չէր այն:

Անդամ մ'ալ կառք մը իրենց կառքէն առաջ անցաւ. սուր հանդակի երկու ձիերէ լցուած կառք մ'էր այն:

— Ա՛յ, ըստ Գավալղանթի ինքնիրեն, ինչո՞ւ սա կառքը, երկու ձիերը և մանաւանդ անոնց անցաղիրը չունենայի — :

Եւ սրտին խորունիէն հառաչեց :

Այն կառքը օրիորդ Տանկլարին և օրիորդ ա՛նըմիլիին հեծածն էր :

— Յառաջ, յառաջ, ըստ Անտրէա, պիտի չկրնանք հասնիլ — :

Եւ խեղջ անաստենը վերստին սկսաւ իւր առաջէն սկսած արշաւանօքը վազել, և հեալով Լուվը հասաւ:

— Ստուգիւ, ըստ Անտրէա, կը տեսնեմ որ բարեկամիս պիտի չկրնամ հասնիլ, և ձիդ պիտի սպաննեմ. ուստի աւելի աղեկէ է որ հոս կենամ: Ահա քեզ երեսուն ֆրանք, այս դիշեր Ըլվալ-Բուժ կը պառկիմ, և առտու կառք մը գտնելով կը մեկնիմ: Երթաս բարեաւ, բարեկամ — :

Եւ Անտրէա կառավարին ձեռքը վեց հատ հինգ ֆրանքնոց դնելով՝ թեթևութեամբ Ճամբուն քարայատակին վրայ ցատկեց:

Ապամվարը առած գրամենը ուրախութեամբ ծոցը գրաւ և կանոնաւոր ընթացքով վերստին բարիղի ճամրան զարկաւ :

Անարէա Շըլտլ-Բուժի սկանդոկը մանել ձեւացուց , բայց գրան առջին քիչ մը կենաւլէն եւնե՝ տեսնելով որ կառքը հարկունին վըսյ աներեսյթ կ'ըլլար , իւր ճամրան շարունակեց . և խիստ շուտ և կանոնաւոր քայլը ըսկ երկու մղոն տեղ յառաջացաւ :

Այն առեն քիչ մը հանդչեցաւ . Շարէլ-ան-Աէրվալին խիստ մօտեցած ոդիտի ըլլար , ուր երթալը իմացուցեր էր :

Անարէա Գավալլզանթի չէ թէ յոդնութենէն , այլ իւր որոշումը ընելու և ծրագիր մը պատրաստելու հարկէն էր որ հան կը կենար :

Ճամրորդութեան կառք մը հեծնելը անկարելի էր , ուուր հանդակի կառք մը վարձելը նոյնակես անկարելի էր . մէկ կամ միւս եղանակաւ ճանապարհորդելու համար անհրաժեշտ պէտք էր անցագիր ունենալ :

Աւազի , այսինքն Գաղղիոյ ամենէն բաց և լաւ հսկուած նահանդներէն մէկուն մէջ կենայը գարձեալ անկարելի էր , մանաւանդ յանցաւորութեան խնդրոց մէջ Անարէայի պէս փորձառու մարդու մը համար :

Անարէա փոսին ետեի կողմը նստաւ , դլուխը իւր երկու ձեռացը մէջ բռնեց և մոռածեց :

Տասը վայրինան ետքը՝ գլուխը բարձրացուց . երիտասարդը իւր որոշումը ըսկը էր :

Փոշիով ծածկեց իւր վերաբերին բոլոր մէկ կողմը , զոր հաղիւ ժամանակ ունեցեր էր Տանիլարի նախասնեկին մէջէն յափշտակելու և իւր պարահանդիսի զզ եսաներուն վրայէն հաղնելու , և Շարէլ-ան-Աէրվալ մանելով գնաց կիւզին մէջ զտնուած միայն մէկ պանդոկին դուռը համարձակութեամբ դարձաւ :

Պանդոկապետը դուռը բացաւ :

— Բարեկամ , ըստ Անարէա , Մօրթիոնթէնէն Աէնիի եր-

թալու առենա՞ ձիս , որ աննուաշելի անասուն մ'է , իըրաւ չելով ցատկից և դիս տասը քոյլ անդին նետեց : Եւյս դիշեր պէտք է որ Գոմբիկներ երթամ , եթէ ոչ՝ ընտանեացա խիստ մեծ անշանգ ստութիւն սղիսի պատճառամ , մլարձեւ ձիմը ունիք — :

Պանդոկապետ մը աղէկ կամ դէշ միշտ ձի մը կ'ունենայ :

Շաբէլ-ան-Սէրվալին սպանդոկապետը իւր Ֆիազարմանը կանչեց , և հրամայեց որ Պլան անունով ձին Ամամբէ , և իւր եօթը տարեկան սրդին արթնցուց , որ պարանին ետին սղիսի հեծնէր և ձին ետ սղիսի բերէր :

Անորէա քսան Փրանք տուաւ սպանդոկապետին , և ստակը ծոցէն հանած միջացին՝ այցատոմն մը զետինը ձգեց :

Այն այցատոմնը Բարիղի Սրճարանի իւր բարեկամներէն մէ կունն էր , և սպանդոկապետը Անորէայի մէկնելէն ետև՝ զայն զետնէն առնելով այնպէս կարծեց որ իւր ձին ու . կոմս աը Սոլէսոնին վարձեր էր , որ Աէն-Տոմինիք փողոցը , թիւ 23 կը բնակէր . այցատոմնին վրայ եղած անունն ու բնակութեան տեղը տառնք էին :

Պլան շուտ չէր քալեր , բայց միօրինակ և շարունակ կը քուլէր :

Երէք ու կէս ժամուան մէջ մինչեւ Գոմբիկներ ինը մզոն տեղը քալեց :

Ժամը շորս կը զարնէր երբ կառակոյանին առնելը հասաւ :

Գոմբիկների մէջ ընտիր սպանդոկ մը կայ , զոր դիշեր մը հոն սպակողներն անց ար կը յիշեն :

Անորէա , որ Բարիղի շրջականները բրած որջակ այսութեանցը մէջ դիշեր մը հոն մնացեր էր . Զանդակին և Ծիշին սպանդոկը միաբը եկաւ . ամեն կողմ դիտեց , և լաստերի մը լուսովը անոր անունը զրան մը վրայ կարդաց . և աղան Ճամբելով , որուն իւր քովը ունեցած բոյսը մանր ստակները տուաւ , զնաց սպանդոկին զուսը զարկաւ՝ մտածելով որ իւր առջել երեք կամ շորս ժամ ունի , և թէ աղէկ քունով և

ընտիր ընթրիքով մը պէտք էր ետքէն ունենալու յոզնու մեան համար ոյժ առնուլ:

Դուռը բացողը ծառայ մ'էր:

→ Բարեկամ, ըստ Անտրէա, ևս Սէն-Ժան-օ-Պուայէն կու զամ, ուր Ճաշը ընելով կը յուսայի թէ կէս զիշերին անցնող կառքը մտնել կարենամ, սակայն յիմարի մը պէս կորսուեր եմ, և աշա չըրս ժամէ 'ի վեր անտառին մէջ կը թափառիմ: Քակին վրայ նայող այն փոքր դեղեցիկ սենեակներէն մէկը ինձի համար պատրաստել տուր և պաղ վառեակ մը ու շիշ մը Պորտոյի զինի զրկէ ինձի —:

Ծառան ամենեին կատկածելու տեղի չունէր. Անտրէա կասարեալ հանդարտութեամբ կը խօսէր, զլանիկը բերանը և ձեռքերը վերարկուին ծոցերուն մէջ դրած էր, իւր զգեստները վայելուշ էին, մօրուքը գեռարոյս և կօշիկները ձեաւոր. ուշ մնայող գրացիի մը երեսյթն ունէր:

Երբ ծառան իւր սենեակը կը պատրաստէր, պանդոկապետուհին արթնցաւ. Անտրէա իւր ամենէն քաղցր ժպիտովը ընդունելութիւն տուաւ անոր, և հարցուց թէ արդեօք չէր կրնար տալ իրեն թիւ Յ սենեակը, զոր իւր վերջին ճամբորդութեանը մէջ ինքը բռնած էր. Գժբազդաբար թիւ Յ սենեակը՝ քըոջը հետ Ճանապարհորդող երիտասարդ մը բըռնած էր:

Անտրէա յուսահատեալ երեցաւ, և միայն այն ատեն միոիթարուեցաւ երբ պանդոկապետուհին ապահովցուց զինքը թէ թիւ 7 սենեակը թիւ Յ սենեակին ամեն յարմարութիւններն ունէր. և մինչև իւր սենեակին պատրաստ ըլլալը սպասելու միջոցին իւր սոքերը կը տաքցընէր ու Շանթլյլի ըրած իւր վերջին Ճանապարհորդութիւնները կը պատմէր:

Քակին վրայ նայող գեղեցիկ սենեակներուն խօսքը պարագ տեղը չըրեր էր Անտրէա: Քանզի այս պանդոկին բակը խիստ շքեղ երեսյթ մը ունէր իւր երեք կարդ Ճեմադաւիթներովը, որոնք թատրոնի սրահի մը երեսյթը կու տային ա-

նոր, և յասմիկներովն ու անուշաբոյր բաղեղներովը, որոնք  
բնական դարդերու պէս սիւնակներուն վրայ կ'ելնեին:

Վառեակը թարմ էր, զինին չին, և կրակը շողուն ու  
շառաչող:

Անտրէա իւր վրայ զարմացաւ այնպիսի ախորժակով մը  
ընթրելուն, որ կարծես թէ ամեննեին բան մը պատահած չէր:

Եսոքը պառկեցաւ, և զրեթէ իսկոյն քնացաւ այն քաղցր  
քունով, որ մարդս քսան ատարեկան հասակին մէջ կ'ունենայ  
խղճի տաղնապներ ունեցած ատենն անդամ:

Ստիպուած ենք խոսառվանելու որ Անտրէա կրնար խղճի  
տաղնապներ ունենալ, սակայն չուներ:

Անտրէայի պատրաստած ծրագիրը այս հետեւալն էր, ո-  
րով բոլորովին ապահով պիտի ըլլար:

Լուսնալուն պէս պիտի արթննար, իւր պարտքը ձշղիւ  
վհարելէն ետե՛ պանդոկէն պիտի մեկնէր, անտառը պիտի  
երթար, ու պատկերահանութեան պարագելու պատրուակաւ  
դիւղացիի մը հիւրընկալութիւնը պիտի դնէր, փայտահատի ըղ-  
դեսաներ և տապար մը ձեռք պիտի ձգէր, վայելուշ զգեստ-  
ները հանելով զործաւորի զգեստը պիտի հազնէր. ետքը  
ձեռքը հողով աղտեղած, մազերը կապարեայ սանտրով մը  
թխացած, զոյնը արեէն այրածի պէս ներկած, որուն շինե-  
լու եղանակը իւր հին բարեկամներէն սորված էր, անտառէ  
անտառ անցնելով, ամենէն մօտադոյն տահմանադ լուխը պիտի  
հասնէր. դիշերը պիտի քալէր, ու ցորեկը անտառներուն  
կամ Ճամբաներուն վրայ պիտի քնանար, և միայն հաց գնե-  
լու համար ժամանակ առ ժամանակ բնակեալ տեղերու պիտի  
մօտենար:

Սահմանադ լուխը անցնելուն պէս՝ Անտրէա իւր ադամանդ-  
ները պիտի ծախէր, ու անոնց սոտակը առնելով՝ տասնի չափ  
լումայտոմներուն հետ պիտի միացընէր, որոնք դիսուածի  
ժամանակ զործածելու համար միշտ իւր քովը կը պահէր, և  
այս կերպով գարձեալ յիսուն հազար ֆրանքի տէր պիտի  
ըլլար, որով զէշ վիճակ մը պիտի չունենար:

Ասոնցք զատ՝ մեծ յոյս ուներ որ Տանկլարի ընտանիքը իւրեաց ձախորդութեան առաձայնութեանը ջնջելու պիտի աշխատին:

Ահա այս պատճառաւ Անտրէա իւր յագնութեանէն զատ այնչափ շուտ և այնչափ հանդիսա քանացաւ:

Աստաւ կանուխաւ արթննալու համար՝ երիտասարդը իւր որուաւ հանին փեղեբը ամենեին չուցեր էր, այլ միայն բաւականացեր էր իւր դրան պարզունակները գներու և սեղանիքը մը վրայ բոլորովին մելք խիստ սրածայր դանակ մը տեղաւորելու, զոր միշտ իւր վրայ կը կրէր, և որուն երկաթին աղեկ միուած ըլլալը դիտէր:

Աստուան ժամը զրեթէ հօթին Անտրէա իւր երեսին վրայ եկած արեւուն դաղը ու փայլուն հառադ այթէն արթնցաւ:

Ամեն ուղղամբու մարդու ուղեղին մէջ իշխող խորհուրդը (մարդս միշտ իշխող խորհուրդ մը ունի) ամենէն վերը նընչելէն ետե՛, արթնցած միջոցին ալ ամենէն առաջ միաբը կը լուսաւորէ:

Անտրէա իւր աչքը բոլորովին չբացած՝ իշխող խորհուրդը արդէն իւր միտքը զրաւած էր և իւր ականչին կը փսփսար որ խիստ երկար ատեն քնացեր էր:

Անկողինէն վար ցատկեց և պատուհանին առնելը վազեց:

Զինակիր մը բակին մէջ տեղը բանած էր:

Աշխարհի մէջ ամենէն աւելի աչքի զարհող բանը՝ անշանց զբառութիւն չունեցող մարդուն համար անզամ՝ զինակիրն է, սակայն երկչու խիզք մը կամ վախճանու պատճառ մը ունեցողի համար անսր միազդեստին գեղին, կապոյս և աղիտակ դոյները սոսկառիթ դոյներ կ'եքեին:

— Եյս զինակիրը ինչո՞ւ եկած է —, հարցուց Անտրէա իւրովի:

Եսաբը յանկարծ ինքնիրին պատասխանեց այն կորուլամբութեամբը, զոր ընթերցողը անոր վրայ տեսաւ:

— Զինակիր մը պանդոկի մը մէջ դարը զարմանք չիւնար պատճառել, շուտով հաղուինք — :

Եւ երիտասարդը ոյնպիսի արագութեամբ մը հաղուեցաւ : որ քանի մը ամսէ՝ 'ի վեր վարած Բարիզեան կենցըը մէջ իւր սենելապանը չէր կրցեր այնպէս շուտ հաղուեցընէ :

— Մինչեւ անոր մեկնիլը կ'ըսպասեմ, ըստ Անարէա հաղուելու առեն, և այն առեն կը փախչիմ — :

Եւ իւր կոչիկները հաղնեցն ու փողկապը կապելէն եւն կամոց մը պատուհանին մօտեցաւ և երկրորդ անդամը շղաշատեալոյ վարագոյրը քիչ մը բացաւ :

Աչ միայն առաջին զինակիրը մակնած չէր, այլ և վարիջնելու համար սպանդոկին միակ սանդուխին վարի կողմը կապոյտ, դեղին և սպիտակ համազդեստով երկրորդ զինակիր մը կանգնած էր, և երրորդ մը ձի չեծած և լոյնափող հրացան մը բռնած պանդոկին միակ դրան առջեւ պահպանութիւն կ'ընէր :

Այս վերջին զինակիրը յայտնի կը ցուցըներ որ մէկը բըսնելու եկած են, քանզի իւր առջեր կէս բոլորակ մը կազմերէին հետաքրիթ մարդիկ, որոնք սպանդոկին դուռը բոլորովին պաշարած էին :

— Զիս փնտուելու եկած են ասսիք — , ըստ Անարէա :

Եւ դեղնութիւնը երիտասարդին դէմքը պատելով, որտի անձկութեամբ իւր բոլորտիրը նայեցաւ :

Իւր սենեակի նոյն յարկին բոլոր սենեակներուն սիս սիայն արտաքին դաւթին վրայ կը բացուէր, որ ամեն կողմնաց էր :

— Կորսուեցայ — , դոչեց Անարէա :

Անարէայի կացութեան մէջ դանուուլ մարդու մը համար կալանաւորութեան չետեսութիւնը պիտի ըլլար յանցաւորաց առեանն ենիւլ, դատուիլ, և մահուան դատապարտուիլ առանց զթութեան և առանց յանդադման :

Վայրկեան մը իւր գլուխը երկու ձեռացը մէջ սեղմած բռնեց :

Այս մէկ վոյցիկնին մէջ քիչ մասց որ երկիւղէն ովկու խնդրենար :

Աակային իւր դլիսին մէջ ընդհարող անթիւ խորհրդոց մէջ յանկարծ յուսոյ լոյս մը ծագեցաւ . տիսուր ժպիտ մը իւր այլադունած շըթանց և այլայլեալ այտերուն վրայ նկարուեցաւ :

Իւր բոլորտիքը նայեցաւ , և զբասեղանի մը մարմարիոնին վրայ փնտոած առարկաները ամբողջ գտաւ , որոնք էին դրիւ մը , մելան և թուղթ :

Գրիչը մնլանին թաթիսեց , և իւր ձեռքին դողդոչիւնը զըսուալելով՝ տետրակին առաջին երեսին վրայ հետեւալ տողերը գրեց .

« Առարելու համար ամենեին ստակ լունիմ , բայց ես անապատիւ մարդ մը չեմ . ուստի դրաւի համար այս ասեղը կը թողում , որ ըրած ծախուց տասնապատիկը կ'արծէ : Թողներուի ինձ առտու կանուխ փախչելուս համար . քանզի կ'ամըշնայի » :

Իւր փողկապին ասեղը հանեց և թղթին վրայ դրաւ :

Անկէ ետքը փօխանակ իւր գրան պարզունակները զոցուած թողելու՝ բացաւ զանոնք , դուռը մեկնելու ատեն զոգյես զոցել մոռնալով՝ կիսաբաց թողուց , և այս կերպ մարմարղութեան վարժ մարդու մը պէս կրակարանին մէջ սահեցաւ , և Աքիլլէսի պատկերը ներկայացընող թղթէ հակատը վերստին կրակարանին առաջներ քաշեց , ոտքովը մախրին մէջ իւր քայլերուն հետքը չնցեց , և սկսաւ կոր խողովակէն վեր ելնել , որ փախչելու միակ համբան կը ներկայացընէր իրեն :

Նոյն միջոցին՝ ամենէն առաջ Անտրէսյի աչքին երեցոյ զինակիրը սանդուխէն վեր կ'ելնէր ոստիկանութեան զործակալի մը առաջնորդութեամբը և սանդուխին վարի կողմը ըսպասող երկրորդ զինակիրէն պաշտպանուած , որ հարկ եղած ժամանակը կրնար դուռը պահպանող զինակրին օղնութիւնը կանչել :

Ահա ինչ կերպով զինակիրները Անտրէային խուզարկութեան եկեր էին :

Նուսնալուն պէս՝ հեռաղ իրները ամեն կողմը շարժելով, ամեն կայաններուն իմաց տուեր էին, և ամեն կողմի ոստիկանութեան ուշադրութիւնը արթնցընելով, Քատրուսի սպանիչն խուզարկութիւնը կը հրամայէին:

Գոյմբիէները թագաւորի քնակարան մը, ոբսորդութեան քաղաք մը և պահապան զօրաց կայան մը ըլլալով, զինակիրներէն և սատիկանութեան դործակալներէ լեցուն էր, ուստի հեռացական հրամանը հասնելուն ոլէս խուզարկութիւնները սկսեր էին, և Զանդակին ու Շիշլն պանդոկը քաղաքին առաջին պահովոկն ըլլալուն՝ անկէ սկսեր էին:

Մանաւանդ որ նոյն զիշերը խորհրդատան դրան առջին պահապանութիւն ընող պահապանները (խորհրդատունը Զանդակիի պանդոկին պատկից է) կը հաստատէին որ նոյն զիշերը բաղմաթիւ Ճանապարհորդներ եկած էին այն պանդոկը:

Աստուան ժամը վեցին փոխուած պահանդրդը կը յիշէր իսկ որ իւր պաշտօնին կանչուած ժամանակը, այսինքն ժամը շորսը քանի մը, վայրիեան անցած՝ սպիտակ ձիու մը վրայ երիտասարդ մը տեսներ էր և ձիուն զաւակին վրայ զիւղացի տղայ մը կը զտնուէր. նոյն երիտասարդը հրապարակին մէջ ձիէն վար իջեր, ձին ու զիւղացին ճամբեր, և զացեր էր Զանդակին պանդոկին դուռը զարնելու, ուր մանելէն ետե զուռը վերստին զոյուեր էր:

Եյն նոյն յամող երիտասարդին վրայ ամենուն կասկածը արթնցաւ:

Եյն երիտասարդը Անտրէայէն զատ մէկը չէր:

Եյն յայտնի տեղեկութեանց վրայ՝ սատիկանութեան զործակալը և զինակիրը, որ տասնապէտ մ'էր, զէո՞ի Անտրէայի դուռը կը յառաջանային:

Անտրէայի դուռը կիսարաց կը դանուէր:

— Ո՛չո՛, ըստ տասնապէտը, որ աէրութեան խորամութեանց մէջ սնուած հին ազուէս մ'էր, բաց դուռը զէշ

Նշան է . աւելի կ'ուզէի որ լաւ մը փակուած բանիկուած ըլլուար :

Իւրօք՝ սեղանին վրայ երիտասարդին թողուցած տոմսակը և ասեղը ցաւալի ճշմարտութիւնը կը հաստատէին :

Անտրէա փախչեր էր :

Սակայն ատանապետը մէկ փորձով զոհ եղող մարդ չէր :

Իւր բալորտիքը գիտեց , անկողնոյ տակը նայեցաւ , վարադոյրներուն ետին և պահանջներուն մէջ փնտուց , և վերախափէս կրակարանին մօտեցաւ :

Անտրէայի 'ի գործ գրած զգուշութեանց վրայ՝ մոխիրին մէջէն անցնելուն հետքը չէր մնացեր :

Սակայն փախչելու ճամբայ մ'էր այն , և այնպիսի ուրաքայի մէջ , ամեն փախստեան ճամբաները ամենայն ճշութեամբ պէտք էին խռովարկուիլ :

Աւստի տասնապետը վառելու ոստեր և յարդ բերել տուաւ և սանդ մը լեցընելու պէտ կրակարանին մէջ լիցուց զանոնք և կրակը տուաւ :

Կրակը աղիւսեայ որմերուն ձայնը հանեց , մոխիր անթափանց մրրիկ մը խողովակներէն դուրս ելաւ և հբարուխի տխուր ժայթքումին պէտ գէտ 'ի երկիրնք բարձրացան . սակայն յուսացածին պէտ փախստականին վար իշնալը չտեսաւ . վասն զի Անտրէա իւր պղտիկութենէն մարդոց հետ մրցելով՝ զինակրէ մը աւելի խռոամբտ էր , թէե այն զինակիրը տասնապետի սպատուաւոր աստիճանին ալ բարձրացած ըւլար . ուստի այրուելին վախնալով տանիքին վրայ ելեր , և խողովակին առջին կծկուած կեցեր էր :

Վայրիեան մը այնպէս կարծեց թէ աղատած է . քանզի տասնապետին ձայնը լսեց , որ երկու զինակիրները կանչելով՝ բարձրաձայն անոնց կը պռոար .

« Հոս չէ » :

Սակայն երիտասարդը կամաց մը իւր պարանոցը երկնցընելով՝ տեսաւ որ երկու զինակիրները այն յայտարարութեան

վրայ երթալու տեղ, ընդ հակառակն իրենց խուզաբկութիւնը կը կրկնապատկէ ին:

Աւստի ինքն աւ իւր բոլորիքը դիմեց:

Խորհրդատունը, որ վլշտամաներսրդ դարուն հսկայածն չէնք մ'էր, տխուր պատոնէ չի պէս բարձրացած էր:

Աջ կողմի պատուհաններէն տանիքին վրայի ամեն անկիւններն ու խորշերը կրնար տեսնուիլ լերան վրայէն հովիտի մը մէջ տեսնելու պէս:

Անտրէա հասկըցաւ որ քիչ մը ետքը տամնապետին դլուխը այն պատուհաններուն մէ կէն երե իլը պիտի տեսնէ:

Զինքը հոն տեսնելուն պէս՝ ինքը կորսուած էր:

Տանիքներուն վրայ հալածուիլը յաջող վախճան մը չէր ներկայացներ իրեն:

Աւստի որոշեց որ վերստին վար իջնէ, բայց չէ թէ վեր ելած ձամբայէն, այլ նոյնօրինակ ուրիշ ձամբայէ մը:

Սողալով այնպիսի ծխահանի մը մօտեցաւ, ուրիից ամենին ծուխ չէր ելներ, և առանց տեսնուելու անոր մէջ աներկոյթ եղաւ:

Կոյն միջոցին խորհրդատան մէկ փոքր պատուհանը բաց-ուեցաւ, և տամնապետին դլուխը երեցաւ:

Ժամանակի մը այն դլուխը չէնքը զարգարող քարէ արձանի մը պէս անշարժ կենալէն ետե՛ յուսահատութեան երկար հառաջանքով մը անել եռյթ եղաւ:

Տասնապետը իրը օրինաց ներկայացուցիլը անխոռով և ծանր կերպարանքով՝ առանց հրապարակին մէջ դումարուած բաղմութեան հաղար տեսակ դիտողութեանց պատասխանելու վերստին պանդոկը մտաւ:

— Ի՞նչ լուր, հարցուցին երկու զինակիրները:

— Ստուդապէս այս առտու կանուխ՝ սրիկան ասկէ հեռացած պիտի ըլլայ, զաւակներո, պատասխանեց տամնապետը: Ասկայն հիմա Վիլէր-Գոմթըրէի և Կոյոնի ձամբուն վրայ մարդ կը դրկենք և անտարին մէջ փնտութեանց կու տանք, ուր անշուշտ պիտի բռնենք դան:

Պատուաւոր պաշտօնաւորը տասնապետաց մասնաւոր ձայն նովո հաղիւ թէ վերջին խօսքը իւր բերանէն հաներ էր , երբ սոսկումի երկար ձայն մը զանդակի մը անդադար հնչիւնին շետ պանդոկին բակը հնչեց :

— Ա' հո , ի՞նչ է այս , զուց տասնապետը :

— Այս ձանապարհորդը խիստ աճապարած կ'երեկի , ըստ պանդոկապետը : Նայէ ո՞ր սենեկէն կը հնչեցընեն , տղայ :

— Թիւ Յ :

— Ա-ազէ զնա՞ — :

Դոյն միջոցին ձայններն ու զանդակին հնչիւնը կրկնապատկուեցան :

«Ծառան սկսաւ վազելով երթալ :

— Կեցիր , ըստ տասնապետը ծառան կեցընելով , ինձ այնպէս կ'երեկի թէ այս զանդակը հնչեցընողին խնդրածը ծառայ չէ , այլ զինակիր մը : Թիւ Յ սենեակը ով կը բնակի :

— Սուրհանդակի կառքով իւր քրոջը հետ այս իրիկուն եղող երիտասարդ մը , որ երկու անկողնով սենեակ մը ու զեց — :

Զանդակը երրորդ անգամ յուսահատական կերպով հնչեց :

— Օդնեցէք ինձի , պարոն զործակալ , զուց տասնապետը , հետո եկէք շուտով :

— Կեցիք , ըստ պանդոկապետը , թիւ Յ սենեակը երկու սանդուի ունի՛ մէ կը գրսէն և միւսը ներսէն :

— Աղէկ , ըստ տասնապետը , ես ներքին կողմէն կ'երաժամ՝ հրացաննիդ լցուած են :

— Այո , տասնապետ :

— Դուք արտաքին սանդուիսը հսկեցէք , և եթէ փախչել ուզէ՝ հրացաննիդ անոր վրայ պարսկեցէք . հետազրին խօսքին նայելով ծանր յանցանք մը զործած է — :

Տասնապետը զործակալին ընկերութեամբը իսկոյն ներքին սանդուիին մէջ աներեսոյթ եղաւ :

Բաղմութիւնը Անտրէայի խօսքերը լսելով սկսան շշուկա ներ հանել :

Անտրէայի գլուխը այս գժբաղդութիւնը եկեր էր :

Խիստ Շարողկութեամբ կրակաբանին մինչև երեք քառորդը իջեր էր, սակայն ոտքը սխալելով, թէպէտ ձեռքերը որմեռաւն կոթնցոցեր էր, իւր ուզածէն աւելի մնա ազմուկով և աւելի շուտով վար իջեր էր :

Եթէ սենեակը առանձին ըլլար՝ հոգ չէր. սակայն սենեկին մէջ մարդ կար :

Անկողնոյ մը մէջ երկու կիներ քնացած էին, որոնք անոր հանած ձայներէն արթնցան :

Իրենց նայուածքը ձայն ելած կողմը ուղղեցին և կրակաբանին մէջէն մարդու մը դուքս ելնելը տեսան :

Այս երկու կիներէն մէկը, այսինքն ոյն խարսեաշ աղջիկն էր այնպիսի ձայն մը հանողը, որ բոլոր տան մէջ լսուեր էր. իսկ միւս թխաղոյն աղջիկը զանգակին առ ասանը ձեռքը առնելով, ու իւր բոլոր ուժովը զան շարժելով՝ օդնութիւն կը պոռար :

Ինչպէս կ'երեկի՝ Անտրէա վտանգի մէջ էր :

— Գթացէք ինձի, զուեց երիտասարդը իւր դոյնը նետածու շփոթութեամբ՝ առանց տեսնելու այն անձերը, որոնց իւր խօսքը կ'ուղղէր. զթացէք ինձի, մարդ մի կանչէք. աղատեցէք զիս, ես լիսաս մը շունիմ ձեզի :

— Մարդ տսպան Անտրէան է, զուեց երկու ծաղկահաս աղջիկներէն մէկը :

— Էօծէնի, օրիորդ Տանկլամա, մըմնչեց Գալալդանթի սոսկումէն ապշութեան մէջ իխանլով :

— Հասէք, հասէք, զուեց օրիորդ ա՛ւրամբյլի՝ Էօծէնիին անշարժ ձեռքէն զանգակին առասանը առնելով և իւր ընկերէն աւելի ուժով հնչեցընելով :

— Ետեւէս ինկած են, աղատեցէք զիս, ըստ Անտրէա ձեռքը միացընելով. զթացէք ինձի, կը պաղատիմ, մի մատնէք զիս :

— Շատ ուշ է, ալ վեր կ'ելնեն, ողատասխանեց Էօծէնի:

~~Աւրեմն տեղ մը պահցեցէք զիս, ըսէք թէ առանց պատ-~~

Ճառ մը ունենալու վախցաք . այս կերպով անոնց կասկածը կը փարատէք ու իմ կեանքս կ'ազատէք — :

Երկու ծաղկահաս աղջիկները իրենց վերամակին տակը դիւրար դրկած երխասաւրդին պաղատալի ձայնին լուս կեցան . իրենց մոտացը մէջ սոսկումն ու ատելութիւնը կ'ընդհարէին :

— Ճառ աղէկի , ըստ հօմէնի , դնա ուրեմն եկած ճամբայէդ , թշուառ մարդ . դնա , և բան մը չենք ըսեր :

— Աչա ներսն է , ներսն է , պոռաց ձայն մը սանդուղին դաւթին վրայէն . ներսն է , կը տեսնեմ զան — :

Երգ՝ տասնապետը բանլիքին ծակէն նայելով Անտրէան տեսաւ որ կանգնած կը պաղատէր :

Հրացանի բունին մէկ ուժդին հարուածով փականքը ճամեցուց , երկու հարուածներով պարզունակները կոտրաեց , և գուռը ջախջախուելով ներսի կողմը ինկաւ :

Անտրէա դէպ 'ի միւս դուռը վազեց , բայցաւ զայն և ողատրաստուեցաւ դուրս նետուելու :

Բայց հոն երկու զինակիքները տեսաւ , որոնք հրացանին իրեն ուղղեցին :

Անտրէա յանկարծ կեցաւ՝ դունատեալ , անշարժ և ընկածեալ . անօգուտ դանակը իւր կնճռած ձեռացը մէջ բռնած էր :

— Ինչո՞ւ չես փախչիր , զուեց օրիորդ տ'Արմիլլի , որ մկները մեղքընալ անոր վրայ իւր սրտէն երկիւղը փարատելու մկնելէն 'ի վեր . փախիր :

— Եւ կամ ինքզինքդ սպաննէ — , ըստ հօմէնի այն Աւտուեան կոյսերէն մէկուն ձայնովն ու անողոքութեամբը , որոնք կրկէսին մէջ իրենց բժամատովը յաղթող ըմբշամարտին կը հրամայէին որ իւր գետինը զարկած հակառակորդը սպաննէ :

Անտրէա այս ձայնէն սարսաւց և այնպիսի արհամարհական ժպիտով մը ծաղկահաս աղջիկան նայեցաւ , որով ըցացընէր թէ իւր կորուսեալ վիճակին մէջ պատռոյ այս վաեմ զաղանութիւնը ամենելին չէր հասկընար :

— Խորդինք սպանեմ , ըստու իւր դանակը նետելով , և ինչու :

— Դուն քու բերանովդ ըսիր հիմա թէ զքեզ մահուան սիտի դատապարտեն, զոչեց օրիորդ Տանկլար, և իրը յետին դատապարտեալ մը պիտի դիմատեն զքեզ։

— Միթէ իմ հօգսէ է, պատասխանեց Գավալզանին բազուկները իրարու պղելով. ամեն մարդ բարեկամ ունի —։

Տասնապիտը սուրը ձեռքը դէպ 'ի անոր յառաջացաւ։

— Ա'զէ, ըսաւ Գավալզանին, սուրդ պատեանդ գարձուր, քաջ զինուորս, այդ չափ վախնալու հարկ չկայ. աշակ ինքնին անհնատուր կ'ըլլամ ձեզ —։

Եւ իւր ձեռքը երկնցուց որ երկաթը անցընեն։

Երկու ծաղկահաս աղջիկները Բարիզեան երիտասարդին թիապարտի մը փախուիլը սոսկումավ կը դիտէին։

Անտրէա աղջկանց կողմը զարձաւ, և յանդուզն ժպիտով մը ըսաւ։

— Պ. հօրդ համար յանձնարարութիւն մը չունի՞ս, օրիորդ հօժէնի. հաւանականաբար Բարիզ պիտի վերադառնամ —։

հօժէնի զլուխը իւր երկու ձեռացը մէջ պահեց։

— Ա' հո՛, ըսաւ Անտրէա, ամշնալ պէտք չէ և սուրհանդակի կառուով ետևէս դալուդ համար չեմ նեղանար. . . . Գրեթէ քու ամուսինդ չէի՞ ես —։

Եւ այս հեղնալի խօսքերուն վրայ Անտրէա դուրս ելաւ թողով երկու փախստականները որ իրենց խայտառակութեան նեղութեանցը և ներկայ դտնուողներուն մէկնութեանց ենթակայ ըլլան։

Ժամ մը ետքը՝ երկուքնին ալ կնոջ զդեստ հազնելով՝ իրենց ճամբորդութեան կառքը հեծան։

Պանդոկին դուռը զոցեր էին, որպէս զի բաղմութեան հետաքրքրութենէն ազատ ըլլան. սակայն դուռը բացուելէն ետքն ալ՝ երկու կարդ բոցավառ աշօք և մըմաացող շուրջերով հետաքրքիներու մէջն անցնելէ ազատ չէին։

հօժէնի կառքին վարագ ոյրները եջեցուց. սակայն եթէ անսնց երեսը չէր տեսներ, անսնց ձայները կը լսէր, և խայտառակ խօսքերուն ձայնը մինչև իւր ականջին կը հասնէր։

— ԱՇ, ինչո՞ւ աշխարհս անապատ մը չըլլաբ —, դոչք  
ծաղկահաս աղջիկը օրիորդ տ'Արմիյլիին դրկացը մէջ նետ  
ուելով և այն բարկութեամբ բորբոքելով, որ Կերոնին ը-  
սել կու տար թէ ինչո՞ւ հռոմայեցի ժողովուրդը միայն մէկ  
գլուխ չունենար, որպէս զի մէկ հարուածով կտրեի զոյն:


Հետեւալ առառէ՝ Պրիսէլ հասան և ֆլանտըի պանդսկը  
իջան:

Առջի իրիկունէն 'ի վեր Անտրէայի անունը բանտառհին  
արձանադրին մէջ անցեր էր:



### ՊԼՈՒԹ ԸԵ.

ՕՐԻՆՔԻ



**Յ**ԱՅՅՆ տեսանք որ ինչ հանդարասութեամբ  
օրիորդ Տանկլար և օրիորդ տ'Արմիյլի  
կարող եղան իրենց փախուստը՝ ի  
դործ գնել. պատճառը այն էր որ որ  
տան մէջ ամեն մարդ իրենց դործին զբաղած ըլլալուն՝ ա-  
նոնց հող չըրեր էին:

թողունք սեղանաւորը որ սնանկութեան խռիչքոցը մէջ ճակատը քրաինքով պատած իւր անշափ պարտաց է ջերը կարդադրէ , և դառնանք տիկին Տանկլարին , որ այն հաբուածին սաստկութենէն չուարած քիչ մը կենալէն եսե՝ իւր սովորական խօրհրդակիցը Ախւիկէն Տըպրէն տեսնելու դացեր էր : Ասոն զի իրօք տիկին Տանկլար կը յուսար որ այն ամուսնութիւնը կատարելով վերջապէս հօժէնիի բնութիւնն ունեցաւ աղջկան մը վրայ տաղողալիի խնամածութիւնն ընելէ ոլիտի աղաւատէր . վասն զի ընկերային կապերը հաստառող այն դաշանց մէջ մայրը մը իւր աղջկան վրայ իշխանութիւն ունենալու համար սրէաք էր միշտ խոչեմութեան օրինակ մը և կատարելու թեան ախպար մը ըլլալ անոր :

Սակայն տիկին Տանկլար հօժէնիին խելացիութենէն և օրիորդ ա՛ւրմիլիին խրատներէն խիստ կը վախճար . քանի մը անդամ Տըպրէն վրայ իւր աղջկան ուղղած արչամարհական հայուածքը գիտենք էր , որոնք դոզցես կը ցուցընէին թէ իւր մաերիմ առենադպրին հետ ունեցած սիրահարական և զրամոյին յարաքերութեանց զաղանիքը հօժէնի կը ճանչնար . ընդ հակառակն աւելի խրունկ մտածելով տիկին Տանկլար կրնար հասկընալ թէ հօժէնիին Տըպրէն առելը չէ թէ իւր հայրէնի տան մէջ այն երիտասարդին դայթակղութեան վէմ մը ըլլալն էր , այլ պարզապէս այն Երկուանինք ըուն կարդը կը դասէր զան , որոնք Գիոզինէս կը ջանար մարդոց կարդէն դուրս հանել , և որոնց Պղաւան դարձուածաւոր խօսքով երկուանի և անփետուր կենզանի անունը կու տար :

Տիկին Տանկլար իւր հեռատեսութեամբը , ( դժբաղդաբար այս աշխարհիս մէջ ամեն մարդ հեռատեսութիւն մը ունի , որ ուրիշներունը տեսնելու արգելք կ'ըլլայ ) տիկին Տանկլար , կ'ըսենք , իւր հեռատեսութեամբը չափազանց կը ցաւէր հօժէնիին ամուսնութիւնը ետ մնալուն , չէ թէ վասն զի այն ամուսնութիւնը յարմար և վայելուէ էր և իւր աղջիկը երաջանիկ պիտի ընէր , այլ այն ամուսնութիւնը իրեն ազատութիւն ոդիտի չներհէր :

Ուստի ինչպէս ըսկինք՝ տիկին Տանկլար Տըպրէ ին տունը դացեր էր, որ բոլոր հանդիսականաց պէս ամուսնութեան դաշնաղիքն ստորագրելու հանդիսին և անոր հետեւթիւնն եղող դայլթակզութեան ներկայ դանուելէն ետեւ՝ աճապարեր էր սրճանցոց քաջուիլ, ուր քանի մը բարեկամներու հետ այն դէղբին վրայ կը խօսէր, որ աշխարհիս մայրաքաղաքը կոչուած և դոյջն բանի մը համար աղմուկ հանող այն քաղաքին երեք մասին խօսակցութեան առարկայն եղած էր այն ժամուն:

Երիտասարդին տունը չղտնուելուն համար դռնապանին խօսքին չհաւատալով տիկին Տանկլար սև շրջազդ եստ մը հաղած ու քողով մը ծածկուած՝ դէպ 'ի Տըպրէ ին սենենակը տանող սանդուխէն վեր ելած միջոցին՝ Տըպրէ զբաղած էր բարեկամի մը յանկուցիւ խօսքերը մերժելու, որ կը ջանար համոզել զինքը, թէ տեղի ունեցած այնպիսի ստոկալի գժբաղդութենէն ետքը իւր պարտքն էր՝ իրքեւ այն տան բարեկամ՝ օրիսրդ Էօծէնի Տանկլարի հետ ամսւսնանալ անոր երկու միլիոն ֆրանքն ալ ստանալով:

Տըպրէ յաղթուիլ ուզող մարդու մը պէս ինքզինքը կը պաշտպանէր, վասն զի այս դաղափարը շատ անդամ իւր մըտացը մէ չ ինքնին ներկայացեր էր. բայց որովհետեւ Էօծէնին և անոր անկախ ու զոռող բնութիւնը կը Ճանչնար, ուստի ժամանակ առ ժամանակ բոլորովին պաշտպանողական զիրք մը կը բոնէր՝ ըսելով թէ այն միութիւնը անկարելի էր և բոլորովին անկարելի. սակայն ներքնապէս այն զատապարելի խորհուրդը կը տածէր, որ ամեն բարոյագիտաց ըստին նայելով, ամենէն առաքինի և ամենէն անարատ մարդուն միտքը անդամ անդադար կը զբաւէ՝ անոր սրտին խորութեանց մեջ պահուելով, ինչպէս սատանան խաչին ետեւ:

Դոյջն միջոցին՝ տիկին Տանկլար Ախոսիէնի սենեկապանին առաջնորդութեամբը ներս մանելով՝ քողարկեալ և սրտամունդ՝ կանաչ փոքր սրահին մէ չ կ'ըսպասէր ծաղիկներով լիցուն երկու ամաններուն մէ չ նստելով, զորոնք ինքը նոյն

առառ անոր զբկեր էր, և Տըպրէ ստոյդն ըսելով իւր ձեւ ոօքը այնպիսի խնամքով տեղառորեր, շիտկեր և կարգի զըրեր էր զանոնք, որուն համար ողջոմնլի տիկինը անոր բացակայութիւնը ներեց :

Ժամը տասին քսան մեալով՝ տիկին Տանկլար ոպարագ տեղը սպասելէն ձանձրացած՝ վերսափն իւր կառքը հեծաւ և իւր տունը վերագարձաւ :

Այնաց կիները հարուստ անգատիւ կանանց այն կէտին մէջ կը հաւասարին, որ սովորաբար կէս զիշերը անցած իրենց տունը կը վերագարծաւ :

Էօծէնի որչափ զգուշութիւն որ բանեցուցեր էր մեկնելու ժամանակ, տիկին Տանկլար ալ նոյնչափ զգուշութիւն ՚ի ործ դրեր էր տունը մանելու համար. որտի անձկութեամբ ու թեթև քայլերով իւր սենեկին սանգուխէն վեր ելաւ, որ ինչպէս զիտենք՝ Էօծէնիին սենեկին կից էր :

Իւր վարմունքին վրայ թիւր մեկնութիւններ տալու պատճառ ըլլալէն խիստ կր վախնար, ողջոմնի կինը զոնէ այս կէտին մէջ յարդելի էր, ընտանեացը համար իւր աղջիան ունեցած հաւատարմութիւնը և անոր ամեղութիւնը կը հանչնար :

Էօծէնիին դրան առջեւ ականչ դրաւ, բայց ամենեին ձայն մը չլսելով՝ ներս մանել ուզեց, սակայն դրան նիզը զրուած էր :

Տիկին Տանկլար կարծեց թէ Էօծէնի նոյն իրիկուան սոսակալի յուղմունքն յոդնած անկողինը մտեր էր և կը քնանար :

Օրիորդին սենեկապանուհին կանչեց և հարց ու փորձ ըրաւ :

— Օրիորդ Էօծէնին, պատասխանեց սենեկապանուհին, օրիորդ ա՛ւրմիլլիի հետ իւր սենեկալը մտաւ, և անոր հետ թէլը խմելէն եաւ ձամքեց զիս ըսելով թէ պէտք չունի ինձի — :

Այն ժամէն ՚ի վեր սենեկապանուհին իւր զործին զբաղած էր, և ամենուն պէս ինքն ալ երկու օրիորդները իրենց սենեկալը կը կարծէր :

Աւոտի տիկին Տանկլար առ անց ամենափոքր կասկած մը ուր-

նենալու պատկեցաւ , բայց իւր մարդոց վրայ սիրաը հանդար-  
տեղվ՝ այն պատահած գէսլքին մասձութիւնը իւր միտքը  
պաշարեց :

Արջափ եղածներուն վրայ կը մոռածէր , այնչափ դաշնազրին  
տեսարանը կը ծանրանար . զայթակզութիւն մը չէր այն , այլ  
աղմուկ մը , ծանակութիւն մը չէր , այլ անուանարկութիւն մը :

Այն ատեն տիկին Տանկլար զղաց որ քիչ մը առաջ ողոր-  
մի Սէրսէտէսի ամսւնոյն և որդույն պատահած գժրաղ-  
դութեանը մէջ անոր վրայ չէր դժացեր :

— Էօծէնի կորսուած է ալ , ըստ իւրավի , և մնք ալ .  
քանզի պատահած գէսլքը նախարինք մ'է մեզի համար , մը ըն-  
կերութեանց մէջ խայտառակութիւն մը խորունկ , արինալի  
և անրուժելի վէրք մ'է :

«Երջանիկ է Էօծէնի , մրմբաց , որ այնպիսի զարմանալի  
բնութիւն մը ունի , որ շատ անդամ սոսկում պատճառած  
է ինձ — :

Եւ իւր երախտադէտ նայուածքը դէպ 'ի երկինք վերցուց :  
«Վածկագէտ շախախնամութիւնը և աքէն սպատահէլու դիպուա-  
ծոց համեմատ ամեն բան կանխաւ կը կարգադրէ , և երբ եմն  
պակասութիւն մը և մոլութիւն մը անդամ երջանկութեան  
պատճառ կ'ընէ :

Ետքը իւր մատածութիւնը ընդարձակելով ինչուս կ'ընէ  
անդունդի մը մէջ ինկող թռչունը իւր թևերը ընդարձակե-  
լով , Գալագանթին միաքը բերաւ :

— Այն Անտրէան թշուառական մը , դող մը և մարդառ-  
պան մ'է ուրեմն . սակայն Անտրէա այնպիսի ձեւեր ունէր ,  
որոնք եթէ ոչ կատարեալ զօնէ իւս դաստիարակութիւն մը  
ունենալը կը ցուցընէին . մեծ հարստութեան երեսյթով և  
ողատուաւոր անուններու կոթնած ընկերութեանց մէջ մտաւ — :

Այս բաւիղին մէջ զործերը ինչպէս պէտք էր որոշել : Ա-  
րո՞ւ զիմնէ սկէտք էր այս անտանելի կացութենէն աղատելու  
համար :

Տիկին Տանելլար իւր սիրած անձէն օդնութիւն փնտռող կնոջ մը եռանդովը Տբորէին դիմք էր . Տբորէ միայն խըրառ մը կրնար տալ անոր , որ իրմէ աւելի զօրաւոր մ. կուն դիմէ :

Այս ատեն տիկին Տանելլարի միտքը ու . աը Վ.իլքֆօրը եկաւ :

Գավարդանթին բռնել տալ ուզողը ու . աը Վ.իլքֆօրն էր , որ իրենց ընտանեաց մէջ անդթութեամբ այնպիսի շփոթութիւն մը կը սպառնառէր իրքե օտար ընտանիքի մը :

Բայց ոչ , կը մտածէր ամիկին Տանելլար , թաղաւորի դործակալը անգութ մարդ մը չէր , իւր պարագացը զերի դատաւոր մը և օրինապահ ու անողոք բարեկամ մ'էր , որ տմարդի բայց ապահով ձեռքով մը այն հարուածը կ'իջեցընէր . դահճիճ մը չէր ան , այլ վիրարոյժ մը , որ կ'ուզէր ապահովել Տանելլարի ընտանեաց պատիւը այն կորուսեալ երիտասարդին անուանաբկութենէն , զոր իրքե իրենց փեսայացուն ամենուն կը ներկայացընէին :

Եւ որովհեաւ ու . աը Վ.իլքֆօր Տանելլարի ընտանեաց բարեկամն ըլլալովը այս կերպ ընթացք մը կը բռնէր , տարակոյս չկար որ թագաւորի դործակալը Անտրէայի ով ըլլալը դիտէր և անոր ընթացքը կը դիտէր :

Տիկին Տանելլար մտածելով կը տեսնէր որ աը Վ.իլքֆօրի ընթացքը իրենց համար նախատառոր էր :

Ամկոյն թագաւորի դործակալին անողոքութիւնը անկէ անդին անցնել պէտք չէր . հետեւալ առառւ տիկինը զան տեսնելու պիտի երթար , և պիտի աղաւէր որ եթէ չէր կրնար դատաւորի պարագը զանց ընել , զոնէ ներռղամիտ ըլլայ :

Տիկին Տանելլար անցեալ յիշատակները պիտի նորոգէր և զանոնք օդնութեան պիտի կանչէր . այն մեղսալի բայց երջանիկ ժամանակը յիշելով պիտի աղաւէր որ ու . աը Վ.իլքֆօր դործը դոցէ , կամ զոնէ թողու որ Գավալդանթին վախչի , ու այն ատեն յանցաւորը փնտռելու ելնէ :

Այս մտածութիւններէն ետե՛ տիկինը կրցաւ հանդիսաւ քը և նաև ալ :

Հետեւ առաջ ժամը իննին արթնցաւ , ու առանց իւր սենեկապանու հին կանչելու և առանց փոքր ձայն մը հանելու առջի իրիկուան պարզութեամբը հաղուեցաւ , սանդուխէն վար իջաւ , տունէն գուրս ելաւ և մինչեւ բրովանս փողոցը քալեց և հոն կառք մը բռնելով՝ ու . աը Ա. իլլովօրի տունը դնաց :

Ամսէ մը 'ի վեր այս անիմեալ տունը ժանտախտի զզուշարանի մը տիսուր երեսոյ լը կ'ընծայէր . սենեկաց մէ կ մասը ներփին և արտաքին կողմէն փակուած էին . զոց փեղիերը միայն օդ առնելու համար վայրիկան մը կը բացուէին . այն ատեն կը կարծէին . թէ այն պատուհանին առնչեւ սպասուորի մը այլայլեալ գէմքը կը տեսնեն , և անմիջապէս պատուհանը կը գոյաւէր գերեզմանին վրայ փակուած կափարիչին նման , և զրացիները ցած ձայնով իրարու կ'ըսէին :

— Արդեօք այսուր ալ թաղաւորի ու . զործակալին տունէն դադաղի մը ելնելը պիտի տեսնե՞նք — :

Այս տիսուր տունը տեսնելով տիկին Տանկլար սարսուս մը զզաց . կառքէն իջաւ , և վշտեալ քայլերով զոց զրան մօտեցաւ և զանգակը հնչեցուց :

Հաղին զանգակին երրորդ հնչեւինին , որ նոյն տան ընդհանուր տիսուր թեամբ կարծես թէ մասնակից էր , զռնապանը երեցաւ ճիշդ իւր խօսքերը դուրս ելնելու շափ դուռը բանալով :

Կին մը տեսաւ , որ վայելու հաղուած էր , և իրեն օտար մէկը կ'եւելէր , սակայն դուռը աւելի շբացաւ :

— Բայց ինչո՞ւ չես բանար , ըստ տիկին Տանկլար :

— Կախ ըսէք ինձ , տիկին , թէ դուք ո՞վ էք , հարցուց գոնապանը :

— Ես ո՞վ եմ , չե՞ս ճանշնար զիս :

— Այսուհետեւ մարդ չե՞նք ճանշնար : տիկին :

— Խենթեցեր ես ուրեմն , բարեկամ , դռչեց տիկինը :

- Աւրեկից կու զաք :
- Ա՛չ , անտանելի է այդ ընթացքը :
- Տիկին , ինձի եղած հրամանը այս է , կը ներէք . աշուննիդ ի՞նչ է :
- Տիկին սեպուհ Տանկլար . քսան անդամ զիս տեսած ես :
- Կարելի է , ախկին . հիմա ի՞նչ կը խնդրէք :
- Ա՛չ , ի՞նչ տարօրինակ մարդ ես եղեր . և այդ ամբարտաւնութեանդ համար ո՛վ . առ Ալիլքօրին պիտի դանդատիմ :
- Տիկին , ամբարտաւնութիւնչ այս . այլ զգուշութիւն մը . առանց ո՛վ . ա'նկրինեի հրամանին կամ առանց թաղաւորի ո՛վ . դործակալին հետ խօսելիք մը ունենալու մարդ շկրնար այս տունս մտնել :
- Ես աւ Ճիշդ թաղաւորի ո՛վ . զործակալին հետ զործ ունիմ :
- Ստիպողական զործ է :
- Աչքով կը տեսնես , քանզի կառքիս պատրաստուելուն անդամ չսպասեցի . բայց վերջոցընենք , ահա այցատոմուն տիրոջդ տար շուտով :
- Տիկինը մինչեւ զանալս պիտի սպասել :
- Եյս , զնա — :
- Դունապանը տիկին Տանկլարը փողոցին մէջ թողլով՝ զուռը վերստին զոցեց :
- Ստոյդ է որ տիկին Տանկլար երկար ատեն չսպասեց . վայրեան մը ետքը՝ տիկինոջ անցնելու չափ լայնութեամբ գուռը բացուեցաւ , տիկին Տանկլար ներս մտաւ և դուռը վերստին փակուեցաւ :
- Դունապանը բակը հասնելով , առանց իւր աչքը դրան վարայէն վերցընելու՝ ծոցէն սուլիչ մը հանեց և սուլեց :
- Ո՛վ . առ Ալիլքօրի սենեկապանուհին սանդոխին վրայ երեցաւ :
- Տիկինը թող ներէ մեր բարի դունապանին , ըստւ սենեկապանը տիկին Տանկլարի առաջը զալով , ինչու որ եղած հրամանը այս է , և ո՛վ . առ Ալիլքօրի խնդրեց որ ըսեմ ձեզ թէ ասկէ ուրիշ կերպ մը չէր կրնար ընել :

Տակին մէ ջ մառակլարար մը կար , որ նոյն զգուշութիւններով ներս մտցուցեր էին և որուն բերած ապրանքները կը քննէին :

Տիկին Տանկլար սանդուխէն վեր ելաւ . այն տան տիսրութիւնը խորին տպաւորութիւն մը ըրեր էր իւր սբատին և իւր վաշտաց շղջանը կ'ընդարձակէր . սենեկապանը անոր առջեկ'ն քալելով և միշտ անոր վրայ հսկելով՝ դատաւորին սենեակը մը տցուց դան :

Տիկին Տանկլար որչափ և իւր մտածութիւնով զբաղած էր , սակայն ծառաներուն իրեն հետ վարուած կերպը այնչափ անարժան երեցաւ որ մկաւ զանդատիլ :

Քայլ Արլիֆօր իւր վիշտերէն ծանրացած դլուխը վերցընելով՝ անոր երեսը նայեցաւ այնպիսի տիսրութիւնով մը , որ ներքին ցաւեն անմիջապէս աներեւոյթ եղաւ :

— Կերէցէք ծառաներուս սոսկումն այն կերպ վարուելնուն , որոնք չեմ կրնար մղղաղը եւ . քանզի կատկածուելով իրենք ալ կատկածու եղան — :

Տիկին Տանկլար դատաւորին յայտնած սոսկումն վրայ խօսուիլը լսեր էր , բայց եթէ իւր աշօքը շտեսնէր՝ երբէք պիտի չհաւատար՝ որ անոնց սոսկումը այն աստիճան ըլլայ :

— Աւերեմն դուք դժբաղդ էք , պարոն , ըստ տիկին Տանկլար :

— Այո , տիկին , պատասխանեց դատաւորը :

— Զէք ցաւիր ինծի համար :

— Անկեղծ սրտիւ , տիկին :

— Գիտէք ինչ բանի համար եկած եմ :

— Զեր դլուխը եկածներուն վրայ պիտի խօսիք , այնպէս չէ :

— Այո , պարոն , սոսկուի դժբաղդութիւն մ'է այս :

— Այսինքն ձափորդութիւն մը :

— Ձախորդութիւն մը կ'ըսէք , զուեց տիկին Տանկլար :

— Ափսոս , տիկին , պատասխանեց թաղաւորի դործակալը իւր անխոռով հանդարտութեամբը , սկսայ անդարմանելի եղող դիպուածները միայն դժբաղդութիւն կոչել :

— Ե՞ս , պարոն , կը կարձէք որ մասցուի . . . :

— Ամեն բան կը մոռցուի , տիկին , ըստ Ա. իլլոր . եթէ աղջկանդ ամուսնութիւնը այսօր չկատարուի , վաղը կրնայ կատարուիլ . եթէ վաղն ալ շըլլայ , ութ օրէն կ'ըլլայ : Զեմ կարծեր որ օրիորդ Էօժէնիին նշանածին համար յաւելու նըպատճել մը ունենաք — :

Տիկին Տանկլար անոր զրեթէ չեցնական այս հանդարտութեանը վրայ ապշութեամբ անոր երեսը նայեցաւ :

— Բարեկամի՛ մը քով եկած եմ թէ դատաւորի , հարցույց անոր տիրալի վսեմութեամբ մը :

— Գիտէք , տիկին , որ բարեկամի մը տունը կը դանուիք — , պատասխանեց Ա. իլլոր . որուն այստերը իւր տուած ապահովութեանը վրայ սկսան սակաւ ինչ շատագնիլ :

Երօք այս ապահովութիւնը՝ այս ժամուս իւր և տիկին Տանկլարի միտքը զրաւող դէպքերէն տրիչ զէպքերու կ'ակնարկէր :

— Աւ իմ , ըստ տիկինը , աւելի քաղցրութեամբ վարուեցէք ինձի հետ , սիրելիդ իմ Ա. իլլոր , իբր բարեկամ խօսեցէք հետո և ոչ իբր դատաւոր , և երբ ես յետին դժբաղդութեան մը չ կը դանուիմ , մի ըսէք ինձի որ ուրախ ըլլամ — :

Ա. իլլոր խօսաբհութիւն մը ըրաւ :

— Երբ դժբաղդութեանց խօսքը կը լսեմ , տիկին , երեք ամսէ՝ ի վեր դժնդակ սովորութիւն մը ստացեր եմ որ իմ դժբաղդութեանց վրայ կ'ըսկսիմ մոռածել , և այս համեմատութեան ինքնասէր դբաղումը ակամոյ իմ միտքս կը դրաւէ : Ահա այս է պատճառը որ իմ դժբաղդութեանց քով ձեր դժբաղդութիւնները ձախորդութիւն կ'երես ինձ . ահա այս պատճառ առ իմ աղէտալի կացութեանս մէ չ ձերը նախանձելի կացութիւն մը կ'երեսի . բայց թողունք ոյս խօսքերը , որոնք ձեզ հաճելի չեն երեսի : Ի՞նչ կ'ըսէիք , տիկին . . . :

— Եկայ ձեզի հարցընելու , սիրելիս , կըկնեց տիկին Տանկլար , թէ այն նենդաւորին զործը ինչպէս եղաւ :

— Նենդաւոր կ'ըսէք , կրկնեց Ա. իլլոր . ստուդիւ , տիկին , սովորութիւն մը ըրած էք որ երբեմն զործերը կը թեթեցը :

նէք և երբեմ կը ծանրացընէք . Պ . Անտրէա Դավիթանթին կամ թէ ըսեմ Պ . Պէնէտէթթօն նենդաւոր կ'անուանէք . կը սխալիք , տիկին , Պ . Պէնէտէթթօն կատարեալ մարդառապան մ'է ,

— Պարոն , ձեր ստուգութեան Ճշգութիւնը չեմ ուրանար , սակայն որչափ արագ ութեամբ որ անոր դէմ զինիք , այնչափ շուտ մեր ընտանիքը պիտի կործանէք : Աղէ , մոռցէք զան քիչ մը ժամանակ . փոխանակ անոր ետեւէն իշնալու՝ թողուցէք որ փախչի :

— Ըատ ուշ եկաք , տիկին , հրամանները արդէն տրուած են :

— Եթէ բռնեն զան . . . . Բայց կը կարծէք որ բռնուի :

— Կը յուսամք :

— Եթէ բռնեն զան , (մտիկ ըրէք , միշտ լսած եմ որ բանակը լիցուն են ) , բանտի մը մէջ թողուցէք — :

Թագաւորի զործակալը բացասական շարժում մը ըրաւ :

— Գոնէ մինչեւ որ աղջիկս ամուսնանայ , յաւելցուց տիկինը :

— Անկարելի է , տիկին . ոստիկանութիւնը օրէնք ունի :

— Ինձի՞ համար ալ , ըստ տիկին Տանկլար կէս մը ժպտելով և կէս մը ծանրութեամբ :

— Ամենուն համար ալ , պատասխանեց Ա.իլքֆօր , ինչպէս նաև ինձի համար ալ :

— Ա. Հ — , զոչեց տիկինը առանց այս հառաջանքին յայտնած խորհուրդը խօսքով աւելցընելու :

Ա.իլքֆօր այնպիսի նայուածքով մը անոր երեսը նայեցաւ , որով իւր դիմացինին խորհուրդները կը քննէր :

— Ա. Յ . , զիտեմ ինչ ըսել կ'ուզէք , կրկնեց թաղաւորի դործակալը . հասարակութեան մէջ տարածուած այն սոսկալի տարածայնութեանց կ'ակնարկէք ըսել ուզելով թէ երեք ամսէ՞ի վեր զիս սուզի մէջ ընկղմող բոլոր այն մեռեալները բնական մահուամբ մնաած չեն և թէ Ա.ալաթին ալ հրաքով այն մաշուանէ ազատեցաւ :

— Ամենն մաքէս չէք անցներ այդպիսի բան մը , ըստ իսկոյն տիկին Տանկլար :

— Այս , ձեր մտքէն կ'անցնէք , տիկին , և իրաւամբ քանզի անշուշտ կը մտածէ իք և ցած ձայնով դուք ինքնին կ'ըսէիք . « Դուն որ զործուած յանցանքի մը համար զբառախաղ կ'ըլլաս , ինչու համար բոլորտիքդ այնպիսի յանցանքներ կան , որոնք անպատիմ մացած են , պատասխան տուր » :

Տիկին Տանկլարի դոյնը փոխուեցաւ :

— Այս խօսքը գուք ինքնին կ'ըսէիք , այնպէս չէ , տիկին :

— Այս , կը խօսուովանիմ :

— Արքմին ես ալ պատասխան տամ ձեզ — :

Ա.իլթֆօրը իւր թեաթոռը տիկին Տանկլարի աթոռին մօտ հցուց . ետքը՝ իւր երկու ձեռքքը զրասեղանին վրայ կոթնցը նելով և իւր ձայնը սովորականէն աւելի ցածցընելով .

— Այնպիսի յանցանքներ կան , ըստու , որոնք անպատիմ կը մնան . վասն զի յանցաւորները չենք Ճանշնար , և յանցաւորի մը աեղ անմեղին դլուխը ջախջախել կը վախնայ մարդ . բայց երբ յանցաւորները կը Ճանցուին , (Ա.իլթֆօր իւր ձեռքը զրասեղանին դիմացը կախուած խաչելութեան երկնցընելով ) երբ այն յանցաւորները Ճանցուին , տիկին , ով ոք և ըլլան , պէտք է որ մոռնին : Հիմա անդրժելի երգում մը ընելէս ետեւ՝ համարձակեցէք այն թշուառականին համար ներումն ինդրելու :

— Բայց ասլահով էք , պարոն , կրկնեց տիկին Տանկլար , որ ըստածնուն չափ յանցաւոր ըլլայ :

— Մտիկ ըրէք , ահա անոր վրայ առնուած տեղեկութիւնները . ուէնէտէթթօ տասնուվեց տարեկան հասակին մէջ նախ հինգ տարուան թիազարտութեան գատապարտուած էր իւր խորդախութեանցը համար . այն երիտասարդէն շատ բաներ կը յուսցուէր , ինչպէս որ թիազարտութենէ կը փախչի և մարդասովանութիւն կ'ընէ :

— Եւ ով է այն գյրազդ երիտասարդը :

— Ով դիտէ , սրիկոյ մը , Քորսիացի մը սրիտի ըլլոյ :

— Մէկը չփնտուեց զո՞ն :

— Ամենելին , մէ կը չհանչնար իւր ծնողքը :  
 — Բայց Լուքայէն եկող այն անձը ովէ է :  
 — Երեն պէս ուրիշ դաւաճան մը : Պուտէ իւր մեղակիցն է :  
 Տիկին Տանկլար ձեռքը միացոց :  
 — Ա. Ա. Փաթօր , ըստ իւր ամենէն քաղցր և ամենէն սիրացի ձայնովը :

— Յանուն երկնից , աիկին , պատասխանեց թաղաւորի զորակալը այնպիսի հաստատամութեամբ մը , որ միանգամայն իւր պաղութիւնը կը ցուցընէր , յանուն երկնից , յանցաւորի մը համար ինձմէ ներումն մի խնդրէք :

« Ա՞վ եմ ես , բայց եթէ օրէնքը . միթէ ձեր տրտմութիւնը տեսնելու համար օրէնքը ա՞ք ունի , ձեր քաղցր ձայնը լսելու համար տկանը ունի . միթէ օրէնքը խեժը ունի որ ձեր փափուկ խորհուրդներուն միտ զնէ : Ա՛յ , աիկին , օրէնքը կը հրամայէ , և երբ օրէնքը կը հրամայէ՝ պէտք է որ պատճէ :

« Կրնաք ըսել թէ ես կենդանի էակ մ'եմ և ոչ օրինագիրք մը , մարդ մը և ոչ հատոր մը : Խնծի հոյեցէք , աիկին , բոլորտիքս դիմեցէք , միթէ մարդիկ իրը եղբայր վարուցան ինծի չետ , միթէ անոնք զիս սիրեցին , ինծի հոգացին և խընայեցին . միթէ մէ կը ու . աը Ա. Ա. Փաթօրի համար շնորհք մը խնդրեց և այս շնորհքը եղան . ոչ , ոչ , ոչ , այլ ու . աը Ա. Ա. Փաթօր միշտ հարուած եցաւ :

« Կ'ուզէք հետո խօսիլ այն քաղցր և եռանդալի աչօք , որ կը յիշեցընէ ինձ թէ պէտք եմ ամշնալ ձեզմէ , ովէ կին , այսինքն ովէ յաւշկաղարիկդ : Թողլ այնպիս ըլլայ , այս , ձեր այն դիտցածին համար և զուցէ . . . զուցէ ուրիշ բանի համար ալ ամշնամ ձեզմէ :

« Բայց վերջապէս ես ալ զուցէ ուրիշներէն աւելի շարաշար սիսալելէս 'ի վեր՝ ուրիշներուն զդ եստները թոթվեցի որ վէրքը դառնեմ , և զտայ , կրնամ իսկ ըսել մարդկային տկարութեան կամ շարութեան կնիքը երշանկութեամբ և ուրախութեամբ դադար :

« Քանզի այն մարդիքը , որոնց լանջաւոր ըլլալը կը ձանձնայի , և այն յանջաւորները , զսրոնք կը պատճէի , սոսկալի բայցառութիւն մը չըլլալուս մէկ մէկ կենդանին և նոր ապացոյցներ էին : Ափսոս , ափսոս , ափսոս , մարդիկ անօրէն են , ուրեմն անոնց անօրէնութիւնը աղացդյուն հաստատենք և պատճենը զանոնք — :

Ա. իլլովօր այս վերջին խօսքերը այնպիսի ջերմաքեր բարձրութեամբ մը աբասասանեց , որ իւր լեզուին կատաղի մարդու մը պերճախօսութիւնը կու տար :

— Բայց , կրկնեց տիկին Տանկլար վերջին փորձ մը ընելու ջանալով . կ'ըսէք թէ այն երիտասարդը սրիկայ , որը և անոլաշտոպան է :

— Աւելի զէշ , աւելի դէշ , և կամ աւելի աղէկի . Կախախնամութիւնը այնպէս ըրաւ զան , որպէս զի իւր վրայ լացող մէկը չդանուի :

— Տկարին վրայ կատաղութիւն բանեցընել է այդ , պարոն :

— Մարգառովանութիւնը ընող տկարին :

— Անոր անողատուութիւնը իմ տանս պատին ալ պիտի աւրէ :

— Ի՞նչ ընեմ , մի՛ւէ մաշն ալ իմ տանս մէջ մտած չէ :

— Ա՛չ , պարոն , զուեց տիկին Տանկլար , քանի որ զուք ուրիշներուն վրայ ամենն ին չէք զթար , զիտցած եղիք որ ուրիշներն ալ չեք վրայ պիտի չդթան :

— Թող այնպէս ըլլայ , ըստ Ա. իլլովօր սպառնական շարժումով մը իւր բաղուկը դէպ 'ի երկինք վերցընելով :

— Գոնէ այն թշուառ երիտասարդին դատը ուրիշ նիստերու ձգեցէք , թէ որ իրօք բռնուած է , որով վեց ամիս դորձը մոռցընելու պատճառ պիտի ըլլաք :

— Չեմ կրնար , ըստ Ա. իլլովօր , տակարին հինգ օր ունիմ . քննութիւնը կատարելու համար հինգ օրը պէտք եղածէն աւելի ժամանակ ըստէլ է . ասկէ շատ , չէք հասկընար , տիկին , որ ես ալ մոռնալու պէտք ունիմ : Երբ կ'աշխատիմ , քանզի

զիշեր ցորեկ ողարապ կեցած չեմ, երբ կ'աշխատիմ, այնպիսի ժամեր ունիմ որ ալ ինքդինքս կը մռնամ, և երբ ինքդինքէս դուրս կ'ելնեմ՝ մռեալներու պէս երջանիկ եմ, սակայն այս բանս լռւաղոյն է քան թէ նեղութիւն կը լը:

— Պարոն, երիտասարդը փախաւ, թողուցէք որ փախչի, անհոգութիւնը դիւրութեամբ դթալու կերպ մ'է :

— Բայց արդէն ըսի ձեզ թէ շատ ուշ է . լուսնալուն պէս չեռագիրը զարկինք, և այս ժամուս . . .

— Պարոն, ըստ սենեկապանը ներս մտնելով, նուիրակ մը ներքին զործոց պաշտօնէին կողմէն այս չեռաղբալուրը կը քերէ — :

Վիլֆօրը նամակը առաւ և շուտով անոր կնկը քակեց : Տիկին Տանելլար իւր սոսկումէն կը սարսուար, իսկ Վիլֆօր ուրախութենէն կը գողար :

— Բանուեցաւ, զոշեց Վիլֆօր, Գոմբիէնեի մէջ ըստներ են զան, ալ լմցաւ — :


Տիկին Տանելլար զունատելով՝ պաղութեամբ ոտք ելաւ :

— Մնաք բարեաւ, պարոն, ըստ :

— Երթոք բարեաւ, տիկին, պատասխանեց թաղաւորի զործակալը զըսթէ ուրախութեամբ զան մինչեւ զուսը տանելով : Ետքը իւր զրասեղանին զառնալով՝

— Ամեն բան լման է, ըստ աջ ձեռքին կռնակովը նամակին վրայ զարնելով, զատելու համար խարդախ մը, երեք զող, և երեք կրակ ձդողներ ունէի, միայն մարդասպան մը կը պակսէր, ահա ան ալ, աղւոր նիստ մը պիտի ունենանք — :

**ՎԵՐՋ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍԻՆ**




## ՅԱԿԱ ԴՐԱՍ

Ա.	ԼԵՄՈՒՆ ՕՇԱՐԵԱԸ,	5
Բ.	ԱՄՔԱՍՑԱՆՈՒԹԵԱԸ,	21
Գ.	ՄԵԿՈՒՑՈՅԵԱԸ, ՀԵՅԵԳՈՐԾԻՆ ՍԵՆԵԱԸ,	29
Դ.	ԽՈՐՏԱԿՈՒՄԸ,	55
Ե.	ԱՍՏՈՒՅՈՑ ՀԵՐ-ՔԸ,	75
Զ.	ՊՈՇԱՆ	84
Լ.	ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻՈՒԹԵԱԸ,	94
Բ.	ԴԵՏԱՍՑԱՆԸ,	112
Ժ.	ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԵԱԸ ԳՐԻՒԹԸ,	133
Ժ.	ԽԸՆԵՄԸՑԵՔԸ,	143
Ժ.	ԳԻՇԵՐԸ,	158
Ժ.	ՀԵՆԴԻՎՈՒԹԵԸ,	170
Ժ.	ՄԱՅՐԻ ՈՒ ՈՐԴԻՒ	188
Ժ.	ԱՆԴԱԸՑՈՎԱՆԸ,	198
Ժ.	ԱԾԱԾՆՈՒԹԵԸ	211
Ժ.	ԽՈԽՈԾԱՆՈՒԹԵԱԸ,	222
Ժ.	ՀԵՐՄԻ ՈՒ ԱՇԽԵԿԸ,	241
Ժ.	ԴԱՇՆԱՄՈՒՐԸ,	254
Ժ.	ՊԵԼԱՔԱՆ ՀԱՄԻԱՆԸ	269
Ա.	ԶԵՆԴԱԿԻՆ ՈՒ ՇՈՇԻՆ ՊԵՆԴԱԿԻՆ,	278
Ա.	ՕՐԵՆՖԸ	296

—————





P. II.

Nº 5989